

**ԷԼԵԿՏՐԱՏԵՂԱԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	4
ԳԼՈՒԽ 1. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏ	4
ԳԼՈՒԽ 2. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5
ԳԼՈՒԽ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ	10
ԳԼՈՒԽ 4. ԷԼԵԿՏՐԱՏԵՂԱԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ, ԿԱՌՈՒՅՄԱՆ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	17
ԳԼՈՒԽ 5. ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐԻ ԵՎ ՍՊԱՌՈՂԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ	19
ԳԼՈՒԽ 6. ԷԼԵԿՏՐԱՏԵՂԱԿԱՅԱՆՔՆԵՐԻ ԿԱՐԳԱԲԵՐՄԱՆ, ՓՈՐՁԱՐԿՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ, ՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ	21
ԲԱԺԻՆ 2. ԷԼԵԿՏՐԱՏԵՂԱԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ	22
ԳԼՈՒԽ 7. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ	22
ԳԼՈՒԽ 8. ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ	24
ԳԼՈՒԽ 9. ԷԼԵԿՏՐԱՏԵՂԱԿԱՅԱՆՔՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	25
ԳԼՈՒԽ 10. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ	27
ԳԼՈՒԽ 11. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ ԵՎ ՆՐԱՆՑ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	36

ԳԼՈՒԽ 12. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ.....	45
ԳԼՈՒԽ 13. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ.....	54
ԳԼՈՒԽ 14. ԼԱՐՈՒՄԸ ՀԱՆԵԼՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ.....	55
ԳԼՈՒԽ 15. ԼԱՐՄԱՆ ԲԱՅԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ	58
ԳԼՈՒԽ 16. ՀՈՂԱԿՑՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ	60
ԳԼՈՒԽ 17 . ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ՑԱՆԿԱՊԱՏՈՒՄ ԵՎ ՑՈՒՑԱՆԱԿՆԵՐԻ ԿԱԽՈՒՄ ..	65
ԳԼՈՒԽ 18. ԱՌԱՆՁԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՓՈԽԱՐԿՄԱՆ ԱՊԱՐԱՏՆԵՐ	67
ԳԼՈՒԽ 20. ՌԵԼԵՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԷԼԵԿՏՐԱԱՎՏՈՄԱՏԻԿԱՅԻ ՍԱՐՔՎԱԾՔՆԵՐ, ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՀԱՇՎԱՌՔԻ ՍԱՐՔԵՐ, ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՂԹԱՆԵՐ	119
ԳԼՈՒԽ 21. ՓՈԽԱԴՐՈՎԻ (ՏԱՆՈՎԻ) ԷԼԵԿՏՐԱԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ԼՈՒՍԱՏՈՒՆԵՐ, ՁԵՌՔԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ, ԲԱԺԱՆԻՉ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՏՈՐՆԵՐ	121
ԳԼՈՒԽ 22. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ՝ ԷԼԵԿՏՐԱՏԵՂԱԿԱՅԱՆՔՆԵՐՈՒՄ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ, ԲԵՌՆԱՄԲԱՐՁ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ, ՄԵԽԱՆԻՉՄՆԵՐԻ ԵՎ ՍԱՆԴՈՒՂՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ	124
ԳԼՈՒԽ 23. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ.....	129
ԳԼՈՒԽ 24. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ, ՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹՈՒՅԼԱՏՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԷԼԵԿՏՐԱՏԵՂԱԿԱՅԱՆՔՆԵՐՈՒՄ ԵՎ ԷԼԵԿՏՐԱՀԱՂՈՐԴՄԱՆ ԳԾԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՈՏՈՒՄ.....	132
ԳԼՈՒԽ 25. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀՐԱՀԱՆԳԱՎՈՐՈՒՄ, ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹՈՒՅԼԱՏՐՈՒՄ	137
ԳԼՈՒԽ 26. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԷԼԵԿՏՐԱՏԵՂԱԿԱՅԱՆՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	141

Հավելված ա. ԷՆԵՐԳԵՏԻԿ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ ՀՈՍԱՆԱՀԱՐՈՒՄԻՑ ԵՎ ԱՅԼ ԴԺՔԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ ՏՈՒԺԱԾՆԵՐԻՆ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ.....	143
Հավելված բ. ԷԼԵԿՏՐԱՏԵՂԱԿԱՅԱՆՔՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՐԳԱԳԻՐ-ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎ ԵՎ ԱՅՆ ԼՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ.....	196
Հավելված գ. ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ ԷԼԵԿՏՐԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԽՈՒՄԲ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ.....	205
Հավելված դ. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԱԿՆԵՐ ԵՎ ՆՇԱՆՆԵՐ	210
Հավելված ե. ԱԿՏ-ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ.....	215
Հավելված զ. ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐ	217

ԲԱԺԻՆ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 1
ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏ

1. «Էլեկտրատեղակայանքների շահագործման անվտանգության կանոններ»-ի (այսուհետ՝ Կանոններ) գործողությունը տարածվում է՝

1) 50 Վ-ից բարձր փոփոխական հոսանքի և 120 Վ-ից բարձր հաստատուն հոսանքի արտադրողի, տեղափոխողի, բաշխողի և սպառողի էլեկտրատեղակայանքներին մատուցվող ծառայությունների վրա՝ անկախ դրանց սեփականության ձևից և գերատեսչական պատկանելիությունից.

2) պայմանագրային հիմունքներով էլեկտրատեղակայանքներն սպասարկող, փորձարկող, նորոգող, մոնտաժող, կարգաբերող և վերականգնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից մատուցվող ծառայությունների վրա:

2. Սույն Կանոնները չեն տարածվում այն կազմակերպությունների վրա, որոնք ծառայություն են մատուցում՝

1) նավերի և թռչող ապարատների մեջ գտնվող էլեկտրատեղակայանքների վրա.

2) ռադիոյի, հեռուստատեսության և էլեկտրոնային հաղորդակցության միջոցների էլեկտրատեղակայանքների բարձր հաճախականային մասի վրա.

3) փորձարկումների համար նախատեսված ոչ սերիական արտադրության եզակի էլեկտրատեղակայանքների վրա (արագացուցիչներ, գերբարձր լարման էլեկտրաէներգիայի աղբյուրներ և այլն), որոնց անվտանգության պահանջները սահմանվում են այդ էլեկտրատեղակայանքների կառուցման տեխնիկական պայմաններով և համաձայնեցվում պետական տեխնիկական վերահսկողություն իրականացնող ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի հետ.

4) կառուցվող կամ շահագործվող հանքահորերի և կառուցվող թունելների էլեկտրատեղակայանքների վրա, որոնց անվտանգության ապահովման պահանջները սահմանվում են այլ կանոններով և իրավական ակտերով.

5) տեխնոլոգիական սարքավորման մաս կազմող հաստատուն հոսանքի և մինչև 1000 Վ լարման փոփոխական հոսանքի տեղային աղբյուրների և դրանց մնայուն միացված սարքերի վրա, երբ դրանք էլեկտրական կապ չունեն հոսանքի այլ աղբյուրի հետ.

6) ռադիոլոգիական և բժշկական հատուկ սարքավորումների վրա, որոնց նկատմամբ անվտանգության պահանջները սահմանվում են այլ կանոններով կամ շահագործման փաստաթղթերով:

ԳԼՈՒԽ 2

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3. Սույն Կանոններում օգտագործվում են հետևյալ հասկացությունները՝

1) **էլեկտրատեղակայանք՝** մեքենաների, սարքերի, գծերի և օժանդակ սարքավորումների (այդ կառույցների ու շենքերի հետ միասին, որոնցում դրանք տեղադրված են) համախումբ, որը նախատեսված է էլեկտրական էներգիայի արտադրության, կերպափոխման, տրանսֆորմացիայի, հաղորդման, բաշխման և էներգիայի այլ տեսակների կերպափոխման համար.

2) **անվտանգություն՝** շրջակա միջավայրին, մարդկանց և կենդանիների կյանքին, գույքին վնաս հասցնելու անթույլատրելի ռիսկի բացակայություն.

3) **անվտանգության նորմեր՝** իրավասու մարմնի կողմից հաստատված և կանոններում, կատարման համար իրավական այլ ակտերում (շինարարական նորմեր, սանիտարահիգիենիկ նորմեր և այլն) ամրագրված պարտադիր նորմեր, որոնք սահմանում են արտադրական սարքավորման և (կամ) արտադրական գործընթացի անվտանգության հատկանիշները՝ որոշակի մեծություններով, պայմաններով, պահանջներով և այլ ձևաչափերով.

4) **աշխատանքային տեղ** (այսուհետ՝ **աշխատատեղ**)՝ գործատուի հետ ուղղակի կամ անուղղակի կապված տեղ կամ վայր, որտեղ աշխատողը պետք է գտնվի կամ ներկայանա՝ իր աշխատանքով պայմանավորված.

5) **աշխատանքի միջոցներ՝** աշխատանքի կատարման համար անհրաժեշտ մեխանիզմներ, սարքավորումներ, գործիքներ, պաշտպանության սարքեր և այլ միջոցներ.

6) **աշխատողների անվտանգություն և առողջություն (կամ աշխատանքի անվտանգություն)**՝ աշխատանքային գործունեության ընթացքում աշխատողների կյանքի և առողջության պահպանման համակարգ, որը ներառում է իրավական, սոցիալ-տնտեսական, կազմակերպական-տեխնիկական, սանիտարահիգիենիկ, բուժկանխարգելիչ, վերականգնողական և այլ միջոցառումներ.

7) **բարձր լարում՝** 1000 Վ-ից բարձր փոփոխական և 1500 Վ-ից բարձր հաստատուն լարում.

8) **ցածր լարում՝** լարման տիրույթ, որը ներառում է՝

ա. փոփոխական հոսանքի դեպքում՝ 50 Վ-ից բարձր լարում (գործող արժեքը) միջֆազային կամ «ֆազ-հող» հաղորդիչների միջև, մինչև 1000 Վ ներառյալ՝ միջֆազային լարման համար, կամ 600 Վ ներառյալ՝ ֆազային լարման համար,

բ. հաստատուն հոսանքի դեպքում՝ 120 Վ-ից բարձր լարման արժեք (լարման տակ հաղորդիչների միջև կամ լարման տակ հաղորդիչների և հողի միջև), մինչև 1500 Վ ներառյալ՝ լարման տակ հաղորդիչների միջև, կամ 900 Վ ներառյալ՝ լարման տակ հաղորդիչների և հողի միջև.

9) **էլեկտրական տեղային (լոկալ) համակարգ՝** տնտեսվարող սուբյեկտի կամ քաղաքացու տնօրինման տակ գտնվող էլեկտրական համակարգ, որն էլեկտրականապես կապված չէ ընդհանուր նշանակության էլեկտրական համակարգի հետ.

10) **էլեկտրատեղակայանքի տեխնիկական սպասարկում՝** էլեկտրատեղակայանքի տեխնիկական վիճակը և անվտանգության սահմանված մակարդակն ապահովող տեխնիկական միջոցառումների համալիր (կանխարգելիչ պարբերական նորոգումներ, փորձարկումներ, անվտանգությունն ապահովող հարաչափերի ստուգումներ և այլն).

11) **էլեկտրատեղակայանքի օպերատիվ սպասարկում՝** իրականացվում է հետևյալ աշխատանքների համալիրը՝

ա. էլեկտրատեղակայանքի աշխատանքի պահանջվող ռեժիմի վարում,

բ. սարքավորումների փոխանջատումների կատարում և գննում,

գ. նորոգման համար նախապատրաստություն (աշխատատեղերի նախապատրաստում, թույլտվություն).

12) **ընդհանուր նշանակության էլեկտրական համակարգ (ցանց)՝** << էլեկտրաէներգետիկական համակարգի մաս, որում էլեկտրաէներգիայի աղբյուրները, հաղորդման և բաշխման էլեկտրատեղակայանքներն էլեկտրականապես կապված են և էլեկտրաէներգիա են մատակարարում միացված սպառողներին.

13) **ռիսկերի գնահատում՝** աշխատանքային գործընթացի բնականոն և կրիտիկական վիճակներում աշխատատեղում աշխատողների կյանքի ու առողջության համար ռիսկեր պարունակող վտանգավոր և վնասակար գործոնների հաշվառում, հնարավոր ազդեցության գնահատում, որից կախված է անվտանգության միջոցառումների ընտրությունը.

14) **ռիսկերի կառավարում**՝ ռիսկերի նվազեցման կամ աշխատողի առողջության ու անվտանգության վրա դրանց ազդեցության հետևանքների նվազեցման համալիր միջոցառումներ.

15) **վտանգ**՝ մարդու, կենդանիների վրա էլեկտրատեղակայանքի էլեկտրաանվտանգության խախտման հետևանքով էլեկտրահարման և էլեկտրական աղեղի ազդեցության ռիսկեր, անթույլատրելի էլեկտրական մեծության մագնիսական և էլեկտրամագնիսական դաշտերի ազդեցության ռիսկեր, էլեկտրատեղակայանքի մեխանիկական մասերի շարժման հետ կապված ռիսկեր, բարձրության վրա կատարվող աշխատանքների դեպքում աշխատողի աշխատանքային վնասվածքի հետ կապված ռիսկեր.

16) **տեխնիկական սպասարկում իրականացնող անձ** (այսուհետ՝ **սպասարկող անձ**)՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով էլեկտրատեղակայանքների սպասարկման ծառայություններ մատուցող մասնագիտացված իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր կամ ֆիզիկական անձ.

17) **էլեկտրապաշտպանիչ միջոցներ**՝ անհատական, հիմնական և լրացուցիչ պաշտպանական միջոց, որը նախատեսված է էլեկտրաանվտանգության համար: Անհատական, հիմնական և լրացուցիչ պաշտպանության միջոցները հաշվարկված են կիրառելու փակ, բաց էլեկտրատեղակայանքներում, էլեկտրահաղորդման օդային ու մալուխային գծերի վրա աշխատանքներ կատարելիս.

18) **օպերատիվ-նորոգող անձնակազմ**՝ նորոգող անձնակազմ, որը հատուկ ծրագրով ուսուցանված և պատրաստված է իրեն ամրացված էլեկտրատեղակայանքների հաստատված ծավալով օպերատիվ սպասարկման համար.

19) **նորոգող անձնակազմ**՝ անձնակազմ, որն ապահովում է էլեկտրասարքավորումների տեխնիկական սպասարկումը և նորոգումը, տեղակայումը, կարգաբերումը և փորձարկումը.

20) **էլեկտրատեխնիկական անձնակազմ**՝ վարչատեխնիկական, օպերատիվ, օպերատիվ-նորոգող, նորոգող անձնակազմ, որն իրականացնում է էլեկտրատեղակայանքների տեղակայումը, կարգաբերումը, տեխնիկական սպասարկումը, նորոգումը, աշխատանքի ռեժիմի կառավարումը.

21) **էլեկտրատեխնոլոգիական անձնակազմ**՝ անձնակազմ, ով աշխատանքում օգտագործում է ձեռքի էլեկտրական մեքենաներ, փոխադրովի էլեկտրագործիքներ ու լուսատուներ և այլն (օրինակ՝ էլեկտրաեռակցում, էլեկտրաաղեղային վառարաններ,

էլեկտրոլիզ և այլն), որոնց համար պաշտոնեական հրահանգով սահմանված է սույն Կանոնների իմացությունը.

22) **վարչատեխնիկական անձնակազմ**[՝] ղեկավարներ և մասնագետներ, ում վրա դրված են էլեկտրատեղակայանքների տեխնիկական և օպերատիվ սպասարկման, նորոգման իրականացման, տեղակայման և կարգաբերման աշխատանքների կազմակերպման պարտականությունները.

23) **ոչ էլեկտրատեխնիկական անձնակազմ**[՝] անձնակազմ, որը չի համապատասխանում «էլեկտրատեխնիկական», «էլեկտրատեխնոլոգիական» անձնակազմերի սահմանմանը.

24) **օպերատիվ անձնակազմ**[՝] անձնակազմ, որն իրականացնում է էլեկտրատեղակայանքների օպերատիվ կառավարումը և սպասարկումը (զննումներ, օպերատիվ փոխանջատումներ, աշխատատեղի նախապատրաստում, թույլատրություն և հսկողություն աշխատողների վրա, ընթացիկ շահագործման կարգով կատարվող աշխատանքներ).

25) **անհետաձգելի աշխատանքներ**[՝] աշխատանքներ, որոնք պետք է կատարվեն առանց հետաձգման՝ մարդկանց վրա վտանգավոր արտադրական այն գործոնի ազդեցությունը կանխելու համար, որը կարող է հանգեցնել վնասվածքի կամ առողջության անսպասելի կորուկ վատթարացման, ինչպես նաև սարքավորումների, շինությունների, ջերմային ավտոմատիկայի և չափման (ՋԱԶ), սպառողների էլեկտրա- և ջերմամատակարարման սարքվածքների բնականոն աշխատանքի խախտմանը սպառնացող անսարքությունների և վնասվածքների վերացման աշխատանքներ.

26) **անվտանգության ցուցանակ (պլակատ)**[՝] ցուցանակ, որում նախանշված է մարդուն նախազգուշացնելու հնարավոր վտանգի, որոշակի գործողություններ արգելելու կամ պատվիրելու մասին, ինչպես նաև տեղեկություններ տալու այն օբյեկտների տեղաբաշխման մասին, որոնց օգտագործումը կապված է վտանգավոր և (կամ) վնասակար արտադրական գործոնների ազդեցության բացառման կամ հետևանքների նվազեցման հետ.

27) **բրիգադ**[՝] երկու և ավել աշխատողներից կազմված խումբ՝ ներառյալ աշխատանքներ իրագործողը (հսկողը).

28) **էլեկտրահաղորդման օդային գիծ (ՕԳ)**[՝] մեկուսիչների ու արմատուրի միջոցով հենասյուներին կամ ինժեներական կառույցների (կամուրջներ, ուղանցույցներ և այլն) վրա տեղադրված բարձակներին ու կանգնակներին ամրացված, բաց օդում գտնվող հաղորդալարերով էլեկտրաէներգիան հաղորդելու սարքվածք: Որպես էլեկտրահաղորդման

ՕԳ-ի սկիզբ և վերջ ընդունվում են գծային պորտալները կամ բաշխիչ սարքերի (ԲՍ) գծային մուտքերը (ներանցիչները), իսկ ճյուղավորումների համար՝ ճյուղավորման հենասյունը և գծային պորտալը կամ գծային մուտքի ԲՍ:

29) **մակաձված լարման տակ գտնվող ՕԳ՝** գործող ՕԳ-ի կամ փոփոխական հոսանքով էլեկտրաֆիկացված երկաթուղագծի կոնտակտային ցանցին մոտիկ անցնող (ամբողջ երկարությամբ կամ առանձին տեղամասերում) ՕԳ և կապի ՕԳ, որի անջատված հաղորդալարերում մակաձվում է 25 Վ-ից ավել լարում դրանց հողակցման տարբեր սխեմաների դեպքում (ինչպես և առանց հողակցման) գործող ՕԳ-ի (կոնտակտային ցանցի) առավելագույն աշխատանքային հոսանքի դեպքում:

30) **աշխատանքներ բարձրության վրա՝** 1.3 մ և ավել բարձրության վրա գտնվող և անկման եզրից 2 մ-ից պակաս հեռավորություն (լայնություն) ունեցող աշխատատեղեր, որոնց անցուղիները պետք է ցանկապատվեն ժամանակավոր ցանկապատերով ԳՕՍՍ (ճյուղային ստանդարտը) ԳՕՍՍ Ռ 12.3.053-2020 պահանջներին համապատասխան: Ցանկապատման անհնարինության դեպքում բարձրության վրա կատարվող աշխատանքները պետք է իրականացվեն ստուգված ապահովիչ գոտիների (ԳՕՍՍ 32489-2013) և ապահովական ճոպանների (ԳՕՍՍ Ռ 12.4.107-2012) օգտագործմամբ:

31) **վերնաշխատ աշխատանքներ՝** աշխատանքներ, որոնք կատարվում են գետնի մակերևույթից, ծածկից կամ աշխատանքային տախտակամածից (հարթակից) 5 մ-ից ավել բարձրության վրա գտնվող կառույցների կամ սարքավորումների հետ անմիջականորեն, դրանց տեղակայման կամ նորոգման ընթացքում, ընդ որում, աշխատողների վայր ընկնելուց ապահովող հիմնական միջոցն ամրագոտին է:

32) **հողակցում՝** էլեկտրատեղակայանքի համակարգի կամ սարքավորման որևէ կետի կանխամտածված էլեկտրական միակցում հողակցման սարքվածքին:

33) **պաշտպանական հողակցում՝** էլեկտրատեղակայանքի մասերի հողակցում էլեկտրաանվտանգության ապահովման նպատակով:

34) **նպատակային հրահանգավորում՝** էլեկտրատեղակայանքում կոնկրետ աշխատանքի անվտանգ կատարման ցուցումներ այն կարգի անձանց ընդգրկմամբ, ովքեր սահմանված են Կարգագրով կամ կարգադրությամբ՝ Կարգագիր, կարգադրություն տվողից մինչև բրիգադի անդամը կամ իրագործողը:

35) **մալուխային գիծ՝** էլեկտրաէներգիայի կամ նրա առանձին իմպուլսների հաղորդման գիծ՝ կազմված մեկ կամ մի քանի զուգահեռ մալուխներից, իրար միացնող, սևեռող ծայրային

կցորդիչներով (ամրակցումներով) և ամրացնող դետալներով, իսկ յուղալեցուն մալուխների համար, բացի դրանցից՝ նաև լրասնման սարքերով (ապարատներով) յուղի ճնշման ազդանշանման համակարգով.

36) **փոխարկման ապարատ**՝ էլեկտրական ապարատ՝ նախանշված էլեկտրական շղթայի փոխարկման և էլեկտրատեղակայանքի մասերից լարումը հանելու համար (անջատիչ, խզիչ, բեռնվածքի անջատիչ, զատիչ, ավտոմատ, հատիչ, ապահովիչ, խմբային անջատիչ և այլն).

37) **Կարգագիր-թույլտվություն (այսուհետ՝ Կարգագիր)**՝ աշխատանքի կատարման առաջադրանք, որը ձևակերպվում է սահմանված ձևի հատուկ բլանկի վրա և որով որոշվում են աշխատանքի բովանդակությունը, տեղը, դրա սկիզբը և ավարտը, անվտանգ կատարման պայմանները, բրիգադի կազմը և աշխատանքի անվտանգ կատարման պատասխանատու անձինք.

38) **կարգադրություն**՝ աշխատանքի կատարման առաջադրանք, որով որոշվում են աշխատանքի բովանդակությունը, տեղը, ժամանակը, անվտանգության միջոցառումները (եթե դրանք պահանջվում են) և անձինք, ում հանձնարարվում է դրա կատարումը, նշելով դրանց էլեկտրատեղակայանքի խմբերը.

39) **տիրագուրկ էլեկտրատեղակայանք**՝ տիրագուրկ է համարվում այն էլեկտրատեղակայանքը, որը չունի սեփականատեր, կամ որի սեփականատերն անհայտ է կամ հրաժարվել է դրա նկատմամբ սեփականության իրավունքից.

40) **ՕՄԳ**՝ օդային մեկուսացված գիծ:

ԳԼՈՒԽ 3

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

4. Սույն Կանոններով սահմանվում են էլեկտրատեղակայանքների անվտանգության ապահովման պայմանները, աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման համար տեխնիկական պահանջները, ինչպես նաև դրանց կատարման համար գործատուների, աշխատողների, սպասարկող անձանց և քաղաքացիների փոխհարաբերությունները: Այն ներառում է՝

1) նոր, վերակառուցվող և գործող էլեկտրատեղակայանքների անվտանգության հիմնական տեխնիկական պահանջները.

2) նոր կառուցվող (վերակառուցվող) էլեկտրատեղակայանքների նախագծման, կառուցման գործարկման պայմանները.

3) էլեկտրատեղակայանքների շահագործման ժամանակ անվտանգության ապահովման համակարգը և դրան առաջադրվող պահանջները.

4) պայմանագրային հիմունքներով էլեկտրատեղակայանքները սպասարկող անձանց առաջադրվող պահանջները և սերտիֆիկացման կարգը.

5) էլեկտրամատակարարման ընթացքում էլեկտրամատակարարի և էլեկտրասպառող կազմակերպության փոխհարաբերությունները՝ անվտանգության ապահովման համար:

5. Սույն Կանոններով սահմանվում են էլեկտրատեղակայանքների էլեկտրաանվտանգության ապահովման պահանջներն աշխատողների և այլ անձանց համար, աշխատողների աշխատանքի անվտանգության ապահովման պահանջները՝ բարձրության վրա վերնաշխատանքներ կատարելիս: Էլեկտրատեղակայանքների կամ դրանց հետ տեխնոլոգիապես կապված կայանքների այլ վտանգավոր կամ վնասակար գործոնների անթույլատրելի ազդեցության կանխարգելման պայմանները (օրինակ, թթուների կամ տրանսֆորմատորային յուղի կիրառմամբ կատարվող աշխատանքների, էլեկտրատեղակայանքի մաս կազմող շենքերի ու շինությունների նորոգման դեպքում) սահմանվում են կանոններով: Սույն Կանոնների՝ կարգավորման ոլորտին վերաբերող էլեկտրատեղակայանքների շահագործման ընթացքում անվտանգության ապահովման պահանջները նվազագույն պահանջներ են և պարտադիր են այդ պահանջների կատարումն ապահովող անձանց համար: Ելնելով տեղական պայմաններից և հիմք ընդունելով սույն Կանոնների ու այլ նորմատիվ ակտերի պահանջները՝ յուրաքանչյուր գործատու, անձամբ կամ սույն Կանոններով սահմանված դեպքերում, էլեկտրատեղակայանքները պայմանագրով սպասարկող անձի սպասարկմանը հանձնելով, էլեկտրատեղակայանքների շահագործման ամբողջ ընթացքում պարտավոր է ապահովել աշխատողների անվտանգությունն ու առողջության պահպանումը, էլեկտրատեղակայանքների հրդեհային անվտանգությունը, այդ թվում՝ իր սեփականությունը հանդիսացող տարածքից դուրս տեղակայված իր էլեկտրատեղակայանքների անվտանգությունը՝ մարդկանց, գույքի, կենդանիների և շրջակա միջավայրի համար: Յուրաքանչյուր կազմակերպություն պետք է սույն Կանոններով սահմանված պայմաններին համապատասխան՝

1) կատարի իր սեփականությունը հանդիսացող (իր կողմից տնօրինվող) տարածքում տեղակայված էլեկտրատեղակայանքների ռիսկերի գնահատում և, հիմք ընդունելով սույն

Կանոնների պահանջները, անձամբ կամ սպասարկող անձի միջոցով մշակի և ներդնի էլեկտրատեղակայանքների անվտանգության ապահովման ներքին իրավական ակտեր (կազմակերպության ստանդարտներ, կարգեր, կանոններ, հրահանգներ և այլն)՝ իր էլեկտրատնտեսության անվտանգությունն ապահովելու համար.

2) կատարի մարդկանց և կենդանիների համար՝ իր սեփականությունը հանդիսացող (իր կողմից տնօրինվող) տարածքից դուրս գտնվող իր էլեկտրատեղակայանքների ազդեցության ռիսկերի գնահատում, մշակի և ներդնի ռիսկերի նվազեցման համակարգ (զանգվածային լրատվության միջոցներով պարբերական իրազեկում բնակելի և ոչ բնակելի տարածքներում գտնվող էլեկտրատեղակայանքների վտանգի մասին, նախազգուշացնող պլակատների փակցում էլեկտրատեղակայանքներ պարունակող շինությունների, ցանկապատերի, օդային գծերի հենասյուների և հենարանների վրա՝ նշելով էլեկտրատեղակայանքի սեփականատիրոջ անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարները և այլն).

3) աշխատողներին ստորագրությամբ ծանոթացնի աշխատանքի անվտանգության ապահովման վերաբերյալ կազմակերպության ներքին իրավական ակտերին՝ դրանց ընդունումից հետո 3 օրվա ընթացքում, եթե դրանց ընդունման մասին գործատուի որոշմամբ այլ ժամկետ նախատեսված չէ: Քաղաքացու հետ աշխատանքային պայմանագիր կնքելիս գործատուն պարտավոր է նրան պատշաճ ծանոթացնել իր աշխատատեղին և աշխատանքային գործունեությանը վերաբերող աշխատանքի անվտանգության ու սանիտարահիգիենիկ պահանջների վերաբերյալ կազմակերպության բոլոր ներքին իրավական ակտերը.

4) իր էլեկտրատեղակայանքները՝ սպասարկող անձին պայմանագրով սպասարկման կամ փորձարկման, կամ վերակառուցման, կամ նորոգման հանձնելիս՝ այդ սպասարկող անձից պահանջի կատարվող աշխատանքների որակի և կանոններին համապատասխանության համար երաշխիքներ և պայմանագրով նախատեսված պատասխանատվության ձևեր:

6. էլեկտրատեղակայանքներ շահագործող, սպասարկող, փորձարկող, հսկող յուրաքանչյուր աշխատող իր, այլ աշխատողների ու քաղաքացիների առողջությունը պահպանելու և անվտանգությունն ապահովելու համար պարտավոր է կատարել անվտանգության վերաբերյալ կազմակերպության ներքին իրավական ակտերի պահանջները. իր գործունեությունն իրականացնել սույն Կանոնների, իր աշխատանքային պարտականություններին և իրավունքներին վերաբերող այլ կանոնների դրույթներին համապատասխան:

7. Կազմակերպության էլեկտրատեղակայանքները սպասարկող անձը պարտավոր է բոլոր աշխատանքները կատարել սույն Կանոնների, այլ իրավական ակտերի, շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:

8. Բնակելի և ոչ բնակելի տարածքներում գտնվող էլեկտրատեղակայանքներում հրդեհի, պայթյունի, ՕԳ-ների հաղորդալարերի կտրման, մալուխային գծերի տեսանելի վնասվածքների դեպքում քաղաքացիները չպետք է մոտենան վնասվածքի վայրին և կատարեն որևէ գործողություն, որը կարող է վտանգ ներկայացնել կյանքի ու առողջության համար: Հրդեհի, պայթյունի կամ ՕԳ-ի վնասվածքի մասին քաղաքացիները զգուշացնում են այդ էլեկտրատեղակայանքի սեփականատիրոջը, էլեկտրամատակարար կազմակերպությանը կամ տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես և այլ անձանց՝ դեպքի վայրին չմոտենալու մասին:

9. Գործող էլեկտրատեղակայանքները պետք է համապատասխանեն դրանց գործարկման պահին գործող անվտանգության պահանջներին և նորմերին: Գործող էլեկտրատեղակայանքների ամբողջական կամ մասնակի վերակառուցման, կամ սարքավորումների փոխարինման դեպքում վերակառուցվող (փոխարինվող) մասը պետք է համապատասխանի վերակառուցման (փոխարինման) պահին գործող կանոնների պահանջներին:

10. Կազմակերպության տարածքում գտնվող էլեկտրատեղակայանքները, որոնց տեխնիկական փաստաթղթերով սահմանված ծառայության ժամկետը լրացել է, գործատուի որոշմամբ կարող են մնալ շահագործման մեջ, եթե՝ ըստ ստուգումների արդյունքների, դրանց անվտանգության ցուցանիշները համապատասխանում են նորմատիվ ակտերի պահանջներին: Հասարակական վայրերում գտնվող էլեկտրատեղակայանքները, որոնց տեխնիկական շահագործման ժամկետը լրացել է, կարող են շահագործվել միայն տեխնիկական հսկողություն իրականացնող ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի թույլտվությամբ:

11. Նոր կառուցվող և վերակառուցվող էլեկտրատեղակայանքների համար կազմակերպությունը կարող է նախագծով նախատեսել նախկինում օգտագործված էլեկտրասարքավորման տեղադրում (բացառությամբ մեկուսացում ունեցող հաղորդալարերի, մալուխների, գերլարումներից պաշտպանության սարքերի և ցածր լարման ավտոմատ անջատիչների) հետևյալ պայմաններով՝

1) այդ տիպի սարքավորումները համապատասխանում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին.

2) ամբողջական ծավալով դրանց փորձարկումների արդյունքներն ապացուցում են, որ այդ էլեկտրասարքավորումը բավարարում է անվտանգության ապահովման պահանջները:

12. էլեկտրատեղակայանքների նախագծման, գործարկման և շահագործման ընթացքում պետք է կատարվեն անվտանգության ապահովման հետևյալ պահանջները՝

1) էլեկտրաէներգիայի արտադրության, փոխակերպման, հաղորդման, բաշխման և սպառման համար նախագծման փուլում ընտրվող ու տեղակայվող սարքավորումները պետք է համապատասխանեն գործող էլեկտրահամակարգի տեխնիկական հարաչափերին, շահագործման պայմաններին, տեղակայման վայրի բարձրությանը՝ ծովի մակարդակի նկատմամբ, սույն Կանոններին, աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման պահանջները սահմանող այլ կանոնների պահանջներին, իսկ կանոններով սահմանված դեպքերում լինեն նաև սերտիֆիկացված կամ հայտարարագրված:

2) էլեկտրամատակարարման և էլեկտրասպառման համակարգերը պետք է ունենան էլեկտրական վնասվածքների տեղայնացման և պաշտպանության, գերլարումների նվազեցման ու պաշտպանության փոխհամաձայնեցված համակարգեր:

3) նոր կառուցվող (վերակառուցվող) էլեկտրատեղակայանքները մինչև գործարկումը պետք է անցնեն նորմատիվ ակտերով նախատեսված կարգաբերումներ, փորձարկումներ և ստուգումներ, որոնց միջոցով հավաստվում է դրանց համապատասխանությունը կանոններին և այլ նորմատիվ ակտերին: էլեկտրատեղակայանքների կարգաբերումը, փորձարկումը և ստուգումը պետք է կատարվեն համապատասխան լիազորություն ունեցող սպասարկող անձի կողմից:

4) 6 կՎ և բարձր լարման նոր կառուցված և վերակառուցված էլեկտրատեղակայանքները պետք է ենթարկվեն տեխնիկական ստուգումների՝ պետական տեխնիկական վերահսկողություն իրականացնող լիազոր մարմնի կողմից, որի արդյունքում տրված գործարկման եզրակացության հիման վրա՝

ա. թույլատրվում է այդ էլեկտրատեղակայանքների միացումը գործող էլեկտրական համակարգին,

բ. թույլատրվում է էլեկտրամատակարարին այդ էլեկտրատեղակայանքների միացումը գործող էլեկտրական համակարգին,

գ. թույլատրվում է էլեկտրատեղակայանքի գործարկումն ավտոնոմ էլեկտրատեղակայանքների սեփականատերերի կողմից:

6) գործող էլեկտրատեղակայանքները շահագործման ամբողջ ընթացքում պետք է ենթարկվեն անվտանգության հարաչափերը և աշխատունակությունը հավաստող պարբերական փորձարկումների, իսկ անհրաժեշտության դեպքում՝ խախտված հարաչափերի նորոգումն ապահովող նորոգումների կամ փոխարինումների: Էլեկտրատեղակայանքի պարտադիր փորձարկումների պարբերականությունը և անվանացանկը սահմանվում են շահագործման փաստաթղթերով, իսկ դրանց բացակայության դեպքում՝ գործատուի կամ էլեկտրատեղակայանքը պայմանագրի հիման վրա սպասարկող անձի կողմից: Կազմակերպության էլեկտրատեղակայանքների փորձարկումների պարբերականությունը, ծավալները և դրանց փոփոխությունները համաձայնեցվում են էլեկտրամատակարար կազմակերպության հետ, եթե դրանք կարող են ազդել էլեկտրամատակարարման ցանցի, ենթասպառողների կամ մատակարարման ցանցին միացված այլ սպառողների էլեկտրատեղակայանքների վրա:

7) բարձր լարման բոլոր էլեկտրատեղակայանքները և ցածր լարման բոլոր եռաֆազ էլեկտրատեղակայանքները պետք է սպասարկվեն, փոխարինվեն, փորձարկվեն դրանց սեփականատեր հանդիսացող կազմակերպության մասնագիտացված անձնակազմի կամ սպասարկող անձի կողմից: Էլեկտրաէներգետիկական համակարգի և այլ ոլորտների կազմակերպությունները, որոնք ունեն աշխատողների անվտանգության ուսուցման, գիտելիքների ստուգման, էլեկտրաանվտանգության խմբի շնորհման ու ստաժավորման սեփական համակարգեր, իրենց աշխատողներին վկայականներ շնորհելու իրավունք ունեն: Նրանց տրված վկայականը գործում է միայն տվյալ կազմակերպությունում աշխատանքներ կատարելու համար:

8) անվտանգության պահանջներին չհամապատասխանող էլեկտրատեղակայանքները կազմակերպության կողմից պետք է անջատվեն ընդհանուր նշանակության էլեկտրական համակարգից, կամ հնարավոր կարճ ժամկետում պետք է վերականգնվի այդ էլեկտրատեղակայանքների համապատասխանությունն անվտանգության պահանջներին:

9) սույն Կանոններով սահմանված անվտանգության տեխնիկական պահանջների կատարումն ապահովող նորմերը կարող են փոփոխվել միայն իրավասու պետական մարմնի գրավոր համաձայնությամբ, եթե շահագրգիռ անձը (պատվիրատուն, նախագծողը, կառուցողը) ապացուցում է, իսկ իրավասու մարմինն ընդունում է, որ այլ տեխնիկական լուծումներն ապահովում են անվտանգության առնվազն նույն մակարդակը, ինչն ապահովվում է սույն Կանոնների կատարման դեպքում:

13. Մինչև էլեկտրատեղակայանքների նախագծման, սարքավորումների ընտրության և կառուցման վերաբերյալ նորմատիվ տեխնիկական պահանջների և նորմերի ամբողջական փաթեթի մշակումն ու հաստատումը՝ էլեկտրատեղակայանքների համար հիմք են ընդունվում էլեկտրատեղակայանքների անվտանգության ապահովման վերաբերյալ սույն Կանոններով նախատեսված ստանդարտներով սահմանված պահանջները:

14. էլեկտրատեղակայանքների նախագծման ընթացքում պատվիրատուն կարող է նախագծողից պահանջել էլեկտրատեղակայանքի անվտանգության ապահովման լրացուցիչ պահանջների կամ անվտանգության նորմերի ապահովման ավելի բարձր կիրառում, սակայն չի կարող պահանջել կանոններով նախատեսված նորմերի մասնակի կիրառում:

15. էլեկտրատեղակայանքների նախագծման կամ կառուցման ընթացքում չպետք է նախատեսվեն կամ տեղակայվեն այնպիսի էլեկտրական սարքավորումներ, հաղորդագծեր կամ այլ սարքեր, որոնք ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հավաստված չեն և չեն համապատասխանում կանոններին և այլ իրավական ակտերին՝ անկախ դրանց՝ շուկայում վաճառքի մեջ լինելուց:

16. Յուրաքանչյուր նոր սպառողի՝ էլեկտրամատակարարման ցանցին միացման տեխնիկական պայմաններ տալիս էլեկտրամատակարարը պարտավոր է սպառողին ներկայացնել առաջարկվող էլեկտրամատակարարման սխեմայի հուսալիությունը և էլեկտրամատակարարման ընդհատման ռիսկերը: Այն սպառողները, որոնց էլեկտրամատակարարման ընդհատումները կարող են հանգեցնել աշխատողների կամ այլ անձանց առողջության ու անվտանգության խախտման ռիսկերի կամ շրջակա միջավայրի վրա անթույլատրելի ազդեցության, պարտավոր են նախատեսել դրանց կանխարգելման միջոցներ (սնման սեփական ռեզերվային աղբյուրներ, անվտանգ տեխնոլոգիաներ և այլն): Սպառողի էլեկտրասնման ռեզերվային աղբյուրների և ընդհանուր նշանակության էլեկտրական համակարգի զուգահեռ աշխատանքը բացառող տեխնիկական միջոցների նկատմամբ տեխնիկական պահանջները սահմանում է էլեկտրամատակարարը:

17. Տնտեսվարող սուբյեկտները, անկախ սեփականության ձևից, իրենց սեփականությունը չհանդիսացող (հաշվեկշռում չգտնվող, տիրազուրկ), սակայն իրենց կողմից էլեկտրատեղակայանքների տնօրինման կամ օգտագործման դեպքում պարտավոր են պահպանել սույն Կանոններով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները:

18. Սույն կանոններում նշված մատյանները կարող են լրացվել թղթային կամ էլեկտրոնային տարբերակով (մատյանների բոլոր տեսակների օրինակելի ձևերը տես Հավելված գ-ում):

ԳԼՈՒԽ 4

ԷԼԵԿՏՐԱՏԵՂԱԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ, ԿԱՌՈՒՑՄԱՆ, ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

19. Էլեկտրատեղակայանքի կառուցման կամ վերակառուցման նախագծերը պետք է կազմվեն համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից, համաձայնեցնելով բոլոր շահագրգիռ կողմերի հետ, և օրենքով սահմանված դեպքերում ու կարգով ենթարկվեն փորձաքննության:

20. Սպառողի նոր կառուցվող (վերակառուցվող) էլեկտրատեղակայանքի նախագծերը ենթակա են էլեկտրամատակարար կազմակերպության հետ համաձայնեցման, եթե միացման պայմանագրի համաձայն (էլեկտրամատակարարման ցանցին միացման տեխնիկական պայմանների) նախատեսվում է կառուցվող էլեկտրասնման գծերի միացում ընդհանուր նշանակության էլեկտրական ցանցին կամ ցանցին միացված՝ գործող գծերի թողունակության (բեռնվածքի) մեծացում: Համաձայնեցման գործընթացում էլեկտրամատակարար կազմակերպությունն իր իրավասությունների շրջանակներում ստուգում է՝

1) նախագծի համապատասխանությունը միացման պայմանագրին (էլեկտրամատակարարման ցանցին միացման տեխնիկական պայմաններին):

2) էլեկտրասպառման համակարգի (սարքավորումների) և ընդհանուր նշանակության էլեկտրական համակարգի էլեկտրամագնիսական համատեղելիությունը՝ սարքավորումների և սարքերի անվտանգ աշխատանքի ապահովման առումով:

3) վնասվածքների կամ վթարների դեպքում պաշտպանության ու ավտոմատիկայի սարքերի ընտրությունը և դրանց աշխատանքային հարաչափերի համապատասխանությունը կանոնների պահանջներին և ընդհանուր նշանակության էլեկտրական ցանցի հարաչափերին:

4) անվտանգությունն ապահովող այլ տեխնիկական միջոցների (հողակցման և (կամ) զրոյակցման համակարգերը, գերլարումներից պաշտպանությունը և այլն) համապատասխանությունը կանոններին և ընդհանուր նշանակության էլեկտրական ցանցի հարաչափերին: Եթե սպառողի կառուցվող (վերակառուցվող) էլեկտրատեղակայանքները

միացման պայմանագրի համաձայն պետք է սնվեն (սնվում են) այլ սպառողին պատկանող էլեկտրական ցանցերից, ապա համաձայնեցման գործընթացի մասնակից պետք է հանդիսանա այն սպառողը, որի էլեկտրատեղակայանքներին նախատեսվում է միացնել այլ սպառողի էլեկտրական համակարգը:

21. Էլեկտրատեղակայանքի հավաքակցման համար օգտագործվող ցածր և բարձր լարման հոսանքի փոխարկիչ և պաշտպանության սարքերը պետք է լինեն հավաստված, ունենան սարքավորման տեխնիկական անձնագիր և համապատասխանեն տեխնիկական կանոնների և այլ իրավական ակտերի պահանջներին:

22. Կառուցվող (վերակառուցվող) էլեկտրատեղակայանքի պատվիրատուն կամ նրա գործառույթներն իրականացնող անձը պարտավոր է տեխնիկական վերահսկողություն իրականացնել էլեկտրատեղակայանքների շինհավաքակցման աշխատանքների նկատմամբ իր մասնագիտացված անձնակազմի կամ իր կողմից ընտրված սպասարկող անձի միջոցով:

23. Անվտանգության պահանջներին և պարտադիր ստանդարտներով (սարքավորման տեխնիկական պայմաններով) սահմանված հարաչափերին էլեկտրատեղակայանքի համապատասխանությունն ստուգելու համար կառուցվող (վերակառուցվող) էլեկտրատեղակայանքները պետք է ենթարկվեն փորձարկումների և ստուգումների՝ կանոններով կամ սարքավորումների շահագործման փաստաթղթերով սահմանված կարգով:

24. Կառուցվող (վերակառուցվող) էլեկտրատեղակայանքների շինմոնտաժային աշխատանքների ավարտը փաստագրվում է ընդունող հանձնաժողովի կողմից՝ << կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգով:

25. Անկախ սեփականության ձևից՝ 6 կՎ և բարձր լարման նոր կառուցված և վերակառուցված էլեկտրակայանքների գործարկման եզրակացությունների տրամադրման կարգը սահմանված է << կառավարության 2005 թվականի հունիսի 1-ի N 739-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն:

26. Փոփոխական հոսանքի մինչև 1 կՎ լարման և հաստատուն հոսանքի մինչև 1.5 կՎ լարման էլեկտրատեղակայանքների գործարկման պայմանները սահմանում է գործատուն՝ հետևյալ պայմաններով՝

1) եթե կազմակերպության էլեկտրատեղակայանքները շահագործման ընթացքում պայմանագրի հիման վրա պետք է սպասարկվեն մասնագիտացված կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից, ապա մասնագիտացված կազմակերպությունը մինչև

գործարկումը ստուգում է էլեկտրատեղակայանքի անվտանգությունը և տալիս գրավոր եզրակացություն ստուգման արդյունքների մասին.

2) եթե կազմակերպության էլեկտրատեղակայանքները պետք է սպասարկվեն սեփական մասնագիտացված անձնակազմի կողմից, ապա էլեկտրատնտեսության համար պատասխանատու անձը մինչև գործարկումը ստուգում է էլեկտրատեղակայանքի անվտանգությունը և տալիս գրավոր եզրակացություն ստուգման արդյունքների մասին:

27. Կառուցվող (վերակառուցվող) էլեկտրատեղակայանքի (դրանց համախմբի) գործարկման համար կազմակերպությունը պարտավոր է ունենալ հետևյալ փաստաթղթերի փաթեթը՝

1) էլեկտրատեղակայանքի նախագիծը՝ շինհավաքակցման աշխատանքների ժամանակ կատարված՝ թույլատրված փոփոխություններով.

2) սարքավորումների տեխնիկական անձնագրերն ու հրահանգները.

3) ստուգման-փորձարկման մասին արձանագրությունները.

4) էլեկտրատեղակայանքի գործարկման թույլատրման մասին եզրակացությունը.

5) էլեկտրատեղակայանքի անվտանգ շահագործման մասին հրահանգները.

6) ընդունող հանձնաժողովի հանձնման-ընդունման ակտը.

7) շինարարական նորմերով սահմանված շինհավաքակցման աշխատանքների վերաբերյալ այլ փաստաթղթեր.

8) էլեկտրամատակարարման պայմանագիրը մատակարար կազմակերպության հետ, եթե սպառողի էլեկտրատեղակայանքները պետք է միանան ընդհանուր նշանակության էլեկտրական ցանցին:

ԳԼՈՒԽ 5

ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐԻ ԵՎ ՍՊԱՌՈՂԻ ՓՈԽՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ

28. Մատակարարն ու սպառողն էլեկտրաէներգիայի մատակարարման և օգտագործման ամբողջ ընթացքում պարտավոր են ապահովել միացման պայմանագրով, էլեկտրատեղակայանքների նախագծերով, էլեկտրամատակարարման պայմանագրով և նորմատիվ տեխնիկական փաստաթղթերով նախատեսված էլեկտրատեղակայանքների անվտանգության պահանջները՝ նրանց էլեկտրատեղակայանքներին միացված՝ այլ անձի պատկանող էլեկտրատեղակայանքների համար՝ հետևյալ միջոցառումների կիրառմամբ՝

1) էլեկտրատեղակայանքների տեխնիկական վիճակի ստուգում, սարքավորումների հուսալիությունն ու անվտանգությունն ապահովող հարաչափերի վերականգնում և ապահովում

տեխնիկական նորմատիվ փաստաթղթերով, սարքավորումների շահագործման փաստաթղթերով սահմանված և կողմերի միջև փոխհամաձայնեցված ծավալներով ու պարբերականությամբ.

2) էլեկտրամագնիսական խանգարումների աղբյուր հանդիսացող և (կամ) լարման անհամաչափություն ստեղծող սպառողի սարքավորումների աշխատանքի մշտական հսկում.

3) մատակարարի կողմից իր ցանցերում տեղակայված՝ սպառողի էլեկտրատեղակայանքների ռելեական պաշտպանության տեխնիկական միջոցների հարաչափերի ապահովում.

4) մատակարարի կողմից իր 0,4 կՎ լարման էլեկտրական ցանցից սնվող սպառողի էլեկտրատեղակայանքների անվտանգությունն ապահովող մատակարարման ցանցի հողակցման համակարգի հարաչափերի մշտական ապահովում.

5) կողմերից մեկի սեփականությունը հանդիսացող, մյուս կողմի տարածքում (այդ թվում՝ սենքերում) գտնվող գծերի ու սարքավորումների ամբողջականության պահպանում տարածքի սեփականատիրոջ կողմից:

29. Ընդհանուր նշանակության էլեկտրական ցանցերից սնվող սպառողը պարտավոր է էլեկտրամատակարարին անհապաղ հայտնել իր էլեկտրատեղակայանքներում վթարների և վթարային իրավիճակների մասին, որոնք կարող են ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդել մատակարարի ցանցերի վրա:

30. Սպառողի մոտ արտակարգ իրավիճակներում (հրդեհ, դժբախտ դեպքեր և այլն) էլեկտրամատակարարը պարտավոր է սպառողի առաջին իսկ պահանջով օրվա ցանկացած ժամին հնարավոր կարճ ժամկետում էլեկտրական ցանցից անջատել սպառողի էլեկտրամատակարարման գծերը:

31. էլեկտրական համակարգի սնման այլ (ավտոնոմ) աղբյուր ունեցող սպառողները պարտավոր են մշտապես աշխատունակ վիճակում պահել արգելափակող սարքերը, ինչը կբացառի լարման հետադարձ կամ զուգահեռ միացումը հիմնական սնման աղբյուրին:

32. Եթե, մատակարարի գնահատմամբ, սպառողի էլեկտրատեղակայանքները գտնվում են վթարային վիճակում, ինչն էական վտանգ է ստեղծում մատակարարի էլեկտրատեղակայանքների համար, ապա մատակարարն իրավունք ունի ընդհատել վերջինիս մատակարարումը՝ զգուշացնելով սպառողին:

33. Սպառողը պարտավոր է էլեկտրամատակարարման պայմանագրով սահմանված կարգով ապահովել մատակարարի ներկայացուցիչների մուտքն իր էլեկտրատեղակայանքները, որոնք մատակարարին պատկանող սնման գծերով միացված են վերջինիս ցանցին՝ այդ գծերի վրա ստուգման աշխատանքներ կատարելու համար:

34. 6 կՎ և բարձր լարման ընդհանուր նշանակության ցանցերից սնվող կազմակերպությունը պարտավոր է նշանակել էլեկտրամատակարարի հետ օպերատիվ խոսակցությունների վարման իրավունք և պարտականություն ունեցող պատասխանատու անձ (անձինք) էլեկտրատեխնիկական անձնակազմից: Պատասխանատու անձի տվյալները և հեռախոսահամարները գրավոր ներկայացվում են էլեկտրամատակարար կազմակերպություն:

ԳԼՈՒԽ 6

ԷԼԵԿՏՐԱՏԵԼԱԿԱՅԱՆՔՆԵՐԻ ԿԱՐԳԱԲԵՐՄԱՆ, ՓՈՐՁԱՐԿՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ, ՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

35. Պայմանագրային հիմունքներով կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և քաղաքացիների մատուցած ծառայություններն իրականացվում են ՀՀ օրենսդրության և սույն Կանոնների պահանջներին համապատասխան:

36. Կազմակերպությունը, որը պայմանագրի հիման վրա կատարում է պատվիրատուի էլեկտրատեղակայանքների կարգաբերման, փորձարկման, տեխնիկական սպասարկման կամ նորոգման միանգամյա կամ մշտական աշխատանքներ, պարտավոր է՝

1) ապահովել իր կողմից կատարվող աշխատանքների ծավալների և անվանացանկի համապատասխանությունը կանոնների պահանջներին.

2) ապահովել փորձարկված (կարգաբերված, նորոգված) էլեկտրատեղակայանքների անվտանգությունը պայմանագրով կամ սարքավորման տեխնիկական անձնագրով սահմանված միջփորձարկման (միջնորոգման) ժամանակահատվածի համար, պայմանով, որ պատվիրատուն օգտագործում է այդ սարքավորումները՝ դրանց տեխնիկական անձնագրերով սահմանված պահանջների պահպանմամբ.

3) կազմել և պատվիրատուին տրամադրել փորձարկումների (նորոգումների կամ ստուգումների) մասին արձանագրություններ և այլ տեխնիկական փաստաթղթեր, որոնցով հավաստվում են կատարված աշխատանքների ծավալն ու արդյունքները:

ԲԱԺԻՆ 2

ԷԼԵԿՏՐԱՏԵՂԱԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

ԳԼՈՒԽ 7

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

37. Սույն պահանջները տարածվում են՝

1) էլեկտրաէներգետիկայի ոլորտում էլեկտրաէներգիայի արտադրության, հաղորդման, բաշխման գործունեություն իրականացնող կազմակերպությունների վրա.

2) էլեկտրատեղակայանքները հաստիքային մասնագիտացված անձնակազմի միջոցով շահագործող և (կամ) սպասարկող կազմակերպությունների վրա.

3) այն կազմակերպությունների վրա, որոնք պայմանագրային հիմունքներով կատարում են շինմոնտաժային, հավաքակցման, փորձարկման և թողարկման աշխատանքներ՝ սույն կետի 1) և 2) ենթակետերում նշված կազմակերպությունների էլեկտրատեղակայանքներում.

4) էլեկտրասպառող կազմակերպությունների վրա՝ սույն գլխում սահմանված դեպքերում:

38. Յուրաքանչյուր կազմակերպություն իր սեփականությունը հանդիսացող կամ իր կողմից տնօրինվող էլեկտրատեղակայանքների անվտանգությունն այլ անձանց կյանքի ու գույքի համար, ինչպես նաև էլեկտրատեղակայանքները սպասարկող աշխատողների, գործող էլեկտրատեղակայանքներում պայմանագրային հիմունքներով աշխատանքներ իրագործող աշխատողների առողջությունն ու անվտանգությունն ապահովելու համար պարտավոր է ապահովել հետևյալ պարտադիր միջոցառումների կատարումը՝

1) կառուցվող (վերակառուցվող) էլեկտրատեղակայանքների գործարկում՝ սույն Կանոնների Գլուխ 3-ի պահանջներին համապատասխան.

2) յուրաքանչյուր աշխատատեղում և աշխատանքային գործընթացում ռիսկերի գնահատում, աշխատողների անվտանգության ապահովման ու առողջական վիճակի անձնագրերի կազմում.

3) աշխատատեղերում և աշխատանքային գործընթացներում ռիսկերի գնահատում և դրանց ազդեցության նվազեցման վերաբերյալ աշխատողների, կազմակերպության էլեկտրատեղակայանքներում աշխատանքներ կատարելու համար գործուղված անձանց

նախնական հրահանգավորում՝ մինչև ինքնուրույն աշխատանքի թույլատրումը, և պարբերական՝ աշխատանքային գործունեության ընթացքում.

4) գործող էլեկտրատեղակայանքների շահագործման, օպերատիվ և տեխնիկական սպասարկման վերաբերյալ ներքին իրավական ակտերի (կազմակերպության ստանդարտների, շահագործման կանոնների և այլն) մշակում, ընդունում և կատարում՝ էլեկտրատեղակայանքների շահագործման ամբողջ ընթացքում դրանց անվտանգությունն ապահովելու համար.

5) գործող էլեկտրատեղակայանքների օպերատիվ և տեխնիկական սպասարկման, նորոգման և փորձարկման աշխատանքներ իրագործող ստորաբաժանումների կառուցվածքի և գործառույթների սահմանում՝ կազմակերպության ներքին իրավական ակտերով.

6) էլեկտրատեխնիկական անձնակազմի ուսուցման ծրագրերի, ուսուցման, հրահանգավորման, ատեստավորման, ինքնուրույն աշխատանքի անցնելու թույլատրման, կրկնորդման վերաբերյալ ներքին և անհատական իրավական ակտերի ընդունում.

7) աշխատանքների անվտանգ կատարման վերաբերյալ հրահանգների ու կանոնների կազմում և ընդունում, որոնցում ներառվում են անվտանգության ապահովման տեխնիկական ու կազմակերպական միջոցառումները, պաշտպանության միջոցներից օգտվելու պայմանները, պաշտոնեական հրահանգների շրջանակներում նշելով աշխատանքի անվտանգությունն ապահովող յուրաքանչյուր աշխատողի իրավունքները, պարտավորությունները և պատասխանատվությունը.

8) աշխատանքների անվտանգ կատարման համար աշխատողների ապահովումը համապատասխան գործիքներով, սարքավորումներով, անհատական պաշտպանության միջոցներով, չափիչ և ստուգիչ սարքերով.

9) անվտանգության կառավարման համակարգի՝ որպես կազմակերպության աշխատանքային գործունեության կարևոր օղակներից մեկի կազմավորումը և աշխատանքի ապահովումը (կազմակերպության անվտանգության ստորաբաժանման կազմավորումն ու աշխատանքի ապահովումը, անվտանգության ապահովման կարճաժամկետ և երկարաժամկետ միջոցառումների մշակումը, ֆինանսավորումը, ներդրումը, անվտանգության վերահսկումը, խախտումների վերլուծությունը և այլն).

10) գործող էլեկտրատեղակայանքներում աշխատանքներ իրագործող էլեկտրատեխնիկական անձնակազմի աշխատողների՝ գործատուի հաշվին պարբերական բժշկական զննման անցկացումը.

11) կազմակերպության կողմից՝ իր տարածքից դուրս գտնվող օդային ու մալուխային գծերի, ենթակայանների, մալուխային էստակադների ու ստորգետնյա կառույցների պարբերական զննումների կազմակերպումն ու անցկացումը՝ այլ անձանց կյանքի ու գույքի անվտանգությունն ապահովելու նպատակով: Կազմակերպությունն այդ էլեկտրատեղակայանքների վտանգների մասին պետք է պարբերաբար տեղեկացնի հանրությանը զանգվածային լրատվության միջոցներով:

39. էլեկտրամատակարար կազմակերպության կողմից՝ իր սեփականությունը հանդիսացող էլեկտրական ցանցերից սնվող սպառողներին էլեկտրամատակարարման ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի ԳՕՍՏ 32144-2013 ստանդարտի պահանջներին և հետևյալ չափանիշներին համապատասխան, սակայն չսահմանափակվելով դրանցով՝

1) լարման մեծություն՝ դրա թույլատրելի շեղումների սահմաններում.

2) էլեկտրական ցանցերում առաջացող այն գերլարումների սահմանափակում՝ մինչև թույլատրելի մակարդակը, որոնք էլեկտրական կամ էլեկտրամագնիսական կապերի շնորհիվ կարող են անցնել սպառողի էլեկտրական ցանցերը և վնասել սպառողի էլեկտրատեղակայանքները:

40. էլեկտրամատակարար կազմակերպությունը պետք է ապահովի իր սեփականությունը հանդիսացող էլեկտրական ցանցերին անմիջականորեն միացված՝ սպառողի սեփականությունը հանդիսացող էլեկտրական գծերի պաշտպանությունն էլեկտրական վնասվածքներից՝ համաձայն միացման պայմանագրի:

ԳԼՈՒԽ 8

ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ

41. Գործող էլեկտրատեղակայանքներում աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման համար գործատուն պարտավոր է գնահատել էլեկտրատեղակայանքներում վտանգավոր և վնասակար գործոնների ազդեցության ռիսկերը յուրաքանչյուր էլեկտրատեղակայանքի (էլեկտրատեղակայանքների խմբի) աշխատանքի

համար, մշակել և ներդնել կազմակերպության աշխատանքի անվտանգության կառավարման համակարգ՝ հիմք ընդունելով սույն Կանոններով սահմանված պահանջները:

42. Էլեկտրատեղակայանքներում աշխատանքներ կատարելիս՝ վտանգավոր գործոնների ազդեցության ռիսկերը գնահատվում են հետևյալ ձևով և չափանիշներով՝

- 1) ցածր ռիսկայնության աշխատանքներ.
- 2) միջին ռիսկայնության աշխատանքներ.
- 3) բարձր ռիսկայնության աշխատանքներ:

43. Ռիսկերի գնահատման համար սահմանվում են հետևյալ չափանիշները՝

1) ցածր ռիսկայնության աշխատանքի պայմաններում բացակայում են վտանգավոր գործոնները: Դրանց հանկարծակի առաջացման և աշխատողի վրա հնարավոր ազդեցության դեպքերում (օրինակ, հրդեհ կամ ֆորս մաժորային այլ երևույթ) աշխատողը հնարավորություն ունի խուսափելու դրանց ազդեցությունից.

2) միջին ռիսկայնության աշխատանքի պայմաններում առկա են աշխատատեղի և (կամ) աշխատանքային գործընթացի հետ կապված վտանգավոր ու վնասակար գործոններ, որոնց նվազեցման համար նախատեսվում են անվտանգության միջոցառումներ, սակայն ռիսկերը մնում են, եթե՝

ա. որոշ վտանգավոր գործոններ շարունակում են մնալ անկառավարելի,

բ. սահմանված անվտանգության միջոցառումների մասնակի կիրառման դեպքում էապես աճում է ռիսկի աստիճանը.

3) բարձր ռիսկայնության աշխատանքի պայմաններում մեծ է վտանգավոր և վնասակար գործոնների ու դրանց հետ կապված ռիսկերի քանակը, որոնց մի մասն անկառավարելի է: Այդ ռիսկերը թույլատրելի մակարդակի հասցնելու համար պետք է կիրառվեն կանոններով, ազգային ստանդարտներով և այլ իրավական ակտերով սահմանված և բավարար փորձի արդյունքներին համապատասխանող լրացուցիչ անվտանգության միջոցառումներ:

ԳԼՈՒԽ 9

ԷԼԵԿՏՐԱՏԵԴԱԿԱՅԱՆՔՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

44. Ցածր ռիսկայնության պայմաններով աշխատանք են համարվում հետևյալ աշխատանքները՝

1) վարչական և ծառայողական այն աշխատանքները, որոնք իրականացվում են էլեկտրատեխնիկական և ոչ էլեկտրատեխնիկական անձնակազմի կողմից.

2) հաշվարկման-համակարգչային տեխնիկայի, տեղական կապի, պահակային ծառայության, վարչական և արտադրական շենքերի (բացի էլեկտրական ցանցերից) տեխնիկական սպասարկման աշխատանքները.

3) այլ աշխատանքներ, որոնց կատարման համար ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով հատուկ ուսուցում և որակավորման ստուգում չի պահանջվում:

45. Միջին ռիսկայնության պայմաններով աշխատանք են համարվում հետևյալ աշխատանքները՝

1) գործող էլեկտրատեղակայանքներում բոլոր աշխատանքները, որոնց կատարման համար պահանջվում են անվտանգության միջոցառումներ.

2) օպերատիվ փոխանջատումներ բարձր լարման էլեկտրատեղակայանքներում՝ առանց հեռակառավարման միջոցների.

3) մեխանիզմների կիրառմամբ բեռնաբարձման, բեռնաթափման, բեռների տեղափոխման, բեռների պահեստավորման աշխատանքներ.

4) այլ աշխատանքներ՝ վերամբարձ և հողափոր մեխանիզմների կիրառմամբ.

5) բարձր լարման կիրառմամբ չափումներ և փորձարկումներ ստացիոնար լաբորատորիաներում.

6) բաց կրակի, թունաքիմիկատների, բնական և հեղուկ գազի, ցնդող դյուրավառ նյութերի տեխնոլոգիական կիրառմամբ աշխատանքներ.

7) գազաէլեկտրաեռակցման աշխատանքներ.

8) բարձր ճնշման տակ գտնվող կայանքների շահագործման, սպասարկման և նորոգման աշխատանքներ.

9) գործող էլեկտրական գծերի անվտանգության գոտիներում մեխանիզմների կիրառմամբ կատարվող աշխատանքներ.

10) փակ մալուխային կառույցներում կատարվող աշխատանքներ, եթե դրանք կանոններով սահմանված չեն որպես բարձր ռիսկայնության պայմաններով աշխատանքներ:

46. Բարձր ռիսկայնության պայմաններով աշխատանք են համարվում հետևյալ աշխատանքները՝

1) աշխատանքներ 1000 Վ-ից բարձր լարման էլեկտրատեղակայանքներում, որոնք բնորոշվում են որպես «աշխատանքային լարման տակ գտնվող հոսանատար մասերի վրա» կատարվող աշխատանքներ.

2) փորձարկման-չափման աշխատանքներ՝ 1000 Վ-ից բարձր լարման կիրառմամբ շարժական լաբորատորիաներով.

3) վթարային վիճակում գտնվող հենասյուներով օդային 0,4-35 կՎ գծերի սպասարկման աշխատանքներ՝ հենասյուների վրա աշխատողի՝ 3 մ և ավել բարձրանալու դեպքում.

4) լարման տակ գտնվող 1000 Վ-ից բարձր լարման ՕԳ-ների սպասարկման աշխատանքներ՝ հենասյուների և հենարանների վրա աշխատողի՝ 3մ և ավել բարձրանալու դեպքում.

5) միջին ռիսկայնության պայմաններով աշխատանքներ, որոնք կատարվում են արտակարգ և շտապ գործողություններ պահանջող իրավիճակներում՝ առանց այդ աշխատանքների համար նախատեսված անվտանգության միջոցառումների ամբողջական կիրառման, ինչը մեծացնում է ռիսկերը:

ԳԼՈՒԽ 10

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

47. Գործող էլեկտրատեղակայանքներում աշխատանքները պետք է կատարվեն շահագործող կազմակերպության կողմից տրվող Կարգագիր-թույլտվությամբ (այսուհետ՝ Կարգագիր), կարգադրությամբ կամ ընթացիկ շահագործման կարգով՝

1) Կարգագիրը հանդիսանում է անվտանգ աշխատանքները կազմակերպելու, կազմակերպչական և տեխնիկական միջոցառումների կատարման հիմնական իրավական փաստաթուղթ.

2) Կարգագրի առաջարկվող օրինակելի ձևը և լրացման կարգը տես Հավելված Բ-ում.

3) Հավելված Բ-ում առաջարկվող Կարգագրի ձևը և լրացման կարգը նվազագույն պահանջներն են: Կազմակերպությունը իր Կարգագրի ձևը և լրացման կարգը կարող է սահմանել հաստատված ներքին ստանդարտով, որը չպետք է հակասի սույն Կանոններով սահմանված նվազագույն պահանջներին:

48. Գործող էլեկտրատեղակայանքներում օպերատիվ սպասարկման աշխատանքներն օպերատիվ կամ օպերատիվ-նորոգող անձնակազմի կողմից կատարվում են կարգադրությամբ՝ սույն Կանոններով սահմանված կարգով և սույն Կանոնների պահանջների կատարմամբ:

49. Օպերատիվ փոխանջատումները պետք է կատարի օպերատիվ կամ օպերատիվ-նորոգող անձնակազմը, որն այդ աշխատանքների կատարման համար ստացել է թույլտվություն՝ համապատասխան ստորաբաժանման գրավոր կարգադրությամբ:

50. Հերթափոխի ավագը (անկախ անձնակազմի թվաքանակից) պետք է ունենա էլեկտրաանվտանգության IV խումբ, իսկ հերթափոխի անդամները՝ էլեկտրաանվտանգության III խումբ: Օպերատիվ-մեկնման բրիգադի ավագը պետք է ունենա էլեկտրաանվտանգության IV խումբ, իսկ բրիգադի անդամները՝ էլեկտրաանվտանգության III խումբ՝ 1000 Վ-ից բարձր լարման էլեկտրատեղակայանքների սպասարկման դեպքում, և համապատասխանաբար՝ էլեկտրաանվտանգության III և II խմբեր՝ մինչև 1000 Վ լարման էլեկտրատեղակայանքների սպասարկման դեպքում:

51. Տեխնիկական սպասարկման և (կամ) էլեկտրատեղակայանքների փորձարկման-ստուգման հետևյալ աշխատանքները պետք է կատարվեն հատուկ ուսուցում անցած և այդ աշխատանքների կատարման համար սահմանված կարգով թույլտվություն ստացած աշխատողների կողմից՝

1) վերնաշխատանքներ.

2) բարձր լարման էլեկտրատեղակայանքներում աշխատանքային լարման տակ գտնվող հոսանահաղորդիչ մասերի վրա կատարվող աշխատանքներ.

3) կողմնակի աղբյուրից՝ բարձր լարման կիրառմամբ կատարվող փորձարկման-ստուգման աշխատանքներ (այդ թվում՝ մեգահոմաչափով).

4) ակտիվ քիմիական նյութերի կիրառմամբ կատարվող աշխատանքներ.

5) հեղուկ գազի կիրառմամբ կատարվող աշխատանքներ:

52. Կազմակերպությունը կարող է հատուկ ուսուցման պահանջներ սահմանել նաև այլ աշխատանքների կատարման վերաբերյալ՝ ելնելով տեղական պայմաններից:

53. Սույն Կանոններով նախատեսված անհատական պաշտպանության միջոցների կիրառումը պարտադիր է անձնակազմի համար: Կազմակերպությունը պարտավոր է աշխատողներին տրամադրել կանոններով նախատեսված պաշտպանության միջոցներ, ապահովել դրանց պարբերական փորձարկումները և ստուգումները:

54. Չի թույլատրվում աշխատանքների ինքնակամ կատարում, ինչպես նաև կարգազրով կամ կարգադրությամբ սահմանված աշխատանքային տեղերի և ծավալների ընդլայնում:

55. Աշխատանքների պատասխանատու ղեկավարը կամ թույլատրողն այլ կարգազրի գործողության գոտում աշխատանքների կատարումը պետք է համաձայնեցնի ավելի վաղ

տրված Կարգագրով աշխատանքներ վարող աշխատողի (աշխատանքների պատասխանատու ղեկավարի) կամ Կարգագիր տվողի հետ:

56. 1000 Վ-ից բարձր լարման էլեկտրասարքավորումների նորոգման՝ առանց լարումը հանելու աշխատանքները, ինչպես նաև ցանկացած լարման ՕԳ-ի նորոգումը պետք է կատարվեն տեխնոլոգիական քարտերով կամ աշխատանքների կատարման նախագծով (այսուհետ՝ ԱԿՆ):

57. Էլեկտրատեղակայանքը սպասարկող անձնակազմին, մեխանիզմներին, բեռնամբարձ մեքենաներին չի թույլատրվում մոտենալ լարման տակ գտնվող՝ չցանկապատված հոսանատար մասերին՝ Աղյուսակ N 1-ում նշված լարման տակ գտնվող հոսանատար մասերից թույլատրվող հեռավորություններից պակաս հեռավորության վրա:

**ԼԱՐՄԱՆ ՏԱԿ ԳՏԵՎՈՂ ՀՈՍԱՆԱՏԱՐ ՄԱՍԵՐԻՑ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ
ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, մ**

Լարումը, կՎ	Հեռավորությունը մարդկանցից և նրանց կողմից օգտագործվող գործիքներից ու հարմարանքներից, ժամանակավոր ցանկապատերից (մ)	Հեռավորությունն աշխատանքային կամ տեղափոխման վիճակում գտնվող մեխանիզմներից, բեռնամբարձ մեքենաներից, առասաններից, բեռնակալիչ հարմարանքներից և բեռներից (մ)
1	2	3
ՕԳ մինչև 1 կՎ	0,6	1,0
Մնացած էլեկտրատեղակայանքները	չի նորմավորվում (առանց հպման)	1,0
1-35	0,6	1,0
110	1,0	1.5
220	2.0	2.5
330	2.5	3.5
400	3.5	4.5
500	4.0	5,0

58. Էլեկտրատեղակայանքների միանձնյա զննում կարող է կատարել՝

1) հերթափոխում գտնվող օպերատիվ անձնակազմի էլեկտրաանվտանգության III խումբ և ավել.

2) կազմակերպության (ստորաբաժանման) ղեկավարի գրավոր կարգադրությամբ միանձնյա զննման իրավունք ունեցող վարչատեխնիկական անձնակազմի էլեկտրաանվտանգության V խումբ ունեցող աշխատողը՝ 1000 Վ-ից բարձր լարման էլեկտրատեղակայանքներում, էլեկտրաանվտանգության IV խումբ ունեցող աշխատողը՝ 1000 Վ-ից ցածր լարման էլեկտրատեղակայանքներում:

59. Էլեկտրատեղակայանքները չսպասարկող աշխատողներին կարող է թույլատրվել գտնվել այնտեղ էլեկտրաանվտանգության IV խումբ ունեցող օպերատիվ անձնակազմի ուղեկցությամբ՝ 1000 Վ-ից բարձր լարման էլեկտրատեղակայանքներում, և էլեկտրաանվտանգության III խումբ ունեցողին՝ 1000 Վ-ից ցածր լարման էլեկտրատեղակայանքներում կամ միանձնյա զննման իրավունք ունեցող աշխատողի ուղեկցությամբ: Ուղեկցող աշխատողը պետք է հետևի էլեկտրատեղակայանքներ մուտք

գործելու թույլատրված անձանց անվտանգությանը և նրանց նախազգուշացնի հոսանատար մասերին մոտենալու վտանգի մասին:

60. Էլեկտրատեղակայանքների զննման ժամանակ թույլատրվում է բացել վահանակների, հավաքվածքների, կառավարման վահանակների և այլ սարքվածքների դռները, բայց.

1) 1000 Վ-ից բարձր լարման էլեկտրատեղակայանքների զննման ժամանակ չի թույլատրվում ներս մտնել չարգելափակված կամ չցանկապատված սրահներ, խցեր, երբ այդ արգելափակումը և ցանկապատումը նախատեսված են մարդկանց՝ հոսանատար մասերին Աղյուսակ N 1-ում նշված հեռավորություններից պակաս հեռավորության վրա մոտենալու կանխարգելման համար.

2) չի թույլատրվում անցնել արգելափակոցներից և ցանկապատերից ներս: Չննման ժամանակ չի թույլատրվում որևէ աշխատանքի կատարում:

61. 6-35 կՎ լարման էլեկտրատեղակայանքներում հողակցման առկայության դեպքում հողակցման տեղին մոտենալը փակ բաշխիչ սարքերում՝ 4 մ-ից պակաս հեռավորության վրա, և բաց բաշխիչ սարքերում ու օդային գծերում՝ 8 մ-ից պակաս հեռավորության վրա թույլատրվում է միայն հողակցման վերացման օպերատիվ փոխանջատումներ կատարելու կամ հոսանահարված մարդկանց ազատելու համար: Մոտենալու դեպքում պետք է կիրառվեն էլեկտրապաշտպանության միջոցներ:

62. Ձեռքի հաղորդակով 1000 Վ-ից բարձր լարման ընդհատիչները (բաժանիչները), անջատիչներն ու զատիչները (խզիչները) պետք է անջատել և միացնել դիէլեկտրիկ ձեռնոցներով:

63. Ապահովիչների հանումը և տեղադրումը պետք է կատարել լարումը հանելով: Թույլատրվում է հանել և տեղադրել լարման տակ գտնվող առանց բեռնվածքի ապահովիչները: Թույլատրվում է լարման և բեռնվածքի տակ փոխարինել երկրորդային շղթաների ապահովիչները, լարման տրանսֆորմատորի ապահովիչները և խցանային ապահովիչները:

64. Ապահովիչների հանման և տեղադրման համար անհրաժեշտ է օգտագործել՝

1) 1000 Վ-ից բարձր լարման էլեկտրատեղակայանքներում՝ մեկուսացնող արքաններ (ձողեր), կիրառելով նաև դիէլեկտրիկ ձեռնոցներ և դեմքի ու աչքերի անհատական պաշտպանության միջոցներ.

2) 1000 Վ-ից ցածր լարման էլեկտրատեղակայանքներում՝ մեկուսացնող ձողեր կամ դիէլեկտրիկ ձեռնոցներ, ինչպես նաև դեմքի ու աչքերի անհատական պաշտպանության միջոցներ:

65. Էլեկտրատեղակայանքների սրահների, խցերի, վահանակների, հավաքվածքների դռները պետք է փակված լինեն փականով, բացի նրանցից, որոնցում կատարվում են աշխատանքները:

66. Էլեկտրատեղակայանքների բանալիների պահպանման և հաշվառման կարգը սահմանվում է դրանք շահագործող կազմակերպության ներքին իրավական ակտերով"

1) մշտական հերթապահություն ունեցող էլեկտրատեղակայանքների բանալիները պետք է գտնվեն օպերատիվ (օպերատիվ-նորոգող) անձնակազմի հաշվառման տակ"

2) տեղային հերթապահություն չունեցող էլեկտրատեղակայանքների բանալիները կարող են հաշվառվել վարչատեխնիկական անձնակազմի կողմից"

3) բանալիները պետք է լինեն համարակալված և պահվեն փակ արկղերում.

4) բանալիների մեկ լրակազմը պետք է լինի պահուստային"

5) բանալիները պետք է տրվեն ստորագրությամբ՝

ա. միանձնյա զննման իրավունք ունեցող աշխատողներին (այդ թվում՝ օպերատիվ անձնակազմին) բոլոր սրահների բանալիները,

բ. Կարգադրով թույլտվություն տալու դեպքում թույլատրողին (օպերատիվ անձնակազմի թույլատրողին կամ պատասխանատու ղեկավարին, կամ աշխատանքներ իրագործողին, կամ հսկողին) այն սրահների և ենթասրահների բանալիները, որոնցում պետք է կատարվեն աշխատանքները"

6) բանալիները պետք է վերադարձվեն ամեն օր զննումից կամ աշխատանքից հետո"

7) տեղային օպերատիվ անձնակազմ չունեցող էլեկտրատեղակայանքներում աշխատանքներ կատարելիս՝ բանալիները պետք է վերադարձվեն ոչ ուշ, քան զննման կամ աշխատանքների լրիվ ավարտին հաջորդող աշխատանքային օրը"

8) բանալիների տրամադրումը և վերադարձը պետք է հաշվառվի ազատ ձևի հատուկ մատյանում կամ օպերատիվ մատյանում:

67. Մինչև 1000 Վ լարման էլեկտրատեղակայանքներում աշխատանքային լարման տակ աշխատանքների կատարման ընթացքում պետք է ապահովվեն հետևյալ պահանջները՝

1) աշխատողը պետք է գտնվի ազատ դիրքում, հետևից ու կողքերից չարգելափակված հոսանատար մասերը պետք է գտնվեն 1,2 մ հեռավորության վրա, կամ հետևից, վերևից ու կողքերից ազատ տարածությունը պետք է կազմի 0.9 մ-ից ոչ պակաս, և պետք է ապահովվի ազատ ելք դեպի դուռը.

ա" չի թույլատրվում աշխատել կարճաթև կամ հետ ծավլած թևերով հագուստով, ինչպես նաև՝ օգտագործել երկաթե սղոց, խարտոց, մետաղական մետր և այլն,

բ" չի թույլատրվում էլեկտրատեղակայանքներում աշխատել կռացած վիճակում, եթե ուղղվելիս՝ հոսանատար մասերից հեռավորությունը կլինի Աղյուսակ N 1-ում նշված հեռավորություններից պակաս,

գ" չի թույլատրվում առանց էլեկտրապաշտպանության միջոցների կիրառման հավելի մեկուսիչներին, լարման տակ գտնվող սարքավորումների մեկուսիչ մասերին.

2) աշխատանքները պետք է կատարվեն մեկուսիչ տախտամածի (ռետինե գորգի) վրա կանգնած, սահմանված կարգով փորձարկված մեկուսիչ հատուկ գործիքներով, անհրաժեշտության դեպքում՝ մեկուսիչ ձեռնոցներով: Պտուտակահանի վրա, բացի դրանցից, պետք է մեկուսացվի նաև ձողը.

3) աշխատանքների տևողությունը տվյալ աշխատատեղում չպետք է գերազանցի 1 ժամը.

4) սարքավորումը, որի վրա աշխատանքներ են կատարվում, չպետք է ունենա այնպիսի տեխնիկական թերություններ, որոնք աշխատանքների կատարման ընթացքում առաջացնում են լրացուցիչ ռիսկեր.

5) աշխատանքները պետք է կատարվեն կարգազրոյ կամ կարգադրությամբ, կամ ընթացիկ շահագործման կարգով.

6) եթե աշխատանքները կատարվում են 1,3 մ և ավել բարձրության վրա, ապա աշխատանք իրագործողը պետք է ապահովի աշխատանքների կատարման համապատասխանությունը բարձրության վրա աշխատանքի անվտանգության պահանջներին:

68. 6 կՎ և բարձր լարման էլեկտրատեղակայանքներում աշխատանքները, որպես կարգ, պետք է կատարվեն լարումը հանելով՝ Աղյուսակ N 1-ում նշված թույլատրելի հեռավորությունների պահպանմամբ:

69. Մինչև 1000 Վ ՕԳ-ի սպասարկման և նորոգման աշխատանքները պետք է կատարվեն սահմանված կարգով լարումը հանելով և հողակցմամբ: Թույլատրվում է առանց լարումը հանելու կատարել մինչև 1000 Վ ՕԳ-ների վրա աշխատանքներ՝ կապված մարդու կյանքի ու գույքի անվտանգության ապահովման հետ (օրինակ, կտրված ֆազային հաղորդալարի անջատում), որոնց ժամանակ պետք է կատարվեն համապատասխան անվտանգության միջոցառումներ:

70. Բաց բաշխիչ սարքերի փոխհատվող թռիչքներում լարման տակ գտնվող հաղորդալարերից ցածր անցնող հաղորդալարերի (մետաղաճոպանների), դրանց մեկուսիչների ու

արմատուրի փոխարինման դեպքում՝ փոխարինվող հաղորդալարերի (մետաղաճոպանների) վրայով պետք է անցկացվեն սինթետիկ կամ բուսական մանրաթելերից պատրաստված պարաններ՝ վերևով անցնող հաղորդալարերին հպումը կանխարգելելու համար.

1) պարանները պետք է անցկացնել երկու տեղում՝ փոխհատման երկու կողմերից՝ դրանց ծայրերն ամրացնելով կոնստրուկցիաներին, խարխուխներին և այլն.

2) հաղորդալարը (մետաղաճոպանը) պետք է բարձրացնել դանդաղ ու սահուն:

71. Բաց բաշխիչ սարքերում լարման տակ գտնվող հաղորդալարերից վերև տեղադրված հաղորդալարերի (մետաղաճոպանների), դրանց մեկուսիչների ու արմատուրի վրա աշխատանքները պետք է կատարվեն կազմակերպության կողմից հաստատված աշխատանքների կատարման նախագծի համաձայն: ԱԿՆ-ում պետք է նախատեսված լինեն հաղորդալարերի (մետաղաճոպանների) իջեցումը կանխարգելող, ինչպես նաև մակաձված լարումից պաշտպանության միջոցներ: Չեն թույլատրվում հաղորդալարերի (մետաղաճոպանների) փոխարինման աշխատանքները՝ առանց փոխհատվող հաղորդալարերից լարումը հանելու:

72. Թույլատրվում են աշխատողների տեղաշարժերը լարման բոլոր դասերի ՕԳ-ների 240 մմ²-ից ոչ պակաս կտրվածքի հաղորդալարերով և 70 մմ²-ից ոչ պակաս կտրվածքի մետաղաճոպաններով՝ պայմանով, որ հաղորդալարերը և մետաղաճոպանները բնականոն տեխնիկական վիճակում են, այսինքն՝ չունեն թրթռումներից, կոռոզիայից և այլ պատճառներից առաջացած վնասվածքներ: Տրոհված հաղորդալարերով և մետաղաճոպաններով տեղաշարժվելիս՝ ապահովիչ գոտու առասանը պետք է ամրացնել դրանց, իսկ հատուկ սայլակի օգտագործման դեպքում՝ սայլակին:

73. Հողային աշխատանքները պետք է կատարվեն սահմանված կարգով հաստատված նախագծերի պահանջների համաձայն:

74. 35 կՎ և բարձր լարման ենթակայանների սպասարկման աշխատանքների ընթացքում պետք է կիրառել անվտանգության հետևյալ պահանջները՝

1) 35 կՎ և բարձր լարման ենթակայանների ՓԲՍ-ներում աշխատանքներ կատարելիս (փակ բաշխիչ սարքավորումների սրահներ, տրանսֆորմատորի սրահներ և այլն) աշխատողները պետք է ունենան դեպի դուրս ազատ ելքի հնարավորություն՝ էլեկտրատեղակայանքի ցանկացած հատվածում հրդեհի առաջացման դեպքում.

2) ենթակայանում նորոգման (տեխնիկական սպասարկման, կարգաբերման) աշխատանքներ կատարելիս արգելվում է նույն բաշխիչ սարքի կամ նույն սրահում գտնվող այլ կայանքի բարձր լարման կիրառմամբ ստուգումների կատարումը.

3) ենթակայանի նույն էլեկտրատեղակայանքի վրա մի քանի բրիգադների միաժամանակյա աշխատանքների կատարման թույլատրման դեպքում պետք է նշանակվի աշխատանքի անվտանգության մեկ պատասխանատու անձ բոլոր բրիգադների աշխատանքների համակարգման համար՝ փոխադարձ անվտանգությունն ապահովելու նպատակով:

75.1000 Վ-ից մինչև 35 կՎ մալուխային գծերի սպասարկման աշխատանքների ընթացքում պետք է կատարվեն անվտանգության հետևյալ պահանջները՝

1) 35 մալուխային կառույցներում անցկացված մալուխային գծերի վնասվածքի տեղը, որպես կանոն, պետք է որոշել հրդեհի իրական վտանգ չառաջացնող մեթոդներով և եղանակներով, հատկապես, երբ վնասվածքն՝ ըստ չափումների, կարող է գտնվել էլեկտրակայանի կամ ենթակայանի տարածքում.

2) դեպի հասարակական վայրեր ելքի դռներ (յուրեր) ունեցող մալուխային կառույցներում աշխատանքներ կատարելիս պետք է կանխարգելել բաց դռներից (յուրերից) այլ մարդկանց և կենդանիների մուտքը մալուխային կառույց.

3) մալուխային կառույց ունեցող բոլոր մասնաճյուղերում պետք է նշանակվի այդ կառույցների համար պատասխանատու անձ ճարտարագիտատեխնիկական անձնակազմից, որն ունի էլեկտրաանվտանգության V խումբ: Պատասխանատու անձը, որպես աշխատանքի ղեկավար, պետք է ապահովի մալուխային գծերի սպասարկման (նորոգման) բոլոր կազմակերպական և տեխնիկական միջոցառումների իրականացումը և անընդհատ հսկողություն սահմանի կատարվող աշխատանքների նկատմամբ.

4) այլ կազմակերպությունների անձնակազմի կողմից մալուխային կառույցներում աշխատանքները պետք է կատարվեն միայն կազմակերպության կողմից լիազորված պատասխանատու անձի թույլտվությամբ և հսկողության ներքո.

5) մալուխային կառույցների երկու ելքերի միջև ընկած հատվածներում արգելվում է երկու բրիգադի միաժամանակյա աշխատանքը.

6) մալուխային կառույցներում արգելվում է ցանկացած միանձնյա աշխատանք, այդ թվում՝ միանձնյա զննումը և շրջայցը.

7) էլեկտրատեղակայանքների սրահներում, հորերում, թունելներում, խրամուղիներում փակ ու բաց բաշխիչ սարքերի (բացառությամբ ռելեական, ղեկավարման և նման այլ վահանների), ինչպես նաև ՕԳ-ների սպասարկման ու նորոգման աշխատանքներն անձնակազմը պետք է կատարի՝ կրելով պաշտպանական սաղավարտ.

8) անձնակազմը պետք է իմանա, որ էլեկտրատեղակայանքներում լարումն անհետանալուց հետո այն կարող է կրկին տրվել առանց նախազգուշացման.

9) չի թույլատրվում աշխատել չլուսավորված տեղերում: Աշխատանքի տեղամասում, աշխատատեղերում և դրանց մոտենալու տեղամասերում լուսավորությունը պետք է լինի հավասարաչափ՝ առանց աշխատողի վրա լուսավորիչ սարքերի կուրացնող ազդեցության"

10) արտակարգ իրավիճակներում (հոսանահարված անձի ազատումը հոսանքից, հնարավոր հրդեհի կանխումը և այլն) աշխատողը պարտավոր է կատարել բոլոր գործողությունները (անջատումներ, հոսանահարված անձի ազատում և այլն) մեկուսիչ պաշտպանության միջոցների կիրառմամբ, իսկ դրանց բացակայության դեպքում՝ իր հայեցողությամբ օգտագործել այլ մեկուսիչ նյութեր, որոնց կիրառումը չի վտանգում աշխատողի կյանքն ու առողջությունը:

76. Ամպրոպի մոտենալու դեպքում պետք է դադարեցվեն բոլոր աշխատանքները ՕԳ-ների, կապի ՕԳ-ների, բաց բաշխիչ սարքերի, անմիջականորեն ՕԳ-ներին միացված փակ բաշխիչ սարքերի ներանցիչների և փոխարկման ապարատների վրա, ինչպես նաև սրահներում տեղակայված կապի հանգույցների ՕԳ-ների արտանցիչների վրա և ալեհավաք-կայմային կառույցներում:

77. Դժբախտ դեպքերի ժամանակ տուժողին էլեկտրահարումից ազատելու համար լարումը պետք է հանվի անմիջապես՝ առանց նախնական թույլտվություն ստանալու:

ԳԼՈՒԽ 11

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ ԵՎ ՆՐԱՆՑ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

78. Աշխատանքային գործընթացների անվտանգ կազմակերպման և իրականացման նպատակով, կազմակերպությունը, հիմք ընդունելով սույն Կանոնների պահանջները, կազմակերպում է իր՝ էլեկտրատեխնիկական աշխատողների ուսուցման, գիտելիքների ստուգման և էլեկտրաանվտանգության խմբի շնորհման գործընթացը:

79. Աշխատանքային գործընթացները կազմակերպող և (կամ) իրականացնող անձանց գիտելիքներին առաջադրվող պահանջները սահմանվում են կազմակերպության ստանդարտներով: Կազմակերպությունը, ելնելով տեղական պայմաններից, իր էլեկտրատեղակայանքների և տեխնոլոգիական գործընթացների առանձնահատկություններից կազմակերպության ներքին իրավական ակտերով կարող է սահմանել լրացուցիչ պահանջներ:

80. Աշխատանքային գործընթացների անվտանգ կազմակերպման և իրականացման պարտականությունները դրվում են հետևյալ պատասխանատու անձանց վրա՝

1) աշխատանքների կատարման Կարգագիր կամ կարգադրություն տվողի և ընթացիկ աշխատանքների ցանկը հաստատող անձի.

2) աշխատանքների կատարման պատասխանատու ղեկավարի.

3) աշխատատեղերի նախապատրաստման և աշխատանքների կատարման թույլտվության իրավունք տվող անձի.

4) աշխատատեղում աշխատանքի թույլատրողի.

5) աշխատանքներն իրագործողի.

6) հսկողի.

7) բրիգադի անդամի:

81. Աշխատանքների անվտանգության ապահովման պատասխանատու անձանց պարտականությունները, իրավունքները և պատասխանատվությունը սահմանվում են կազմակերպության ներքին իրավական ակտերով:

82. Կազմակերպության ղեկավարը (տեխնիկական ղեկավար) իր հրամանով (կարգադրությամբ) Կարգագիր-թույլտվություն կամ կարգադրություն տալու իրավունքը լիազորում է՝

1) էլեկտրատեղակայանքներն անմիջականորեն սպասարկող և շահագործող կառուցվածքային ստորաբաժանման վարչատեխնիկական անձնակազմին, ովքեր անցել են համապատասխան ուսուցում, հանձնել են քննություն, ստացել են գիտելիքների ստուգման վկայական, ունեն էլեկտրաանվտանգության V խումբ՝ 1000 Վ-ից բարձր լարման էլեկտրատեղակայանքների համար, և էլեկտրաանվտանգության IV խումբ՝ 1000 Վ-ից ցածր լարման էլեկտրատեղակայանքների համար.

2) մինչև 10 կՎ բաշխման ցանցի հերթապահ օպերատիվ անձնակազմին՝ նրան ամրագրված պատասխանատվության գոտում աշխատանքներ կատարելու համար, եթե այդ

անձնակազմի աշխատողներն անցել են համապատասխան ուսուցում, հանձնել են քննություն և ստացել են գիտելիքների ստուգման վկայական, ունեն էլեկտրաանվտանգության IV խումբ.

3) 6 կՎ և բարձր լարման կայանների և ենթակայանների հերթապահ օպերատիվ անձնակազմին՝ միայն տվյալ ենթակայանում աշխատանքներ կատարելու համար, եթե այդ անձնակազմի աշխատողներն անցել են համապատասխան ուսուցում, հանձնել են քննություն և ունեն էլեկտրաանվտանգության IV խումբ:

83. Աշխատանքների կատարման Կարգագիր կամ կարգադրություն տվողը պարտավոր է՝

1) մինչև էլեկտրատեղակայանքի վրա աշխատանքի կատարման հանձնարարական տալը հստակ տեղեկություն ունենալ էլեկտրատեղակայանքի սխեմայի, տեխնիկական վիճակի, իրական ռիսկերի և աշխատանքի կատարման համար անհրաժեշտ տեխնոլոգիական գործընթացների պայմանների մասին.

2) Կարգագրով (կարգադրությամբ) նախատեսել աշխատանքի անվտանգությունն ապահովող սույն Կանոններով սահմանված, ինչպես նաև իր գնահատմամբ ռիսկերը նվազեցնող այլ միջոցառումներ: Եթե Կարգագիր (կարգադրություն) տվողը գտնում է, որ աշխատատեղում առկա են կամ կարող են առաջանալ այլ ռիսկեր, որոնք Կարգագրի (կարգադրության) կազմման ժամանակ չեն նախատեսվել, ապա նա պարտավոր է Կարգագրի «Հատուկ ցուցումներ» բաժնում կամ կարգադրությունների մատյանում հանձնարարականներ տալ աշխատանքի ղեկավարին, թույլատրողին կամ աշխատանքն իրագործողին՝ լրացուցիչ ռիսկերի առաջացման դեպքում լրացուցիչ անվտանգության միջոցառումների կատարման կամ աշխատանքը դադարեցնելու մասին.

3) նշանակել աշխատանքի ղեկավարին (եթե դա նախատեսված է սույն Կանոններով կամ, իր գնահատմամբ, դա անհրաժեշտ է աշխատանքի անվտանգության ապահովման համար), սահմանել նրա պարտականությունները (թույլտվության մասնակցություն, աշխատանքային գործընթացների անընդհատ հսկողություն և այլն)՝ դրա մասին գրառումներ կատարելով Կարգագրի «Առանձին ցուցումներ» բաժնում.

4) նշանակել աշխատանքն իրագործողին և բրիգադի անդամներին՝ հաշվի առնելով նրանց էլեկտրաանվտանգության խումբը, աշխատանքների կազմակերպման ունակությունները և տևողությունը:

84. Աշխատանքի ղեկավար լինելու իրավունքը տրվում է կազմակերպության ղեկավարի հրամանով էլեկտրատեղակայանքներն անմիջականորեն սպասարկող կառուցվածքային ստորաբաժանման վարչական-տեխնիկական անձնակազմի աշխատողներին, ստորաբաժանման ծառայությունների (բաժինների, տեղամասերի) ղեկավարներին, որոնք ունեն էլեկտրաանվտանգության V խումբ՝ 1000 Վ-ից բարձր լարման էլեկտրատեղակայանքների համար, և էլեկտրաանվտանգության IV խումբ՝ 1000 Վ-ից ցածր լարման էլեկտրատեղակայանքների սպասարկման համար, անցել են համապատասխան ուսուցում, հանձնել են քննություն և ստացել վկայական:

85. Աշխատանքի ղեկավարը պարտավոր է՝

1) գնահատել Կարգագրով նախատեսված անվտանգության միջոցառումների համապատասխանությունը կազմակերպության անվտանգության ստանդարտներին, դրանց բավարար լինելը՝ աշխատանքային ամբողջ գործընթացի անվտանգության ապահովման առումով, և անհրաժեշտության դեպքում, համապատասխան առաջարկություններով դիմել Կարգագիր-թույլտվություն կամ գրավոր կարգադրություն տվող անձին.

2) մասնակցել թույլատրողի գործողություններին (եթե դա նախատեսված է Կարգագրով)՝ հսկել աշխատատեղի ճիշտ նախապատրաստմանը, բրիգադի հրահանգավորմանն աշխատանքների թույլատրման ժամանակ.

3) անընդմեջ հսկել աշխատանքային գործընթացը (եթե դա նախատեսված է Կարգագրով).

4) ընդունել աշխատատեղը՝ աշխատանքների ավարտից անմիջապես հետո.

5) կատարել Կարգագրով կամ կարգադրությամբ նախատեսված այլ գործողություններ.

6) աշխատանքների թույլատրման և (կամ) աշխատանքային գործընթացների ժամանակ անթույլատրելի ռիսկերի հայտնաբերման դեպքում իրականացնել անվտանգությունն ապահովող լրացուցիչ միջոցառումներ (դրա մասին հայտնելով Կարգագիր տվողին) կամ դադարեցնել աշխատանքները՝ դրա մասին տեղյակ պահելով Կարգագիր տվող անձին:

86. Աշխատանքների ղեկավարն իրավունք չունի ինքնակամ փոփոխելու կամ չկատարելու Կարգագրով նախատեսված աշխատանքի անվտանգության միջոցառումները, մասնակցելու աշխատանքային բուն գործընթացներին (եթե դա չի նախատեսված Կարգագրով):

87. Աշխատանքները թույլատրող անձ պետք է նշանակվի տվյալ էլեկտրատեղակայանքի փոխանջատումների իրավունք ունեցող տվյալ հերթափոխի օպերատիվ աշխատողը

(էլեկտրաանվտանգության IV խումբ՝ 1000 Վ-ից բարձր, և էլեկտրաանվտանգության III խումբ՝ մինչև 1000 Վ լարման էլեկտրատեղակայանքների համար):

88. Աշխատանքները թույլատրողը պարտավոր է՝

1) գնահատել Կարգագրով (կարգադրությամբ) նախատեսված անվտանգության միջոցառումների համապատասխանությունը կազմակերպության անվտանգության ստանդարտներին, դրանց բավարար լինելը՝ աշխատանքային ամբողջ գործընթացի անվտանգության ապահովման առումով, և անհրաժեշտության դեպքում, համապատասխան առաջարկություններով դիմել աշխատանքի ղեկավարին, իսկ վերջինիս չնշանակման դեպքում՝ Կարգագիր (կարգադրություն) տվող անձին.

2) կատարել Կարգագրով (կարգադրությամբ) նախատեսված բոլոր անջատումները, հողակցումները (եթե դրանք, Կարգագրի համաձայն, չեն կատարվում աշխատանքների ղեկավարի կամ իրագործողի կողմից), ինչպես նաև անվտանգության այլ տեխնիկական միջոցառումներ.

3) կատարել աշխատանքներն իրագործողի, աշխատանքների պատասխանատու ղեկավարի և անդամների նպատակային հրահանգավորում բոլոր վտանգների մասին (լարման տակ գտնվող սարքավորումներ, ճնշման տակ գտնվող անոթներ և այլն), այնուհետև բրիգադին թույլատրել աշխատանքների՝ դրա մասին գրառում կատարելով Կարգագրում և մատյանում.

4) հսկել աշխատանքային գործընթացը, եթե դա նախատեսված է Կարգագրով (կարգադրությամբ).

5) ընդունել աշխատատեղն աշխատանքների ավարտից անմիջապես հետո, եթե դա նախատեսված է Կարգագրով (կարգադրությամբ).

6) իրականացնել անվտանգությունն ապահովող լրացուցիչ միջոցառումներ (դրա մասին հայտնելով Կարգագիր տվողին), իսկ դրանց անհնարինության դեպքում՝ բրիգադին չտալ աշխատանքներին անցնելու թույլտվություն, եթե աշխատանքների թույլատրման ժամանակ հայտնաբերում է անթույլատրելի ռիսկեր, որոնք հաշվի չեն առնվել Կարգագիր (կարգադրություն) կազմելիս:

89. Աշխատանքները թույլատրողն իրավունք չունի ինքնակամ չկատարելու Կարգագրով նախատեսված աշխատանքի անվտանգության միջոցառումները, մասնակցելու աշխատանքային բուն գործընթացներին:

90. Աշխատատեղի նախապատրաստման և աշխատանքների կատարման թույլտվություն տալու իրավունքը տրվում է IV խմբից ոչ պակաս էլեկտրաանվտանգության խումբ ունեցող օպերատիվ անձնակազմին, ինչպես նաև վարչատեխնիկական անձնակազմից այն աշխատողին, որը լիազորված է կազմակերպության ղեկավարության կողմից և ունի IV խմբից ոչ պակաս էլեկտրաանվտանգության խումբ՝

1) աշխատատեղի նախապատրաստման և աշխատանքների թույլտվություն տվող անձի նշանակման պահանջը չի տարածվում էլեկտրաէներգիա սպառող սպառիչների էլեկտրատեղակայանքում կատարվող աշխատանքների վրա, բացառությամբ ՕԳ, ՄԳ, ՕՄԳ-ների վրա այն աշխատանքների, որոնք պահանջում են համակարգում այլ կազմակերպությունների անձնակազմի հետ իր իսկ էլեկտրամատակարարման վիճակի փոփոխման վերաբերյալ.

2) աշխատատեղի նախապատրաստման և աշխատանքների կատարման թույլտվություն տվող աշխատողը պատասխանատու է իր տեխնոլոգիական, օպերատիվ ենթակայության կառավարման տակ գտնվող էլեկտրահաղորդման գծերի և սարքավորումների անջատման և հողակցման, ինչպես նաև տրված հանձնարարականի և դրանց կատարման համար.

3) աշխատատեղի նախապատրաստման և աշխատանքների կատարման թույլտվություն տվող աշխատողը պատասխանատու է Կարգագիր-թույլտվության մեջ նախատեսված սարքավորումների անջատումների և հողակցումների լիակատար համապատասխանությանը՝ հաշվի առնելով էլեկտրատեղակայանքների փաստացի սխեմայի վիճակը.

4) աշխատատեղի նախապատրաստման և աշխատանքների կատարման թույլտվություն տվող աշխատողը պատասխանատու է էլեկտրատեղակայանքներում աշխատանքի թույլատրված բրիգադների տեղի և ժամանակի կորոդինացման, այդ թվում բրիգադների հաշվառման, ինչպես նաև բոլոր բրիգադներից աշխատանքների լրիվ ավարտի և էլեկտրասարքավորումն աշխատանքի միացման հնարավորության մասին տեղեկատվություն ստանալու, հաղորդելու համար:

91. Աշխատանք իրագործողը նշանակվում է կազմակերպության ղեկավարի հրամանով: Այդ իրավունքի մասին նշումը կատարվում է քննական արձանագրության և վկայականի մեջ: Աշխատանք իրագործողը Կարգագրով կամ կարգադրությամբ էլեկտրատեղակայանքներում աշխատելիս՝ 1000 Վ-ից բարձր լարման դեպքում պետք է ունենա էլեկտրաանվտանգության IV խումբ, իսկ մինչև 1000 Վ լարման դեպքում՝ էլեկտրաանվտանգության III խումբ:

92. Աշխատանքներն իրագործողը պարտավոր է՝

1) գնահատել Կարգագրով (կարգադրությամբ) նախատեսված անվտանգության միջոցառումների համապատասխանությունն անվտանգության պահանջներին, դրանց բավարար լինելը՝ աշխատանքային ամբողջ գործընթացի անվտանգության ապահովման առումով, և, անհրաժեշտության դեպքում՝ անվտանգության բարձրացման համար առաջարկություններով դիմել աշխատանքների ղեկավարին կամ Կարգագիր (կարգադրություն) տվող անձին.

2) ապահովել բրիգադին տվյալ աշխատանքի կատարման համար անհրաժեշտ գործիքներով, հարմարանքներով, անհատական պաշտպանության միջոցներով և սարքավորումներով, պահպանել դրանց օգտագործման կարգն ու պայմաններն աշխատանքային գործընթացներում.

3) ստուգել աշխատատեղում իրականացված անվտանգության միջոցառումների (անջատումներ, հողակցումներ, ցանկապատերի ու պլակատների տեղադրում և այլն) համապատասխանությունը Կարգագրին (կարգադրությանը).

4) ընդունել աշխատատեղը թույլատրողից (աշխատանքների պատասխանատու ղեկավարից), բրիգադին հրահանգավորելով աշխատատեղում առկա և աշխատանքային գործընթացներում առաջացող ռիսկերի մասին, և ղեկավարել (իրականացնել) աշխատանքները.

5) տեղադրել Կարգագրով (կարգադրությամբ) նախատեսված բոլոր հողակցումները, (եթե դրանք Կարգագրի համաձայն չեն տեղադրվում աշխատանքների ղեկավարի կամ թույլատրողի կողմից), ինչպես նաև անվտանգության այլ տեխնիկական միջոցառումները.

6) խստիվ պահպանել աշխատանքի անվտանգության կանոնները և անընդհատ հսկողություն իրականացնել բրիգադի անդամների նկատմամբ ամբողջ աշխատանքային գործընթացի ժամանակ՝ նրանց կողմից աշխատանքի անվտանգության կանոնների կատարման համար.

7) աշխատանքային գործընթացում լրացուցիչ ռիսկեր առաջանալու դեպքում գնահատել դրանք, ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ դրանց ազդեցությունը կանխարգելելու համար, իսկ դրա անհնարինության դեպքում՝ դադարեցնել աշխատանքը և բրիգադը դուրս բերել աշխատատեղից: Եթե աշխատանքները կատարվում են պատասխանատու ղեկավարի անընդմեջ հսկողությամբ, ապա սույն կետով սահմանված ձեռնարկումներն ու որոշումները կայացվում են համատեղ:

93. Բրիգադի անդամ նշանակվում է կազմակերպության (կառուցվածքային ստորաբաժանման) ղեկավարի հրամանով աշխատանքային պայմանագրով աշխատող այն անձը, որը սահմանված ծրագրով անցել է ուսուցում աշխատանքի անվտանգությունից, հանձնել է քննություն և ստացել էլեկտրաանվտանգության առնվազն II խմբի հավաստագիր:

94. Բրիգադի անդամը պարտավոր է աշխատանքային գործընթացներում պահպանել աշխատանքի անվտանգության կանոնները, գործիքների, պաշտպանական միջոցների, հարմարանքների օգտագործման կարգը, կատարել աշխատանքների ղեկավարի և իրագործողի ցուցումներն ու կարգադրությունները:

95. Հսկողը նշանակվում է տվյալ էլեկտրատեղակայանքում ինքնուրույն աշխատելու իրավունք չունեցող աշխատողների բրիգադի աշխատանքային գործընթացի նկատմամբ մշտական հսկողություն իրականացնելու համար միայն էլեկտրաանվտանգության մասով աշխատանքի անվտանգությունն ապահովելու նպատակով.

1) հսկող նշանակվում է տվյալ էլեկտրատեղակայանքը սպասարկողների կազմում ընդգրկված էլեկտրաանվտանգության III և ավելի խումբ ունեցող աշխատողը.

2) հսկման իրավունքը սահմանվում է կազմակերպության ղեկավարի հրամանով:

96. Հսկողը պարտավոր է՝

1) ստուգել նախապատրաստված աշխատատեղի համապատասխանությունը Կարգագրով սահմանված պահանջներին (անջատումներ, հողակցումներ, շրջափակոցների ու պլակատների տեղադրում և այլն) և դրանց պահպանումն ամբողջ աշխատանքային գործընթացում.

2) իրականացնել բրիգադի մշտական հսկողություն՝ էլեկտրաանվտանգության ապահովման նպատակով:

97. Հսկողը պատասխանատվություն չի կրում աշխատանքի տեխնոլոգիական գործընթացում ձեռնարկված անվտանգության միջոցառումների բավարար լինելու համար:

98. Թույլատրվում է աշխատանքների անվտանգության համար պատասխանատու անձանց (Կարգագիր տվողի, աշխատանքների ղեկավարի, աշխատատեղի նախապատրաստման և աշխատանքների կատարման թույլտվություն տվող աշխատողի, աշխատանքներն իրագործողի) մեկ համատեղում, եթե աշխատանքները կատարվում են պարզ և ակնառու սխեմայով էլեկտրատեղակայանքներում, կամ այն էլեկտրատեղակայանքներում, որոնք չունեն տեղային օպերատիվ անձնակազմ: Բարձր

ռիսկայնության աշխատանքներ կատարելու ժամանակ անվտանգության համար պատասխանատու անձանց համատեղում չի թույլատրվում:

Աղյուսակ N 2

ՀԱՄԱՏԵՂՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

Պատասխանատու անձ	Համատեղում
Կարգագիր կամ կարգադրություն տվողը	Աշխատանքի պատասխանատու ղեկավար, աշխատանքն իրագործող, թույլատրող (այն էլեկտրատեղակայանքներում, որոնք չունեն տեղական օպերատիվ անձնակազմ)
Աշխատատեղի նախապատրաստման և աշխատանքների կատարման թույլտվություն տվող աշխատողը	Կարգագիր կամ կարգադրություն տվող, աշխատանքի պատասխանատու ղեկավար-թույլատրող (այն էլեկտրատեղակայանքներում, որոնք չունեն տեղական օպերատիվ անձնակազմ)
Աշխատանքների պատասխանատու ղեկավարը	Աշխատանքներ իրագործող, թույլատրող (այն էլեկտրատեղակայանքներում, որոնք չունեն տեղական օպերատիվ անձնակազմ)
Աշխատանք իրագործողը (օպերատիվ, օպերատիվ-նորոգող անձնակազմից)	Թույլատրող (պարզ և ակնառու սխեմայով էլեկտրատեղակայանքներում)
Աշխատանք իրագործողը, ով ունի էլեկտրաանվտանգության IV խումբ	Թույլատրող (ռելեական պաշտպանության, ավտոմատիկայի, հաշվառման սարքերի և երկրորդային շղթաների սպասարկման սարքավորումներում)

99. Աշխատանքի անվտանգության ապահովման համար աշխատանքների պատասխանատու ղեկավար պետք է պարտադիր նշանակվի՝

1) մեքենաների և մեխանիզմների կիրառմամբ աշխատանքներում, եթե այդ աշխատանքները կատարվում են լարման տակ գտնվող օդային գծերի կամ բաց բաշխիչ սարքերի էլեկտրահաղորդաձողերի անվտանգության գոտում.

2) 1000 Վ-ից բարձր լարման էլեկտրատեղակայանքներում, եթե պահանջվում են էլեկտրասարքերի անջատումներ, բացառությամբ պարզ և ակնառու սխեմայով էլեկտրատեղակայանքների.

3) տրանսպորտային ինտենսիվ շարժում ունեցող վայրերում՝ մալուխային գծերի նորոգման աշխատանքների ժամանակ.

4) հենասյուների տեղակայման կամ ապատեղակայման աշխատանքների ժամանակ.

5) օդային գծերի և տրանսպորտային ինտենսիվ հաղորդակցուղիների հատման վայրերում, բաց բաշխիչ սարքերի հաղորդալարերի փոխհատման վայրերում, օդային գծերի փոխհատման թռիչքների վրա աշխատանքներ կատարելիս.

6) 1000 Վ-ից բարձր լարման օդային նոր գիծը գործող բաշխիչ սարքերին միացնելու աշխատանքների ժամանակ.

7) 1000 Վ-ից բարձր լարման օդային գծի հաղորդալարերի և մետաղաճոպանների միացման սխեմաների փոփոխման աշխատանքների ժամանակ.

8) բազմաշղթա օդային գծի մեկ անջատված շղթայի վրա աշխատանքներ կատարելիս, երբ մնացած շղթաները գտնվում են լարման տակ.

9) նույն էլեկտրատեղակայանքի վրա երկու և ավել բրիգադների միաժամանակյա աշխատանքների դեպքում.

10) օդային գծի ֆազերի հերթականությամբ նորոգման դեպքում.

11) մակաձված լարման առկայության պայմաններում աշխատանքների ժամանակ.

12) 1000 Վ-ից բարձր լարման էլեկտրատեղակայանքներում այնպիսի աշխատանքների ժամանակ, որոնք բնութագրվում են որպես աշխատանքային լարման տակ գտնվող հոսանատար մասերի վրա կատարվող աշխատանքներ.

13) 1000 Վ և բարձր լարման մալուխային գծերի նորոգման աշխատանքների ժամանակ, որոնք կատարվում են փակ մալուխային կառույցներում (թունելներ, էստակադներ և այլն).

14) օդերևութաբանական անբարենպաստ պայմաններում 1000 Վ և բարձր լարման օդային գծերի նորոգման աշխատանքների ժամանակ.

15) վթարային վիճակում գտնվող հենասյուներով և հենարաններով օդային գծի սպասարկման աշխատանքներ կատարելիս՝ հենասյուների վրա 3 մ և ավել բարձրանալու դեպքում.

16) այլ աշխատանքների ժամանակ, որոնք՝ ըստ Կարգագիր տվող անձի գնահատման, բարձր ռիսկայնության աշխատանքներ են:

ԳԼՈՒԽ 12

ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

100. Աշխատանքի անվտանգության ապահովման կազմակերպական միջոցառումներն անվտանգության կառավարման համակարգի բաղկացուցիչ մասն են և ներառում են՝

1) աշխատանքների կատարման առաջադրանք տվողի կողմից աշխատանքների գրավոր ձևակերպումը Կարգագրով, կարգադրությամբ կամ նախապես կազմված և կազմակերպության տեխնիկական ղեկավարի կողմից հաստատված շահագործման

աշխատանքների անվանացանկով, որոնց կատարումը թույլատրվում է առանց գրավոր առաջադրանքի.

2) աշխատանքների կատարման թույլատրումը.

3) հսկողությունն աշխատանքների ընթացքում.

4) աշխատանքների ընդմիջման, այլ աշխատատեղ տեղափոխման և աշխատանքների ավարտի ձևակերպումները:

101. Կազմակերպությունը, հիմք ընդունելով սույն Կանոնների դրույթները, կազմակերպության ներքին իրավական ակտով սահմանում է՝

1) աշխատանքների ցանկը, որոնք թույլատրվում է կատարել միայն Կարգագրով.

2) աշխատանքների ցանկը, որոնք թույլատրվում է կատարել գրավոր կարգադրությամբ.

3) ընթացիկ շահագործման կարգով կատարվող աշխատանքների ցանկը, որոնց կատարման համար չի պահանջվում կարգադրություն կամ Կարգագիր.

4) Կարգագրով կատարվող աշխատանքների ցանկը, որոնց դեպքում պարտադիր նշանակվում է աշխատանքների պատասխանատու ղեկավար:

102. Հետևյալ աշխատանքները պետք է կատարվեն միայն Կարգագրով՝

1) բարձր ռիսկայնության պայմաններում կատարվող աշխատանքներ.

2) բարձր լարման էլեկտրատեղակայանքների վրա միջին ռիսկայնության պայմաններում կատարվող աշխատանքներ, երբ աշխատատեղի նախապատրաստման համար պահանջվում է անջատումների կատարում և (կամ) լարման տակ գտնվող հոսանատար մասերին մոտենալը կանխարգելող հատուկ արգելափակոցների տեղադրում.

3) աշխատանքներ էլեկտրատեղակայանքներում, երբ ներգրավվում են նույն կազմակերպության տարբեր կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողներ՝ միաժամանակյա կամ հաջորդող աշխատանքներ կատարելու համար.

4) այլ կազմակերպության անձնակազմի կողմից գործատուի գործող էլեկտրատեղակայանքներում կատարվող աշխատանքներ:

103. Կարգագիրը լրացվում է երկու, իսկ կապի միջոցներով փոխանցելու դեպքում՝ երեք օրինակով, որոնցից մեկը գտնվում է Կարգագիր տվողի մոտ:

104. Այն Կարգագրերը, որոնցով աշխատանքները լիովին ավարտված են, պետք է պահվեն առնվազն 30 օր: Եթե Կարգագրով աշխատանքներ կատարելու ընթացքում տեղի է ունեցել որևէ պատահար, ապա այդ Կարգագիրը պետք է պահվի արխիվում քննության նյութերի հետ միասին:

105. Կարգագիր տալ թույլատրվում է 15 օրացուցային օրից ոչ ավել ժամկետով առաջին աշխատանքային օրից սկսված: Կարգագիրը կարող է երկարացվել մեկ անգամ 15 օրացուցային օրից ոչ ավել ժամկետով՝ երկարացման օրից սկսված:

106. Էլեկտրատեղակայանքներում հոսանատար մասերի վրա, լարման տակ աշխատանքներ կատարելիս՝ Կարգագիրը տրվում է ոչ ավել, քան մեկ աշխատանքային օրվա (աշխատանքային հերթափոխի) համար: Այն դեպքում, երբ կա անհրաժեշտություն հաջորդ օրերին նույնպես աշխատանքներ կատարել լարման տակ, տրվում է նոր Կարգագիր:

107. Աշխատանքի ընդմիջումների ընթացքում Կարգագիրը մնում է ուժի մեջ:

108. Կարգագրով և կարգադրությամբ կատարվող աշխատանքների հաշվառումը կատարվում է Կարգագրերով և կարգադրություններով աշխատանքների հաշվառման մատյանում:

109. Էլեկտրատեղակայանքներում կարգադրությամբ կատարվում են մեկ աշխատանքային օրվա ընթացքում իրականացվող աշխատանքները, որոնք ներառված չեն այն աշխատանքների կազմում, որոնց կատարման համար՝ ըստ սույն գլխի 102-րդ կետի, պահանջվում է Կարգագիր:

110. Աշխատանքի կարգադրությունը տրվում է աշխատանքներն իրագործողին և թույլատրողին: Տեղական օպերատիվ անձնակազմ չունեցող էլեկտրատեղակայանքներում, ինչպես նաև այն դեպքերում, երբ աշխատատեղում թույլտվություն չի պահանջվում, կարգադրությունը կարող է տրվել անմիջապես աշխատանքները իրագործող աշխատողին:

111. Աշխատանքները, որոնց կատարումը նախատեսված է կարգադրությամբ, կարգադրություն տվողի հայեցողությամբ, կարող են կատարվել Կարգագրով:

112. Կարգադրությամբ աշխատանքների թույլտվություն պետք է ձևակերպվի Կարգագրերով և կարգադրություններով աշխատանքների հաշվառման մատյանում:

113. Օպերատիվ անձնակազմից աշխատանքներ իրագործող կամ աշխատանքները հսկող ավագ աշխատողը 1000 Վ-ից բարձր լարման էլեկտրատեղակայանքներում պետք է ունենա էլեկտրաանվտանգության IV խումբ, իսկ մինչև 1000 Վ լարման էլեկտրատեղակայանքներում՝ էլեկտրաանվտանգության III խումբ:

114. Բրիգադի անդամները, ովքեր աշխատում են 1000 Վ-ից բարձր և ցածր լարման էլեկտրատեղակայանքներում, պետք է ունենան էլեկտրաանվտանգության III խումբ:

115. Աշխատանքներն սկսելուց առաջ պետք է կատարվեն կարգադրություն տվողի կողմից որոշված աշխատանքների նախապատրաստման բոլոր տեխնիկական միջոցառումները:

116. Եթե անհետաձգելի աշխատանքների համար պահանջվում է 1 ժամից ավել ժամանակ կամ ավել քան 3 աշխատող՝ ներառյալ աշխատողներ օպերատիվ և օպերատիվ կամ նորոգող անձնակազմից, ապա այդ աշխատանքները պետք է կատարվեն Կարգագրով՝ համաձայն սույն Կանոնների պահանջների:

117. Ընթացիկ շահագործման կարգով կատարվող աշխատանքները կազմակերպվում են աշխատանքային հերթափոխի ընթացքում: Ոչ մեծ ծավալի ընթացիկ շահագործման կարգով իրականացնելու թույլատրված աշխատանքների տեսակները պետք է ներկայացվեն կազմակերպության տեխնիկական ղեկավարի կամ էլեկտրատնտեսության պատասխանատուի կողմից նախօրոք մշակված, ստորագրված և կազմակերպության ղեկավարի կողմից հաստատված անվանացանկում, պահպանելով հետևյալ պահանջները՝

1) ընթացիկ շահագործման կարգով աշխատանքները (անվանացանկը) տարածվում են միայն մինչև 1000 Վ լարման էլեկտրատեղակայանքների վրա:

2) ընթացիկ շահագործման կարգով աշխատանքները կատարվում են տվյալ սարքավորմանը կամ տեղամասին ամրացված օպերատիվ կամ օպերատիվ-նորոգող անձնակազմի ուժերով:

3) ընթացիկ շահագործման կարգով աշխատանքները նախապատրաստում են նույն աշխատողները, ովքեր այնուհետև պետք է կատարեն աշխատանքները:

4) ընթացիկ շահագործման կարգով աշխատանքները համարվում են մշտական թույլատրված (Կարգագրի և(կամ) նպատակային հրարանգավորման կարիք չկա):

5) ընթացիկ շահագործման կարգով աշխատանքների անվանացանկում պետք է նշված լինի աշխատանքների գրանցման կարգը, կատարվող աշխատանքի տեղը, բնույթը, սկիզբը, ավարտը, որից հետո տեղյակ պահվի հերթափոխի վերադաս ղեկավարին և գրանցվի օպերատիվ մատյանում:

118. Էլեկտրատեղակայանքներում Կարգագրով, կարգադրությամբ կամ ընթացիկ աշխատանքների անվանացանկով աշխատանքներ իրագործողը բրիգադի անդամների կազմն ու որակավորումն որոշում է Կարգագիր (կարգադրություն) տվողը, անվանացանկ հաստատողը, ելնելով հետևյալ պայմաններից՝

1) բրիգադի թվաքանակը և դրա կազմը պետք է որոշվեն, ելնելով աշխատանքի պայմաններից, ինչպես նաև բրիգադի անդամների նկատմամբ աշխատանքներն իրագործողի (հսկողի) կողմից հսկողությունն ապահովելու հնարավորությունից.

2) աշխատանքն իրագործողի կողմից ղեկավարվող բրիգադի անդամը պետք է ունենա III խումբ, բացառությամբ ՕԳ-ի վրա կատարվող աշխատանքների, որոնք պետք է կատարի բրիգադի IV խումբ ունեցող անդամը.

3) թույլատրվում է բրիգադի կազմում ներառել II խմբի մեկ աշխատողի՝ III խմբի յուրաքանչյուր աշխատողի դիմաց, բայց II խումբ ունեցող աշխատողների ընդհանուր քանակը բրիգադում չպետք է լինի երեքից ավել.

4) հերթապահությունում գտնվող օպերատիվ անձնակազմը վերադաս օպերատիվ անձնակազմի թույլտվությամբ կարող է ներգրավվել բրիգադի աշխատանքներում՝ դրա մասին գրանցելով օպերատիվ մատյանում և Կարգագրում:

119. Աշխատատեղի նախապատրաստման իրավունքը և աշխատանքների թույլտվությունը կարող են տրվել միայն վերադաս օպերատիվ անձնակազմից կամ դրա համար լիազորված անձից իրավունք ստանալուց հետո՝

1) իրավունք տալը կարող է փոխանցվել աշխատատեղի նախապատրաստումը և բրիգադի աշխատանքների թույլտվությունն իրագործող անձնակազմին՝ անձամբ, հեռախոսով, ռադիոյով, թղթատարի կամ միջակա ենթակայանի օպերատիվ անձնակազմի միջոցով.

2) արգելվում է այդպիսի իրավունք տալ նախօրոք:

120. Բրիգադի թույլտվությունը կարելի է տալ միայն մեկ Կարգագրով:

121. ԲՍ տարածքում գտնվող, ՕԳ-ների տեղամասերում կատարվող աշխատանքները պետք է իրականացվեն ՕԳ-ն սպասարկող անձնակազմին տրվող կարգադրությամբ: Ծայրային հենարանի վրա աշխատանքների իրականացման դեպքում տեղական օպերատիվ անձնակազմը պետք է հրահանգավորի աշխատանքներն իրականացնող բրիգադին և ուղեկցի նրանց դեպի տվյալ հենարան: Այն էլեկտրատեղակայաններում, որտեղ նախատեսված չէ օպերատիվ անձնակազմ, գծային բրիգադի աշխատանքների իրականացման պատասխանատուին թույլատրվում է ստանալ ԲՍ բանալին և ինքնուրույն մոտենալ հենարանին: ԲՍ սպասարկող օպերատիվ անձնակազմից թույլատրողը պետք է իրականացնի գծային բրիգադի մուտքն անհրաժեշտ ձևակերպմամբ՝ ԲԲՍ մուտքերի վրա,

ՓԲՍ շինություններում, բացօթյա ամբողջական բաշխիչ սարքերի տանիքներում աշխատանքներ իրականացնելիս.

1) գծային բրիգադի աշխատանքների ղեկավարն իրավունք ունի ինքնուրույն դուրս գալ ԲՍ-ից, իսկ բրիգադի առանձին անդամները՝ սույն Կանոններով նախատեսված կարգով.

2) ԲՍ-ում տեղակայված ծայրային կցորդիչների և մալուխային գծերի եզրամասերի աշխատանքները պետք է իրականացվեն ԲՍ սպասարկող անձնակազմին տրվող Կարգագրերով: Մալուխային գծերի վրա աշխատանքի թույլտվությունը տվյալ դեպքերում իրականացնում է ԲՍ սպասարկող անձնակազմը: Մալուխային գծերի վրա աշխատանքները, որոնք ընթանում են ԲՍ տարածքում և մալուխային կառուցվածքներում, պետք է իրականացվեն ՄԳ սպասարկող անձնակազմին տրվող Կարգագրերով: Աշխատանքների իրականացման թույլտվությունը տրվում է ՄԳ սպասարկող անձնակազմին՝ ԲՍ օպերատիվ սպասարկող անձնակազմից թույլտվություն ստանալուց հետո: ԲՍ-ում տեղակայված կապի միջոցների վրա աշխատանքներն իրականացվում են կարգավարական և տեխնոլոգիական ղեկավար ծառայության կողմից տրվող Կարգագրերով.

3) թույլատրվում է նմանատիպ Կարգագրերի տրամադրումը ԲՍ սպասարկող անձնակազմի կողմից: Բացառություն են կազմում այն աշխատանքները, որոնք իրականացվում են կապի կոնդենսատորների և բարձրահաճախական արգելափակիչների վրա, որոնք պետք է իրականացվեն միայն ԲՍ աշխատողները տրված Կարգագրերով:

122. Երկու անձով մշտական գործող օպերատիվ անձնակազմով օբյեկտներում աշխատատեղը նախապատրաստում են նշված երկու անձը: Մեկ անձով մշտական գործող օպերատիվ անձնակազմով օբյեկտներում՝ աշխատատեղը նախապատրաստելու համար կարող է ոչ օպերատիվ անձնակազմից երկրորդ անձ ներգրավվել, ով ունի այդ աշխատանքների կատարման իրավունք: Թույլտվությունը կատարում է նրանցից ավագ անձը (ի պաշտոնե):

123. Օպերատիվ-նորոգող անձնակազմի կողմից սպասարկվող օբյեկտներում աշխատատեղը նախապատրաստում են այդ անձնակազմից երկու անձ, թույլտվությունը կատարում է նրանցից ի պաշտոնե ավագը:

124. Կարգավարական կետերի կողմից սպասարկվող օբյեկտներում աշխատատեղը նախապատրաստում է կարգավարական կետի օպերատիվ անձնակազմը (երկու անձով) և կատարում թույլտվություն: Աշխատանքների ավարտից հետո աշխատատեղն

աշխատանքներ իրագործողից (կամ պատասխանատու անձից) ընդունում է թույլտվություն տվողը:

125. Աշխատատեղի նախապատրաստումը և բրիգադին աշխատանքների թույլտվությունը Կարգագրով և կարգադրությամբ տարբեր աշխատատեղերի և աշխատանքների համար սահմանվում են, ելնելով հետևյալ պայմաններից՝

1) արգելվում է փոփոխել Կարգագրով նախատեսված աշխատատեղերի նախապատրաստման միջոցառումները: Աշխատատեղի նախապատրաստման միջոցառումների բավարարության և ճշտության, աշխատանքների անվտանգ կատարման հնարավորության վերաբերյալ պատասխանատու ղեկավարի, թույլատրողի մեջ կասկածներ առաջանալու դեպքում այդ նախապատրաստումը պետք է դադարեցվի, իսկ նախատեսված աշխատանքները՝ հետաձգվեն.

2) այն դեպքերում, երբ աշխատանքներն իրագործողը համատեղում է թույլատրողի պարտականությունները, նա պետք է աշխատատեղը նախապատրաստի բրիգադի անդամներից III խումբ ունեցող անձի հետ.

3) թույլատրողը, թույլտվությունից առաջ պետք է համոզվի, որ աշխատատեղի նախապատրաստման տեխնիկական միջոցառումները կատարված են՝ անձամբ զննելով, օպերատիվ մատյանի գրանցումներով, օպերատիվ սխեմայով, օպերատիվ կամ օպերատիվ-նորոգող անձնակազմի հաղորդումներով.

4) աշխատանքների պատասխանատու ղեկավարը և իրագործողը (հսկողը) աշխատանքների թույլտվությունից առաջ պետք է թույլատրողի մոտ պարզեն, թե ինչ միջոցներ են ձեռնարկված աշխատատեղի նախապատրաստման համար և թույլատրողի հետ միասին պետք է ստուգեն այդ նախապատրաստությունն անձամբ՝ աշխատատեղի սահմաններում՝

5) օպերատիվ անձնակազմի բացակայության դեպքում աշխատանքների պատասխանատու ղեկավարն աշխատանքներն իրագործողի (հսկողի) հետ միասին կարող է ինքնուրույն ստուգել աշխատատեղի նախապատրաստությունը:

126. Կարգագրերով և կարգադրություններով աշխատանքների թույլտվությունը պետք է իրագործվի անմիջապես աշխատատեղում: Այն դեպքերում, երբ պետք չէ աշխատատեղի նախապատրաստում, կարգադրությամբ կատարվող աշխատանքների թույլտվությունն անմիջապես աշխատատեղում կատարելը պարտադիր չէ, իսկ ՕԳ-ի, կապի օդային գծի և մալուխային գծի վրա դա չի պահանջվում:

127. Թույլտվությունը կատարվում է աշխատատեղի պատրաստ լինելն ստուգելուց հետո: Այդ դեպքում թույլատրողը պարտավոր է՝

1) բրիգադի անդամների անձնական վկայականներով ստուգել բրիգադի կազմի համապատասխանությունը Կարգագրում կամ կարգադրությունում նշվածին.

2) ապացուցել բրիգադին, որ լարումը բացակայում է՝ տեղադրված հողակցումների ցուցադրմամբ, կամ, եթե աշխատատեղից հողակցումները չեն երևում՝ լրացուցիչ ստուգելով լարման բացակայությունը:

128. Կարգագրով կամ կարգադրությամբ աշխատանքների սկզբին պետք է նախորդի նպատակային հրահանգավորում, որով նախատեսվում են կոնկրետ աշխատանքի անվտանգ կատարման ցուցումներ՝ Կարգագիր, կարգադրություն տվողից մինչև բրիգադի անդամը (իրագործողը):

129. Առանց նպատակային հրահանգավորման անցկացման աշխատանքների թույլտվությունն արգելվում է:

130. Կարգագրով աշխատանքների նպատակային հրահանգավորումն անցկացնում են՝

1) կարգագիր տվողը՝ աշխատանքների պատասխանատու ղեկավարին կամ, եթե պատասխանատու ղեկավար նշանակված չէ, աշխատանքներն իրագործողին (հսկողին).

2) թույլատրողը՝ աշխատանքների պատասխանատու ղեկավարին, աշխատանքներն իրագործողին, հսկողին և բրիգադի անդամներին.

3) աշխատանքների պատասխանատու ղեկավարը՝ աշխատանքներն իրագործողին (հսկողին) և բրիգադի անդամներին.

4) աշխատանքներն իրագործողը (հսկողը)՝ բրիգադի անդամներին:

131. Կարգադրությամբ աշխատանքների նպատակային հրահանգավորումն անցկացնում են՝

1) կարգադրություն տվողը՝ աշխատանքներն իրագործողին (հսկողին) կամ անմիջապես աշխատանքները իրագործողին, թույլատրողին.

2) թույլատրողը՝ աշխատանքներն իրագործողին (հսկողին), բրիգադի անդամներին:

132. Բրիգադի կազմում նոր անդամ ներգրավելու դեպքում հրահանգավորումը, որպես կանոն, պետք է անցկացնի աշխատանքներն իրագործողը (հսկողը):

133. Կարգագիր, կարգադրություն տվողը, աշխատանքների պատասխանատու ղեկավարը, աշխատանքներն իրագործողն իրենց նպատակային հրահանգավորման ժամանակ, բացի էլեկտրաանվտանգության հարցերից, պետք է հստակ ցուցումներ տան

աշխատանքների անվտանգ կատարման տեխնոլոգիայի, գործիքների, հարմարանքների, մեխանիզմների և բեռնամբարձ մեքենաների օգտագործման վերաբերյալ:

134. Աշխատանքներն իրագործողը (հսկողը) նպատակային հրահանգավորման ժամանակ պարտավոր է բրիգադի անդամներին տալ հոսանահարումը բացառող սպառիչ ցուցումներ:

135. Թույլատրողը նպատակային հրահանգավորման ժամանակ բրիգադի անդամներին պետք է ծանոթացնի Կարգագրի, կարգադրության բովանդակությանը, ցույց տա աշխատատեղի սահմանները, մակաձված լարման առկայությունը, ցույց տա աշխատատեղին մոտակա սարքավորանքը և նորոգվող ու հարևան միացությունների հոսանատար մասերը, որոնց արգելվում է մոտենալ՝ անկախ նրանից՝ դրանք գտնվում են լարման տակ, թե ոչ:

136. Կարգագրով աշխատելիս նպատակային հրահանգավորումը պետք է ձևակերպվի Կարգագրում առաջնային թույլտվության նպատակային հրահանգավորման մատյանում՝ հրահանգավորում անցկացնող և հրահանգավորված աշխատողների ստորագրություններով:

137. Կարգադրությամբ աշխատելիս նպատակային հրահանգավորումը պետք է ձևակերպվի Կարգագրերով և կարգադրություններով՝ աշխատանքների հաշվառման մատյանի համապատասխան սյունակում հրահանգավորման էության համառոտ շարադրմամբ, հրահանգավորում անցկացնողի (կարգադրություն տվողի) և հրահանգավորում ստացողների (աշխատանքներն իրագործողի (հսկողի), իրագործողի, թույլատրողի) ստորագրություններով:

138. Աշխատանքի թույլտվությունը ձևակերպվում է Կարգագրի երկու օրինակում, որոնցից մեկը մնում է աշխատանքներն իրագործողի մոտ, իսկ երկրորդը՝ օպերատիվ անձնակազմից թույլատրողի մոտ.

1) երբ աշխատանքներն իրագործողը համատեղում է թույլատրողի պարտականությունները, թույլտվությունը ձևակերպվում է Կարգագրի մեկ օրինակում.

2) աշխատանքի թույլտվությունն ըստ կարգադրության ձևակերպվում է Կարգագրերով և կարգադրություններով աշխատանքների հաշվառման մատյանում, օպերատիվ մատյանում՝ աշխատանքների թույլտվության մասին գրառմամբ:

139. Աշխատանքի թույլտվությունից հետո բրիգադի անվտանգության պահանջների պահպանման հսկողությունը դրվում է աշխատանքներն իրագործողի և հսկողի վրա, որը պետք է այնպես կազմակերպի իր աշխատանքը, որպեսզի հսկողություն իրականացնի

բրիգադի բոլոր անդամների վրա՝ գտնվելով հնարավորինս աշխատատեղի այն տեղամասում, որտեղ կատարվում են ամենավտանգավոր աշխատանքները:

140. Հսկողին արգելվում է հսկումը համատեղել որևէ այլ աշխատանքի կատարման հետ:

141. Աշխատատեղից ժամանակավոր հեռանալու անհրաժեշտության դեպքում աշխատանքներն իրագործողը կամ հսկողը, եթե նրան չեն կարող փոխարինել աշխատանքների պատասխանատու ղեկավարը, թույլատրողը կամ Կարգագիր տալու իրավունք ունեցող աշխատողը, ապա պարտավոր է աշխատատեղից հեռացնել բրիգադը (նրան դուրս բերելով բաշխիչ սարքից և կողպեքով փակելով մուտքի դռները, մարդկանց հանելով ՕԳ-ի հենարանից և այլն):

142. Աշխատանքներն իրագործողի (հսկողի) թույլտվությամբ բրիգադի աշխատողների մի մասը կարող է ժամանակավորապես հեռանալ աշխատատեղից՝ պայմանով, որ 1000 Վ-ից բարձր լարման էլեկտրատեղակայանքում պետք է մնա առնվազն երկու մարդ՝ ներառյալ աշխատանքներն իրագործողը (հսկողը):

143. Սույն Կանոնների խախտումների բացահայտման կամ աշխատողների անվտանգությանն սպառնացող այլ հանգամանքների հայտնաբերման դեպքում բրիգադը պետք է հեռացվի աշխատատեղից, և պետք է հետ վերցվի Կարգագիրն աշխատանքներն իրագործողից: Միայն բացահայտված խախտումները վերացնելուց հետո բրիգադը կարող է նորից աշխատանքի անցնելու թույլտվություն ստանալ՝ պահպանելով առաջնային թույլտվության պահանջները:

144. Բրիգադի կազմը կարող է փոխել միայն Կարգագիր (կարգադրություն) տվողը, ինչի մասին Կարգագրում գրանցում է կատարվում (Կարգագրի մեջ նախատեսված սյունակում): Բրիգադի տեղափոխումն այլ աշխատատեղ, աշխատանքների ընդմիջումների ձևակերպումը և աշխատանքների կրկնակի թույլատրումը, աշխատանքների ավարտի ձևակերպումը, էլեկտրատեղակայանքի միացումն աշխատանքների լրիվ ավարտից հետո կատարվում են կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 13

ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

145. Աշխատողների անվտանգության ապահովման տեխնիկական միջոցառումները պետք է ապահովեն՝

1) աշխատողների անվտանգությունը՝ լարումը հանելով հոսանատար մասերի վրա աշխատանքներ կատարելիս.

2) աշխատողների անվտանգությունը՝ էլեկտրատեղակայանքների ոչ հոսանատար մասերի վրա աշխատանքներ կատարելիս, երբ առկա է աշխատանքային լարումը հոսանատար մասերի վրա.

3) աշխատողների և այլ անձանց անվտանգությունը՝ լարման կողմնակի աղբյուրից փորձարկման աշխատանքներ կատարելիս.

4) աշխատողների և այլ անձանց անվտանգությունը՝ լարման տակ գտնվող օդային գծերի, մալուխային գծերի և բաց բաշխիչ սարքերի պահպանության գոտիներում մեքենամեխանիզմների կիրառմամբ աշխատանքներ կատարելիս:

ԳԼՈՒԽ 14

ԼԱՐՈՒՄԸ ՀԱՆԵԼՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

146. Լարումը հանելով աշխատատեղի նախապատրաստման համար պետք է նշված կարգով կատարվեն հետևյալ տեխնիկական միջոցառումները՝

1) կատարվեն անհրաժեշտ անջատումներ և ձեռնարկվեն միջոցներ, որոնք կանխարգելում են աշխատատեղին լարում տալը՝ փոխարկման ապարատների սխալ կամ ինքնաբերաբար միացման հետևանքով.

2) փոխարկման ապարատների ձեռքի կառավարման շարժաբեռների և հեռակառավարման բանալիների վրա կախվեն արգելող պլակատներ.

3) ստուգվի լարման բացակայությունը հոսանատար մասերում, որոնք պետք է հողակցված լինեն՝ մարդկանց հոսանահարումից պաշտպանելու համար.

4) դրվի հողակցում (միացվեն հողակցող դանակները, իսկ այն տեղերում, որտեղ դրանք բացակայում են, տեղադրվեն փոխադրովի հողակցումներ).

5) կախվեն «Հողակցված է» ցուցական պլակատներ, անհրաժեշտության դեպքում՝ ցանկապատվեն աշխատատեղերը և լարման տակ մնացած հոսանատար մասերը, կախվեն նախազգուշացնող ու կարգադրիչ պլակատներ:

147. Անջատումների կատարումը.

3) աշխատատեղի նախապատրաստման ժամանակ պետք է անջատվեն՝ ա՞հոսանատար մասերը, որոնց վրա կատարվելու են աշխատանքները.

բ" չցանկապատված հոսանատար մասերը, որոնց հնարավոր է մարդկանց, մեխանիզմների և բեռնամբարձ մեքենաների պատահական մոտեցումը Աղյուսակ N 1-ում նշվածից պակաս հեռավորության վրա,

գ" շարժաբեռների կառավարման և սնման շղթաները, փակվի փոխարկման ապարատների կառավարման համակարգում օդը, հանվի անջատիչների և ընդհատիչների (բաժանիչների) շարժաբեռների զսպանակների և ծանրոցների լարքը:

148. 1000 Վ-ից բարձր լարման էլեկտրատեղակայանքներում յուրաքանչյուր կողմից, որտեղից աշխատատեղերին փոխարկման ապարատի միջոցով կարող է տրվել լարում, պետք է լինի տեսանելի խզում: Տեսանելի խզումը կարող է ստեղծվել հաղորդաձողերի և հաղորդալարերի անջատմամբ կամ հանմամբ, ընդհատիչների (բաժանիչների) անջատմամբ, ապահովիչների հանմամբ, բեռնվածքի անջատիչների և զատիչների (խզիչների) անջատմամբ:

149. Լարման և ուժային տրանսֆորմատորները, որոնք կապված են աշխատանքների համար հատկացված էլեկտրատեղակայանքի տեղամասի հետ, պետք է անջատվեն, և սխեմաները կազմատվեն (քանդվեն) նաև իրենց այլ փաթույթների կողմից՝ հետադարձ տրանսֆորմացիայի հնարավորությունը բացառելու համար:

150. Անջատիչների, զատիչների (խզիչների), ընդհատիչների (բաժանիչների) և ձեռքի կառավարմամբ բեռնվածքի անջատիչների անջատումից հետո անհրաժեշտ է համոզվել դիտարկմամբ, որ դրանք անջատված են, և շունտող միջակապերը բացակայում են:

151. 1000 Վ-ից բարձր լարման էլեկտրատեղակայանքներում փոխարկման ապարատների սխալմամբ կամ ինքնաբերաբար միացումը կանխելու համար, որի հետևանքով լարումը կարող է տրվել աշխատատեղին, պետք է կիրառվեն հետևյալ միջոցները՝

1) պետք է մեխանիկական կողպեքով անջատված դիրքում փակված լինեն բեռնվածքի անջատիչների, ընդհատիչների (բաժանիչների) և զատիչների (խզիչների) ձեռքի շարժաբեռները (6-10 կՎ լարման միաբևեռ բաժանիչներով էլեկտրատեղակայանքներում մեխանիկական կողպեքի փոխարեն թույլատրվում է դանակների վրա հագցնել դիէլեկտրիկ թասակներ):

2) օպերատիվ ձողով կառավարվող ընդհատիչների (բաժանիչների) մշտական ցանկապատերը պետք է փակված լինեն մեխանիկական կողպեքով:

3) հեռագործ կառավարում ունեցող փոխարկման ապարատների շարժաբերներում պետք է անջատվեն ուժային և կառավարման շղթաները, իսկ օդաճնշական շարժաբերներում, բացի դրանից, սեղմված օդի առբերիչ խողովակաշարի վրա պետք է մեխանիկական կողպեքով փակվի սողնակը և բաց թողնվի սեղմված օդը, ընդ որում, արտաթողման կափույրները պետք է թողնվեն բաց դիրքում:

4) ծանրոցային և զսպանակային շարժաբերներում միացնող ծանրոցը կամ միացնող զսպանակները պետք է բերվեն ոչ աշխատանքային դիրքի:

5) պետք է կախվեն արգելող պլակատներ:

152. Դուրս բերվող սայլակներով լրակազմ բաշխիչ սարքի փոխարկման ապարատների սխալմամբ միացումը կանխելու միջոցները պետք է իրականացվեն սույն Կանոնների պահանջներին համապատասխան:

153. Մինչև 1000 Վ լարման էլեկտրատեղակայանքների բոլոր հոսանատար մասերից, որոնց վրա կատարվելու են աշխատանքներ, լարումը պետք է հանված լինի ձեռքի շարժաբերով փոխարկման ապարատների անջատմամբ, իսկ սխեմայում ապահովիչների առկայության դեպքում՝ վերջիններիս հանմամբ: Սխեմայում ապահովիչների բացակայության դեպքում փոխարկման ապարատների սխալմամբ միացման կանխումը պետք է ապահովվի այնպիսի միջոցներով, ինչպիսիք են պահարանների, բռնակների կամ դռների փակումը, կոճակների ծածկումը, փոխարկման ապարատի հպակների արանքում մեկուսիչ մակադրակների տեղադրումը և այլն: Հեռակառավարմամբ փոխարկման ապարատով լարումը հանելու դեպքում անհրաժեշտ է անջատել միացնող կոճի երկրորդական շղթան:

1) նշված միջոցառումները կարող են փոխարինվել՝ կամ քանդելով հաղորդաձողերը, մալուխը, հաղորդալարերը՝ անջատելով փոխարկման ապարատից կամ սարքավորումից, որի վրա պետք է կատարվի աշխատանք:

2) անհրաժեշտ է կախել արգելող պլակատներ (տես՝ Հավելված դ):

154. Տեսանելիության համար անմատչելի հպակներով փոխարկման ապարատների անջատված դիրքը մինչև 1000 Վ լարման դեպքում որոշվում է դրա սեղմակների կամ գնացող հաղորդաձողերի, հաղորդալարերի կամ այդ փոխարկման ապարատներով միացվող սարքավորման սեղմակների վրա լարման բացակայության ստուգմամբ:

155. Արգելող պլակատների կախումը՝

1) ձեռքով կառավարվող փոխարկման ապարատների շարժաբերների (շարժաբերների բռնակների) վրա (ավտոմատներ, ընդհատիչներ (բաժանիչներ), զատիչներ (խզիչներ),

անջատիչներ), որոնց միացնելուց կարող է լարում տրվել աշխատատեղին, պետք է կախված լինեն պլակատներ՝ «Չմիացնել, մարդիկ են աշխատում»՝

ա" օպերատիվ ձողով կառավարվող ընդհատիչների (բաժանիչների) դեպքում պլակատները կախվում են ցանկապատերի վրա, իսկ միաբևեռ ընդհատիչների (բաժանիչների) դեպքում՝ յուրաքանչյուր բևեռի շարժաբերի վրա: Սողնակների վրա, որոնք փակում են օդի մուտքն ընդհատիչների (բաժանիչների) օդաճնշական շարժաբերներ, կախվում է պլակատ՝ «Չմիացնել, մարդիկ են աշխատում»,

բ" փոխարկման ապարատ չունեցող մինչև 1000 Վ լարման միացումների վրա «Չմիացնել, մարդիկ են աշխատում» պլակատը պետք է կախել հանված ապահովիչների վրա, իսկ լրակազմ բաշխիչ սարքի դեպքում՝ ըստ սույն Կանոնների 217-րդ կետի,

գ" պլակատները պետք է կախվեն տեղային և հեռակառավարման բանալիների ու կոճակների վրա, ինչպես նաև փոխարկման ապարատների կառավարման շղթաների ու շարժաբերների ուժային շղթաների սնման ավտոմատների վրա և հանված ապահովիչների տեղում:

2) բաժանիչների շարժաբերների վրա, որոնցով աշխատանքների համար անջատված են ՕԳ-ն կամ ՄԳ-ն, անկախ աշխատող բրիգադների թվից, պետք է կախված լինի մեկ պլակատ՝ «Չմիացնել, գծում աշխատում են»: Այդ պլակատը կախվում և հանվում է գծի վրա աշխատող բրիգադների թիվը հաշվառող օպերատիվ անձնակազմի ցուցումով:

156. Այն դեպքում, երբ բրիգադի կազմում ընդգրկված են հայերեն լեզվին չտիրապետող օտարալեզու աշխատողներ՝ անվտանգության նշանները/ցուցումները պետք է լինեն նաև միջազգային ստանդարտներին համապատասխան պատկերների տեսքով:

ԳԼՈՒԽ 15

ԼԱՐՄԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՏՈՒԳՈՒՄ

157. Լարման բացակայությունն անհրաժեշտ է ստուգել լարման ցուցիչով, որի սարքինությունն օգտագործելուց առաջ պետք է որոշվի այդ նպատակի համար նախատեսված հատուկ սարքերի օգնությամբ կամ հաստատապես լարման տակ գտնվող հոսանատար մասերին մոտեցնելով:

158. 1000 Վ-ից բարձր լարման էլեկտրատեղակայանքներում լարման ցուցիչն անհրաժեշտ է օգտագործել դիէլեկտրիկ ձեռնոցներով:

159. 35 կՎ և բարձր լարման էլեկտրատեղակայանքներում լարման բացակայության ստուգման համար կարելի է օգտվել մեկուսիչ ձողից՝ այն մի քանի անգամ հպելով հոսանատար մասերին: Լարման բացակայության նշան է կայծերի ու ճրթճրթոցների բացակայությունը:

160. ԲՄ-ում լարման բացակայությունը թույլատրվում է ստուգել օպերատիվ անձնակազմի էլեկտրաանվտանգության IV խումբ ունեցող մեկ աշխատողի՝ 1000 Վ-ից բարձր լարման էլեկտրատեղակայանքներում, և էլեկտրաանվտանգության III խումբ ունեցող մեկ աշխատողի՝ մինչև 1000 Վ լարման էլեկտրատեղակայանքներում:

161. ՕԳ-ում լարման բացակայության ստուգումը պետք է կատարեն երկու աշխատողներ՝ 1000 Վ-ից բարձր լարման ՕԳ-ում՝ էլեկտրաանվտանգության IV և III խումբ ունեցողներ, մինչև 1000 Վ լարման ՕԳ-ում՝ էլեկտրաանվտանգության III խումբ ունեցողներ:

162. 330 կՎ և բարձր լարման միաշղթա օդային գծերի վրա լարման բացակայության բավարար հատկանիշ է հանդիսանում պսակավորման բացակայությունը:

163. Թույլատրվում է լարման բացակայությունն ստուգել տեղում գործող սխեմայի ստուգմամբ՝

1) լարման հատուկ ցուցիչի բացակայության դեպքում՝ բաց բաշխիչ սարքում (այսուհետ՝ ԲԲՄ), արտաքին տեղակայման լրակազմ տրանսֆորմատորային ենթակայանում, լրակազմ բաշխիչ սարքում, ինչպես նաև ՕԳ-ի վրա՝ մառախուղի, անձրևի, ձյան ժամանակ:

2) 220 կՎ և բարձր լարման ԲԲՄ-ում և 330 կՎ և բարձր լարման երկշղթա ՕԳ-ի վրա:

3) տեղում սխեմայի ստուգման դեպքում լարման բացակայությունը ՕԳ-ի և ՄԳ-ի ներանցիչների վրա հաստատվում է հերթապահի կողմից, որի օպերատիվ կառավարման ներքո են գտնվում այդ գծերը:

4) ՕԳ-ի գործող սխեմայի ստուգումը կայանում է գծերի ուղղությունների և արտաքին նշանների, ինչպես նաև հենարանների վրա նշումների ստուգման մեջ, որոնք պետք է համապատասխանեն գծերի կարգավարական անվանումներին:

164. Փայտե կամ երկաթբետոնե հենարաններով 6-35 կՎ լարման ՕԳ-ի վրա (ինչպես նաև փոխագուցավոր վերնակից աշխատելու ընթացքում) լարման բացակայության ստուգման ժամանակ հոսող ունակային հոսանքի սկզբունքով աշխատող լարման ցուցիչի (բացառությամբ իմպուլսայինի) զգայունությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է ցուցիչի աշխատանքային մասը հողակցել: ՕԳ-ի վրա, տարբեր մակարդակներով հաղորդալարերի կախվածքի դեպքում, լարման բացակայության ստուգումը ցուցիչով կամ

ծողով կատարել ներքևից վերև: Հորիզոնական կախվածքի դեպքում՝ ստուգումը պետք է սկսել մոտակա հաղորդալարից: Հողակցման տեղադրումն անհրաժեշտ է կատարել նույնպես ներքևից վերև՝ սկսած ներքևի հաղորդալարից:

165. Հողակցված չեզոքով մինչև 1000 Վ լարման էլեկտրատեղակայանքներում երկբևեռ ցուցիչի կիրառման դեպքում լարման բացակայությունը պետք է ստուգել ինչպես ֆազերի միջև, այնպես էլ յուրաքանչյուր ֆազի և սարքավորանքի հողակցված իրանի կամ պաշտպանիչ հաղորդալարի միջև: Թույլատրվում է օգտագործել նախապես ստուգված վոլտաչափ: Արգելվում է օգտվել «ստուգիչ» լամպերից:

166. Ապարատի անջատված դիրքի մասին ազդանշանող սարքվածքները, ուղեկապող սարքվածքները, մշտական միացված վոլտաչափերը և այլն հանդիսանում են միայն որպես լարման բացակայությունը հաստատող լրացուցիչ միջոցներ, և դրանց ցուցմունքների հիման վրա չի կարելի անել եզրակացություն լարման բացակայության մասին:

ԳԼՈՒԽ 16

ՀՈՂԱԿՑՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

167. Հոսանատար մասերի վրա հողակցումներն անհրաժեշտ է տեղադրել անմիջապես լարման բացակայության ստուգումից հետո:

168. Փոխադրովի հողակցումը նախ պետք է միացնել հողակցող սարքվածքին և ապա, լարման բացակայության ստուգումից հետո, տեղադրել հոսանատար մասերի վրա: Փոխադրովի հողակցումն անհրաժեշտ է հանել հակառակ հաջորդականությամբ՝ սկզբում հանել հոսանատար մասերից, ապա անջատել հողակցող սարքվածքից:

169. Փոխադրովի հողակցումների տեղադրումը և հանումը պետք է կատարվեն դիէլեկտրիկ ձեռնոցներով՝ 1000 Վ-ից բարձր լարման էլեկտրատեղակայանքներում օգտագործելով նաև մեկուսիչ ձող: Փոխադրովի հողակցումների սեղմակների ամրապնդումը պետք է կատարել այդ նույն ձողով:

170. Արգելվում է հողակցման համար գործածել այդ նպատակի համար չնախատեսված հաղորդալարեր:

ՀՈՂԱԿՑՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ՝ ԲԱՇԽԻՉ ՍԱՐՔԵՐՈՒՄ

171. 1000 Վ-ից բարձր լարման էլեկտրատեղակայանքներում պետք է հողակցվեն բոլոր ֆազերի (բևեռների) հոսանատար մասերն աշխատանքների համար անջատված տեղամասի բոլոր կողմերից, որտեղից կարող է տրվել լարումը, բացառությամբ աշխատանքների համար անջատված հավաքովի հաղորդաձողերի, որոնց վրա բավական է տեղադրել մեկ հողակցում:

172. ՕԳ-ի գծային բաժանիչի վրա աշխատանքներ կատարելիս՝ անկախ բաժանիչի վրա հողակցող դանակների առկայությունից, պետք է տեղադրվի լրացուցիչ հողակցում ՕԳ-ի կողմից իջնող հաղորդալարերի վրա, որը չպետք է խախտվի բաժանիչների հետ գործողություններ կատարելիս:

173. Հողակցված հոսանատար մասերը պետք է բաժանված լինեն լարման տակ գտնվող հոսանատար մասերից տեսանելի խզումով.

1) տեղադրված հողակցումները կարող են բաժանված լինել հոսանատար մասերից, որոնց վրա անմիջականորեն կատարվում են աշխատանքները, անջատված անջատիչներով, ընդհատիչներով (բաժանիչներով), բեռնվածքի անջատիչներով կամ գատիչներով (խզիչներով), հանված ապահովիչներով, ապատեղակայված հաղորդաձողերով կամ հաղորդալարերով.

2) անմիջականորեն աշխատատեղում հոսանատար մասերի վրա պետք է լրացուցիչ հողակցում տեղադրվի այն դեպքերում, երբ այդ մասերը կարող են հայտնվել մակաձված լարման (պոտենցիալի) տակ:

174. Փոխադրովի հողակցումներն անհրաժեշտ է միացնել հոսանատար մասերին՝ ներկից մաքրված տեղերում:

175. Մինչև 1000 Վ լարման էլեկտրատեղակայանքներում ԲՍ հավաքող հաղորդաձողերի, հավաքվածքների, վահանների վրա աշխատանքների ժամանակ լարումը հաղորդաձողերից պետք է հանված լինի, և հաղորդաձողերը (բացառությամբ մեկուսացված հաղորդալարով հաղորդաձողերի) պետք է լինեն հողակցված: Այդ ԲՍ-ի, վահանների, հավաքվածքների, միացությունների և միացված սարքավորման հողակցման անհրաժեշտությունը և հնարավորությունն որոշում է Կարգագիր, կարգադրություն տվողը:

176. Թուլատրվում է աշխատատեղի նախապատրաստման ժամանակ տեղադրված հողակցումների ժամանակավոր հանումը, եթե դա պահանջվում է կատարվող աշխատանքների բնույթով (մեկուսացման դիմադրության չափում և այլն):

1) հողակցումների ժամանակավոր հանումը և կրկին տեղադրումը կատարում է օպերատիվ անձնակազմը կամ Կարգագիր տվողի ցուցումով աշխատանքներն իրագործողը.

2) հողակցումների ժամանակավոր հանման, ինչպես նաև աշխատանքն իրագործողի կողմից այդ գործողությունների կատարման թույլտվությունը պետք է ամրագրված լինի Կարգագրի «Առանձին ցուցումներ» տողում՝ գրանցելով՝ որտեղ և ինչ նպատակով պետք է հանված լինեն հողակցումները:

177. Էլեկտրատեղակայանքներում, որոնց կառուցվածքն այնպիսին է, որ հողակցման տեղադրումը վտանգավոր է կամ անհնար (օրինակ, որոշ բաշխիչ արկղերում, առանձին տեսակների լրակազմ բաշխիչ սարքերում, ֆազերի ուղղաձիգ դասավորությամբ հավաքվածքներում), պետք է մշակվեն աշխատանքի անվտանգությունն ապահովող լրացուցիչ միջոցառումներ՝ ընդհատիչների (բաժանիչների) դանակների վրա դիէլեկտրիկ թասակների կամ դիէլեկտրիկ մակադրակների տեղադրում, հաղորդալարերի, մալուխների և հաղորդաձողերի անջատում: Այդպիսի էլեկտրատեղակայանքների անվանացանկը հաստատում է գործատուն և իրագեկում անձնակազմին:

178. Մինչև 1000 Վ լարման էլեկտրատեղակայանքներում հողակցումների տեղադրման և հանման գործողությունները թույլատրվում է կատարել օպերատիվ անձնակազմից էլեկտրաանվտանգության III խումբ ունեցող մեկ աշխատողի:

179. 1000 Վ-ից բարձր լարման էլեկտրատեղակայանքներում փոխադրովի հողակցումների տեղադրումը պետք է կատարեն երկու աշխատողներ՝ մեկը էլեկտրաանվտանգության IV խումբ ունեցող (օպերատիվ անձնակազմից), մյուսը՝ էլեկտրաանվտանգության III խումբ, վերջինս կարող է լինել նորոգող անձնակազմից, իսկ սպառողների միացությունների հողակցման դեպքերում՝ սպառողների անձնակազմից: Հեռավոր ենթակայաններում, վարչատեխնիկական կամ օպերատիվ անձնակազմի թույլտվությամբ, հիմնական սխեմայում հողակցումների տեղադրման ժամանակ թույլատրվում է սպառողների անձնակազմից էլեկտրաանվտանգության III խումբ ունեցող երկրորդ անձի աշխատանքը.

1) հողակցող դանակները կարող է միացնել օպերատիվ անձնակազմից էլեկտրաանվտանգության IV խումբ ունեցող մեկ աշխատող.

2) հողակցող դանակներն անջատել և փոխադրովի հողակցումները հանել միանձնյա կարող է էլեկտրաանվտանգության III խումբ ունեցող մեկ աշխատող օպերատիվ անձնակազմից:

ՀՈՂԱԿՑՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ ՕԳԱՅԻՆ ԳԾԵՐԻ ՎՐԱ

180. 1000 Վ-ից բարձր լարման ՕԳ-ները պետք է հողակցված լինեն բոլոր ԲՍ-ներում և սեկցիավորող փոխարկման ապարատների մոտ, որտեղ գիծն անջատված է: Թույլատրվում է՝

1) 35 կՎ և բարձր լարման ճյուղավորումներով ՕԳ-ն չհողակցել այդ ճյուղավորություններին միացված ենթակայաններում՝ պայմանով, որ ՕԳ-ն հողակցված է երկու կողմերից, իսկ այդ ենթակայաններում հողակցումները տեղադրված են անջատված գծային բաժանիչներից հետո:

2) 6-35 կՎ լարման ՕԳ-ն հողակցել միայն մեկ ԲՍ-ում կամ մեկ սեկցիավորող ապարատի մոտ, կամ ԲՍ-ին կամ սեկցիավորող ապարատին ամենամոտ հենարանի վրա:

ա՝այդ լարման մնացած ԲՍ-ներում և սեկցիավորող ապարատի մոտ, որտեղ ՕԳ-ն անջատված է, թույլատրվում է այն չհողակցել՝ պայմանով, որ աշխատատեղի և այդ ԲՍ-ի կամ սեկցիավորող ապարատների միջև ՕԳ-ի վրա տեղադրվեն հողակցումներ: Նշված հողակցումներն ՕԳ-ի վրա պետք է տեղադրել հողակցող սարքվածքներ ունեցող հենարանների վրա,

բ՝մինչև 1000 Վ լարման ՕԳ-ի վրա բավական է հողակցումը տեղադրել միայն աշխատատեղում:

181. Ի լրումն սույն գլխի 180-րդ կետում նշված հողակցումների՝ ամեն մի բրիգադի աշխատատեղում պետք է հողակցված լինեն բոլոր ֆազերի հաղորդալարերը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ շանթապաշտպան մետաղաճոպանները:

182. Խարսխային թռիչքում հաղորդալարերի տեղակայման դեպքում, ինչպես նաև տեղակայված ՕԳ-ի տեղամասում խարսխային հենարանների վրա հանգույցները միացնելուց հետո հաղորդալարերը (մետաղաճոպանները) պետք է հողակցվեն սկզբնական խարսխային հենարանի և վերջնական միջակա հենարաններից մեկի վրա (վերջին խարսխման հենարանից առաջ):

183. Արգելվում է հողակցել տեղակայված խարսխային թռիչքի, ինչպես նաև ՕԳ-ի տեղակայված տեղամասի խարսխային վերջին հենարանի վրայի հաղորդալարերը (մետաղաճոպանները)՝ ՕԳ-ի տեղամասի հաղորդալարերից (մետաղաճոպաններից) դրա հաջորդ՝ տեղակայվող տեղամասի վրա, ամպրոպային պարպման պոտենցիալի և այլ գերլարումների անցումից խուսափելու համար:

184. Տրոհված լարերով ՕԳ-ի վրա թույլատրվում է հողակցել յուրաքանչյուր ֆազի միայն մեկ հաղորդալարը, մեկուսացնող պահանջների առկայության դեպքում պահանջվում է հողակցել ֆազի բոլոր հաղորդալարերը:

185. Մեկ շղթայանոց ՕԳ-ի վրա հողակցումն աշխատատեղերում անհրաժեշտ է տեղադրել այն հենարանի վրա, որի վրա աշխատանքներ են կատարվում, կամ՝ հարևան հենարանի վրա: Թույլատրվում է հողակցումների տեղադրումը ՕԳ-ի այն տեղամասի երկու կողմերից, որտեղ աշխատում է բրիգադը՝ պայմանով, որ հողակցումների միջև տարածությունը չգերազանցի 2 կմ:

186. Հենարանից մեկուսացված շանթապաշտպան մետաղաճոպանի կամ հենարանի կառուցվածքների վրա աշխատանքների դեպքում, երբ պահանջվում է այդ մետաղաճոպանին մոտենալ 1 մ-ից պակաս հեռավորության վրա, մետաղաճոպանը պետք է հողակցված լինի: Հողանկցումը պետք է տեղադրել կամ այն թռիչքի կողմը, որտեղ մետաղաճոպանը մեկուսացված է, կամ թռիչքում, որտեղ կատարվում են աշխատանքներ:

187. Հողակցման էջքը հողից մեկուսացված շանթապաշտպան ճոպանին միացնելը կամ անջատելը պետք է կատարվի ճոպանը նախապես հողակցելուց հետո:

188. Եթե մետաղաճոպանի վրա նախատեսված է սառցակեղևի հալում, ապա աշխատանքներն սկսելուց առաջ մետաղաճոպանը պետք է լինի անջատված և հողակցված այն կողմերից, որտեղից դրա վրա կարող է լարում տրվել:

189. Փոխադրովի հողակցումներն անհրաժեշտ է միացնել մետաղյա հենարաններում՝ դրանց տարրերին, իսկ հողակցող էջքերով երկաթբետոնե և փայտյա հենարաններում՝ այդ էջքերին՝ դրանց ամբողջականությունն ստուգելուց հետո: Հողակցող էջքեր չունեցող երկաթբետոնե հենարանների վրա հողակցումները կարելի է միացնել լայնակներին և հենարանի այլ մետաղյա տարրերին, որոնք ունեն հպում հողակցման սարքվածքի հետ:

190. Հողակցված չեզոքով մինչև 1000 Վ լարման էլեկտրացանցերում գրոյական հաղորդալարի կրկնական հողակցման առկայության դեպքում թույլատրվում է փոխադրովի հողակցումները միացնել այդ գրոյական հաղորդալարին:

191. Հողակցող հաղորդալարերի կամ կառուցվածքների հետ փոխադրովի հողակցումների միացման տեղերը պետք է մաքրված լինեն ներկից:

192. Աշխատատեղում փոխադրովի հողակցումը կարելի է միացնել գետնի մեջ 0,5 մ-ից ոչ պակաս ուղղաձիգ ընկղմված հողակցիչին: Արգելվում է հողակցիչների տեղադրումը գետնին պատահական կիտվածքների մեջ:

193. Մինչև 1000 Վ լարման ՕԳ-ի վրա հենարանների վրայից կամ առանց մեկուսացնող օղակի փոխադրված վերնակից կատարվող աշխատանքների ժամանակ հողակցումը պետք է տեղադրված լինի ինչպես նորոգվող գծի հաղորդալարերի վրա, այնպես էլ այդ հենարաններից կախված բոլոր հաղորդալարերի վրա, այդ թվում՝ ռադիոհաղորդման և հեռուստամեխանիկայի գծերի չմեկուսացված հաղորդալարերի վրա:

194. Նորոգման համար անջատված ՕԳ-ների վրա տեղադրել, իսկ հետո հանել փոխադրովի հողակցումները, միացնել հենարանների և հենասյունների վրա գտնվող բաժանիչների հողակցող դանակները պետք է կատարեն օպերատիվ անձնակազմի աշխատողները. մեկը՝ էլեկտրաանվտանգության IV խմբի (1000 Վ-ից բարձր լարման ՕԳ-ների վրա) կամ էլեկտրաանվտանգության III խմբի (1000 Վ-ից ցածր լարման ՕԳ-ների վրա), երկրորդը՝ էլեկտրաանվտանգության III խմբի: Թույլատրվում է էլեկտրաանվտանգության III խմբի երկրորդ աշխատողի ընդգրկումը՝ նորոգող անձնակազմից, իսկ սպառողին սնող ՕԳ-ների վրա՝ սպառողի անձնակազմից:

195. Հողակցող դանակները թույլատրվում է անջատել օպերատիվ անձնակազմի էլեկտրաանվտանգության III խմբի մեկ աշխատողի:

196. ՕԳ-ների աշխատատեղերում փոխադրովի հողակցումները կարող է տեղադրել աշխատանքներն իրագործողը բրիգադի անդամի հետ, որն ունի էլեկտրաանվտանգության III խումբ: Այդ փոխադրովի հողակցումներն, աշխատանքներն իրագործողի կարգադրությամբ, կարող են հանել բրիգադի էլեկտրաանվտանգության III խմբի երկու անդամներ:

197. ՕԳ-ների վրա լարման բացակայության ստուգման, հողակցումների տեղադրման և հանման ժամանակ երկու աշխատողից մեկը պետք է գտնվի գետնի վրա և հսկի մյուսին:

198. ՕԳ-ների վրա հողակցումների տեղադրման պահանջները, երբ աշխատանքները կատարվում են այլ ՕԳ-ի հետ հատման թռիչքում, բազմաշղթա ՕԳ-ի անջատած մեկ շղթայի վրա, մակաձված լարման տակ ՕԳ-ի վրա և ըստ ֆազերի հերթականության նորոգման դեպքում:

ԳԼՈՒԽ 17

ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ՑԱՆԿԱՊԱՏՈՒՄ ԵՎ ՑՈՒՑԱՆԱԿՆԵՐԻ ԿԱԽՈՒՄ

199. Էլեկտրատեղակայանքներում պետք է կախվեն «Հողակցված է» պլակատներ բեռնվածքի անջատիչների, զատիչների (խզիչների), ընդհատիչների (բաժանիչների)

շարժաբերների վրա, որոնց սխալմամբ միացնելու դեպքում կարող է լարում տրվել էլեկտրատեղակայանքի հողակցված տեղամասին և փոխարկման ապարատների հեռակառավարման բանալիների ու կոճակների վրա:

200. Լարման տակ մնացած հոսանատար մասերի ժամանակավոր ցանկապատման համար կարող են օգտագործվել փայտից կամ այլ մեկուսիչ նյութերից պատրաստված վահաններ, պահպանակներ, էկրաններ և այլն:

201. Առանց լարումը հանելու ժամանակավոր ցանկապատում տեղադրելիս՝ դրանց հեռավորությունը հոսանատար մասերից պետք է լինի Աղյուսակ N 1-ում նշվածից ոչ պակաս: 6(10) կՎ լարման էլեկտրատեղակայանքներում, անհրաժեշտության դեպքում, այդ հեռավորությունը կարող է փոքրացվել մինչև 0,35 մ:

202. Ժամանակավոր ցանկապատերի վրա պետք է գրված լինի՝ «Կանգնի՛ր, լարում կա», կամ ամրացված լինեն համապատասխան պլակատներ:

203. 6(10) կՎ լարման էլեկտրատեղակայանքներում, այն դեպքերում, երբ հնարավոր չէ հոսանատար մասերը ցանկապատել վահաններով, թույլատրվում է մեկուսիչ մակադրակների կիրառում՝ դրանք տեղադրելով անջատված և լարման տակ գտնվող հոսանատար մասերի միջև (օրինակ, անջատված ընդհատիչի (բաժանիչի) հպակների արանքում): Այդ մեկուսիչ մակադրակները կարող են հավել լարման տակ գտնվող հոսանատար մասերին: Մակադրակները հանել և տեղադրել կարող են էլեկտրաանվտանգության IV և III խումբ ունեցող երկու աշխատող (նրանցից ավագը՝ հերթապահ օպերատիվ անձնակազմից)՝ օգտվելով դիէլեկտրիկ ձեռնոցներից, մեկուսիչ ձողից (աքցանից):

204. Աշխատատեղին սահմանակից պահարանների, պանելների և խցերի ցանկապատերի վրա պետք է կախված լինեն պլակատներ՝ «Կանգնի՛ր, լարում կա»:

205. ԲԲՄ-ում գետնից կատարվող աշխատանքների դեպքում և հիմքերի ու առանձին կառուցվածքների վրա տեղադրված սարքավորումների վրա աշխատելիս՝ աշխատատեղը պետք է ցանկապատված լինի (անցում կամ ճանապարհ թողնելով) պլաստիկ ազդանշանային շղթաներով, բուսական կամ սինթետիկ թելքից պատրաստված ճոպանով, պարանով կամ քուղով՝ դրանց վրա կախելով դեպի ցանկապատված տարածության ներսն ուղղված պլակատներ՝ «Կանգնի՛ր, լարում կա»:

1) թույլատրվում է ճոպանը կախել աշխատատեղի գոտում չներառվող կառուցվածքներից՝ պայմանով, որ դրանք մնան ցանկապատված տարածքից դուրս:

2) ամբողջ ԲԲՍ-ից լարումը հանելու դեպքում, բացառությամբ գծային բաժանիչների, վերջիններս պետք է ցանկապատվեն ճուպանով, ցանկապատված տարածությունից դեպի դուրս շրջված պլակատներով՝ «Կանգնի՛ր, լարում կա»:

206. ԲԲՍ-ում, կառուցվածքների այն մասերում, որոնցով կարելի է անցնել աշխատատեղից դեպի դրան սահմանակից լարման տակ գտնվող մասերը, պետք է տեղադրված լինեն լավ տեսանելի պլակատներ՝ «Կանգնի՛ր, լարում կա»: Այդ պլակատները կարող է տեղադրել նորոգող անձնակազմի էլեկտրաանվտանգության III խումբ ունեցող աշխատողը՝ թույլատրողի ղեկավարությամբ.

1) կառուցվածքների վրա, որոնք սահմանակից են այն կառուցվածքի հետ, որի վրայով թույլատրվում է բարձրանալ, ներքևում պետք է կախված լինի՝ «Մի՛ բարձրացիր: Մահացու է» պլակատը.

2) անշարժ սանդուղքների և կառուցվածքների վրա, որոնցով թույլատրվում է բարձրանալ աշխատանքներ կատարելու համար, պետք է կախված լինի՝ «Բարձրանալ այստե՛ղ» պլակատը:

207. Էլեկտրատեղակայանքներում նախապատրաստված աշխատատեղերում պետք է կախված լինի՝ «Աշխատել այստե՛ղ» պլակատը:

208. Արգելվում է աշխատատեղերի նախապատրաստման ժամանակ թույլատրողի կողմից տեղադրված պլակատները և ցանկապատերը հավաքել կամ տեղափոխել մինչև աշխատանքների լրիվ ավարտը, բացառությամբ Կարգագրի «Առանձին ցուցումներ» սյունակում վերապահված դեպքերի:

ԳԼՈՒԽ 18

ԱՌԱՆՁԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՓՈԽԱՐԿՄԱՆ ԱՊԱՐԱՏՆԵՐ

209. Փոխարկման ապարատի վրա աշխատանքների կատարման թույլտվությունը տրվում է սույն Կանոններով նախատեսված՝ աշխատանքի անվտանգությունն ապահովող տեխնիկական միջոցառումների կատարումից հետո՝ ներառյալ փոխարկման ապարատի սխալմամբ բանումն արգելող միջոցառումները:

210. Աշխատանքային ճնշման տակ գտնվող օդային անջատիչի վրա բարձրանալ թույլատրվում է միայն փորձարկման և կարգաբերման աշխատանքների դեպքում: Արգելվում է բարձրանալ օդալեցուն զատիչով (խզիչով) անջատված օդային անջատիչի վրա, երբ զատիչը գտնվում է աշխատանքային ճնշման տակ:

211. Փորձարկելու և կարգաբերելու համար օդային անջատիչի վրա բարձրանալուց առաջ անհրաժեշտ է՝

1) անջատել կառավարման շղթաները.

2) ուղեկապել տեղային կառավարման կոճակը կամ գործարկման կափույրները, հատուկ խցափակիչներ տեղադրելով, կամ փակել պահարանները և անջատիչի մոտ կանգնեցնել բրիգադի հրահանգավորված անդամի, որն անջատիչի հետ գործողություններ կթույլատրի (օպերատիվ հոսանք տալուց հետո) միայն մեկ որոշակի աշխատողի՝ աշխատանքներն իրագործողի ցուցումով: Ճնշման տակ գտնվող օդային անջատիչի վրա մարդկանց գտնվելու ժամանակ բոլոր աշխատանքները կառավարման և բաշխման պահարաններում պետք է դադարեցվեն: 220 կՎ բարձր լարման գործող ենթակայանների անջատիչի արտանցիչները պետք է հողակցվեն մակաձված լարումը հանելու համար:

212. Օդահավաքիչների ներսում մարդկանց գտնվելու հետ կապված աշխատանքներ թույլատրելուց առաջ անհրաժեշտ է՝

1) փակել այն բոլոր օդատարների սողնակները, որոնցով կարող է օդ մատուցվել, սողնակների շարժաբերները (ղեկանիվները) շղթայի միջոցով կողպել և վրան կախել «Չբացել, մարդիկ են աշխատում» պլակատները.

2) բաց թողնել օդահավաքիչների ավելցուկային ճնշման տակ գտնվող օդը, բացված վիճակում թողնելով արտաթողման դրենաժային կափույրը, խցանը կամ սողնակը.

3) անջատել օդահավաքիչներից օդ մատուցող օդատարները և խցափակել դրանք:

213. Անջատիչների և օդահավաքիչների վրայի ճնշաչափերի զրոյական ցուցմունքը չի կարող ծառայել որպես սեղմված օդի ճնշման բացակայությունը հավաստող նշան: Մտոցների և դիտանցքերի կափարիչները հանելիս՝ հեղույսները և մանեկները քանդելուց առաջ աշխատանքներն իրագործողը պետք է անձամբ համոզվի արտաթողման կափույրների, սողնակների, խցանների բաց լինելու մեջ՝ սեղմված օդի իրական բացակայությունն որոշելու նպատակով: Արտաթողման կափույրները կամ սողնակները թույլատրվում է փակել միայն մտոցի (դիտանցքի) կափարիչն ամրացնող բոլոր հեղույսները և մանեկները ձգելուց հետո:

214. Փորձման, կարգաբերման և փորձարկման համար օդային անջատիչների անջատման ու միացման պահին աշխատողներին արգելվում է գտնվել անջատիչների մոտ: Աշխատանքներն իրագործողն անջատիչով գործողություններ կատարելու մասին հրամանը

պետք է տա միայն այն դեպքում, երբ բրիգադի անդամները հեռացվել են անջատիչից անվտանգ հեռավորության վրա կամ մտել են ապաստարան:

215. Փոխարկման ապարատը կարգաբերելիս և կարգավորելիս՝ փորձնական միացումներ և անջատումներ կատարելու նպատակով թույլատրվում է Կարգագիրը չհանձնած օպերատիվ հոսանքի շղթաներին ու շարժաբերի ուժային շղթաներին տալ ժամանակավոր լարում, ինչպես նաև օդ մատուցել անջատիչին: Հանված ապահովիչները տեղադրելը, անջատված ավտոմատները միացնելը և օդ մատուցելու համար սողնակները բացելը, ինչպես նաև փորձարկման ընթացքում անվտանգության պլակատները հանելը պետք է իրականացնի օպերատիվ անձնակազմը: Փոխարկման ապարատը փորձարկելու գործողությունները կարող է կատարել աշխատանքներն իրագործողը, եթե դրա համար ստացված է Կարգագիրը տվողի թույլտվությունը՝ Կարգագրի «Առանձին ցուցումներ» տողում գրությամբ հաստատված, կամ՝ օպերատիվ անձնակազմը՝ աշխատանքներն իրագործողի պահանջով: Փորձումից հետո փոխարկման ապարատի վրա աշխատանքը շարունակելու անհրաժեշտության դեպքում օպերատիվ անձնակազմը պետք է կատարի բրիգադի աշխատանքի անցնելու թույլտվության համար պահանջվող տեխնիկական միջոցառումները: Տեղային անձնակազմ չունեցող էլեկտրատեղակայանքներում փոխարկման ապարատի փորձարկումից հետո աշխատանքներն իրագործողին աշխատատեղի նախապատրաստման և աշխատանքների թույլտվության կրկնական իրավունք ստանալ չի պահանջվում:

ԼՐԱԿԱԶՄ ԲԱՇԽԻՉ ՍԱՐՔՎԱԾՔՆԵՐ

216. Լրակազմ բաշխիչ սարքից (այսուհետ՝ ԼԲՍ) պահարանի հատվածամասում կամ սայլակի սարքավորումների վրա աշխատանքներ կատարելիս անհրաժեշտ է՝

1) սարքավորանքով սայլակը հանել նորոգման դիրքի.

2) հատվածամասում, որում հոսանատար մասերը մնացել են լարման տակ, հատվածամասի փականակը փակել կողպեքով և կախել «Կանգնի՛ր, լարում կա» անվտանգության պլակատը.

3) սայլակի վրա կամ հատվածամասում, որտեղ նախատեսվում է աշխատել, կախել «Աշխատել այստե՛ղ» պլակատը:

217. ԼԲՍ-ից դուրս, դրա հետ միացված սարքավորման կամ միացված ՕԳ-ի և ՄԳ-ի վրա աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է՝

1) անջատիչով սայլակը պահարանից դուրս հանել նորոգման դիրքի.

2) փականակը կամ դռնակները փակել կողպեքով և դրանց վրա կախել «Չմիացնե՛լ, մարդիկ են աշխատում» կամ «Չմիացնե՛լ, գծում աշխատում են» պլակատները.

Ընդ որում, թույլատրվում է՝

3) հողակցման դանակների և անջատիչով սայլակի մեջ ուղեկապման առկայության դեպքում սայլակը տեղադրել ստուգման դիրքում՝ այդ դանակները միացնելուց հետո.

4) այդպիսի ուղեկապման կամ ԼԲՍ-ում հողակցման դանակների բացակայության դեպքում սայլակը տեղադրել ստուգման և նորոգման միջանկյալ դիրքում՝ այն պայմանով, որ սայլակը փակվի կողպեքով: Սայլակը կարող է տեղադրված լինել միջանկյալ դիրքում՝ անկախ միացության հողակցված լինելուց:

218. Թույլատրվում են ուժային ապահովիչներով ԼԲՍ-ի սայլակի հետ գործողությունները (միացումը և անջատումը) լարման տակ, բայց առանց բեռնվածքի:

219. Կառավարման և պաշտպանության շղթաներում աշխատանքներ կատարելու և փորձելու համար, անջատելով սայլակը, ստուգման դիրք թույլատրվում է դնել այն դեպքում, երբ ԼԲՍ-ից դուրս օդային և մալուխային սնվող գծերի կամ դրանց հետ միացված սարքավորումների (ներառյալ էլեկտրական շարժիչներին միացված մեխանիզմները) վրա աշխատանքներ չեն տարվում կամ ԼԲՍ-ի պահարանում կատարված է հողակցում:

220. Վակումային անջատիչներով բաշխիչ սարքերում աղեղմարիչ խցի փորձարկումներ 20 կՎ և բարձր ամպլիտուդային լարմամբ կատարելու դեպքում անհրաժեշտ է աշխատանքները կատարել հատուկ էկրանի օգտագործմամբ՝ առաջացող ռենտգենյան ճառագայթումից անձնակազմին պաշտպանելու համար:

ԿԱՅՄԱՅԻՆ (ՍՅՈՒՆԱՅԻՆ) ՏՐԱՆՍՖՈՐՄԱՏՈՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅԱՆՆԵՐ ԵՎ ԼՐԱԿԱԶՄ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՏՈՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅԱՆՆԵՐ

221. Կայմային և սյունային տրանսֆորմատորային ենթակայաններ (այսուհետ՝ ՏԵ) և լրակազմ տրանսֆորմատորային ենթակայաններ (այսուհետ՝ ԼՏԵ) սարքավորումների վրա աշխատելիս՝ առանց 1000 Վ-ից բարձր լարման սնող գծերն անջատելու, թույլատրվում են միայն այն զննումներն ու նորոգումները, որոնք կարելի է կատարել հարթակի վրա կանգնած և պայմանով, որ պահպանվեն լարման տակ գտնվող հոսանատար մասերից Աղյուսակ N 1-ում նշված հեռավորությունները: Եթե այդ հեռավորությունները փոքր են թույլատրելիից,

ապա աշխատանքները պետք է կատարվեն 1000 Վ-ից բարձր լարմամբ հոսանատար մասերի անջատմամբ և հողակցմամբ:

222. Կայմային ՏԵ-ում և տաղավարային տեսակի ԼՏԵ-ում, անկախ գծում լարման առկայությունից կամ բացակայությունից, աշխատանքների թույլտվությունը տրվում է, երբ անջատված են մինչև 1000 Վ լարման փոխարկման ապարատները, այնուհետև 1000 Վ-ից բարձր լարման գծային ընդհատիչը (բաժանիչը) և վերադրված է ենթակայանի հոսանատար մասերի հողակցումը: Եթե հնարավոր է լարում տալ 380/220 Վ կողմից, ապա այդ լարման գծերը սնման հակառակ կողմից պետք է անջատվեն, ձեռնարկվեն միջոցներ դրանց սխալմամբ կամ ինքնաբերաբար միացման դեմ, իսկ ենթակայանում այդ գծերի վրա մինչև փոխարկման ապարատները վերադրվեն հողակցումներ:

223. Կայմային տրանսֆորմատորային ենթակայաններում, փոխարկիչ կետերում և այլ սարքվածքներում, որոնք չունեն ցանկապատեր (արգելապատնեշներ), ընդհատիչների (բաժանիչների), բեռնվածքի անջատիչների շարժաբերները, 1000 Վ-ից բարձր լարման պահարանները և մինչև 1000 Վ լարման վահանները պետք է փակված լինեն կողպեքով: Սպասարկման հարթակի մշտական սանդուղքները պետք է ուղեփակվեն ընդհատիչների (բաժանիչների) հետ և կողպեքով փակված լինեն:

ՈՒԺԱՅԻՆ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՏՈՐՆԵՐ, ՅՈՒՂԱՅԻՆ ՇՈՒՆՏԱՎՈՐԻՉ ՌԵԱԿՏՈՐՆԵՐ

224. Ուժային տրանսֆորմատորների (այսուհետ՝ տրանսֆորմատորներ), յուղային շունտավորիչ և աղեղմարիչ ռեակտորների (այսուհետ՝ ռեակտորներ) զննումները պետք է կատարվեն անմիջապես գետնի վրայից կամ մշտական բռնածողով սանդուղքից: Աշխատանքի մեջ կամ պահուստում գտնվող տրանսֆորմատորների (ռեակտորների) դիտարկման հարթակների մուտքը պետք է լինի փակ, «Չբարձրանա՛լ, կսպանի» նախազգուշացնող պլակատներով:

225. Աշխատող տրանսֆորմատորի (ռեակտորի) գազի ռելեից գազի նմուշառումը պետք է կատարվի տրանսֆորմատորի (ռեակտորի) բեռնաթափումից և անջատումից հետո:

226. Տրանսֆորմատորի ռեակտորի բաքից ակտիվ մասի հանման կամ զանգի բարձրացման հետ կապված աշխատանքները պետք է կատարվեն հատուկ տեղային պայմանների համար մշակված աշխատանքների կատարման նախագծով:

227. Տրանսֆորմատորի (ռեակտորի) բաքերի ներսում աշխատանքներ կատարելու համար թույլատրվում են միայն հատուկ պատրաստված բանվորները և մասնագետները, ովքեր լավ գիտեն աշխատանքների կատարման և ակտիվ մասի զննման ժամանակ ընկնելը և վնասվելը բացառող տեղաշարժման ուղիները: Աշխատողների հատուկ հագուստը պետք է լինի մաքուր և տեղաշարժման համար հարմար, չունենա մետաղական օղակներ, մարմինը պաշտպանի գերտաքացումից և յուղոտվելուց: Տրանսֆորմատորի (ռեակտորի) ներսում պետք է աշխատել պաշտպանության սաղավարտով և ձեռնոցներով: Պետք է հագնել ռետինե երկարաճիտ կոշիկներ (սապոգներ):

228. Տրանսֆորմատոր մուտք գործելուց առաջ պետք է համոզվել, որ բաքից լրիվ հեռացված են ազոտը և այլ գազերը, ինչպես նաև կատարված է բաքի բավարար օդափոխություն, և բաքում օդի թթվածնապարունակությունը 20%-ից պակաս չէ:

229. Տրանսֆորմատորի ներսում մարդկանց վիճակի և գործողությունների հսկման համար պետք է նշանակվի առնվազն մեկ աշխատող, որը պարտավոր է գտնվել մտոցի մոտ և մշտական կապ պահպանել ներսում աշխատողների հետ: Տրանսֆորմատորի ներսում աշխատանքներ կատարելիս՝ աշխատողը պետք է ունենա ձգափոկով ապահովիչ գոտի՝ ճոպանով, և, անհրաժեշտության դեպքում՝ ճկափողով հակազագ:

230. Տրանսֆորմատորի ներսում լուսավորությունը պետք է ապահովվի 12 Վ-ից ոչ ավել լարման փոխադրովի, պաշտպանության ցանցով, միայն գործարանային արտադրության լուսատուներով կամ մարտկոցային լամպերով: Ընդ որում, փոխադրովի լուսատուի բաժանիչ տրանսֆորմատորը պետք է գտնվի տրանսֆորմատորի բաքից դուրս:

231. Եթե աշխատանքների ընթացքում բաք է տրվում չորացված օդ (-400C ոչ ավել ցողի կետով), ապա տրանսֆորմատորի ներսում գտնվելու յուրաքանչյուր աշխատողի ընդհանուր ժամանակն օրական չպետք է լինի 4 ժամից ավել:

232. Տրանսֆորմատորային յուղի վերականգնման, դրա չորացման, մաքրման, գազազերծման աշխատանքները պետք է կատարվեն պաշտպանության հագուստով ու կոշիկներով:

233. 110 կՎ և ավել լարման ուժային տրանսֆորմատորները յուղ լցնելու և դատարկելու ընթացքում տրանսֆորմատորների ներանցիչները պետք է հողակցվեն՝ դրանցում էլեկտրաստատիկ լիցքեր առաջանալուց խուսափելու համար:

234. Պատվող չգրգռված գեներատորը՝ անջատված դաշտի մարման ավտոմատ սարքավորումով, պետք է դիտարկել որպես լարման տակ գտնվող (բացառությամբ լիսեռը պտտող հարմարանքով պատվելուց):

235. Գեներատորի փորձարկումների ժամանակ նրա սխեմայի տեղամասերում հատուկ կարճ փակիչների տեղադրումը և հանումը պետք է կատարել գեներատորի ստատորը հողակցելուց հետո: Գեներատորի փորձարկումների ժամանակ (հատուկ կարճ փակիչների տեղադրում և հանում նրա սխեմայում կամ բլոկի սխեմայում) պետք է օգտագործել պաշտպանիչ միջոցներ՝ գրգռումը հանելով և անջատելով դաշտի մարման ավտոմատը:

236. Յուրաքանչյուր էլեկտրակայանում պետք է հաստատված լինեն գեներատորի հողակցման սխեմաները՝ հաշվի առնելով գեներատորի գրգռման համակարգի տիպը, գեներատորային լարման բաշխիչ սարքվածքի սխեմաները, բլոկի սխեմաները: Պետք է բացառել ռոտորի փաթույթին լարում տալը սկզբնական գրգռման սխեմայից:

237. Ռոտորի վրա լարման չափումը և ռոտորի դիմադրության մեկուսացման չափումը աշխատող գեներատորի վրա թույլատրվում է կատարել, կարգադրությամբ, երկու աշխատողի, որոնք ունեն IV և III էլեկտրաանվտանգության խմբեր:

238. Ռոտորի կոնտակտային օղակների տաշումը և հղկումը, նորոգման մեջ գտնվող գեներատորի կոլեկտորի հղկումը կարող է կատարել ոչ էլեկտրատեխնիկական անձնակազմը՝ III էլեկտրաանվտանգության խումբ ունեցող աշխատողի հսկողությամբ:

239. Աշխատող գեներատորի վրա խոզանակային սարքավորման սպասարկումը թույլատրվում է միանձնյա կարգադրությամբ, այդ նպատակով ուսուցված աշխատողի կողմից, եթե բացառվում է հողի հետ միաֆազ կարճ միակցումը և միջբևեռային կարճ միակցումը: Այդ դեպքում անհրաժեշտ է պահպանել հետևյալ անվտանգության միջոցառումները.

1) աշխատել պաշտպանիչ սաղավարտով, օգտագործելով դեմքի և աչքերի պաշտպանիչ միջոցներ, կոճկած արտահագուստով, ապահովելով մեքենայի պտտվող մասերի բռնելուց.

2) օգտագործել դիէլեկտրիկ կոշիկներ, դիէլեկտրիկ գորգեր և ձեռնոցներ, եթե կա պատահականորեն մարմնի մասերի՝ սարքավորման հողակցված տեղամասերին հպման հավանականություն.

3) միաժամանակ ձեռքերով չհպվել երկու բևեռներին կամ հոսանատար մասերին և հողակցված տեղամասին:

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՇԱՐԺԻՉՆԵՐ

240. Եթե էլեկտրական շարժիչի կամ նրա պտտվող մեխանիզմի վրա կատարվում են աշխատանքներ, որոնք կապված են հոսանամասերին և պտտվող մասերին հավելու հետ, ապա էլեկտրաշարժիչը պետք է անջատել, կատարելով սույն Կանոններով սահմանված տեխնիկական միջոցառումները, որոնք բացառում են նրա սխալմամբ միացումը՝

1) երկու արագությամբ էլեկտրաշարժիչների դեպքում անհրաժեշտ է անջատել և քանդել ստատորի փաթույթների սնման երկու շղթաները.

2) էլեկտրաշարժիչի պտտվող մասերի և հոսանատար մասերի հպման հետ չառընչվող աշխատանքները կարելի է կատարել աշխատող էլեկտրական շարժիչի վրա.

3) աշխատող էլեկտրակաշարժիչի և մեխանիզմի պտտվող մասերի արգելափակոցները արգելվում է հանել:

241. էլեկտրական շարժիչի վրա աշխատելուց առաջ անհրաժեշտ է տեղադրել հողակցում միացնող մալուխի վրա՝ բաշխիչ ցանցից միացման բջիջում: Եթե շարժիչի վրա աշխատանքները տևում են ավել քան մեկ օր կամ չեն կատարվում, ապա միացնող մալուխի վրա պետք է դնել հողակցումը նաև շարժիչի կողմից: Եթե մալուխի ջիղերի կտրվածքը փոքր է և հնարավոր չէ տեղադրել շարժական հողակցում, ապա մինչև 1000 Վ էլեկտրական շարժիչների միացման մալուխը պետք է իրար հետ միացնել և մեկուսացնել: Դա պետք է նշել օպերատորի մատյանում, ինչպես նաև շարժական հողակցումն իր համարակալումով:

242. էլեկտրական շարժիչների վրա, որոնք կարող են պտտվել մեխանիզմների կողմից (ծխաքարշ, օդամուղ), աշխատանքը թույլատրելուց առաջ, փակող սարքավորումները պետք է կողպել՝

1) բացի դրանից՝ միջոցներ կիրառել շարժիչները կանգնեցնելու համար կամ էլ անջատել միացնող կցորդիչը.

2) փակող արմատուրայի հետ գործողությունները պետք է համաձայնեցնել տեխնոլոգիական արտադրամասի հերթափոխի պետի հետ և գրանցել օպերատիվ մատյանում:

243. Կարգագրով կամ կարգադրությամբ աշխատելուց առաջ փակող սարքերի էլեկտրաշարժաբեքների ղեկավարման սխեմաներում պետք է հանել լարումը: Այդ սարքավորումների վրա պետք է կախել պլակատներ «Չբացել, մարդիկ աշխատում են», «Չմիացնել, մարդիկ աշխատում են»: Այդ պլակատները պետք է դրվեն տեխնոլոգիական ընթացքը վերահսկող արտադրամասի օպերատիվ անձնակազմի կողմից:

244. Շարժիչի վրա աշխատանք կատարելու դեպքում դրա կողքին գտնվող բոլոր շարժիչների վրա, անկախ նրանից աշխատում են, թե կանգնած են, պետք է կախել պլակատ՝ «Կանգնի՛ր, լարում է»:

245. Էլեկտրաշարժիչի փորձարկման համար միացման կարգը հետևյալն է.

1) աշխատանք իրագործողը հեռացնում է բրիգադին աշխատանքի տեղից, ձևակերպում է աշխատանքի ավարտը և հանձնում է Կարգագիրը օպերատիվ անձնակազմին.

2) օպերատիվ անձնակազմը հանում է հողակցումը, պլակատները, հավաքում է սխեման:

246. Փորձարկումից հետո էլեկտրաշարժիչի վրա աշխատանքները շարունակելու դեպքում օպերատիվ անձնակազմը նորից պատրաստում է աշխատանքի տեղը և բրիգադը՝ Կարգագրով թույլատրում է էլեկտրաշարժիչի վրա աշխատանքի:

247. Պատվող էլեկտրաշարժիչի վրա՝ առանց հավելու հոսանատար և պտտվող մասերին աշխատանքները թույլատրվում է կատարել կարգադրությամբ:

248. Աշխատող էլեկտրաշարժիչի խոզանակային մասի վրա թույլատրվում է աշխատել հատուկ ուսուցված աշխատողին, որն ունի III խումբ, պահպանելով հետևյալ անվտանգության կանոնները.

1) աշխատել դեմքը և աչքերը պաշտպանող միջոցներով.

2) օգտվել դիէլեկտրիկ կոշիկներից, գորգից և ձեռնոցներից.

3) միաժամանակ երկու ձեռքով չհավել հոսանատար մասերի երկու բևեռներին և հողակցված մասերին:

249. Պատվող էլեկտրաշարժիչի վրա թույլատրվում է հղկել ռոտորի օղակները՝ օգտագործելով մեկուսիչ նյութից պատրաստած սարք:

250. Աշխատանքի պաշտպանության հրահանգներում անհրաժեշտ է մանրամասնորեն շարադրել աշխատատեղի պատրաստման պահանջները և էլեկտրաշարժիչի վրա անվտանգ աշխատանքներ ապահովելու պայմանները՝ հաշվի առնելով էլեկտրական շարժիչի տիպերը, թողարկիչ կարգավորող սարքվածքների առանձնահատկությունները, տեխնոլոգիական սխեմաները, մեխանիզմների առանձնահատկությունները:

ՀՈՍԱՆՔԻ ՉԱՓԻՉ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՏՈՐՆԵՐ

251. Չի թույլատրվում հոսանքի տրանսֆորմատորների առաջնային փաթույթի շղթայի հաղորդաձողերն օգտագործել որպես հոսանատարներ՝ տեղակայման և եռակցման աշխատանքներ կատարելիս:

252. Մինչև երկրորդական շրջանների, էլեկտրաչափիչ սարքերի, ռելեային պաշտպանության և էլեկտրաավտոմատիկայի սարքավորումների տեղակայման ավարտը հոսանքի տրանսֆորմատորի երկրորդային փաթույթները պետք է կարճ փակված լինեն:

253. Երկրորդային փաթույթների բևեռայնությունն ստուգելիս՝ բևեռայնությունը ցույց տվող սարքը պետք է միացվի երկրորդային փաթույթի սեղմակներին մինչև տրանսֆորմատորի առաջնային փաթույթին ազդակ տալը:

ԿՈՒՏԱԿԻՉ ՄԱՐՏԿՈՑՆԵՐ

254. Կուտակիչների սրահը միշտ պետք է կողպված լինի: Այդ սրահներում զննող և դրանցում աշխատող անձանց բանալիներ տրվում են ընդհանուր հիմունքներով:

255. Արգելվում է կուտակիչների սրահներում ծխելը, մուտքն այնտեղ կրակով, էլեկտրատաքացնող սարքերի, հարմարանքների և գործիքների օգտագործումը, որոնք կարող են կայծ առաջացնել: Կուտակիչի սրահների դռների վրա պետք է արվեն մակագրություններ՝ «Կուտակիչների սրահ», «Հրավտանգ է», «Ծխելն արգելվում է», կամ փակցնել ծխելն ու կրակից օգտվելն արգելող համապատասխան անվտանգության նշաններ:

256. Կուտակիչների սրահներում ներածող-արտածող օդափոխությունը պետք է միանա լիցքավորումից առաջ և անջատվի ոչ շուտ, քան լիցքավորումն ավարտելուց 1.5 ժամ հետո:

257. Յուրաքանչյուր կուտակիչի սրահում պետք է լինի՝

1) ապակե կամ ճենապակե (պոլիէթիլենային) գավաթ՝ ծորակով (կամ կուժ), 1.5 - 2 լիտր տարողությամբ, էլեկտրոլիտ պատրաստելու և այն՝ անոթները լրացնելու համար.

2) 2.5 % խմելու սոդայի չեզոքացնող լուծույթ՝ թթվային մարտկոցների համար, և 10 % բորաթթվի կամ քացախահյութի (մեկ մասին՝ 8 մաս ջուր) լուծույթներ՝ ալկալիական մարտկոցների համար.

3) ձեռքերը լվանալու ջուր.

4) սրբիչ:

258. Էլեկտրոլիտով, թորած ջրով և չեզոքացնող լուծույթներով լցված բոլոր անոթների վրա պետք է լինեն համապատասխան մակագրություններ (նշվեն անվանումները):

259. Թթուն հարկավոր է պահել կիպահղկած խցաններով ապակե շշերի մեջ՝ թթվի անվանմամբ կցված պիտակով: Թթվով լեցուն շշերը և դատարկ շշերը պետք է գտնվեն

կուտակիչ մարտկոցներին մոտ գտնվող առանձին սրահում: Շշերը պետք է տեղադրվեն հատակի վրա՝ զամբյուղների կամ փայտյա արկղերի մեջ:

260. Թթվի, ալկալիի և կապարի հետ պետք է աշխատեն հատուկ այդ աշխատանքներին ուսուցված աշխատողները:

261. Թթվով և ալկալիով լեցուն ապակե շշերը պետք է տեղափոխեն երկու աշխատող: Շշերը, զամբյուղի հետ մեկտեղ, պետք է տեղափոխել բռնակներ ունեցող հատուկ փայտե արկղով կամ հատուկ պատգարակներով, որոնք մեջտեղում ունեն անցք, վանդակապատված են և որի մեջ շիշը զամբյուղի հետ մեկտեղ պետք է տեղավորվի բարձրության 2/3-ի չափով:

262. Էլեկտրոլիտի պատրաստման ժամանակ թթուն պետք է դանդաղորեն (լուծույթի ինտենսիվ տաքացումից խուսափելու համար), գավաթից բարակ շիթով լցնել թորած ջրով լցված ճենապակե կամ այլ ջերմակայուն անոթի մեջ: Ընդ որում, էլեկտրալուծույթն ամբողջ ժամանակ հարկավոր է խառնել ապակե ձողով կամ խողովակով կամ թթվակայուն պլաստմասսայից խառնիչով:

263. Արգելվում է էլեկտրոլիտ պատրաստելիս ջուրը լցնել թթվի մեջ: Թույլատրվում է պատրաստի էլեկտրոլիտի վրա ջուր ավելացնել:

264. Թթվի և ալկալիի հետ աշխատանքներ կատարելիս պետք է հագնել աշխատանքային հագուստ (թթվի դեպքում՝ կոպիտ բրդյա կամ թթվակայուն տոգորվածքով բամբակե, ալկալիի դեպքում՝ բամբակե), ռետինե երկարաճիտ կոշիկներ (տաքատի տակ) կամ կրկնակոշիկներ, ռետինե գոգնոց, պաշտպանության ակնոց և ռետինե ձեռնոցներ: Կծու ալկալիի կտորները պետք է կտրատել հատուկ առանձնացված տեղում՝ դրանք պարկագործվածքի մեջ նախօրոք փաթաթելով:

265. Կուտակիչների սրահներում կրակային (զոդման) աշխատանքները պետք է թույլատրվեն այրվող գազերի բացակայությունը համապատասխան չափիչ սարքով ստուգելուց հետո:

266. Կուտակիչների սրահներում թիթեղների զոդման աշխատանքները թույլատրվում են հետևյալ պայմանների դեպքում՝

1) զոդումը թույլատրվում է լիցքավորումից հետո՝ 2 ժամից ոչ շուտ: Մարտկոցները, որոնք աշխատում են անընդհատ ենթալիցքավորման մեթոդով, պետք է 2 ժամ առաջ, մինչև աշխատանքներն սկսելը, փոխադրվեն լիցքաթափման ռեժիմի.

2) մինչև աշխատանքներն սկսելը սրահը պետք է 1 ժամ օդափոխվի.

3) զողման ժամանակ սրահում պետք է իրականացվի անընդհատ օդափոխություն.

4) զողման տեղը մնացած մարտկոցներից պետք է ցանկապատվի չայրվող վահաններով.

5) կապարից և դրա միացություններից թունավորվելուց խուսափելու համար պետք է կիրառվեն նախազգուշական հատուկ միջոցներ և աշխատանքի օրվա ռեժիմ՝ կուտակիչ մարտկոցների շահագործման և նորոգման հրահանգներին համապատասխան.

6) աշխատանքները պետք է կատարվեն Կարգագրով:

267. Կուտակիչ մարտկոցների և լիցքավորման սարքավորումների սպասարկումը պետք է կատարի էլեկտրաանվտանգության III խումբ ունեցող հատուկ ուսուցված անձնակազմը:

ԷԼԵԿՏՐՈԼԻԶԱՅԻՆ ԿԱՅԱՆՔՆԵՐ

268. Էլեկտրոլիզային կայանքի աշխատանքի ժամանակ արգելվում է պայթյունավտանգ խառնուրդի առաջացումը ջրածնի, թթվածնի կամ օդի հետ:

269. Չի թույլատրվում էլեկտրոլիզերի աշխատանքը, եթե ճնշման կարգավորիչի դիտաապակիներում բացակայում է հեղուկի մակարդակը:

270. Ջրածնային և թթվածնային համակարգերի միջև ճնշման տարբերության մաքսիմալ թույլատրելի սահմանը չպետք է գերազանցի 1961.4 Պա (200 մմ ջրի սյունը):

271. Էլեկտրոլիզային սարքվածքի, պահեստարանի, ջրածնի գազատար խողովակների վրա նորոգման աշխատանքները պետք է կատարել Կարգագրով: Եթե աշխատանքը չի պահանջում աշխատաքնի տեղի պատրաստման համար տեխնիկական միջոցառումներ, ապա այն կարելի է կատարել կարգադրությամբ, տվյալ սարքվածքը սպասարկող օպերատիվ անձնակազմի հսկողությամբ:

272. Պահեստարանի (ռեսիվերի), մուտքի, ելքի խողովակաշարերի վրա 10 մ-ից փոքր հեռավորության աշխատանքների կատարումն էլեկտրոլիզային կայանքի վրա պետք է կատարել Կարգագրով: Հրդեհային անվտանգության միջոցառումները, որոնք ապահովում են աշխատանքների անվտանգ կատարումը, պետք է նշվեն Կարգագրի «Առանձին ցուցումներ» սյունակում:

273. Չի թույլատրվում աշխատել ջրածնով լցված խողովակաշարերի և սարքավորման իրանների վրա բաց կրակով:

274. Էլեկտրոլիզային կայանքի սարքերը (բացառությամբ պահեստարանի) և խողովակները թողարկումից առաջ պետք է արտափչել ազոտով:

1) չի թույլատրվում այդ սարքերը արտափչել ածխաթթու գազով:

2) պահեստարանները (ռեսիվերները) կարող են արտափչվել ազոտով կամ ածխաթթու գազով: Մեկ պահեստարանի ներքին զննման համար անհրաժեշտ է այն առանձնացնել մյուսներից փականներով, ջրածինը հեռացնելու համար արտափչել ազոտով կամ ածխաթթու գազով, հետո արտափչել մաքուր օդով: Փականների վրա դնել ծայրակալով մետաղական արգելափակիչ (заглушка):

3) արտափչման համար օգտագործվող տեխնիկական տեսակի ածխաթթու գազի պահեստարանները (резервуар), որոնք պարունակում են մինչև 0.05% ածխածնի մոնօքսիդ, անհրաժեշտ է պահել առանձին՝ սննդային տեսակի ածխաթթու պարունակող պահեստարաններից: Պահեստարանների արտափչման պահունակության նորմերը՝ ածխաթթու գազով, ազոտով, ջրածնով կամ օդով, ներկայացված են ստորև տրված աղյուսակում:

Աղյուսակ N 3

ՊԱՀԵՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՐՏԱՓՉՄԱՆ ԿԱՐԳ

Արտափչում	Փորձանմուշի վերցնելու տեղը	Որոշվող բաղադրամասը	Բաղադրամասի պահունակության նորմը, %
Օդը ածխաթթու գազով	պահեստարանի վերևից	ածխաթթու գազ	85
Օդը ազոտով	նույնը	թթվածին	3.0
Ածխաթթու գազ ջրածնով	պահեստարանից	ածխաթթու գազ թթվածին	1.0 0.5
Ազոտը թթվածնով	նույնը	ազոտ թթվածին	1.0 0.5
Ջրածինը ազոտով	պահեստարանի վերևից	ջրածին	3.0
Ածխաթթու գազը օդով	նույնը	ածխաթթու գազ	բացակայում է
Ջրածինը ածխաթթու գազով	նույնը	ածխաթթու գազ	95
Ազոտը օդով	նույնը	թթվածին	20

275. Էլեկտրոլիզային կայանքը չորս ժամից ավել անջատելու դեպքում նրա սարքերը և խողովակներն արտափչելը պարտադիր է: 1 - 4 ժամ անջատելու դեպքում՝ համակարգը թողնել ջրածնի կամ թթվածնի ճնշման տակ $(19.8 - 19.6) \times 10^3$ Պա), $(0.1 \div 0.2$ կգ/սմ²), մինչև

1 ժամ անջատելու դեպքում կարելի է սարքվածքը թողնել նոմինալ ճնշման տակ, այդ դեպքում ջրածնի և թթվածնի ճնշման կարգավորիչների ճնշումների տարբերության ազդանշանը պետք է մնա միացած: Եթե անջատումը կապված է տեխնոլոգիական ռեժիմի խախտման հետ կամ էլեկտրոլիզերն էլեկտրոլիտից դատարկման հետ, ապա ազոտով արտափչելը պարտադիր է:

276. Նորոգման և զոդման աշխատանքներ կատարելիս, որոնք կապված են էլեկտրոլիզերի սարքավորումների բացման հետ, արտափչումը պետք է կատարել մինչև ջրածնի առկայության լրիվ բացառումը:

277. Էլեկտրոլիզի սենքում բաց կրակով աշխատանքներ կատարելուց առաջ պետք է անջատել էլեկտրոլիզի կայանքը, կատարել օդում ջրածնի առկայության փորձաքննումը (ջրածինն օդում պետք է բացակայի), կազմակերպել անընդհատ օդափոխություն: Նույն սենքում ուրիշ աշխատող էլեկտրոլիզային կայանքի առկայության դեպքում պետք է անջատել միացման խողովակները: Կրակային աշխատանքների տեղամասը պետք է արգելափակել վահաններով: Չեն թույլատրվում նորոգման աշխատանքները ջրածնով լցված սարքավորումների վրա:

278. Սառած խողովակները և փականները պետք է տաքացնել տաք ջրով կամ գոլորշիով: Միացությունների գազի արտահոսքը պետք է որոշել հատուկ հոսքաորսիչով կամ օճառի փրփուրով: Չի թույլատրվում բաց կրակի կիրառումը տաքացման և արտահոսքի որոշման համար:

279. Չի թույլատրվում ծխել էլեկտրոլիզային կայանքում և պահեստարանի մոտ, օգտվել բաց կրակից, էլեկտրական տաքացող սարքերից և շարժական լամպերից ավել քան 12 Վ լարումով: Սարքերի ներքին զննման համար անհրաժեշտ է օգտվել պայթյունապաշտպան շարժական լուսատուներից, որոնք արգելափակված են մետաղական ցանցով:

280. Էլեկտրոլիզային սենքի ներսում և դռան վրա պետք է կախված լինեն անվտանգության նշաններ, որոնք արգելում են բաց կրակի օգտագործումը՝ համաձայն գործող նորմատիվային փաստաթղթերի, ջրածնի պահեստարանների վրա պետք է լինեն գրառումներ՝ «Ջրածին, կրակավտանգ է»:

281. Չի թույլատրվում էլեկտրոլիզային կայանքի սենքում պահել դյուրավառ, պայթյունավտանգ նյութեր:

282. Էլեկտրոլիտի հետ աշխատանքի ժամանակ պետք է օգտվել պաշտպանիչ հատուկ արտահագուստից (բամբակե վերարկու, ռետինե կոշիկներ, ձեռնոցներ և գոգնոց) և

ակնոցներից: Հեղուկ կամ պինդ հիմքի թափանցումը մաշկի, մազերի և աչքերի վրա պետք է բացառել:

283. Էլեկտրոլիտի փորձանշումը խտությունը որոշելու համար պետք է կատարել ճնշումը հանած ժամանակ:

284. Էլեկտրոլիզերին, առանձնապես եզրային թիթեղներին արգելվում է դիպչել առանց պաշտպանիչ միջոցների: Էլեկտրոլիզերի հատակին պետք է լինեն դիէլեկտրիկ գորգեր:

285. Էլեկտրոլիզային կայանքի սարքավորումները՝ խողովակաշարերը, պահեստարանները, նրանց խողովակաշարերը, մինչև մեքենայական սրահ ամբողջ երկարությամբ պետք է կազմեն մեկ էլեկտրական շղթա և միացվեն հողակցման սարքավորման: Էլեկտրոլիզերը սենքում (էլեկտրոլիզային սարքավորումները և խողովակաշարը) պետք է հողակցել ոչ պակաս, քան երկու կետում:

286. Ապահովիչ փականները ստուգելու համար սարքավորումը պետք է անջատել և արտափչել ազոտով:

287. Արգելվում է փականները փորձարկել սարքավորման աշխատանքի ժամանակ:

288. Չի թույլատրվում ձգել հեղույսները և պնդօղակները ճնշման տակ:

289. Էլեկտրոլիզային կայանքի թողարկումը մոնտաժից, հիմնական նորոգումից և երկարատև անջատումից հետո անհրաժեշտ է կատարել պատասխանատու ճարտարատեխնիկական աշխատողի հսկողությամբ:

290. Էլեկտրոլիզային կայանքի խողովակաշարերի շահագործումը մինչև գազային վահանները, ինչպես նաև գեներատորի գազայուղային խողովակաշարերի շահագործումը պետք է կատարել տեխնոլոգիական խողովակաշարերի անվտանգ շահագործման Կանոնների համաձայն (ՈԵ 03-108):

ԿՈՆԴԵՆՍԱՏՈՐԱՅԻՆ ԿԱՅԱՆՔՆԵՐ

291. Աշխատանքներ կատարելիս՝ կոնդենսատորները, նախքան դրանց կամ դրանց հոսանատար մասերին շփվելը, կայանքը սնման աղբյուրից անջատելուց հետո, պետք է լիցքաթափվեն՝ անկախ հաղորդաձողերին միացված կամ առանձին կոնդենսատորներում ներտեղադրված լիցքաթափման սարքավորումների առկայությունից:

292. Կոնդենսատորների լիցքաթափումը (մնացորդային լարման իջեցումը մինչև զրոյական մակարդակը) կատարվում է կոնդենսատորի արտանցիչները և իրանը կարճ փակելով

մետաղական հաղորդաձողով, որն ունի մեկուսացնող ձողին ամրացված հողակցող հաղորդիչ:

293. Կոնդենսատորների արտանցիչները, եթե դրանք միացված չեն էլեկտրական սխեմաներին, բայց գտնվում են էլեկտրական դաշտի ազդեցության (մակաձված լարման) գոտում, պետք է կարճ միակցվեն:

294. Մինչև կոնդենսատորների լիցքաթափումը չի թույլատրվում դիպչել ցանցից անջատված ռեակտիվ հզորության անհատական կոմպենսացում ունեցող ասինքրոն էլեկտրաշարժիչի փաթույթների սեղմակներին:

295. Չի թույլատրվում մերկ ձեռքերով դիպչել եռաքլորդիֆևիլով (ԵՔԴ) ներծծված՝ արտահոսք ունեցող կոնդենսատորներին: ԵՔԴ քսված մաշկն անհրաժեշտ է վանալ ջրով և օճառով, իսկ աչքի մեջ ընկնելու դեպքում՝ աչքը վանալ բորաթթվի թույլ լուծույթով կամ խմելու սոդայի լուծույթով (մեկ թեյի գդալ սոդա՝ մեկ բաժակ ջրում):

ՄԵԿՈՒՍԻՉՆԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ԼՎԱՑՈՒՄ ԼԱՐՄԱՆ ՏԱԿ

296. Էլեկտրասարքվածքներում թույլատրվում է սարքավորումների հախճապակե մեկուսիչների, հենարանային մեկուսիչների և կախված մեկուսիչների վաճուճ առանց հոսանատար մասերից լարման հանումը՝ համապատասխան կազմակերպության աշխատանքի պաշտպանության հրահանգով կամ նորոգման կատարման կանոնների (ՈՈՔ) համաձայն: Շիթի երկարությունը կարգավորվում է համաձայն տրված աղյուսակի:

Շիթի մինիմալ թույլատրելի հեռավորությունները վաճվող մեկուսիչի և փողորակի միջև:

Աղյուսակ N 4

Փողորակի անցքի ելքային տրամագիծ, մմ	Շիթի մինիմալ թույլատրելի հեռավորությունը, մ, ըստ սարքավորման լարման, կՎ					
	մինչև 10	35	110-150	220	330	500
10	3.0	4.0	5.0	6.0	7.0	8.0
12	3.5	4.5	6.0	8.0	9.0	10.0
14	4.0	5.0	6.5	8.5	9.5	11.0
16	4.0	6.0	7.0	9.0	10.0	12.0

297. Լվացման ժամանակ փողորակը, տելեսկոպիկ աշտարակը և ջրի բաքը պետք է լինեն հողակցված: Տելեսկոպիկ աշտարակից վաճման ժամանակ փողորակը պետք է միացվի աշտարակի զամբյուղի և ավտոբաքի իրանի հետ 25 մմ² կտրվածքով պղնձե ճկուն լարով:

Գետնի վրայից, տելեսկոպիկ աշտարակից կամ հատուկ մետաղական հրապարակից լվացման ժամանակ պետք է օգտվել դիէլեկտրիկ ձեռնոցներից:

298. Չի թույլատրվում գետնի վրա կանգնած ժամանակ հպվել մեքենայի խցիկին կամ թափքին, մտնել կամ դուրս գալ խցիկից: Պետք է կիրառվեն կանխարգելիչ միջոցառումներ՝ արգելելու կողմնակի մարդկանց մուտքը դեպի լվացման ժամանակ օգտագործվող մեքենաները և մեխանիզմները: Ջրով փողորակի տեղափոխումը թույլատրվում է միայն լվացումը դադարելուց հետո:

299. Հոսանատար մասերից ՓԲՍ-ում մեկուսիչների մաքրումն առանց լարումը հանելու կարելի է կատարել մեկուսիչ ձողերի վրա ամրացված հատուկ խոզանակներով կամ սնամեջ մեկուսիչ ձողեր ունեցող փոշեծծիչներով: Մաքրումն անհրաժեշտ է կատարել հատակից կամ կայուն տախտակամածի վրայից: Մաքրման ժամանակ անհրաժեշտ է կիրառել մեկուսիչ ձեռնոցներ:

300. Մեկուսիչ ձողերի մակերեսը պետք է մաքրել փոշուց՝ աշխատանքները սկսելուց առաջ:

301. Փոշեծծիչի սնամեջ մեկուսիչների վրա հագցվող գլխիկները պետք է լինեն մեկուսիչ նյութից, որպեսզի մաքրման ժամանակ բացառվի հարևան ֆազերի կարճ միակցումը:

302. Մեկուսացման մաքրումը լարման տակ, անկախ մաքրման մեթոդից, պետք է կատարվի Կարգագրով երկու աշխատողներով: Աշխատանքը պետք է կատարի էլեկտրաանվտանգության III խումբ ունեցողը, հսկողությունը պետք է իրականացնի էլեկտրաանվտանգության IV խումբ ունեցողը: Այդ աշխատողները պետք է անցնեն հատուկ ուսուցում, թույլատրվեն կատարել նշված աշխատանքները և ունենան գրանցում Վկայականի «Հատուկ աշխատանքներ կատարելու թույլատրում» սյունակում:

303. ՓԲՍ-ի՝ առանց լարումը հանելու մեկուսացման մաքրումը թույլատրվում է կատարել, եթե կա անցուղիների բավականաչափ լայնություն, որը հնարավորություն է տալիս ազատ օգտագործել փոշի հեռացնող միջոցները: Այն պետք է կատարել միայն հատակից կամ կայուն տախտակամածից:

ՄԱԼՈՒԽԱՅԻՆ ԳԾԵՐ

304. Կազմակերպությունների, բնակավայրերի տարածքներում, ինչպես նաև ստորգետնյա հաղորդակցուղիների (էլեկտրամալուխ, կապի մալուխ, գազատար և այլն) պահպանության (անվտանգության) գոտիներում հողային աշխատանքները կարող են

սկսվել միայն համապատասխան կազմակերպությունների ղեկավարների, իշխանության տեղական մարմինների և այդ կառույցների սեփականատերերի գրավոր թույլտվությամբ: Թույլտվությանը պետք է կցվի տեղանքի պլանը (սխեման)՝ դրա վրա նշելով հաղորդակցուղիների տեղադրությունը և դրանց տեղադրման խորությունը: Ստորգետնյա հաղորդակցուղիների տեղերը պետք է նշվեն համապատասխան նշաններով՝ ինչպես պլանի (սխեմայի) վրա, այնպես էլ՝ աշխատանքների կատարման տեղում:

305. Պլանում չնշված մալուխների, խողովակաշարերի, ստորգետնյա կառույցների, ինչպես նաև ռազմամթերքի բացահայտման դեպքում հողային աշխատանքները պետք է դադարեցվեն՝ մինչև հայտնաբերված կառույցների պատկանելությունը պարզելը և համապատասխան կազմակերպությունից աշխատանքները շարունակելու թույլտվություն ստանալը:

306. Արգելվում է հողային աշխատանքների կատարումը հարվածող գործողությամբ մեխանիզմների կիրառմամբ՝ մալուխներից մինչև 5 մ հեռավորության վրա, իսկ հողափոր մեքենաներինը՝ մինչև 1.0 մ, եթե դրանք կապված չեն մալուխների փորման հետ.

1) անմիջապես մալուխների վրա փորելու դեպքում հողափոր մեքենաների, օդաճնշական գործիքների, ինչպես նաև լինգերի և քլունգների օգտագործումը թույլատրելի է այնպիսի խորությամբ, երբ մինչև մալուխը մնում է հողի շերտ՝ ոչ պակաս 30 սմ: Հողի շերտի հետագա հանումը պետք է կատարվի ձեռքով՝ բահերով.

2) մալուխային գծի փորելուց առաջ պետք է կատարվի գծի ստուգողական բացում՝ գծի սեփականատիրոջ անձնակազմի հսկողությամբ:

307. Ձմռանը բահերով հողի հանումը կարելի է սկսել միայն գետինը տաքացնելուց հետո: Այդ դեպքում ջերմության աղբյուրը թույլատրվում է մոտեցնել մալուխներին՝ 15 սմ-ից ոչ մոտ:

308. Փոսորակների, խրամուղիների կամ փոսերի փորման աշխատանքների տեղը պետք է ցանկապատված լինի՝ հաշվի առնելով գործող շինարարական նորմերի պահանջները: Ցանկապատերի վրա պետք է լինեն նախազգուշացնող նշաններ և մակագրություններ, իսկ գիշերային ժամերին՝ ազդանշանային լուսավորություն:

309. Թույլ կամ խոնավ հիմնահողերում խրամուղիներ փորելու դեպքում պատերը պետք է հուսալի ամրացվեն, երբ փլուզման վտանգ է սպառնում: Սորուն հիմնահողերում աշխատանքները կարելի է կատարել առանց պատերի ամրացման, բայց հիմնահողի բնական թեքության անկյանը համապատասխան թեքություններով: Փոսորակից կամ խրամուղուց հանված հողը պետք է լցվի հանույթի եզրից 0,5 մ-ից ոչ պակաս հեռավորության

վրա: Եթե հանույթի խորությունը 2 մ-ից ավել է, ապա հողի մշակումը և ամրացումը պետք է կատարվեն աշխատանքների կատարման նախագծով:

310. Բնական խոնավությամբ հողում, որտեղ բացակայում են գետնաջրերը, և մոտակայքում չկան ստորգետնյա կառույցներ, ուղղաձիգ պատերով փոսորակներ և խրամուղիներ փորելը՝ առանց պատերի ամրացման, թույլատրվում է ոչ ավել խորությամբ, քան՝

- 1) լիցքային, ավազային և խոշոր կոտրտվածքներով բնահողում՝ 1 մ.
- 2) ավազահողային բնահողում՝ 1,25 մ.
- 3) ավազակավային և կավային բնահողում՝ 1,5 մ:

311. Պինդ կապակցված հիմնահողում, ուղղաձիգ պատերով խրամուղի փորելը ռոտորային և խրամուղային էքսկավատորներով՝ առանց ամրացումների, թույլատրելի է 3 մ-ից ոչ ավել խորությամբ: Այդ դեպքում աշխատողների խրամուղի իջնելն արգելվում է: Խրամուղու այն տեղերում, ուր անհրաժեշտ է գտնվել, պետք է կառուցվեն ամրացումներ կամ արվեն թեքություններ:

312. Ձմռանը հիմնահողի մշակումը (բացի սորունից) սառած շերտի խորության չափով թույլատրելի է առանց ամրացումների:

313. Սույն գլխի 311-րդ կետում նշվածից տարբերվող պայմանների դեպքում փոսորակները և խրամուղիներն անհրաժեշտ է մշակել թեքություններով՝ առանց ամրացման, կամ ուղղաձիգ պատերով՝ ամրացված ամբողջ բարձրությամբ:

314. Մինչև 3 մ խորությամբ փոսորակների և խրամուղիների ամրացումը պետք է կատարվի տիպային նախագծերով:

315. Շինարարական մեքենաների, ավտոտրանսպորտի տեղաշարժը, տեղակայումը, կարապիկների, սարքավորումների, նյութերի և այլնի տեղադրումը փորվածքներին (փոսորակ, խրամուղի, առու) մոտ, առանց թեքությունների ամրացման, թույլատրվում են միայն ԱԿՆ սահմանված՝ բնահողի քանդման պրիզմայի սահմաններից դուրս հեռավորության վրա, կամ Աղյուսակ N 5-ում նշված հեռավորություններից ոչ պակաս:

Աղյուսակ N 5

ՓՈՐՎԱԾՔԻ ԹԵՔՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՔԵՆԱՅԻ ՄՈՏԱԿԱ ՀԵՆԱՐԱՆ ԵՎԱԶԱԳՈՒՅՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ), Մ

Փորվածքի խորությունը	Հիմնահողի տեսակը			
	ավազային	ավազահողային	ավազակավային	կավային
1,0	1,5	1,25	1,0	1,0

2,0	3,0	2,40	2,0	1,5
3,0	4,0	3,60	3,25	1,75
4,0	5,0	4,40	4,0	3,0
5,0	6,0	5,30	4,75	3,5

ՄԱԼՈՒԽՆԵՐԻ ԵՎ ԿՑՈՐԴԻՉՆԵՐԻ ԿԱԽՈՒՄ ԵՎ ԱՄՐԱՑՈՒՄ

316. Բաց կցորդիչները պետք է ամրացվեն լարի կամ ճոպանի միջոցով խրամուղու վրայով գցված չորսուններից կախված տախտակի վրա և ծածկվեն պատյանով: Պատյանի մի պատը պետք է լինի հանովի և ամրացվի առանց մեխերի:

317. Մալուխները կախելու համար արգելվում է օգտագործել հարևան մալուխները, խողովակաշարերը և այլն:

318. Մալուխները կախելիս պետք է բացառել դրանց շեղումը:

319. Հանված բաց մալուխները ծածկող պատյանների վրա անհրաժեշտ է կախել «Կանգնի՛ր: Լարում կա» անվտանգության պլակատը:

ԿՑՈՐԴԻՉՆԵՐԻ ԲԱՑՈՒՄ, ՄԱԼՈՒԽԻ ԿՏՐՈՒՄ

320. Մինչև կցորդիչը բացելը կամ մալուխը կտրելն անհրաժեշտ է հավաստիանալ, որ այդ աշխատանքները կատարվելու են նորոգման ենթակա մալուխի վրա, որ այդ մալուխն անջատված է, և կատարված են անհրաժեշտ տեխնիկական միջոցառումները:

321. Աշխատատեղում նորոգման ենթակա մալուխն անհրաժեշտ է որոշել (ճշտել)՝

1) թունելներում, հավաքիչներում, անցուղիներում անցկացված լինելու դեպքում, հետևելով դասավորությանը, համեմատելով գծագրերի և սխեմաների հետ, ստուգելով ըստ պիտակների.

2) հողի մեջ անցկացված լինելու դեպքում՝ մալուխի դիրքը համեմատելով տեղադրման գծագրերի հետ: Այդ նպատակի համար պետք է նախապես փորված լինի մալուխներին լայնակի ստուգողական խրամուղի (հետախուզահոր), որը հնարավորություն կտա տեսնելու բոլոր մալուխները:

322. Այն բոլոր դեպքերում, երբ բացակայում է մալուխի տեսանելի վնասվածքը, անհրաժեշտ է օգտագործել մալուխափնտրիչ սարք:

323. Մալուխը կտրելուց կամ միացնող կցորդիչը բացելուց առաջ պետք է հատուկ հարմարանքի՝ պողպատյա ասեղով կամ կտրող ծայրապանակով մեկուսացված ձողի օգնությամբ ստուգել լարման բացակայությունը.

1) թունելներում, հավաքիչներում, հորերում, խրամուղիներում, որտեղ տեղադրված են մի քանի մալուխներ, ինչպես և այլ մալուխային կառույցներում հարմարանքը պետք է լինի հեռագործ կառավարմամբ: Հարմարանքը պետք է ապահովի մալուխի պատյանի ծակումը կամ կտրումը մինչև ջղերը՝ դրանք միացնելով իրար և հողակցման սարքվածքին.

2) մալուխը ծակման տեղում պետք է նախապես ծածկվի էկրանով:

324. Մալուխի ծակման ժամանակ անհրաժեշտ է հագնել հատուկ հագուստ, դիէլեկտրիկ ձեռնոցներ և դեմքի ու աչքերի անհատական պաշտպանության միջոցներ, ընդ որում, պետք է կանգնել խրամուղու վերևում մեկուսացված հարթակի վրա՝ հնարավորինս ծակվող մալուխից հեռու:

325. Մալուխի ծակումը պետք է կատարի երկու աշխատող՝ թույլատրողը և աշխատանքներն իրագործողը կամ իրագործողը և աշխատանքների պատասխանատու ղեկավարը. նրանցից մեկն անմիջականորեն ծակում է մալուխը, իսկ երկրորդը հսկում է:

326. Եթե մալուխի վնասվածքի հետևանքով բացված են բոլոր հոսանատար ջղերը, ապա լարման բացակայությունը կարելի է ստուգել անմիջականորեն լարման ցուցիչով՝ առանց մալուխի ծակման:

327. Ծակող հարմարանքի հողակցման համար կարելի է օգտագործել 0,5 մ-ից ոչ պակաս խորությամբ հողի մեջ մխրճված հողակցիչը կամ մալուխի գրահը: Հողակցող հաղորդալարը մալուխի գրահին պետք է միացնել անուրներով: Անուրի տակ գրահը պետք է մաքրված լինի: Այն դեպքերում, երբ գրահը ենթարկվել է քայքայման, թույլատրվում է հողակցող հաղորդալարի միացումը մալուխի մետաղական պատյանին:

328. Էլեկտրակայանների և ենթակայանների ներքին մալուխների վրա, որոնց երկարությունը և անցկացման եղանակը հնարավոր են դարձնում նորոգման ենթակա մալուխի ճշգրիտ որոշելը, օգտվելով գծագրերից, պիտակներից, մալուխափնտրիչ սարքից, Կարգագիր տվողի հայեցողությամբ թույլատրվում է մալուխը չծակել այն կտրելուց կամ կցորդիչը բացելուց առաջ:

329. Այն դեպքերում, երբ կցորդիչի բացումը և մալուխի կտրումը կատարվում են առանց նախապես ծակման, բացումը և կտրումը անհրաժեշտ է կատարել հողակցված գործիքով, մեկուսացված հարթակին կանգնած՝ կիրառելով դիէլեկտրիկ ձեռնոցներ, օգտագործելով դեմքի և աչքերի անհատական պաշտպանության միջոցներ:

330. Մալուխի նախնական ծակումից հետո այդ նույն գործողությունները կարելի է կատարել առանց թվարկված լրացուցիչ անվտանգության միջոցառումների:

ՄԱԼՈՒԽԱՅԻՆ ՉԱՆԳՎԱԾԻ ՏԱՔԱՑՈՒՄ ԵՎ ԿՑՈՐԴԻՉՆԵՐԻ ԼՅՆՈՒՄ

331. Կցորդիչները լցնելու մալուխային զանգվածը պետք է տաքացվի կափարիչ և քթամաս ունեցող հատուկ մետաղյա ամանի մեջ:

332. Բացված տարայից մալուխային զանգվածը տարվա տաք եղանակին հանվում է տաքացված դանակով, իսկ ցուրտ եղանակին՝ պոկելով: Արգելվում է տաքացնել մալուխային զանգվածով չբացված տարաները:

333. Կցորդիչները տաք զանգվածով լցնելու ժամանակ աշխատողը պետք է հագած լինի հատուկ հագուստ, բրեզենտե ձեռնոցներ և պաշտպանական ակնոց:

334. Չողանյութով անոթի, ինչպես նաև զանգվածով անոթի տաքացումը, հանումը և տեղափոխումը պետք է կատարվեն բրեզենտե ձեռնոցներով և ապահովվիչ ակնոցներով: Չի թույլատրվում զողանյութով անոթը կամ զանգվածով անոթը փոխանցել ձեռքից ձեռք. փոխանցման ժամանակ դրանք պետք է դնել գետնին:

335. Հալված զանգվածն անհրաժեշտ է խառնել մետաղական խառնիչով, իսկ այրուքը հեռացնել հալված զողանյութի մակերեսից մետաղական չոր գդալով:

336. Տարվա ցուրտ եղանակին կցորդիչները տաք զանգվածով լցնելուց առաջ պետք է տաքացված լինեն:

337. Մալուխային զանգվածի տաքացումը մալուխային հորերում, թունելներում, մալուխային կառույցներում չի թույլատրվում:

ՄԱԼՈՒԽՆԵՐԻ ՓՈՌՈՒՄ, ՎԵՐԱՓՈՌՈՒՄ ԵՎ ԿՑՈՐԴԻՉՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ

338. Մալուխով թմբկագլանը գլորելու դեպքում անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ, որպեսզի դրա ցցվածքները չբռնեն հագուստի մասերը.

1) մինչև թմբկագլանը գլորելու աշխատանքներն սկսելը պետք է ամրացնել մալուխի ծայրերը և հեռացնել գլանից դուրս ցցված մեխերը.

2) մալուխով թմբկագլանը թույլատրվում է գլորել միայն հորիզոնական մակերևույթով, պինդ գետնի կամ ամուր փռվածքի վրայով:

339. Մալուխը ձեռքով փռելու դեպքում բանվորների թիվն այնպիսին պետք է լինի, որ յուրաքանչյուրին ընկնող մալուխի տեղամասի քաշը լինի մինչև 35 կգ՝ տղամարդկանց համար, և 15 կգ՝ կանանց համար: Անհրաժեշտ է աշխատել բրեզենտե ձեռնոցներով:

340. Մալուխի փոման ժամանակ արգելվում է կանգնել շրջադարձի անկյան ներսում, ինչպես նաև մալուխը ձեռքով պահել ուղեգծի շրջադարձի տեղերում: Այդ նպատակի համար պետք է տեղադրված լինեն անկյունային հոլովակներ:

341. Մալուխները փոռելուց առաջ օդի բացասական ջերմաստիճանի դեպքում չի թույլատրվում կիրառել 380 Վ-ից բարձր լարում:

342. Կարելի է վերափոխել մալուխները և տեղափոխել կցորդիչները մալուխային գիծն անջատելուց հետո: Լարման տակ գտնվող մալուխի վերատեղադրումը թույլատրվում է հետևյալ պայմանների դեպքում՝

1) վերափոխվող մալուխի ջերմաստիճանը պետք է լինի 5°C-ից ոչ ցածր.

2) մալուխի վերափոխվող տեղամասում կցորդիչները պետք է ամրացված լինեն տախտակների վրա՝ անուրներով.

3) աշխատանքի համար պետք է օգտագործվեն դիէլեկտրիկ ձեռնոցներ, որոնց վրայից, մեխանիկական վնասվածքներից պաշտպանվելու համար, պետք է հագնել բրեզենտե թաթմաններ.

4) աշխատանքները պետք է կատարեն մալուխների փոման փորձ ունեցող բանվորները՝ V խումբ ունեցող աշխատանքների պատասխանատու ղեկավարի հսկողությամբ՝ 1000 Վ-ից բարձր լարման էլեկտրատեղակայանքներում, և IV խումբ ունեցող աշխատանքներն իրագործողի հսկողությամբ՝ մինչև 1000 Վ էլեկտրատեղակայանքների դեպքում:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՄԱԼՈՒԽԱՅԻՆ ԳԾԵՐԻ ՎՐԱ՝ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՒՄ

343. Ստորգետնյա մալուխային կառույցներում աշխատանքները, ինչպես նաև զննումը, իջնելով դրանց մեջ, պետք է կատարվեն Կարգագրով՝ առնվազն երեք աշխատողի կողմից, որոնցից երկուսն ապահովողներ են: Աշխատանքն իրագործողը պետք է ունենա էլեկտրաանվտանգության IV խումբ: Աշխատանքը իրագործողների և ապահովողների միջև պետք է լինի կապ:

344. Յուրաքանչյուր արտադրամասում (շրջանում, տեղամասում) անհրաժեշտ է ունենալ գազավտանգ ստորգետնյա կառույցների ցանկ՝ հաստատված կազմակերպության ղեկավարի կողմից, որին օպերատիվ անձնակազմը պետք է ծանոթացված լինի:

345. Բոլոր գազավտանգ ստորգետնյա կառույցները պետք է նշված լինեն պլանի վրա: Դրանց դռները և մտոցները պետք է հուսալի փակվեն և ունենան պետական ստանդարտներին համապատասխան նշաններ:

346. Ստորգետնյա կառույցներում մինչև աշխատանքներն սկսելը և աշխատանքների ժամանակ պետք է ապահովվի բնական կամ հարկադիր օդափոխություն և վերցվի օդի անալիզ՝ թթվածնի պարունակության վերաբերյալ, որը պետք է լինի 20%-անոցից ոչ պակաս.

1) բնական օդափոխությունն ստեղծվում է՝ բացելով երկուսից ոչ պակաս մտոցներ, դրանց մոտ տեղադրելով օդի հոսքն ուղղող հատուկ հովհարներ: Աշխատանքներն սկսելուց առաջ բնական օդափոխության տևողությունը պետք է լինի 20 րոպեից ոչ պակաս"

2) հարկադիր օդափոխությունն ապահովվում է օդափոխիչի կամ ճնշակի միջոցով 10-15 րոպեի ընթացքում. ստորգետնյա կառույցի լրիվ օդափոխման համար ճկափողն իջեցվում է ներքև և պահվում հատակից 0,25 մ բարձրության վրա:

347. Օդափոխության համար արգելվում է կիրառել սեղմված գազով (թթվածնով) բալոններ: Եթե բնական կամ հարկադրական օդափոխությունը չի ապահովում վտանգավոր նյութերի լրիվ հեռացումը, ապա ստորգետնյա կառույց թույլատրվում է իջնել միայն շնչառական օրգանները մեկուսացնող անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ, այդ թվում՝ ճկափողով հակագազի օգտագործմամբ:

348.Չի թույլատրվում ստորգետնյա կառույցներում աշխատանքներն սկսելն՝ առանց դրանց գազավորվածությունն ստուգելու: Ստուգումը պետք է անցկացնեն աշխատողները, ովքեր գործիքների օգտագործման ուսուցում են անցել: Այդ աշխատողների ցուցակը հաստատվում է կազմակերպության տնօրենի կողմից:

349. Արգելվում է գազի բացակայությունը բաց կրակի օգնությամբ ստուգելը:

350. Թունելներում և հավաքիչներում, որոնք սարքավորված են ներածման-արտածման օդափոխությամբ, աշխատանքներն սկսելուց առաջ դրանք պետք է գործարկվեն տեղային պայմաններով որոշված ժամկետում: Այդ դեպքում գազի բացակայությունը կարելի է չստուգել:

351. Թունելներում և հավաքիչներում աշխատանքներ կատարելիս պետք է բաց լինեն երկու մտոց կամ երկու դուռ այնպես, որպեսզի աշխատողները գտնվեն դրանց միջև: Բաց մտոցի մոտ պետք է տեղադրվի նախազգուշացնող նշան, կամ այն ցանկապատվի: Մինչև աշխատանքների սկիզբը բրիգադի անդամները պետք է ծանոթացվեն կառույցի էվակուացման պլանի հետ՝ չնախատեսված հանգամանքների դեպքում աշխատատեղից հեռանալու համար:

352. Հորերը բացելիս անհրաժեշտ է կիրառել այնպիսի գործիք, որը կայծ չառաջացնի, ինչպես նաև՝ խուսափել կափարիչով մտոցի բկանցքին հարվածելուց:

353. Հորի բացված անցքի մոտ պետք է տեղադրվի նախազգուշացնող նշան կամ պետք է ցանկապատվի:

354. Հորում թույլատրվում է գտնվել և աշխատել էլեկտրաանվտանգության III խումբ ունեցող մի աշխատողի, որը պետք է ունենա ապահովաճոպանով պաշտպանության գոտի: Պաշտպանիչ գոտին պետք է ունենա ուսափոկեր, որոնք մեջքի կողմում պետք է խաչվեն և խաչման տեղում օղակով ամրացվեն ճոպանին: Ճոպանի մյուս ծայրը պետք է բռնի ապահովող աշխատողներից մեկը:

355. Հորում աշխատանքներ կատարելիս արգելվում է վառել զոդալամպեր, տեղադրել պրոպան-բութանի բալոններ, տաքացնել կցորդիչը լցնելու զանգվածը և զոդանյութը: Հալեցրած զոդանյութը և կցորդիչը լցնելու տաքացրած զանգվածն անհրաժեշտ է հորն իջեցնել զսպանակեռիկով մետաղաճոպանից կախված հատուկ փակ ամանով:

356. Կրակով աշխատանքներ կատարելիս անհրաժեշտ է կիրառել բոցի տարածումը սահմանափակող հրակայուն նյութից պատրաստված վահաններ և ձեռնարկել հակահրդեհային միջոցառումներ:

357. Թունելներում, հավաքիչներում, մալուխային կիսահարկերում և այլ սրահներում, որոնցում դասավորված են մալուխները, պրոպան-բութանի օգտագործմամբ աշխատելիս՝ սրահում գտնվող բալոնների գումարային տարողությունը չպետք է գերազանցի 5լ: Աշխատանքներն ավարտելուց հետո գազով լցված բալոնները պետք է հեռացվեն, իսկ սրահը՝ օդափոխվի:

358. Մալուխները հոսանքով «վառելու» ժամանակ հորում գտնվելն արգելվում է, իսկ թունելներում և հավաքիչներում՝ թույլատրվում է միայն երկու բաց մուտքերի միջև գտնվող տեղամասերում: Հոսանքով «վառելու» ժամանակ արգելվում է աշխատել մալուխների վրա: Հոսանքով «վառելուց» հետո, հրդեհից խուսափելու նպատակով, անհրաժեշտ է զննել մալուխները:

359. Աշխատանքների թույլտվությունից և թունելների զննումից առաջ հրդեհից պաշտպանության սարքվածքները պետք է ավտոմատ գործողությունից տեղափոխել հեռակառավարման և կառավարման բանալու վրա կախել «Չմիացնել, մարդիկ են աշխատում» պլակատը:

360. Արգելվում է ծխել հորերում, հավաքիչներում և թունելներում, ինչպես նաև՝ բաց անցքերից մինչև 5 մ հեռավորության վրա:

361. Թունելներում, հավաքիչներում և հորերում երկարատև աշխատանքների դեպքում դրանցում գտնվելու ժամանակի տևողությունը պետք է որոշի Կարգագիր տվողը՝ կախված աշխատանքների կատարման պայմաններից:

362. Թունելներում, հավաքիչներում և հորերում գազ հայտնվելու դեպքում աշխատանքները պետք է դադարեցվեն, աշխատողները դուրս բերվեն վտանգավոր գոտուց՝ մինչև գազավորվածության աղբյուրը հայտնաբերելը և վերացնելը: Գազերի դուրսմղման համար անհրաժեշտ է կիրառել հարկադիր օդափոխություն:

363. Հորերում, թունելներում աշխատատեղը լուսավորելու համար պետք է կիրառվեն 12 Վ լարման լուսատուներ կամ պայթյունասանվտանգ կառուցվածքի մարտկոցային լապտեր: 12 Վ լարման տրանսֆորմատորը պետք է դրվի հորից կամ թունելից դուրս:

ԷԼԵԿՏՐԱՀԱՂՈՐԴՄԱՆ ՕԴԱՅԻՆ ԳԾԵՐ

364. ՕԳ-ների հենարանների և լարերի ապատեղակայման, ինչպես նաև հենարանների տարրերի փոխարինման աշխատանքները պետք է կատարվեն ըստ տեխնոլոգիական քարտի կամ ԱԿՆ-ի:

365. Հենարանի վրա բարձրանալն ու դրա վրա աշխատելը թույլատրվում են միայն հենարանի, հատկապես դրա հիմքի բավարար կայունությունը և ամրությունն ստուգելուց հետո:

366. Փայտյա հենարանների ամրության ստուգումը պետք է կատարվի փայտի փտածության չափմամբ՝ հիմնամասում 0.5 մ-ից ոչ պակաս խորությամբ փորելով: Երկաթբետոնե հենարանների և կցուրդների ամրությունը որոշելու համար (բետոնում անթույլատրելի ճաքեր, հենարանի շուրջ բնահողի նստվածք և փքվածություն, բետոնի քայքայում) հենարանի (կցուրդի) հիմնամասում պետք է փորվի 0.5 մ-ից ոչ պակաս խորությամբ փոսորակ:

367. Մետաղական հենարաններում պետք է ստուգվեն հիմքի վնասվածության բացակայությունը, բոլոր շեղահենակների և խարսխային հեղույսների առկայությունը, ձգալարերի և հողակցման հաղորդիչների վիճակը:

368. Կասկածելի ամրություն ունեցող հենարանի (անբավարար խորություն, բնահողի փքում, փայտանյութի փտում, ճաքեր՝ բետոնում և այլն) ամրացման անհրաժեշտությունը և եղանակները որոշվում են տեղում՝ աշխատանքներն իրագործողի կամ պատասխանատու ղեկավարի կողմից:

369. Հենարանի ամրացման աշխատանքներն առձգիչների միջոցով պետք է կատարել առանց հենարանի վրա բարձրանալու, այսինքն՝ կողքին տեղակայված հենարանից, փոխագուցավոր վերնակից կամ մարդկանց բարձրացնելու համար այլ մեխանիզմից կամ դրա համար օգտագործելով հատուկ սարքվածքներ, որոնք կախելու (ամրացնելու) համար չի պահանջվում բարձրանալ հենարան: Հենարանի վրա բարձրանալը թույլատրվում է միայն այն ամրացնելուց հետո:

370. Այն հենարանները, որոնք հաշվարկված չեն լարերի և մետաղաճոպանների միակողմանի ձգման համար և ժամանակավորապես կարող են ենթարկվել նման ձգման, անկումից խուսափելու համար պետք է նախապես ամրացվեն:

371. Մինչև հենարանների ամրացումը՝ լարերի ամբողջականության խախտումը և կապերի հանումը հենարաններից արգելվում է:

372. Հենարանի վրա բարձրանալը թույլատրվում է վերնաշխատանքների կատարման իրավունք ունեցող բրիգադի անդամներին՝

1) էլեկտրասնվտանգության III խմբի՝ մինչև հենարանի գագաթը՝ բոլոր տեսակի աշխատանքների դեպքում.

2) էլեկտրասնվտանգության II խմբի՝ այն աշխատանքների դեպքում, որոնք կատարվում են ՕԳ-ի անջատմամբ՝ մինչև հենարանի գագաթը, իսկ այն աշխատանքների դեպքում, որոնք կատարվում են չանջատված ՕԳ-ի ոչ հոսանատար մասերի վրա՝ ոչ բարձր այն մակարդակից, որի դեպքում աշխատողի գլխից մինչև այդ ՕԳ-ի ստորին հաղորդալարերի մակարդակը մնում է 2 մ հեռավորություն՝

ա" բացառություն են կազմում հենարանների ներկման աշխատանքները"

բ" բարձրության վրա աշխատանքների առանձին տեսակները պետք է կատարեն այդ աշխատանքների կատարման համար սույն Կանոններով սահմանված համապատասխան խմբեր ունեցող ոչ պակաս երկու աշխատողներ:

373. Փայտե և երկաթբետոնե հենարանների վրա ճանկերով բարձրանալիս անհրաժեշտ է պաշտպանիչ գոտու առասանն անմիջապես ամրակապել՝ անցկացնելով հենարանի հետևով:

374. Արգելվում է բարձրանալ և աշխատել ցածրադային մեկուսիչներով անկյունային հենարանների ներքին անկյան կողմից:

375. Հենարանի վրա աշխատելիս անհրաժեշտ է օգտվել ապահովիչ գոտուց և հենվել երկու ճանկերի (մագլցիչների) վրա՝ դրանց կիրառման դեպքում:

376. Հենարանի կանգնակի վրա աշխատելիս անհրաժեշտ է տեղավորվել այնպիսի դիրքով, որպեսզի տեսադաշտից չկորչեն լարման տակ գտնվող մոտակա լարերը:

377. Հենարանի տարրերը փոխելիս պետք է բացառվի հենարանի տեղաշարժման կամ անկման հնարավորությունը:

378. Պ և ԱՊ ձևերի հենարանների միակի և երկտակ կցուրդները փոխելու ժամանակ արգելվում է միանգամից փորել, հանել հենարանի երկու կանգնակները: Հարկ է փոխել հենարանի մեկ կանգնակի կցուրդը, ամրացնել կալանդները, տափանել հողը և միայն դրանից հետո անցնել մյուս կանգնակի կցուրդները փոխելուն: Անհրաժեշտ է երկտակ կցուրդները փոխել հերթականությամբ:

379. Արգելվում է գտնվել փոսորակում՝ կցուրդները հանելիս կամ իջեցնելիս:

380. Հենարանի վայր գցման և տեղակայման եղանակները, շեղումներից խուսափելու համար, դրա ամրացման անհրաժեշտությունն ու եղանակները որոշում է աշխատանքների պատասխանատու ղեկավարը: Կեռերով ձգալարերի օգտագործման դեպքում կեռերը պետք է ունենան ապահովիչ փականներ:

381. Մեկուսացնող կախոցների վրա աշխատելիս թույլատրվում է տեղափոխվել միաշղթա և բազմաշղթա (մեկուսիչների երկու և ավել շարաններով) պահող կախոցներով և բազմաշղթա ձգող կախոցներով:

382. Միաշղթա ձգովի մեկուսացնող կախոցի վրա աշխատանքները թույլատրվում են հատուկ հարմարանքների օգտագործմամբ կամ դրա վրա պառկած և, մարմնի դիրքն ամուր պահելու համար, ոտքերով կառչելով լայնակից:

383. Պահող մեկուսացնող կախոցի վրա աշխատելիս՝ ապահովիչ գոտու առասանը պետք է ամրացված լինի լայնակից: Եթե առասանի երկարությունն անբավարար է, անհրաժեշտ է օգտվել գոտուն ամրացված երկու ապահովաճոպաններից: Ճոպաններից մեկը կապում են լայնակին, իսկ երկրորդը, որը նախապես անցկացված է լայնակի հետևի մասը, բրիգադին վտանգից ապահովող անդամը բաց է թողնում ըստ անհրաժեշտության:

384. Մեկուսացնող ձգովի կախոցի վրա աշխատելիս՝ ապահովիչ գոտու առասանը պետք է ամրացված լինի լայնակից կամ այդ նպատակի համար նախատեսված հարմարանքից:

385. Պահող և ձգովի բազմաշղթա մեկուսացնող կախոցների վրա թույլատրվում է ապահովիչ գոտու առասանն ամրացնել մեկուսիչների շարաններից մեկին, որի վրա աշխատանքներ չեն տարվում: Արգելվում է այդ առասանն ամրացնել այն շարանից, որի վրա

աշխատանքներ են տարվում: Անսարքություն հայտնաբերելու դեպքում, որը կարող է հանգեցնել մեկուսացնող կախոցի անջատմանը, աշխատանքները պետք է դադարեցնել:

386. Չի թույլատրվում հաղորդալարերի, մետաղաճոպանների լայնակների վրա բարձրանալու (կամ իջնելու), ինչպես նաև դրանց ձգման ժամանակ այդ լայնակների կամ դրանց տակի կանգնակների վրա գտնվելը:

387. Բեռի բարձրացման սխեմայի ընտրումը և ամբարձիչ բլոկների տեղադրումն անհրաժեշտ է կատարել այն հաշվով, որպեսզի չառաջանան ճիգեր, որոնք կարող են վնասել հենարանը:

388. Հենարանի ներկումը՝ մինչև դրա գազաթը բարձրանալով, կարող են կատարել II խումբ ունեցող բրիգադի անդամները:

389. Հենարանի ներկման ժամանակ պետք է ձեռնարկվեն միջոցներ՝ մեկուսիչների և հաղորդալարերի վրա ներկը թափվելը կանխելու համար (օրինակ, տակդիրի օգտագործմամբ):

390. Հենարանի, փոխագուցավոր աշտարակի, հիդրոամբարձիչի կամ մարդկանց բարձրացնելու այլ մեխանիզմի վրայից աշխատանքներ կատարելիս՝ հեռավորությունն աշխատողից, գործիքից, հարմարանքից, ճոպանից, ձգալարից մինչև 1000 Վ-ից ցածր լարման տակ գտնվող հաղորդալարը (էլեկտրահաղորդման, ռադիոհաղորդման, հեռամեխանիկայի) պետք է լինի ոչ պակաս 0.6 մ-ից:

391. Այն դեպքում, երբ աշխատանքները կատարելիս չի բացառվում հաղորդալարերին (էլեկտրահաղորդման, կապի, ռադիոհաղորդման, հեռամեխանիկայի) մոտենալու հնարավորությունը 0.6 մ-ից պակաս հեռավորությամբ, այդ հաղորդալարերը պետք է անջատվեն և հողակցվեն աշխատանքների կատարման տեղում:

392. 1000 Վ-ից բարձր լարման գծերի հենարաններից կախված մինչև 1000 Վ լարման ՕԳ-ների և փողոցային լուսավորության գծերի հաղորդալարերի փոխարինման և ձգման աշխատանքները պետք է կատարվեն բոլոր լարման գծերը (մինչև 1000 Վ և ավել) անջատելուց և աշխատանքների տեղամասի երկու կողմերում հողակցելուց հետո: Աշխատանքները պետք է կատարվեն Կարգագրով, երկու աշխատողից ոչ պակաս բրիգադով: Աշխատանքն իրագործողը պետք է ունենա IV խումբ:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՕԴԱՅԻՆ ԳԾԻ ՎՐԱ՝ ԱՌԱՆՑ ԼԱՐՈՒՄԸ ՀԱՆԵԼՈՒ

393. Լարման տակ գտնվող ՕԳ-ի վրա աշխատանքներ կատարելիս՝ անձնակազմի անվտանգությունն ապահովվում է երկու սխեմաներից որևէ մեկով՝

1) սխեմա առաջին. լարման տակ հաղորդալար-մեկուսիչ-մարդ-հող:

Սխեման իրականացվում է երկու մեթոդով՝

ա. աշխատանքներ՝ հպումով, երբ հիմնական պաշտպանության միջոցներ են հանդիսանում դիէլեկտրիկ ձեռնոցները և մեկուսացված գործիքը: Այս մեթոդով աշխատանքներ են կատարվում մինչև 1000 Վ լարման ՕԳ-ում,

բ. աշխատանքներ՝ հեռավորության վրա, երբ դրանք կատարվում են՝ օգտագործելով հիմնական (մեկուսացնող ձողեր, աքցաններ) և լրացուցիչ (դիէլեկտրիկ ձեռնոցներ, բոտիներ, մակադրակներ) էլեկտրապաշտպանության միջոցներ: Այս մեթոդը կիրառվում է 1000 Վ-ից բարձր լարման ՕԳ-ում.

2) սխեմա երկրորդ՝ լարման տակ հաղորդալար-մարդ-մեկուսիչ-հող: Այս սխեմայով աշխատանքներ թույլատրվում են հետևյալ պայմանների դեպքում՝

ա. աշխատողի մեկուսացումը հողից՝ համապատասխան լարման հատուկ սարքվածքներով.

բ. կիրառելով համապատասխան էկրանավորող լրակազմ.

գ. էկրանային լրակազմի, աշխատանքային հարթակի և հաղորդալարի պոտենցիալների հավասարեցում՝ պոտենցիալի փոխադրման հատուկ ձողով: Աշխատողի հեռավորությունը հողակցված մասերից և սարքավորման տարրերից պետք է լինի Աղյուսակ N 1-ում նշվածից ոչ պակաս:

394. Հաղորդալարի պոտենցիալի տակ աշխատանքների կոնկրետ տեսակները պետք է կատարվեն հատուկ հրահանգներով կամ տեխնոլոգիական քարտերով, ԱԿՆ-ով:

395. Հաղորդալարի պոտենցիալի տակ աշխատանքների կատարման իրավունք ունեցող աշխատողները (հոսանատար մասերին անմիջական հպմամբ) 1000 Վ-ից բարձր լարման ՕԳ-ի պետք է ունենան էլեկտրաանվտանգության IV խումբ, իսկ բրիգադի մնացած անդամները՝ էլեկտրաանվտանգության III խումբ:

396. Չի թույլատրվում մեկուսիչների և մեկուսացնող կախոցների արմատորին հպումը, որոնց պոտենցիալը տարբեր է հաղորդալարի պոտենցիալից, ինչպես նաև հաղորդալարի պոտենցիալի տակ գտնվող մեկուսացնող սարքվածքի հարթակից աշխատանքներ

կատարելիս՝ տալ կամ ստանալ գործիք կամ հարմարանքներ այն աշխատողներից, ովքեր չեն գտնվում նույն աշխատանքային հարթակի վրա:

397. Մեկուսացնող կախոցների վրա աշխատանքներն սկսելուց առաջ անհրաժեշտ է չափիչ ձողով ստուգել ճենապակե մեկուսիչների էլեկտրական ամրությունը: Դուրս եկող սեղմակների առկայության դեպքում պետք է դրանք սեպապնդել հենարանի վրա, որի վրա կատարվում են աշխատանքները, և հարևան հենարանների վրա, եթե դա պահանջվում է ուղեգծի ռելիեֆով:

398. Մեկուսացնող կախոցի վերաշրջայման աշխատանքները, առանձին մեկուսիչների և արմատուրի փոխարինման աշխատանքները թույլատրվում է կատարել մեկուսացնող սարքավածքների կամ լայնակների վրա գտնվող մոնտյորներին, եթե կախոցի մեկուսիչների առնվազն 70% սարքին վիճակում է:

399. 35 կՎ ՕԳ-ի վրա աշխատելիս թույլատրվում է հավել մեկուսացնող կախոցի առաջին մեկուսիչի գլխիկին, եթե դրա երկու մեկուսիչները սարքին են, իսկ 110 կՎ և բարձր ՕԳ-ի վրա՝ առաջին և երկրորդ մեկուսիչների գլխիկներին: Մեկուսիչների հաշիվը տարվում է լայնակից:

400. 35-110 կՎ ՕԳ-ի վրա խողովակավոր պարպիչների տեղադրումը լարման տակ թույլատրվում է մեկուսացնող կախովի եզրաչափերի կիրառման պայմանով, որպեսզի բացառվի պարպիչի արտաքին էլեկտրոդի մոտենալը հաղորդալարին՝ տրված հեռավորությունից պակաս չափով:

401. Պարպիչի արտաքին էլեկտրոդը հաղորդալարին մոտեցնելուց կամ պարպիչը հանելուց, էլեկտրոդը հեռացնելու ժամանակ՝ գազերի հնարավոր արտանետման գոտում գտնվելն արգելվում է.

1) պարպիչի արտաքին էլեկտրոդը մոտեցնելը կամ հեռացնելն անհրաժեշտ է կատարել մեկուսացնող ձողի օգնությամբ.

2) հենարանից մեկուսացված շանթապաշտպան մետաղաճոպանին 1 մ-ից պակաս տարածությամբ մոտենալն արգելվում է:

402. Սառցակեղևի հալման սխեմայում մետաղաճոպանն օգտագործելիս՝ մետաղաճոպանին մոտենալու թույլատրելի հեռավորությունը պետք է որոշվի՝ կախված հալման լարումից:

403. Լարման տակ գտնվող ՕԳ-ի և ԿՕԳ-ի վրա արգելվում է աշխատել մառախուղի, անծրևի, ձյան ժամանակ, մթության մեջ, ինչպես նաև հենարանների վրա աշխատանքները դժվարացնող քամու ժամանակ:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ՝ ԳՈՐԾՈՂ ՕԳ-Ի ՀԵՏ ՀԱՏՄԱՆ ԹՈՒՉՔՆԵՐՈՒՄ

404. Հաղորդալարերի տեղակայման և փոխարինման ժամանակ դրանք պետք է փռել սահուն, առանց կտրուկ ձգումների, ձգիչ ճոպաններն ուղղորդել՝ առանց թափահարումների, այնպես, որպեսզի բացառվի լարման տակ գտնվող հաղորդալարերին դրանց մոտենալը: Ձգիչների և հակաձգիչների համար անհրաժեշտ է օգտագործել բուսական կամ սինթետիկ թելքից ճոպաններ՝ ընտրելով դրանք նվազագույն երկարությամբ և առանց թույլ ձգված մասերի: Աշխատանքում օգտագործվող կարապիկներն ու պողպատե ճոպանները պետք է լինեն հողակցված:

405. Յուրաքանչյուր թմբկազևանի հաղորդալարը (մետաղաճոպանը) փռումից առաջ պետք է լինի հողակցված:

406. Տեղակայման աշխատանքներն սկսելուց առաջ (դիտասևեռում, ձգում, վերատեղադրում հողվակից սեղմակներին) փռված հաղորդալարը (մետաղաճոպանը) պետք է հողակցվի երկու տեղում՝ սկզբնական խարսխային հենարանում՝ ձգող սեղմակի մոտ, և վերջին հենարանում, որից կատարվում է ձգումը: Բացի դրանից, հողակցումներ պետք է դրվեն հաղորդալարին (մետաղաճոպանին)՝ յուրաքանչյուր միջանկյալ հենարանում, որտեղ կատարվում են աշխատանքներ:

407. Փռող մետաղական հողվակներում կամ սեղմակներում գտնվող հաղորդալարի կամ մետաղաճոպանի համար բավարար է այդ հողվակների (սեղմակների) պահունակների հողակցումը: Եթե կա բնական մետաղական հպում հողվակի (սեղմակի) մետաղական պահունակի և մետաղական հենարանի կամ երկաթբետոնե հենարանի ամրանի միջև, ապա մետաղական հողվակի (սեղմակի) հողակցման համար լրացուցիչ միջոցառումներ չեն պահանջվում:

408. Փոխագուցավոր վերնակից (վերհան մեքենայից) հաղորդալարերի վրա աշխատանքներ կատարելիս՝ վերնակի աշխատանքային հարթակը հատուկ ձողի միջոցով պետք է 10 մմ²-ից ոչ պակաս կտրվածքով ճկուն պղնձե հաղորդիչով միացվի գծի հաղորդալարի հետ, իսկ ինքը՝ վերնակը, հողակցվի: Ընդ որում, հաղորդալարը պետք է հողակցված լինի մոտակա հենարանի վրա կամ թռիչքում:

409. Փոխագուցավոր վերնակի աշխատանքային հարթակը հաղորդալարի հետ միացնելուց հետո չեն թույլատրվում վերնակի խցիկ մուտքն ու ելքը, ինչպես նաև գետնի վրա կանգնած՝ վերնակի հենամարմնին հպվելը:

410. Չի կարելի մետաղե ճոպանն օգտագործել որպես ծայրափակ պարան:

411. Խարսխային հենարանի վրա օղակները պետք է միացնել միայն այդ հենարանին կից խարսխային թռիչքներում տեղակայման աշխատանքների ավարտից հետո:

412. 110 կՎ և բարձր լարման ՕԳ-ի խարսխային հենարանի վրա օղակները մինչև միացնելը պետք է ամրացված լինեն հաղորդալարերից կամ մեկուսացնող ձգովի կախոցներից, բայց լայնակից հաշված՝ ոչ մոտիկ, քան չորրորդ մեկուսիչը, իսկ 35 կՎ և ցածր լարման ՕԳ-ի վրա՝ միայն հաղորդալարերից:

413. Լարման տակ գտնվող այլ ՕԳ-ի հետ հատվող թռիչքում ՕԳ-ի հաղորդալարերի վրա աշխատանքներ կատարելիս՝ հողակցումն անհրաժեշտ է այն հենարանի վրա, որտեղ տարվում են աշխատանքները: Եթե այդ թռիչքում կախում կամ փոխարինում են հաղորդալարեր, ապա հատման տեղի երկու կողմից պետք է հողակցվեն ինչպես կախվող, այնպես էլ փոխարինվող հաղորդալարերը:

414. Լարման տակ գտնվող հաղորդալարերից ներքև եղած հաղորդալարերի (մետաղաճոպանների) և դրանց մեկուսիչների ու արմատուրի փոխարինման ժամանակ փոխարինվող հաղորդալարերի (մետաղաճոպանների) վրայով պետք է գցել բուսական կամ սինթետիկ թելքերից ճոպաններ՝ վերևում գտնվող հաղորդալարերի հետ ենթահատումից խուսափելու համար: Ճոպանները պետք է գցել երկու տեղից՝ հատման երկու կողմերում՝ դրանց ծայրերը կապելով խարսխին կամ որևէ կառույցի: Հաղորդալարի (ճոպանի) բարձրացումը պետք է կատարվի դանդաղ և սահուն:

415. Լարման տակ գտնվող հաղորդալարերից վերև եղած հաղորդալարերի (մետաղաճոպանների), դրանց մեկուսիչների և արմատուրի վրա աշխատանքներ պետք է կատարվեն կազմակերպության ղեկավարի կողմից հաստատված ԱԿՆ-ով: ԱԿՆ-ում պետք է նախատեսվեն հաղորդալարերի (մետաղաճոպանների) իջնելը կանխող և մակաձված լարումից պաշտպանվելու միջոցներ: Հաղորդալարերի (մետաղաճոպանների) փոխարինումն այդպիսի դեպքերում պետք է կատարվի հատվող հաղորդալարերից լարումը պարտադիր հանելով:

**ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ՝ ՄԱԿԱԾՎԱԾ ԼԱՐՄԱՆ ՏԱԿ ՕԳ-Ի ՎՐԱ, ԲԱԶՄԱՇՐԹԱ ՕԳ-Ի
ՄԵԿ ԱՆՋԱՏՎԱԾ ՇՐԹԱՅԻ ՎՐԱ**

416. ՕԳ-ն սպասարկող անձնակազմը պետք է ունենա այն գծերի անվանացանկը, որոնք անջատելուց հետո գտնվում են մակաձված լարման տակ, ծանոթացված լինի այդ ցանկին, մակաձված լարման մեծություններին: ՕԳ-ի մակաձված լարման առկայությունը պետք է գրանցվի Կարգագրի «Առանձին ցուցումներ» տողում:

417. Անջատված ՕԳ-ն և ԿՕԳ-ն մակաձված լարման առկայության դեպքերում էլեկտրականորեն միացված տեղամասերի (հաղորդալարեր, մետաղաճոպաններ) միացումից կամ խզումից առաջ անհրաժեշտ է հավասարեցնել այդ տեղամասերի պոտենցիալները: Պոտենցիալների հավասարեցումը կատարվում է հաղորդիչով այդ տեղամասերը միացնելով կամ խզվածքի (ենթադրվող խզվածքի) երկու կողմերում հողակցումների տեղադրմամբ՝ միացնելով մեկ հողակցիչի (հողակցման սարքվածքի):

418. Մակաձված լարման տակ ՕԳ-ի վրա՝ հենարանից ընդհուպ մինչև հողն իջեցված հաղորդալարին հավելու հետ կապված աշխատանքները գետնից պետք է կատարվեն էլեկտրապաշտպանության միջոցների (ձեռնոցներ, ձողեր) օգտագործմամբ կամ մետաղե հարթակից, որը պոտենցիալների հավասարեցման համար հաղորդիչով միացած է այդ հաղորդալարի հետ:

419. Առանց էլեկտրապաշտպանության միջոցների և մետաղե հարթակի կիրառման աշխատանքները գետնից թույլատրվում են հպման յուրաքանչյուր տեղին անմիջականորեն մոտ հաղորդալարի հողակցումը կատարելու պայմանով:

420. Մակաձված լարման տակ ՕԳ-ի վրա հաղորդալարերը տեղակայելիս՝ օգտագործվող ձգիչ մետաղաճոպանները նախ անհրաժեշտ է ամրացնել ձգիչ մեխանիզմի վրա և պոտենցիալների հավասարեցման համար հողակցել նույն հողակցիչին, որին միացված է հաղորդալարը: Միայն դրանից հետո թույլատրվում է ճոպանն ամրացնել հաղորդալարին: Հաղորդալարի և ձգիչ ճոպանի զատումը նույնպես կարելի է միայն դրանց պոտենցիալները հավասարեցնելուց հետո, այսինքն՝ դրանցից յուրաքանչյուրը միացնել ընդհանուր հողակցիչին:

421. Մակաձված լարման տակ ՕԳ-ի վրա տեղակայման աշխատանքներ կատարելիս (բարձրանալը, դիտասևեռումը, ձգելը, հաղորդալարերի վերադարսումը հոլովակից սեղմակի մեջ)՝ հաղորդալարը պետք է հողակցված լինի այն խարսխային հենարանի վրա, որից տարվում է փռումը, ինչպես նաև վերջին խարսխահենարանի վրա, որի վրայից

կատարվում է ձգումը, և յուրաքանչյուր միջանկյալ հենարանի վրա, որի վրա բարձրացվում է հաղորդալարը:

422. Միջանկյալ հենարանի վրա աշխատանքներն ավարտելիս՝ այդ հենարանի վրայի հաղորդալարից հողակցումը կարող է հանվել: Միջանկյալ հենարանի վրա, հաղորդալարին հավելու հետ կապված աշխատանքների վերսկսման դեպքում, հաղորդալարը պետք է նորից հողակցվի նույն հենարանի վրա:

423. Մակաձված լարման տակ ՕԳ-ի վրա հաղորդալարերի վերադարսումը հողակցներից պահող սեղմակների մեջ անհրաժեշտ է անցկացնել փռման ուղղությանը հակառակ: Մինչև վերադարսման սկիզբը՝ անհրաժեշտ է թողնել հողակցված հաղորդալարերն այն խարսխային հենարանի վրա, որի կողմը պետք է անցկացվի վերադարսումը, հանել հողակցումներն այն խարսխային հենարանի հաղորդալարերից, որից սկսվում է վերադարսումը:

424. Մակաձված լարման տակ ՕԳ-ի վրա հաղորդալարերի տեղակայման աշխատանքներ կատարելիս՝ հողակցումները դրանցից կարելի է հանել միայն հաղորդալարը պահող սեղմակների մեջ վերադարսելուց և տվյալ հենարանի վրա աշխատանքներն ավարտելուց հետո:

425. Հաղորդալարերը սեղմակների մեջ վերադարսելու ժամանակ կից խարսխային թռիչքը, որում վերադարսումն արդեն ավարտված է, հարկավոր է դիտել որպես մակաձված լարման տակ գտնվող: Դրա վրա հաղորդալարերին հավելու հետ կապված աշխատանքների կատարումը թույլատրվում է միայն աշխատատեղում դրանց հողակցելուց հետո:

426. Կազմակերպություններին անհրաժեշտ է մակաձված լարման տակ ՕԳ-ի քանակից չափումներով որոշել այն գծերը, որոնք անջատելիս և ծայրամասերում (ԲՄ) հողակցելիս՝ հողակցված հաղորդալարերի վրա մնում է մակաձված լարման 25 Վ-ից բարձր պոտենցիալ՝ գործող ՕԳ-ի ամենամեծ աշխատանքային հոսանքի ժամանակ: Այդ ՕԳ-ի վրա հաղորդալարերին հավելու հետ կապված բոլոր տեսակի աշխատանքները, առանց էլեկտրապաշտպանության հիմնական միջոցների կիրառման, պետք է անցկացվեն՝ ըստ տեխնոլոգիական քարտերի կամ ԱԿՆ-ի, որոնցում պետք է ցույց տրված լինի հողակցումների տեղաբաշխումը՝ ելնելով աշխատատեղերում մակաձված լարման 25 Վ-ից ոչ բարձր պոտենցիալի ապահովման պահանջներից:

427. Եթե մակաձված լարման տակ գտնվող անջատված ՕԳ-ի (շղթայի) վրա չի հաջողվում այդ լարումն իջեցնել մինչև 25 Վ, ապա անհրաժեշտ է աշխատել՝ հաղորդալարերը

հողակցելով միայն մեկ հենարանի վրա կամ երկու կից հենարանների վրա: Ընդ որում, ՕԳ-ի (շղթայի) հողակցումը ԲՍ-ում արգելվում է: Բրիգադի աշխատանքները թույլատրվում են միայն այն հենարանների վրա, որոնց վրա տեղակայված են հողակցումները, կամ դրանց թռիչքի հաղորդալարի վրա:

428. Երկու և ավել թռիչքներում (տեղամասերում) աշխատելու անհրաժեշտության դեպքում ՕԳ-ի (շղթան) խարսխային հենարանների վրա օղակների անջատման միջոցով պետք է բաժանված լինի էլեկտրականապես չկապված տեղամասերի:

429. Նման յուրաքանչյուր տեղամասում հողակցումների տեղակայման մոտ կարող է աշխատել միայն մեկ բրիգադ:

430. Մեկը մյուսի վրա դասավորված շղթաներով բազմաշղթա ՕԳ-ի անջատված շղթայի վրա կարելի է աշխատել միայն պայմանով, որ այդ շղթան կախված է լարման տակ գտնվող շղթաներից ցածր: Անջատված շղթայի հաղորդալարերի փոխարինումը և կարգավորումն արգելվում են:

431. Շղթաների հորիզոնական դասավորմամբ բազմաշղթա ՕԳ-ի մեկ անջատված շղթայի վրա աշխատելիս՝ կանգնակների վրա, լարման տակ մնացած շղթաների կողմից պետք է կախվեն կարմիր դրոշակներ: Դրոշակները կախում է աշխատանքներն իրագործող՝ բրիգադի III խումբ ունեցող աշխատողի հետ, հողից 2-3 մ բարձրության վրա:

432. Լարման տակ գտնվող շղթայի կողմից հենարանի վրա բարձրանալը և այդ շղթան պահող լայնակների հատվածների վրա անցնելն արգելվում է: Եթե հենարանն ունի աստիճան-հեղույսներ, ապա դրանցով բարձրանալը թույլատրվում է՝ անկախ նրանից, թե դրանք որ շղթայի տակ են դասավորված: Եթե աստիճան-հեղույսները դասավորված են լարման տակ մնացած շղթաների կողմից, ապա հենարանի վրա անհրաժեշտ է բարձրանալ աշխատանքներն իրագործողի կամ բրիգադի III խումբ ունեցող անդամի հսկողությամբ:

433. Բազմաշղթա ՕԳ-ի անջատված շղթայի (մնացած շղթաները գտնվում են լարման տակ) հաղորդալարերի վրա հենարաններից աշխատելիս՝ հողակցումներն անհրաժեշտ է տեղակայել յուրաքանչյուր հենարանի վրա, որի վրա աշխատանքներն են տարվում:

ՕԴԱՅԻՆ ԳԾԻ ՆՈՐՈԳՈՒՄ՝ ԸՍՏ ՖԱԶԵՐԻ

434. ՕԳ-ն՝ ըստ ֆազերի նորոգելիս՝ անջատված ֆազի հաղորդալարի հողակցումը ԲՍ-ում արգելվում է: Հաղորդալարը պետք է հողակցվի միայն աշխատատեղում: 35 կՎ և բարձր լարման ՕԳ-ի վրա մեկ ֆազի հաղորդալարի վրա կամ հերթականությամբ յուրաքանչյուր ֆազի հաղորդալարերի վրա աշխատելիս՝ թույլատրվում է աշխատատեղում հողակցել միայն այն ֆազի հաղորդալարը, որի վրա աշխատանքներ են կատարվում: Ընդ որում, արգելվում է մնացած չհողակցված ֆազերի հաղորդալարերին մոտենալը՝ Աղյուսակ N 1-ում նշվածից պակաս հեռավորության վրա:

435. Ըստ ֆազերի նորոգելիս՝ հողակցման հուսալիության մեծացման համար այն պետք է լինի կրկնակի՝ բաղկացած երկու առանձին, զուգահեռ տեղակայված հողակցումներից: Հաղորդալարի վրա թույլատրվում է աշխատել տեղակայված հողակցումից 20 մ-ից ոչ ավել տարածության վրա:

436. Մի քանի բրիգադի միաժամանակյա աշխատանքների դեպքում՝ անջատված հաղորդալարը պետք է բաժանված լինի էլեկտրականապես չկապված տեղամասերի: Յուրաքանչյուր բրիգադին հատկացվում է առանձին տեղամաս, որի վրա տեղակայվում է մեկ կրկնակի հողակցում:

437. 110 կՎ և բարձր լարման ՕԳ-ն ըստ ֆազերի նորոգելիս, աղեղային պարպումը տեղափակելու համար, հողակցումը տեղակայելուց կամ հանելուց առաջ հաղորդալարը պետք է նախապես հողակցվի աղեղմարիչ սարքվածք ունեցող ձողի օգնությամբ: Ձողի հողակցող հաղորդալարը նախապես պետք է միացված լինի հողակցիչին: Այդ ձողը կարող է հանվել միայն փոխադրովի հողակցումը տեղակայելուց (կամ հանելուց) հետո:

438. Ֆազերի հորիզոնական դասավորությամբ ՕԳ-ի վրա ըստ ֆազերի նորոգելիս՝ արգելվում է անցնել լարման տակ գտնվող ֆազերի հաղորդալարերը պահող լայնակի հատվածների վրա: 35 կՎ և բարձր լարման ՕԳ-ն ըստ ֆազերի նորոգման աշխատանքների կատարման պայմանները պետք է նշվեն Կարգագրի «Առանձին ցուցումներ» տողում:

ՕԴԱՅԻՆ ԳԾԻ ՈՒՂԵԳԾԻ ՄԱՔՐՈՒՄ՝ ԾԱՌԵՐԻՑ

439. ՕԳ-ի ուղեգծի ծառերից մաքրման աշխատանքները կատարվում են՝ հաշվի առնելով էլեկտրատեղակայանքների շահագործման անվտանգության կանոնների պահանջները:

440. ՕԳ-ի ուղեգիծը ծառերից մաքրելու աշխատանքները կատարվում են Կարգագրով:

441. Մինչև ծառահատումը՝ աշխատատեղը պետք է մաքրված լինի: Ձմեռային ժամանակաշրջանում, վայր ընկնող ծառից արագ հեռանալու համար, անհրաժեշտ է ձյան մեջ բացել 5-6 մ երկարությամբ երկու ճանապարհ՝ ծառի ընկնելու հակադիր ուղղությամբ և անկման գծի նկատմամբ անկյան տակ: Չի թույլատրվում բարձրանալ կիսահատված և կիսասղոցված ծառերի վրա:

442. Աշխատանքն սկսելուց առաջ աշխատանքներն իրագործողը պարտավոր է նախագուշացնել բրիգադի բոլոր անդամներին՝ ընկնող ծառերի, ճոպանների և այլնի՝ ՕԳ-ի հաղորդալարերին մոտեցման վտանգի մասին:

443. Հաղորդալարերի վրա ծառերի ընկնելուց խուսափելու համար մինչև հատումն սկսելը պետք է կիրառվեն ձգալարեր: Չի կարելի ծառի տապալումն առանց տակից սղոցելու կամ հատելու, ինչպես նաև ծառի թափանցանց սղոցումը: Թեքված ծառերը պետք է տապալել դրանց թեքման կողմը, սակայն հաղորդալարի վրա ծառի ընկնելու վտանգի դեպքում դրանք տապալելը մինչև ՕԳ-ն անջատելը չի թույլատրվում:

444. Հաղորդալարերի վրա ծառի ընկնելու դեպքում՝ մինչև ՕԳ-ի լարման հանելը չի կարելի մոտենալ ծառին 8 մ-ից պակաս հեռավորության վրա:

445. Հատվող ծառի առաջիկա անկման մասին հատողները պետք է նախագուշացնեն մյուս բանվորներին: Ծառի ընկնելու կամ հակադիր կողմը կանգնել չի թույլատրվում:

446. Աշխատանքի ընդմիջմանը կամ այլ ծառերի անցնելիս չի կարելի սղոցած կամ հատած ծառը թողնել առանց տապալման:

447. Փտած ու չորացած ծառերը տապալելուց առաջ անհրաժեշտ է փորձել դրանց ամրությունը, այնուհետև տակից սղոցել: Չի կարելի այդ ծառերը տակից հատել:

448. Չի կարելի խմբային ծառատապալումը նախապես հատմամբ և մեկ ծառը մյուսի վրա տապալմամբ: Առաջին հերթին պետք է տապալել փտած և այրված ծառերը:

ՕԴԱՅԻՆ ԳԾԻ ՇՐՋԱՅՑԵՐ ԵՎ ԶՆՆՈՒՄՆԵՐ

449. ՕԳ-ների շրջայցերի և գննումների ժամանակ պարտադիր չէ նշանակել աշխատանքներն իրագործող: ՕԳ-ների գննման ժամանակ չի կարելի կատարել նորոգման և վերականգնման որևէ աշխատանք, ինչպես նաև՝ բարձրանալ հենարանի և դրա կառուցվածքային տարրերի վրա: Հենարանի վրա բարձրանալ կարելի է ՕԳ-ների վերնամասային գննման դեպքում: Նպատակային հրահանգավորման անցկացումը պարտադիր է:

450. Դժվարանցանելի վայրում (ճահիճ, ջրային արգելքներ, լեռներ, անտառակուտակներ և այլն) և անբարենպաստ եղանակի պայմաններում (անձրև, ձյուն, սառնամանիք և այլն), ինչպես նաև մուգ ժամանակ ՕԳ-ի գննումը պետք է կատարեն էլեկտրաանվտանգության II խումբ ունեցող երկուսից ոչ պակաս աշխատող, որոնցից մեկը նշանակվում է ավագ: Մնացած դեպքերում ՕԳ-ն կարող է գննել էլեկտրաանվտանգության II խումբ ունեցող մեկ աշխատող:

451. ՕԳ գննելիս չի թույլատրվում գնալ հաղորդալարերի տակով:

452. Վնասվածքներ որոնելիս՝ ՕԳ գննողները պետք է իրենց մոտ ունենան նախազգուշացնող նշաններ կամ պլակատներ:

453. Շրջայցերի ժամանակ պետք է ապահովվի կապը կարգավարի հետ:

454. Չի թույլատրվում 8 մ-ից պակաս հեռավորության վրա մոտենալ գետնին ընկած 1000 Վ-ից բարձր լարման հաղորդալարին, լարման տակ գտնվող 6-35 կՎ լարման ՕԳ-ի երկաթբետոնե հենարաններին՝ հողակցման հոսանքներ հոսելու նշանների առկայության դեպքում (մեկուսիչների վնասվածք, հաղորդալարի հպում հենարանի մարմնին, խոնավության գոլորշիացում հողից, էլեկտրական աղեղի առաջացում կանգնակների վրա և հենարանները հիմնահողի ամրակցման տեղում): Այդ դեպքերում հաղորդալարի կամ հենարանի մոտակայքում պետք է կազմակերպել պահպանություն՝ հողակցման տեղին մարդկանց և կենդանիների մոտենալը կանխելու համար, հնարավորության չափով տեղակայել նախազգուշացնող նշաններ և պլակատներ, պատահարի մասին հայտնել ՕԳ սպասարկող անձնակազմին:

**ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՆԱՊԱՐՀՆԵՐԻՆ ՕԳ-ԻՆ ՄՈՏԵՆԱԼՈՒ
ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏ ՀԱՏՎԵԼՈՒ ՏԵՂԵՐՈՒՄ**

455. Տրանսպորտային մայրուղիների (ավտոճանապարհների, երկաթուղիներ, նավարկելի գետեր և ջրանցքներ) հետ ՕԳ-ի հատման տեղամասերում աշխատանքների դեպքում, երբ պահանջվում է ժամանակավորապես դադարեցնել տրանսպորտի շարժումը կամ էլ դրա շարժման ժամանակ դադարեցնել աշխատանքները ՕԳ-ի վրա, Կարգագիր տվողը պետք է աշխատանքների վայր կանչի տրանսպորտային մայրուղու շարժման ծառայության ներկայացուցչին: Այդ ներկայացուցիչը պարտավոր է ապահովել տրանսպորտի շարժման դադարեցումն անհրաժեշտ ժամանակով կամ նախազգուշացնել գծային բրիգադին՝ մոտեցող տրանսպորտի մասին:

456. Տրանսպորտը բաց թողնելու համար՝ դրա շարժմանը խանգարող հաղորդալարերը պետք է բարձրացվեն անվտանգ բարձրության վրա:

457. Խճուղու և գյուղամիջյան ճանապարհների հետ ՕԳ-ի հատման կամ մոտեցման տեղամասերում աշխատանքների ժամանակ տրանսպորտի վարորդներին նախազգուշացնելու համար կամ պետավտոտեսչության համաձայնությամբ տրանսպորտի շարժումը դադարեցնելու համար՝ աշխատանքներն իրագործողը պետք է խճուղու կամ ճանապարհի վրա կանգնեցնի ազդանշաններ՝

- 1) անհրաժեշտության դեպքում պետք է կանչել պետավտոտեսչության ներկայացուցչին.
- 2) ազդանշանորդները պետք է գտնվեն ճանապարհների հետ ՕԳ-ի հատման կամ մոտեցման տեղից 100 մ հեռավորության վրա՝ երկու կողմից, և իրենց մոտ ունենան ցերեկը՝ կարմիր դրոշակներ, իսկ գիշերը՝ կարմիր լապտերներ:

458. Նվազագույն հեռավորությունները ՕԳ-ի հաղորդալարերից մինչև գետներեսի, վերգետնյա խողովակաշարերը, ճոպանուղիները ներկայացված է Աղյուսակ N 6-ում:

Փոխհատում, մոտեցում և զուգահեռ ընթացք	ՕԳ-ի լարման դեպքում, կՎ, նվազագույն հեռավորությունները, մ							
	մինչև 20	35	110	150	220	330	400	500
Հեռավորությունն՝ ըստ ուղղաձիգի (լուսանցիկ) փոխհատվելիս								
ՕԳ-ի չշեղված հաղորդալարերից մինչև խողովակաշարերի ցանկացած մասը (հողաթումբ), պաշտպանական սարքվածքներ, խողովակաշարը կամ ճոպանուղին՝ բնականոն ռեժիմում	3	4	4	4,5	5	6	8	8
Նույնը՝ հարակից հենամիջում հաղորդալարերի խզման դեպքում	2	2	2	2,5	3	4	-	-
Հեռավորությունն ըստ հորիզոնականի՝								
ա) մոտեցման և զուգահեռ ընթացքի դեպքում, եզրային չշեղված հաղորդալարերից մինչև ցանկացած մաս՝								
մայրուղային նավթամուղի և նավթամթերամուղի	50 մ, բայց հենարանի բարձրությունից ոչ պակաս							
1,2 ՄՊա հավելյալ ճնշմամբ գազամուղի (մայրուղային գազամուղի)	Հենարանի կրկնակի բարձրությունից ոչ պակաս, բայց 50 մ-ից ոչ պակաս							
հեղուկացված ածխաջրածնային գազերի	1000 մ-ից ոչ պակաս							
խողովակաշարի ավշակամուղի	հենարանի բարձրության եռապատիկին, բայց 50 մ-ից ոչ պակաս							
պայթյունավտանգ գոտիներով շենքերի և արտաքին պայթյունավտանգ տեղակայանքների.								
օդանշակային (ՕՃԿ) և գազաբաշխիչ (ԳԲԿ) կայանների՝								
1,2 ՄՊա-ից բարձր ճնշմամբ գազամուղների վրա	80	80	100	120	140	160	168	180
գազի 1,2 ՄՊա և պակաս ճնշմամբ գազամուղների վրա	ոչ պակաս հենարանի բարձրությունը, գումարած 3 մ							
նավթավերամղիչ կայանների (ՆՎԿ)	40	40	60	80	100	120	132	150
բ) փոխհատվելիս՝ ՕԳ-ի հենարանի հիմքից մինչև ցանկացած մաս՝								
խողովակաշարի կամ ճոպանուղու պաշտպանական սարքվածքների	հենարանի բարձրությունից ոչ պակաս							
նույնը՝ ուղեգծի հատվածներում, նեղվածք պայմաններում	3	4	4	4,5	5	6	6,3	6,5

**ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՄԵԿՈՒՍԻՉ ՊԱՏՎԱԾՔ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՂՈՐԴԱԼԱՐԵՐՈՎ ՄԻՆՉԵՎ
1000 Վ ԼԱՐՄԱՆ ՕԳ-Ի ՎՐԱ (ՕՄԳ)**

459. Աշխատանքները մինչև 1000 Վ ՕՄԳ-ի վրա կարող են կատարվել անջատելով կամ առանց անջատելու:

460. Մինչև 1000 Վ ՕՄԳ անջատմամբ աշխատանքները կատարվում են պայթյունահրդեհավտանգ գոտիներով (բենզինաբաշխիչ սյունակների, գազաբաշխիչ կայանների և այլնի) մոտակայքում անցնող գծերի վրա հաղորդալարերի քուղն ամբողջությամբ փոխելու, հաղորդալարերի (մեկ կամ մի քանի) անջատման կամ միացման դեպքում:

1) թույլատրվում է անջատել ոչ թե ամբողջ գիծը, այլ միայն այն հաղորդալարը, որի վրա նախատեսվում է աշխատել: Հաղորդալարը՝ տեղականշմամբ որոշելուց և դրանում լարման բացակայությունն ստուգելուց հետո պետք է անջատվի բոլոր կողմերից, որտեղից հնարավոր է դրան լարում տալ, և հողակցվի աշխատատեղում:

2) առանց լարումը հանելու մինչև 1000 Վ ՕՄԳ-ի վրա կարող են կատարվել հետևյալ աշխատանքները՝

ա. հենարանների, դրանց տարրերի և գծային արմատուրի փոխարինում,

բ" հաղորդալարերի վերաձգում,

գ. միացման, ճյուղավորման և ձգման սեղմակների փոխարինում,

դ" դեպի էլեկտրաընդունիչներ ճյուղավորումների միացում կամ անջատում,

ե" առանձին ֆազային հաղորդալարի հատվածի փոխարինում կամ մեկուսացման վերականգնում:

461. Չմեկուսացված գրոյական հաղորդալարով, ինքնակիր մեկուսացմամբ հաղորդալարերի վրա առանց լարումը հանելու աշխատանքներ կատարելիս՝ անհրաժեշտ է գրոյական հաղորդալարը և մետաղական արմատուրը մեկուսացնել մեկուսիչ մակադրակների ու թասակների միջոցով:

462. Մինչև 1000 Վ ՕՄԳ-ի վրա չեն թույլատրվում աշխատանքները՝ առանց լարումը հանելու, հետևյալ դեպքերում՝

1) բրիգադի սխալի հետևանքով ՕԳ-ի անջատում:

2) ՕԳ-ի վնասվածքի հայտնաբերում, որի վերացումն առանց աշխատանքների տեխնոլոգիան խախտելու հնարավոր չէ:

3) տեխնիկական և պաշտպանության միջոցների բացակայություն կամ անսարքություն:

4) վարար անձրևի, ձյուն տեղալու, թանձր մառախուղի, հենարանների վրա բարձրանալու անհրաժեշտության դեպքում՝ հենարանների սառցակալման, ինչպես նաև աշխատանքների անվտանգությանը սպառնացող այլ հանգամանքներում:

463. Առանց լարումը հանելու մինչև 1000 Վ ՕՄԳ-ի վրա աշխատանքները պետք է կատարվեն Կարգագրով: Կարելի է տալ մեկ Կարգագիր՝ մեկ կամ մի քանի ՕԳ-ների տարբեր տեղամասերի վրա աշխատելու համար, յուրաքանչյուր աշխատատեղում աշխատանքների թույլտվությունը հերթականությամբ ձևակերպելով:

464. Առանց լարումը հանելու աշխատանքներ իրագործող բրիգադը պետք է կազմված լինի երկու աշխատողից ոչ պակաս՝ էլեկտրաանվտանգության IV խումբ ունեցող աշխատանքներն իրագործողից և էլեկտրաանվտանգության III խումբ ունեցող բրիգադի անդամից:

465. Աշխատանքն իրագործողը և բրիգադի անդամը պետք է ունենան համապատասխան պատրաստվածություն և ստանան մինչև 1000 Վ ՕՄԳ-ի վրա առանց լարումը հանելու աշխատելու իրավունք, ինչպես նաև՝ վերնաշխատանքների իրավունք, ինչի մասին պետք է կատարվի համապատասխան գրառում էլեկտրատեղակայանքներում աշխատանքների նորմերի և կանոնների իմացության ստուգման վկայականի «Հատուկ աշխատանքներ կատարելու իրավունքի հավաստում» տողում:

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՋԵՐՄԱՅԻՆ ԱՎՏՈՄԱՏԻԿԱՅԻ
ՍԱՐՔՎԱԾՔՆԵՐԻ, ՋԵՐՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՄԱՍԻ ՎՐԱ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ**

466. Ջերմային ավտոմատիկայի, ջերմատեխնիկական չափումների, պաշտպանության և ինքնավար կառավարման համակարգերի տեխնիկական միջոցների էլեկտրական մասերի սպասարկումը պետք է կատարվեն սույն Կանոններով նախատեսված էլեկտրաանվտանգության միջոցառումների կիրառմամբ:

467. Ջերմային ավտոմատիկայի և չափումների (ՋԱՉ) սարքվածքների հավաքվածքներում, բաշխիչ վահաններում և ղեկավարման վահաններում կոմուտացիոն սարքերի հետ գործողություններ կատարելու իրավունք ունի հերթապահ անձնակազմը, կամ աշխատանք իրագործողը՝ Կարգագրի համաձայն, եթե այդ գործողությունների թույլտվությունը հաստատված են Կարգագրի «Հատուկ ցուցումներ» տողով կամ կարգադրությամբ, նշված Կարգագրի կամ կարգադրության գրանցման մատյանում:

468. Ջերմային ավտոմատիկայի և չափումների սարքվածքներում աշխատանքները կատարելուց առաջ տեխնոլոգիական սարքավորման տեղամասի նախապատրաստումը պետք է կատարի այն արտադրամասի օպերատիվ անձնակազմը, որի ղեկավարման տակ է գտնվում տեխնոլոգիական սարքավորումը:

469. Ջերմային ավտոմատիկայի և չափումների սարքվածքների նորոգման ժամանակ սխեմաների առանձին տեղամասերի և էլեմենտների փորձնական միացումը, փորձարկումը կամ լարման տակ ստուգումը և կարգաբերումը կատարվում է տեխնոլոգիական արտադրամասի հերթափոխի պետի (օպերատիվ անձնակազմի) թույլտվությամբ, պահպանելով հետևյալ պայմանները. աշխատանքները պետք է դադարեցվեն, փորձարկվող սարքավորումից բրիգադը հեռացվի, պաշտպանիչ հողակցումները, պլակատները և արգելափակոցները հեռացվեն:

470. Ջերմային ավտոմատիկայի և չափումների սարքվածքներում աշխատանքները կարելի է կատարել կարգադրությամբ, եթե սարքավորման աշխատանքի ռեժիմում կամ տեխնոլոգիական սխեմայում փոփոխություններ չեն պահանջվում:

471. ՋԱԶ-ի սարքվածքներում աշխատողները, որոնք ունեն էլեկտրաանվտանգության III խումբ, կարգադրությամբ միայնակ կարող են կատարել հետևյալ աշխատանքները՝

- 1) սարքերի գրանցող մասի կարգաբերում.
- 2) մանոմետրերի (բացառությամբ էլեկտրակոնտակտայինի), դիֆմանոմետրերի, ջերմազույգերի, ջերմադիմադրությունների փոխարինում.
- 3) բլոկային և խմբակային ղեկավարման վահաններում տեխնոլոգիական հսկողության սարքերի անսարքության վերացում.
- 4) ջերմային չափումների կետերի փոխանջատիչների ստուգում.
- 5) հաշվիչ տեխնիկայի տեխնիկական միջոցների համալիր նորոգում.
- 6) ինքնակարգավորիչների էլեկտրոնային բլոկերի կարգաբերման հարաչափերի ստուգում.
- 7) սեղմակային տուփերի քվացում.
- 8) գործող մեխանիզմների, վահանների, տվիչների, ստենդների գրառումների կատարում.
- 9) վահանների և պանելների փչում սեղմած օդով:

472. ԶԱԶ-ի սարքվածքներում աշխատանքները, որոնք գտնվում են տարբեր արտադրամասերում, տեղամասերում, պետք է կատարվեն հերթափոխի պետի (օպերատիվ անձնակազմի) թույլտվությամբ, որտեղ անհրաժեշտ է աշխատել:

473. Փորձարկման ժամանակ աշխատանքները, որոնք կապված են բազմակի միացման և անջատման հետ, թույլատրվում են առանց ձևակերպման Կարգագրում, բայց յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է կատարել տեխնիկական միջոցառումներ:

474. Կարգագրով կամ կարգադրությամբ աշխատանքներ թույլատրողը ԶԱԶ-ի արտադրամասում հանդիսասանում է օպերատիվ անձնակազմը, որն ունի էլեկտրաանվտանգության III խումբ: Աշխատանք իրագործողն, որն ունի IV խումբ, թույլատրվում է համատեղել թույլատրողի պարտականությունները, ԶԱԶ-ի սարքվածքների էլեկտրական մասում, որոշել անվտանգության միջոցառումները աշխատանքի տեղի պատրաստման ժամանակ և գրանցել Կարգագրի «Հատուկ ցուցումներ» տողում:

475. Փականների հավաքվածքների, փականների շարժաբեռների և կարգավորիչների վրա աշխատանքների կատարման ժամանակ պետք է պահպանվեն սույն Կանոնների Գլուխ 10 լրիվ և Գլուխ 18-ի «էլեկտրական շարժիչներ» բաժնի պահանջները:

ԳԼՈՒԽ 19

ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՉԱՓՈՒՄՆԵՐ ԷԼԵԿՏՐԱՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐ՝ ԿՈՂՄՆԱԿԻ ԱՂԲՅՈՒՐԻՑ ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԼԱՐՈՒՄ ՏԱԼՈՎ

476. Փորձարկումների կատարումը կարող է թույլատրվել այն անձնակազմին, որն անցել է հատուկ նախապատրաստում և սույն բաժնում ներառված պահանջների ու գիտելիքների ստուգում՝ հանձնաժողովի կողմից, որի կազմում ընդգրկվում են սարքավորումների փորձարկման էլեկտրաանվտանգության V խումբ ունեցող մասնագետներ՝ 1000 Վ-ից բարձր լարման էլեկտրատեղակայանքների համար, և էլեկտրաանվտանգության IV խումբ՝ 1000 Վ լարման էլեկտրատեղակայանքների համար:

477. Փորձարկումներ իրականացնելու իրավունքը հաստատվում է էլեկտրատեղակայանքներում աշխատանքի նորմերի և կանոնների իմացության ստուգման վկայականի «Հատուկ աշխատանքներ կատարելու իրավունքի հավաստում» տողում գրառմամբ:

478. Փորձարկման շարժական կայանքների (էլեկտրալաբորատորիաների) աշխատանքների թույլտվությունը տալիս է տեխնիկական վերահսկողություն իրականացնող ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը:

479. Էլեկտրասարքավորման փորձարկումներ կատարող աշխատողները, ինչպես նաև ստացիոնար փորձարկման կայանքների միջոցով միանձնյա փորձարկումներ կատարող աշխատողները պետք է անցնեն մեկամսյա աշխատանքային պրակտիկա համապատասխան մասնագետի հսկողությամբ:

480. Շարժական փորձարկման կայանքի օգտագործմամբ էլեկտրասարքավորման փորձարկումները, այդ թվում՝ էլեկտրատեղակայանքներից դուրս, պետք է կատարվեն Կարգագրով:

481. Գործող էլեկտրատեղակայանքներում էլեկտրասարքավորման փորձարկումների թույլտվությունն իրականացնում է օպերատիվ անձնակազմը, էլեկտրատեղակայանքներից դուրս՝ աշխատանքների պատասխանատու ղեկավարը, իսկ եթե այդպիսին նշանակված չէ, ապա՝ աշխատանքներն իրագործողը:

482. Սարքավորման տեղակայման կամ նորոգման աշխատանքների ընթացքում փորձարկումների կատարման մասին պետք է նախօրոք նշվի Կարգագրի «Հանձնարարվում է» տողում:

483. Էլեկտրասարքավորման փորձարկումներն անցկացնում է բրիգադը, որում աշխատանքներ իրագործողը պետք է ունենա էլեկտրաանվտանգության IV խումբ, բրիգադի անդամը՝ էլեկտրաանվտանգության III խումբ, իսկ բրիգադի անդամը, որին հանձնարարվում է պահպանությունը՝ էլեկտրաանվտանգության II խումբ:

484. Փորձարկումներն անցկացնող բրիգադի կազմում կարելի է ընդգրկել նորոգող անձնակազմից փորձարկման հատուկ աշխատանքների կատարման իրավունք չունեցող աշխատողներ՝ նախապատրաստական աշխատանքներ կատարելու և սարքավորումները հսկելու համար:

485. Մեկուսիչ նյութերի և արտադրանքների (պաշտպանության միջոցներ, զանազան մեկուսիչ մասեր, յուղ և այլն) զանգվածային փորձարկումները ստացիոնար փորձարկիչ կայանքների օգտագործմամբ, որոնց հոսանատար մասերը փակված են հոծ կամ ցանցային ցանկապատերով, իսկ դռներն ունեն ուղեկապում, կարող է կատարել էլեկտրաանվտանգության III խումբ ունեցող աշխատողը՝ միանձնյա, ընթացիկ շահագործման կարգով՝ օգտագործելով փորձարկման տիպային մեթոդիկաները:

486. Փորձարկիչ կայանքի օպերատորի աշխատատեղը պետք է առանձնացված լինի կայանքի այն մասից, որն ունի 1000 Վ-ից բարձր լարում: Կայանքի 1000 Վ-ից բարձր լարում ունեցող մաս տանող դուռը պետք է ուղեկապված լինի այնպես, որպեսզի ապահովի փորձարկման սխեմայից լարման հանումը դուռը բացվելու դեպքում և անհնարին դարձնի լարման մատուցումը բաց դռների դեպքում: Օպերատորի աշխատատեղում պետք է նախատեսվի մինչև 1000 Վ և բարձր լարման միացումն ազդարարող առանձին լուսային ազդանշանիչներ և փորձարկման լարման մատուցումն ազդարարող ձայնային ազդանշանիչ: Փորձարկման լարման մատուցման ժամանակ օպերատորը պետք է կանգնի մեկուսիչ գորգի վրա:

487. Փորձարկիչ շարժական կայանքները պետք է սարքավորված լինեն արտաքին լուսային և ձայնային ազդանշանիչներով, որոնք պետք է ավտոմատ միանան՝ փորձարկիչ կայանքի արտանցիչի վրա լարման առկայության դեպքում:

488. Փորձարկումների և դրանց նախապատրաստական աշխատանքների կատարման համար տրված Կարգագրերով թույլտվությունը պետք է կատարվի միայն փորձարկման ենթակա սարքավորման վրա առանձին Կարգագրերով աշխատող այլ բրիգադների՝ աշխատատեղերից հեռացնելուց և նրանց կողմից Կարգագրերը թույլատրողին հանձնելուց հետո: Տեղային հերթապահ անձնակազմ չունեցող էլեկտրատեղակայանքներում աշխատանքներն իրագործողին թույլատրվում է բրիգադին հեռացնելուց հետո Կարգագիրը թողնել իր մոտ՝ ձևակերպելով ըմբիջում աշխատանքում:

489. Փորձարկվող սարքավորումը, փորձարկիչ կայանքը և դրանք իրար միացնող հաղորդալարերը պետք է ցանկապատվեն վահաններով, ճոպաններով և այլն, «Փորձարկում», «Կայանքի համար վտանգավոր է» նախազգուշացնող պլակատներով, երեսով դեպի դուրս: Ցանկապատումը պետք է տեղադրի փորձարկումն անցկացնող անձնակազմը:

490. Անհրաժեշտության դեպքում պետք է նշանակել պահակ՝ բրիգադի էլեկտրաանվտանգության II խումբ ունեցող անդամներից՝ փորձարկիչ կայանքին, միացնող հաղորդալարերին և փորձարկվող սարքավորմանը կողմնակի անձանց մոտենալը կանխելու համար: Պահակություն իրականացնող բրիգադի անդամները պետք է գտնվեն ցանկապատից դուրս և փորձարկվող սարքավորումը համարեն որպես լարման տակ գտնվող: Այդ աշխատողներն իրենց պահակետը կարող են թողնել միայն աշխատանքներն իրագործողի թույլտվությամբ:

491. Մալուխային գծի փորձարկումների ժամանակ, եթե դրա հակադիր ծայրը տեղավորված է փակված խցիկում, ԼԲՍ հատվածամասում կամ սրահում, ապա դրանց դռների կամ ցանկապատի վրա պետք է կախված լինի «Փորձարկում: Կյանքի համար վտանգավոր է» նախազգուշացնող պլակատ: Եթե դռները կամ արգելափակոցները փակված չեն, կամ փորձարկման է ենթարկվում ուղեգծում տարաբաժանված ջղերով նորոգվող մալուխային գիծը, բացի դռների, ցանկապատի և մալուխի տարաբաժանված ջղերի մոտ պլակատներ կախելուց, պետք է նաև դնել պահակություն նշված տեղերում՝ բրիգադի էլեկտրաանվտանգության II խումբ ունեցող անդամներից կամ հերթապահ անձնակազմից:

492. Փորձարկիչ կայանքը և փորձարկվող սարքավորումը տարբեր սրահներում կամ ԲՍ-ի տարբեր տեղամասերում տեղաբաշխվելու դեպքում թույլատրվում է բրիգադի էլեկտրաանվտանգության III խումբ ունեցող այն անդամներին, ովքեր հսկում են մեկուսացման վիճակը, գտնվել աշխատանքներն իրագործողից առանձին: Բրիգադի այդ անդամները պետք է գտնվեն ցանկապատումից դուրս և մինչև փորձարկումներն սկսելն ստանան անհրաժեշտ հրահանգավորում աշխատանքներն իրագործողից:

493. Աշխատատեղի նախապատրաստման ժամանակ տեղադրված և փորձարկումների անցկացմանը խոչընդոտող հողակցումները հանել և կրկին տեղադրել թույլատրվում է միայն փորձարկումները ղեկավարողի, աշխատանքներն իրագործողի ցուցումով՝ փորձարկող կայանքի բարձր լարման արտանցիչը հողակցելուց հետո:

494. Հողակցումների ժամանակավոր հանման թույլտվությունը պետք է նշվի Կարգագրի «Առանձին ցուցումներ» տողում:

495. Փորձարկիչ սխեման հավաքելու ժամանակ նախ և առաջ պետք է իրականացվի փորձարկող կայանքի պաշտպանիչ և աշխատանքային հողակցում.

1) շարժական փորձարկիչ կայանքի իրանը պետք է հողակցվի առանձին հողակցող հաղորդիչով՝ 10 մմ²-ից ոչ պակաս հատույթով ճկուն պղնձե հաղորդալարից: Փորձարկումից առաջ պետք է ստուգել իրանի հողակցման հուսալիությունը.

2) փորձարկիչ կայանքը մինչև 1000 Վ լարման ցանցին միացնելուց առաջ դրա բարձր լարման արտանցիչը պետք է հողակցվի.

3) փորձարկման սխեմաներում հողակցման համար կիրառվող պղնձե հաղորդալարի հատույթը պետք է լինի 4 մմ²-ից ոչ պակաս:

496. Փորձարկիչ կայանքի միացումը մինչև 1000 Վ լարման ցանցին՝ պետք է կատարվի կայանքի կառավարման տեղում գտնվող շղթայի տեսանելի խզումով փոխարկման

ապարատի կամ խցակի խրոցակի միջոցով: Փոխարկման ապարատը պետք է սարքավորված լինի ինքնաբերաբար միացումը կասեցնող սարքվածքով, կամ ապարատի շարժական և անշարժ հպակների միջև պետք է տեղադրվի մեկուսացնող մակադրակ: Փորձարկիչ էլեկտրատեղակայանքը մինչև 1000 Վ լարման ցանցից սնելու համար օգտագործվող հաղորդալարը կամ մալուխը պետք է պաշտպանված լինեն այդ ցանցում տեղադրված ապահովիչներով կամ ավտոմատ անջատիչներով: Շարժական փորձարկիչ կայանքը ցանցին պետք է միացնեն տվյալ ցանցը շահագործող կազմակերպության ներկայացուցիչները:

497. Փորձարկվող սարքավորումը փորձարկիչ կայանքին միացնող հաղորդալարը պետք է նախ միացվի փորձարկիչ կայանքի բարձր լարման հողակցված արտանցիչին: Այդ հաղորդալարը պետք է ամրացվի այնպես, որպեսզի կանխվի դրա մոտեցումը լարման տակ գտնվող հոսանատար մասերին՝ Աղյուսակ N 1-ում նշվածից պակաս հեռավորությունից:

498. Փորձարկվող սարքավորման ֆազին, բևեռին կամ մալուխի ջղին միացնող հաղորդալարը միացնելը կամ անջատելը թույլատրվում է փորձարկումների ղեկավարի ցուցումով և միայն դրանք հողակցելուց հետո, որը պետք է կատարվի միացնելով հողակցող դանակները կամ տեղակայելով շարժական հողակցումներ:

499. Փորձարկման լարման յուրաքանչյուր միացումից առաջ՝ աշխատանքներն իրագործողը պետք է՝

1) ստուգի սխեմայի հավաքման ճշտությունը և աշխատանքային ու պաշտպանիչ հողակցումների հուսալիությունը.

2) ստուգի՝ գտնվում են արդյոք, իրենց ցուցված տեղերում բրիգադի բոլոր անդամներն ու պահակության համար նշանակված աշխատողները, կողմնակի մարդիկ հեռացված են և կարելի է արդյոք, փորձարկման լարում տալ սարքավորմանը.

3) նախազգուշացնի բրիգադին լարում տալու մասին՝ «Լարումը միացնում եմ» բառերով, և համոզվելով, որ բրիգադի բոլոր անդամները լսել են նախազգուշացումը, փորձարկիչ կայանքի արտանցիչից հանի հողակցումը և մինչև 1000 Վ լարում մատուցի կայանքին:

500. Կայանքի արտանցիչից հողակցումը հանելու պահից ամբողջ փորձարկման կայանքը, ներառյալ փորձարկվող սարքավորումը և միացնող հաղորդալարերը, պետք է համարվեն լարման տակ գտնվող, և փորձարկման սխեմայում ու փորձարկվող սարքավորման վրա որևէ վերամիացում կատարելը չի թույլատրվում:

501. Չի կարելի փորձարկիչ կայանքի արտանցիչին լարում մատուցելու պահից գտնվել փորձարկվող սարքավորման վրա, ինչպես նաև՝ գետնին կանգնած հպվել փորձարկիչ կայանքի իրանին, մտնել շարժական լաբորատորիա կամ այնտեղից դուրս գալ, հպվել շարժական լաբորատորիայի թափքին:

502. Մալուխների փորձարկումը կամ հոսանքով «վառելը» պետք է կատարվի հողակցման սարքվածքներ ունեցող կետերի կողմից:

503. Փորձարկումների ավարտից հետո աշխատանքներն իրագործողը պարտավոր է փորձարկիչ կայանքի լարումն իջեցնել մինչև զրո, այն անջատել մինչև 1000 Վ լարման ցանցից, հողակցել կայանքի արտանցիչը և դրա մասին հայտնել բրիգադին՝ «Լարումը հանված է» բառերով: Միայն դրանից հետո կարելի է հաղորդալարերը վերամիացնել կամ, փորձարկման լրիվ ավարտի դեպքում, դրանք անջատել փորձարկիչ կայանքից և հանել ցանկապատումը:

504. Չգալի ունակությամբ սարքավորման փորձարկումից հետո (գեներատորներ, մալուխներ) դրանցից պետք է հանվի մնացորդային լիցքը՝ հատուկ պարպիչ ձողով:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԷԼԵԿՏՐԱՉԱՓԻՉ ԱՔՑԱՆՆԵՐՈՎ ԵՎ ՉԱՓԻՉ ՁՈՂԵՐՈՎ

505. 1000 Վ-ից բարձր լարման էլեկտրատեղակայանքներում էլեկտրաչափիչ արքաններով աշխատանքները պետք է կատարեն երկու աշխատող. մեկը՝ էլեկտրաանվտանգության IV խումբ ունեցող (օպերատիվ անձնակազմից), մյուսը՝ էլեկտրաանվտանգության III խումբ ունեցող (կարող է լինել նորոգող անձնակազմից): Չափման ժամանակ անհրաժեշտ է աշխատել դիէլեկտրիկ ձեռնոցներով: Չի կարելի կռանալ դեպի սարքը՝ ցուցմունքների հաշվառքի համար:

506. Մինչև 1000 Վ լարման էլեկտրատեղակայանքներում առանց դիէլեկտրիկ ձեռնոցներից օգտվելու՝ էլեկտրաչափիչ արքաններով կարող է աշխատել էլեկտրաանվտանգության III խումբ ունեցող մեկ անձ:

507. Չի կարելի աշխատել էլեկտրաչափիչ արքաններով՝ գտնվելով ՕԳ հենասյան վրա:

508. Աշխատանքը չափիչ ձողերով պետք է կատարի առնվազն երկու աշխատող. մեկը՝ էլեկտրաանվտանգության IV խումբ ունեցող, մյուսը՝ էլեկտրաանվտանգության III խումբ ունեցող: Պետք է բարձրանալ կառուցվածքի կամ փոխագուցավոր վերնակի վրա՝ առանց ձողի, ինչպես նաև՝ իջնել դրանցից: Աշխատանքը պետք է կատարվի Կարգագրով, նույնիսկ

եզակի չափումներ կատարելիս՝ հենարանային կառուցվածքների կամ փոխազուցավոր վերնակների կիրառմամբ:

509. Չափիչ ձողով աշխատանքները կատարվում են դիէլեկտրիկ ձեռնոցներով:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԳԾԵՐԻ ԻՄՊՈՒԼՍԱՅԻՆ ՉԱՓԻՉՈՎ

510. Իմպուլսային չափիչը կարելի է միացնել միայն անջատված և հողակցված ՕԳ-ին: Միացումն անհրաժեշտ է կատարել հետևյալ կարգով՝

1) միացնել նախ՝ միացնող հաղորդալարն իմպուլսային չափիչի հողակցված հաղորդագծին (պաշտպանության սարքվածքից եկող), այնուհետև՝ ՕԳ հաղորդալարին՝ մեկուսիչ ձողի միջոցով: Ձողերը, որոնցով միացնող հաղորդալարը միանում է ՕԳ-ին, չափման ժամանակահատվածում պետք է մնան գծի հաղորդալարի վրա: Ձողերով աշխատելիս պետք է օգտագործել դիէլեկտրիկ ձեռնոցներ:

2) հողակցումը հանել ՕԳ-ից՝ այն ծայրում, որտեղ միացված է իմպուլսային չափիչը: Անհրաժեշտության դեպքում՝ հանել հողակցումները նաև ստուգվող ՕԳ-ի մյուս ծայրերում: ՕԳ հողակցումները հանելուց հետո հաղորդալարը, պաշտպանության սարքվածքը և դրան միացված հաղորդագիծը պետք է համարել լարման տակ գտնվող, և չի թույլատրվում հավելի դրանց:

3) հանել հողակցումն իմպուլսային չափիչի հաղորդագծից:

511. Մեկուսիչ ձողի միջոցով իմպուլսային չափիչի հաղորդագծի միացումը ՕԳ-ին պետք է կատարի էլեկտրաանվտանգության IV խումբ ունեցող օպերատիվ անձնակազմը կամ լաբորատորիայի անձնակազմը՝ օպերատիվ անձնակազմի հսկողությամբ:

512. Ստացիոնար փոխարկման ապարատի միջոցով իմպուլսային չափիչի միացումն արդեն ՕԳ-ին միացված ստացիոնար հաղորդագծին և չափումները կարող է կատարել օպերատիվ անձնակազմը կամ էլեկտրաանվտանգության IV խումբ ունեցող լաբորատորիայի անձնակազմը՝ օպերատիվ անձնակազմի հսկողությամբ:

513. Չափումների ավարտից հետո օդային գիծը պետք է նորից հողակցվի և միայն դրանից հետո մեկուսիչ ձողերը միացնող հաղորդալարերի հետ նախ հանվեն ՕԳ-ից, այնուհետև՝ իմպուլսային չափիչի հաղորդագծից:

514. Բարձր լարման իմպուլսների գեներատոր չունեցող իմպուլսային չափիչով չափումները կարելի է կատարել առանց օդային գծում աշխատող բրիգադներին հեռացնելու:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՄԵԳԱՕՇՄԱԶԱՓՈՎ

515. Շահագործման ընթացքում մեգաօհմաչափով չափումներ թույլատրվում է կատարել էլեկտրատեխնիկական անձնակազմի ուսուցված աշխատողներին: 1000 Վ-ից բարձր լարման էլեկտրատեղակայանքներում չափումները կատարվում են Կարգագրով, 1000 Վ-ից ցածր լարման էլեկտրատեղակայանքներում՝ կարգադրությամբ.

1) այն դեպքերում, երբ մեգաօհմաչափով չափումները կազմում են աշխատանքների բաղկացուցիչ մասը, չի պահանջվում դրանք նշել Կարգագրում կամ կարգադրությունում:

2) մեկուսացման դիմադրությունը մեգաօհմաչափով կարող է չափել էլեկտրաանվտանգության III խումբ ունեցող աշխատողը:

516. Անջատված հոսանատար մասերի վրա մեկուսացման դիմադրության չափումը մեգաօհմաչափով պետք է կատարվի հողակցմամբ՝ լիցքը նախապես հանելուց հետո: Հոսանատար մասերից հողակցումը պետք է հանել միայն մեգաօհմաչափը միացնելուց հետո:

517. Հոսանատար մասերի մեկուսացման դիմադրությունը մեգաօհմաչափով չափելիս՝ միացման հաղորդալարերը պետք է դրանց միացվեն մեկուսիչ բռնիչների (ծողերի) միջոցով: 1000 Վ-ից բարձր լարման էլեկտրատեղակայանքներում, բացի դրանից, անհրաժեշտ է օգտվել դիէլեկտրիկ ձեռնոցներից:

518. Մեգաօհմաչափով աշխատելիս՝ դրան միացված հոսանատար մասերին հպվել չի թույլատրվում: Աշխատանքն ավարտելուց հետո անհրաժեշտ է հոսանատար մասերից հանել մնացորդային լիցքը՝ դրանց կարճատև հողակցման միջոցով:

ԳԼՈՒԽ 20

ՌԵԼԵԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԷԼԵԿՏՐԱԱՎՏՈՄԱՏԻԿԱՅԻ ՍԱՐՔՎԱԾՔՆԵՐ, ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՀԱՇՎԱՌՔԻ ՍԱՐՔԵՐ, ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՂԹԱՆԵՐ

519. Չափիչ սարքերի, ռելեական պաշտպանության և էլեկտրաավտոմատիկայի սարքավածքների շղթաներում կատարվող աշխատանքների անվտանգության ապահովման համար հոսանքի և լարման չափիչ տրանսֆորմատորների երկրորդային շղթաները (փաթույթները) պետք է ունենան մշտական հողակցում: Ռելեական պաշտպանության բարդ սխեմաներում չափիչ տրանսֆորմատորների էլեկտրականապես միացված երկրորդային փաթույթների խմբի համար թույլատրվում է հողակցումը կատարել միայն մեկ կետում:

520. Չափիչ սարքերի, ռելեական պաշտպանության սարքվածքների, էլեկտրաավտոմատիկայի հոսանքի շղթայում խզման անհրաժեշտության դեպքում, հոսանքի տրանսֆորմատորի երկրորդային փաթույթի շղթան նախապես կարճ միակցվում է հատուկ դրա համար նախատեսված սեղմակներում կամ փորձարկման բլոկերի միջոցով: Երկրորդային շղթայում հոսանքի տրանսֆորմատորի և տեղադրված կարճ միակցման միջև արգելվում է կատարել աշխատանքներ, որոնք կարող են հանգեցնել շղթայի խզման:

521. Լարման տրանսֆորմատորի երկրորդային սարքվածքներում և շղթաներում կողմնակի աղբյուրից լարման մատուցմամբ աշխատանքներ կատարելիս պետք է ձեռնարկվեն հետադարձ տրանսֆորմացիայի հնարավորությունը բացառող միջոցներ:

522. Ռելեական պաշտպանության, էլեկտրաավտոմատիկայի և այլնի սպասարկող անձնակազմի էլեկտրաանվտանգության IV խումբ ունեցող աշխատանքներն իրագործողին թույլատրվում է համատեղել թույլատրողի պարտականությունները: Այդ դեպքում նա է որոշում աշխատատեղի նախապատրաստման համար անհրաժեշտ անվտանգության միջոցառումները: Նման համատեղումը թույլատրվում է, եթե աշխատատեղի նախապատրաստման համար չեն պահանջվում անջատումների, հողակցումների կատարում, ժամանակավոր ցանկապատերի տեղադրում էլեկտրատեղակայանքի 1000 Վ-ից բարձր լարման մասում:

523. Էլեկտրաանվտանգության IV խումբ ունեցող աշխատանքներն իրագործողին, ինչպես նաև բրիգադի էլեկտրաանվտանգության III խումբ ունեցող անդամներին թույլատրվում է աշխատել երկրորդական շղթաներում և ռելեական պաշտպանության, էլեկտրաավտոմատիկայի և այլնի սարքվածքներում բրիգադի մյուս անդամներից առանձին, եթե այդ շղթաները և սարքվածքները գտնվում են ԲՍ սրահներում, որտեղ 1000 Վ-ից բարձր լարման հոսանատար մասերը բացակայում են, ամբողջությամբ ցանկապատված են կամ գտնվում են ցանկապատում չպահանջող բարձրության վրա:

524. Էլեկտրամատակարար կազմակերպությունների անձնակազմն սպառողի էլեկտրատեղակայանքներում տեղակայված սպառողի հաշվառքի սարքերի հետ աշխատանքները կատարում է գործուղված անձնակազմի իրավունքներով: Այդ աշխատանքները կատարում է երկու աշխատողից ոչ պակաս կազմով բրիգադը:

525. ԲՍ սրահներում էլեկտրահաշվիչների ցուցմունքների գրանցումը թույլատրվում է էներգամատակարար կազմակերպության էլեկտրաանվտանգության III խումբ ունեցող աշխատողին՝ սպառողի ներկայացուցչի ներկայությամբ:

526. Սպառողների մինչև 1000 Վ լարման էլեկտրատեղակայանքներում, որոնք ունեն հատեղությամբ կամ պայմանագրով աշխատող սպասարկող անձնակազմ (մանկապարտեզներ, խանութներ, պոլիկլինիկաներ, գրադարաններ և այլն), աշխատատեղի նախապատրաստում և աշխատանքների թույլտվությունը կատարվում է ըստ ընթացիկ շահագործման կարգով հաստատված անվանացանկի, որը կարող է կատարել սպասարկող անձնակազմի էլեկտրաանվտանգության III կամ IV խումբ ունեցող աշխատող:

527. Էլեկտրաէներգիայի հաշվառքի սարքերի վրա աշխատանքները պետք է կատարվեն լարումը հանելով: Չափիչ տրանսֆորմատորներին միացված էլեկտրահաշվիչների շղթաներում, փորձարկման տուփերի առկայության դեպքում, լարումը հաշվիչի սխեմայից պետք է հանել այդ տուփերից:

528. Միաֆազ էլեկտրահաշվիչների հետ աշխատանքները լարումը հանելով կարող է կատարել էներգամատակարար կազմակերպության էլեկտրաանվտանգության III խումբ ունեցող օպերատիվ աշխատողը՝ միայնակ, ըստ ընթացիկ շահագործման կարգով կատարվող աշխատանքների հաստատված անվանացանկի: Մինչև էլեկտրահաշվիչը տեղակայված փոխարկման ապարատի բացակայության դեպքում՝ փայտյա տներում, բարձր վտանգավորություն չներկայացնող սրահներում, այդ աշխատանքները թույլատրվում է կատարել առանց լարումը հանելու, բայց՝ հանելով բեռնվածքը: Եթե հաշվիչները տեղակայված են իրանի հողակցում և (կամ) գրոյակցում չունեցող մետաղական արկղերում, և արկղում գտնվող էլեկտրական սարքերն ու էլեկտրահաղորդալարերը չունեն կրկնակի մեկուսացում, ապա նման հաշվիչների շահագործման և սպասարկման աշխատանքները պետք է կատարվեն երկու անձից բաղկացած բրիգադով՝ էլեկտրաանվտանգության III և II խումբ ունեցող աշխատողների կողմից:

529. Էներգամատակարար կազմակերպություններում հաշվառքի սարքի հետ կատարվող աշխատանքների համար պետք է կազմվեն հրահանգներ կամ տեխնոլոգիական քարտեր՝ աշխատանքի յուրաքանչյուր տեսակի համար:

ԳԼՈՒԽ 21

ՓՈՒՍԱԴՐՈՎԻ (ՏԱՆՈՎԻ) ԷԼԵԿՏՐԱԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ԼՈՒՍԱՏՈՒՆԵՐ, ՁԵՌՔԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ, ԲԱԺԱՆԻՉ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՏՈՐՆԵՐ

530. Փոխադրովի էլեկտրագործիքները և լուսատուները, ձեռքի էլեկտրական մեքենաները, բաժանիչ տրանսֆորմատորները և այլ օժանդակ սարքավորումն

էլեկտրաանվտանգության մասով պետք է բավարարեն պետական ստանդարտների և տեխնիկական պայմանների պահանջները և աշխատանքներում օգտագործվեն սույն Կանոնների պահանջների պահպանմամբ:

531. Բարձր վտանգավորությամբ սրահներում I դասի տանովի էլեկտրագործիքներով և ձեռքի էլեկտրական մեքենաներով աշխատանքներ կատարել կարելի է թույլատրել էլեկտրաանվտանգության II կարգ ունեցող անձնակազմին՝ պահպանելով Աղյուսակ N 5-ում նշված պահանջները:

532. Օժանդակ սարքավորումների (տրանսֆորմատորներ, հաճախականության կերպափոխիչներ, պաշտպանության անջատիչ սարքվածքներ և այլն) միացումն էլեկտրական ցանցին և անջատումը ցանցից պետք է կատարի այդ էլեկտրական ցանցը շահագործող էլեկտրաանվտանգության III խումբ ունեցող էլեկտրատեխնիկական անձնակազմը:

533. Փոխադրովի էլեկտրագործիքի և ձեռքի էլեկտրական մեքենաների դասը պետք է համապատասխանի սրահի կարգին և աշխատանքների կատարման պայմաններին՝ առանձին դեպքերում կիրառելով էլեկտրապաշտպանության միջոցներ:

534. Բարձր վտանգավորության և առանձնապես վտանգավոր սրահներում փոխադրովի էլեկտրական լուսատուները պետք է ունենան 50 Վ-ից ոչ բարձր լարում: Առանձնապես անբարենպաստ պայմաններում (անջատիչների հորերում, ԼԲՍ հատվածամասերում, կաթսաների թմբուկներում, մետաղական ռեզերվուարներում և այլն) աշխատանքներ կատարելիս՝ փոխադրովի լուսատուները պետք է ունենան 12 Վ-ից ոչ բարձր լարում:

535. Ձեռքի էլեկտրական մեքենաներով, փոխադրովի էլեկտրագործիքներով և լուսատուներով աշխատանքներն սկսելուց առաջ պետք է՝

- 1) անձնագրով որոշել մեքենայի կամ գործիքի դասը.
- 2) ստուգել մասերի լրակազմությունը և դրանց ամրացման հուսալիությունը.
- 3) արտաքին զննումով համոզվել մալուխի (լարի), դրա պաշտպանության փողակի և խցակի խրոցակի սարքինությունը, իրանի մեկուսացնող մասերի, խոզանակակալների, բռնակների և կափարիչների պաշտպանության պատյանի ամբողջականությունը.
- 4) ստուգել անջատիչի աշխատանքի հստակությունը.
- 5) կատարել (անհրաժեշտության դեպքում) անջատման պաշտպանության սարքվածքի (ԱՊՍ) թեստավորում.
- 6) ստուգել էլեկտրագործիքի կամ մեքենայի աշխատանքը պարապ ընթացքում.

7) ստուգել I դասի մեքենայի հողակցման շղթայի սարքինությունը (մեքենայի իրան-խցակի խրոցակի հողակցման հպակ):

536. Չի թույլատրվում աշխատանքներում օգտագործել թերություններ ունեցող ձեռքի էլեկտրական մեքենաներ, փոխադրովի էլեկտրագործիքներ ու լուսատուներ և դրանց վերաբերող օժանդակ սարքավորումներ:

537. Էլեկտրագործիքի, ձեռքի էլեկտրական մեքենայի, փոխադրովի լուսատուի օգտագործման դեպքում դրանց հաղորդալարերը և մալուխները պետք է հնարավորինս կախված լինեն՝

1) չի թույլատրվում անմիջական հպվել հաղորդալարերի և մալուխների տաք, խոնավ և յուղոտ մակերեսներին ու առարկաներին.

2) էլեկտրագործիքի մալուխը պետք է պաշտպանված լինի պատահական մեխանիկական վնասվածքներից և տաք, թաց, յուղոտ մակերևույթներին հպվելուց.

3) չի թույլատրվում մալուխը ձգել, ոլորել և գերածռել, դրա վրա դնել ծանրություն, ինչպես նաև՝ թույլ տալ դրա փոխհատումը ճոպանների, մալուխների, գազային եռակցման ճկափողերի հետ.

4) ձեռքի էլեկտրական մեքենաներում, տանովի էլեկտրագործիքներում և լուսատուներում որևէ անսարքություն հայտնաբերելիս՝ աշխատանքը պետք է անմիջապես դադարեցնել:

538. Տրամադրվող և աշխատանքներում օգտագործվող ձեռքի էլեկտրական մեքենաները, տանովի էլեկտրագործիքները և լուսատուները, օժանդակ սարքավորումները պետք է անցնեն ստուգումներ և փորձարկումներ՝ սարքավորման տեխնիկական անձնագրերով սահմանված ժամկետներում և ծավալով:

539. Ձեռքի էլեկտրական մեքենաները, փոխադրովի էլեկտրագործիքները և լուսատուները, դրանց օժանդակ սարքավորումները սարքին վիճակում պահելու, պարբերական ստուգումներ և փորձարկումներ անցկացնելու համար՝ կազմակերպության ղեկավարի կարգադրությամբ պետք է նշանակվի էլեկտրաանվտանգության III խումբ ունեցող պատասխանատու աշխատող:

540. Լարման կորստի կամ աշխատանքում ընդմիջման դեպքում էլեկտրագործիքը և ձեռքի էլեկտրական մեքենան պետք է անջատվեն էլեկտրական ցանցից:

541. Էլեկտրագործիք և ձեռքի էլեկտրական մեքենա կիրառող աշխատողներին չի թույլատրվում՝

1) էլեկտրագործիքը և ձեռքի էլեկտրամեքենան, թեկուզ կարճ ժամանակով, փոխանցել այլ աշխատողների.

2) քանդել էլեկտրագործիքը և ձեռքի էլեկտրամեքենան, կատարել որևէ նորոգում.

3) բռնել էլեկտրագործիքի, ձեռքի էլեկտրամեքենայի հաղորդալարից, հպվել պտտվող մասերին կամ հեռացնել տաշեղները, խարտուքը՝ մինչև գործիքի կամ մեքենայի լրիվ կանգնելը.

4) տեղադրել աշխատող մասը գործիքի, մեքենայի կապիչի մեջ կամ հանել այն կապիչից, ինչպես նաև՝ կարգավորել գործիքն առանց խցակով ցանցից անջատելու.

5) աշխատել հենովի սանդուղքներից՝ բարձրության վրա աշխատանքներ կատարելու համար պետք է սարքվեն ամուր փայտամածներ կամ լաստակներ.

6) կաթասների թմբուկների, մետաղական պահուստարանների (ռեզերվուարների) և այլ տարողությունների մեջ ներս տանել տանովի տրանսֆորմատորները և հաճախականության կերպափոխիչները:

542. Բաժանիչ տրանսֆորմատորներ օգտագործելիս պետք է ղեկավարվել հետևյալով՝

1) բաժանիչ տրանսֆորմատորից թույլատրվում է միայն մեկ էլեկտրաընդունիչի սնում.

2) բաժանիչ տրանսֆորմատորի երկրորդական փաթույթի հողակցում չի թույլատրվում.

3) տրանսֆորմատորի իրանը՝ կախված սնող էլեկտրացանցի չեզոքի ռեժիմից, պետք է հողակցվի կամ գրոյացվի: Այդ դեպքում չի պահանջվում բաժանիչ տրանսֆորմատորին միացած էլեկտրաընդունիչի իրանի հողակցում:

ԳԼՈՒԽ 22

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ՝ ԷԼԵԿՏՐԱՏԵՂԱԿԱՅԱՆՔՆԵՐՈՒՄ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ, ԲԵՌՆԱՄԲԱՐՁ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ, ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԵՎ ՍԱՆԴՈՒՂՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ

543. Գործող էլեկտրատեղակայանքներում բեռնամբարձ մեքենաների և մեխանիզմների կիրառմամբ աշխատանքները կատարվում են համապատասխան սույն Կանոնների պահանջների համաձայն:

544. Գործող էլեկտրատեղակայանքներում բեռնամբարձ մեքենաների և մեխանիզմների կիրառմամբ աշխատանքները կատարվում են Կարգագրով:

545. Գործող էլեկտրատեղակայանքներում կամ ՕԳ-ի անվտանգության գոտում աշխատող վարորդները, կռունկավարները, մեքենավարները, առասանողները պետք է ունենան էլեկտրաանվտանգության II խումբ:

546. ԲԲՍ-ի տարածքում և ՕԳ-ի անվտանգության գոտում ավտոմեքենաների, բեռնամբարձ մեքենաների և մեխանիզմների երթանցը, ինչպես նաև դրանց տեղակայումը և աշխատանքները պետք է իրականացվեն օպերատիվ անձնակազմի կամ Կարգագիր տված աշխատողի կամ պատասխանատու ղեկավարի, կամ մինչև 1000 Վ լարման կայանքներում՝ էլեկտրաանվտանգության IV խումբ ունեցող աշխատանքներն իրագործողի հսկողության տակ, իսկ ՕԳ-ի անվտանգության գոտում շինմոնտաժային աշխատանքներ կատարելիս՝ պատասխանատու ղեկավարի կամ էլեկտրաանվտանգության III խումբ ունեցող աշխատանքներն իրագործողի հսկողության տակ:

547. ՕԳ-ի տակով և ԲԲՍ-ով երթանցի ժամանակ բեռնամբարձ մեքենաների և մեխանիզմների ամբարձիչ և շարժական (դուրսհանովի) մասերը պետք է գտնվեն տրանսպորտային դիրքում: Կարելի է աշխատատեղի սահմաններում բեռնամբարձ մեքենաների տեղափոխությունը հարթ տեղանքով՝ բարձրացված բանվորական օրգանով, առանց բեռի և մարդկանց դրա բարձրացնող կամ շարժական մասերի վրա, եթե այդպիսի տեղափոխությունը թույլատրվում է շահագործման փաստաթղթով, և այդ դեպքում անհրաժեշտություն չի առաջանում երթևեկելու ՕԳ-ի չանջատված հաղորդալարերի և հաղորդաձողերի տակով:

1) ԲԲՍ-ում շարժման արագությունը որոշվում է, ելնելով տեղական պայմաններից, բայց չպետք է գերազանցի 10 կմ/ժ:

2) ՕԳ-ի տակով ավտոմեքենաները, բեռնամբարձ մեքենաներն ու մեխանիզմները պետք է անցնեն հաղորդալարերի ամենափոքր կախվածքի տեղերով (հենարանների մոտով):

548. Կռունկն աշխատատեղում տեղակայելիս՝ աշխատանքների պատասխանատու ղեկավարի կամ աշխատանքներն իրագործողի (հսկողի) կողմից թույլատրողի հետ համատեղ պետք է հողակցել, որոշել սլաքի անհրաժեշտ տեղաշարժման սեկտորը, այդ սեկտորը մինչև աշխատանքների սկիզբը սահմանափակել դրոշակներ ունեցող ձողերով, իսկ գիշերվա ժամերին՝ ազդանշանման լույսերով:

549. Չեն թույլատրվում բեռնամբարձ մեխանիզմների տեղակայումը և աշխատանքները մինչև 35 կՎ (ներառյալ) լարման տակ գտնվող ՕԳ-ի անմիջականորեն հաղորդալարերի տակ:

**ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ՏԱՐԲԵՐ ԴԱՍԵՐԻ ԷԼԵԿՏՐԱԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՎ ՁԵՌՔԻ
ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

Աշխատանքի կատարման վայրը	Էլեկտրագործիքի և ձեռքի էլեկտրական մեքենայի դասը՝ ըստ հոսանահարումից պաշտպանության	Էլեկտրապաշտպանության միջոցների կիրառման անհրաժեշտությունը
Բարձր վտանգավորություն չունեցող սրահներ	I	առնվազն մեկ էլեկտրապաշտպանության միջոցի կիրառմամբ (դիէլեկտրիկ ձեռնոցներ, գորգեր, տակդիրներ, կրկնակոշիկ) առանց էլեկտրապաշտպանության միջոցների կիրառման, եթե այս դեպքում միայն մեկ էլեկտրաընդունիչ է (մեքենա կամ գործիք) սնուցում ստանում բաժանիչ տրանսֆորմատորից, ավտոնոմ շարժիչ-գեներատորային կայանքից, բաժանիչ փաթույթներով հաճախականության փոխակերպիչից կամ անջատման պաշտպանության սարքվածքի (ԱՊՍ) միջոցով
Բարձր վտանգավորությամբ սրահներ	II	առանց էլեկտրապաշտպանության միջոցների կիրառման
	III	առանց էլեկտրապաշտպանության միջոցների կիրառման
Առանձնապես վտանգավոր սրահներ	I	չի թույլատրվում կիրառել
	II	առանց էլեկտրապաշտպանության միջոցների կիրառման
	III	առանց էլեկտրապաշտպանության միջոցների կիրառման
Սրահից դուրս (արտաքին աշխատանքներ)	I	չի թույլատրվում կիրառել
	II	առանց էլեկտրապաշտպանության միջոցների կիրառման
	III	առանց էլեկտրապաշտպանության միջոցների կիրառման
Առանձնապես անբարենպաստ պայմանների առկայություն (անոթներում, ապարատներում և այլ մետաղական տարողություններում՝	I	չի թույլատրվում կիրառել
	II	առնվազն մեկ էլեկտրապաշտպանության միջոցի կիրառմամբ (դիէլեկտրիկ ձեռնոցներ, գորգեր, տակդիրներ, կրկնակոշիկ) առանց էլեկտրապաշտպանության միջոցների կիրառման, եթե այս դեպքում միայն մեկ էլեկտրաընդունիչ է

Աշխատանքի կատարման վայրը	Էլեկտրագործիքի և ձեռքի էլեկտրական մեքենայի դասը՝ ըստ հոսանահարումից պաշտպանության	Էլեկտրապաշտպանության միջոցների կիրառման անհրաժեշտությունը
տեղաշարժվելու և դուրս գալու սահմանափակ հնարավորությամբ)		(մեքենա կամ գործիք) սնուցում ստանում բաժանիչ տրանսֆորմատորից, ավտոնոմ շարժիչ-գեներատորային կայանքից, բաժանիչ փաթույթներով հաճախականության փոխակերպիչից կամ անջատման պաշտպանության սարքվածքի (ԱՊՍ) միջոցով
	III	առանց էլեկտրապաշտպանության միջոցների կիրառման

550. Բեռնամբարձ մեքենան (մեխանիզմը) դուրսբերովի հենարանների վրա տեղակայելը և բանվորական օրգանը տրանսպորտային վիճակից աշխատանքային վիճակի բերելը պետք է կատարի մեքենան վարող մեքենավարը: Չի թույլատրվում դրա համար ներգրավել այլ աշխատողների:

551. Ավտոմեքենաների, բեռնամբարձ մեքենաների և մեխանիզմների շարժման, տեղակայման և աշխատանքի ժամանակ դրանց ամբարձիչ և դուրս եկող մասերից, առասաններից, բեռնաբռնիչ հարմարանքներից, բեռներից մինչև լարման տակ գտնվող հոսանատար մասերը եղած հեռավորությունը պետք է լինի Աղյուսակ N 1-ում նշվածից ոչ պակաս:

552. Մինչև աշխատանքներն սկսելը պետք է գործողության մեջ ստուգվեն փոխագուցավոր վերնակների և հիդրոամբարձիչների դուրսբերովի և ամբարձիչ մասերը, իսկ փոխագուցավոր աշտարակի ամբարձիչ մասը՝ բացի դրանից, պետք է կանգնեցվի ուղղաձիգ դիրքում և այդ դիրքում ամրացվի:

553. Չի թույլատրվում փոխագուցավոր աշտարակը (հիդրոամբարձիչը) տեղադրել հաղորդալարերով կազմված անկյան ներսում անկյունային հենասյուների վրա՝ մեկուսիչների, հաղորդալարերի փոխարինման կամ արմատուրի նորոգման հետ կապված աշխատանքներ կատարելիս:

554. Առանց լարումը հանելու՝ ԲԲՍ-ում և ՕԳ-ի անվտանգության գոտում բոլոր աշխատանքների կատարման դեպքում բեռնամբարձ մեքենաներն ու մեխանիզմները պետք է հողակցվեն:

555. Թրթուրավոր բեռնամբարձ մեքենաներն ու մեխանիզմներն անմիջապես գետնի վրա տեղադրելու դեպքում հողակցում չի պահանջվում:

556. Եթե հոսանատար մասերի հետ հպման կամ էլեկտրական պարպման առաջացման հետևանքով մեխանիզմը կամ բեռնամբարձ մեքենան հայտնվել է լարման տակ, ապա չի թույլատրվում մինչև լարումը հանելը դրանցից իջնել գետնին կամ բարձրանալ դրանց վրա, կամ հպվել դրանց:

557. Բեռնամբարձ մեքենաները և մեխանիզմներն աշխատելու ժամանակ չի կարելի մարդկանց գտնվել բարձրացվող բեռի, փոխագուցավոր վերնակի զամբյուղի տակ, ինչպես նաև՝ ձգվող հաղորդալարերից (մետաղաճոպաններից), հենակներից, ամրացումներից և աշխատող մեխանիզմներից 5 մ-ից պակաս հեռավորության վրա:

558. Փոխագուցավոր վերնակից (հիդրոամբարձիչից) աշխատանքներ կատարելիս՝ զամբյուղում (ճոճանում) գտնվող բրիգադի անդամի և վարորդի միջև պետք է լինի տեսողական կապ: Այդպիսի կապի բացակայության դեպքում վերնակի մոտ պետք է կանգնի բրիգադի անդամը և վարորդին հրամաններ տա զամբյուղը (ճոճանը) բարձրացնելու և իջեցնելու մասին.

1) փոխագուցավոր վերնակից (հիդրոամբարձիչից) աշխատելիս անհրաժեշտ է կանգնել զամբյուղի (ճոճանի) հատակին՝ ամրացնելով ապահովիչ գոտեկապի առասանը.

2) զամբյուղից հենասյան կամ սարքավորման վրա անցնելն ու վերադառնալը պետք է կատարվեն միայն աշխատանքներն իրագործողի (հսկողի) թույլտվությամբ:

559. Ամբարձիչ մեքենայի կռունկի սլաքը կամ զամբյուղը լարման տակ գտնվող հոսանատար մասերին հպվելու դեպքում մեքենավարը պետք է միջոցներ ձեռնարկի առաջացած հպումը շատ արագ խզելու և մեխանիզմի շարժական մասը հոսանատար մասերից հեռացնելու համար՝ Աղյուսակ N 1-ում նշվածից ոչ պակաս հեռավորությամբ, շրջակա աշխատողներին զգուշացնելով այն մասին, որ մեխանիզմը գտնվում է լարման տակ:

560. 220 կՎ և ցածր լարման ԲՍ-ներում փոխադրվի մետաղյա սանդուղքների կիրառումն արգելվում է: 330 կՎ-ից բարձր լարման ԲԲՍ-ներում մետաղական սանդուղքների կիրառումը թույլատրվում է հետևյալ պայմանների բավարարման դեպքում. սանդուղքը պետք է տեղափոխվի հորիզոնական դիրքով՝ բրիգադի երկու անդամների միջոցով, դիէլեկտրիկ ձեռնոցների կիրառմամբ և օպերատիվ անձնակազմի

անվտանգության էլեկտրաանվտանգության IV-ից ոչ պակաս խումբ ունեցող աշխատողի հսկողության ներքո:

561. Չի թույլատրվում բեռնամբարձ մեքենաների աշխատանքը քամու ժամանակ, որը կարող է հանգեցնել բեռների կամ դրանք բարձրացնող ազատ ճոպանների ու կառանների մոտենալուն լարման տակ գտնվող հոսանատար մասերին անթույլատրելի հեռավորության վրա:

ԳԼՈՒԽ 23

ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

562. Գործուղված անձնակազմին են պատկանում կազմակերպությունների այն աշխատողները, ովքեր գործուղված են պատվիրատու կազմակերպության գործող, կառուցվող, տեխնիկապես վերազինվող, վերակառուցվող էլեկտրատեղակայանքներում աշխատանքներ կատարելու համար և չեն հանդիսանում պատվիրատու կազմակերպության հաստիքային աշխատողներ:

563. Գործուղված աշխատողները պետք է ունենան էլեկտրատեղակայանքներում աշխատանքի նորմերի և կանոնների վերաբերյալ գիտելիքների ստուգման մասին սահմանված ձևի վկայական՝ գործուղող կազմակերպության հանձնաժողովի կողմից շնորհված խմբի նշումով:

564. Գործուղող կազմակերպությունն ուղեկցող նամակում պետք է նշի գործուղման վայրը, նպատակը, ինչպես նաև՝ այն աշխատողներին, որոնց կարող է տրվել Կարգագիր տալու իրավունք, որոնք կարող են նշանակվել պատասխանատու ղեկավարներ, աշխատանքներն իրագործողներ, հսկողներ, բրիգադի անդամներ, և հաստատի այդ աշխատողների խմբերը:

565. Գործուղող կազմակերպության կողմից գործատուի էլեկտրատեղակայանքներում, շենքերում և շինություններում էլեկտրական ու կապի գծերի սպասարկման աշխատանքները (նորոգում, վերականգնում, փորձարկում ու չափում, սարքավորումների փոխարինում, գործող էլեկտրական ցանցերին նոր գծերի միացում և այլն) կատարվում են պայմանագրով՝ պահպանելով սույն Կանոններով սահմանված անվտանգության պահանջները (տես՝ Հավելված գ):

566. Գործատուի (գործատուի տեխնիկական տնօրինության) կողմից վստահելի ճանաչված կազմակերպության աշխատողին տրված աշխատանքի անվտանգության

(անվտանգության տեխնիկայի) խումբը հավաստող վկայականը ճանաչվում է գործատուի կողմից: Այդ կազմակերպության աշխատողները հաստատված ծրագրով անցնում են հրահանգավորում գործատուի (նրա մասնաճյուղի) անվտանգության պատասխանատու անձի կողմից և թույլատրվում աշխատանքի գործատուի գործող էլեկտրատեղակայանքներում՝ որպես «գործուղված անձնակազմ»:

567. Գործատուի (տեխնիկական տնօրինության) կողմից վստահելի չճանաչված կազմակերպությունների աշխատողներին տրված էլեկտրաանվտանգության (անվտանգության տեխնիկայի) խմբերը հավաստող վկայականները կարող են չճանաչվել գործատուի կողմից: Չճանաչվելու դեպքում գործատուն իրավունք ունի ծառայություն մատուցող կազմակերպության հետ միակողմանի լուծել կնքված աշխատանքային պայմանագրերը:

568. 1000 Վ-ից բարձր լարման էլեկտրատեղակայանքներում գործուղված անձնակազմի հրահանգավորումը պետք է անցկացնի գործատուի վարչատեխնիկական անձնակազմից՝ էլեկտրաանվտանգության V խումբ ունեցող աշխատողը կամ օպերատիվ անձնակազմից՝ էլեկտրաանվտանգության IV խումբ ունեցողը, իսկ 1000 Վ-ից ցածր լարման կայանքներում՝ էլեկտրաանվտանգության IV խումբ ունեցող աշխատողը:

569. Հրահանգավորման բովանդակությունը պետք է որոշվի հրահանգավորողի կողմից՝ կախված աշխատանքների բնույթից ու բարդությունից, էլեկտրատեղակայանքի սխեմայից ու առանձնահատկություններից, և գրանցվի հրահանգավորման մատյանում:

570. Եթե այլ կազմակերպությունների աշխատողները գործատուի էլեկտրատեղակայանքներում պետք է կատարեն աշխատանքներ, որոնք սույն ստանդարտով չեն բնութագրվում միջին կամ բարձր ռիսկայնության պայմաններով և, որոնց կատարումը չի պահանջում աշխատանքի անվտանգության (անվտանգության տեխնիկայի) խմբի հավաստում, ապա այդ աշխատողները հաստատված ծրագրով անցնում են աշխատանքի անվտանգության նախնական հրահանգավորում գործատուի մոտ (նրա ստորաբաժիններում), որից հետո անցնում են ինքնուրույն աշխատանքի:

571. Գործուղված անձնակազմի կողմից գործատուի կազմակերպության աշխատանքի անվտանգության ստանդարտների խախտումների հայտնաբերման դեպքում գործատուի պատասխանատու անձն իրավունք ունի պահանջելու դադարեցնել գործուղված անձնակազմի աշխատանքները և աշխատատեղից հեռացնել այդ անձնակազմին:

572. Գործուղված անձնակազմից Կարգագիր տալու, աշխատանքների ղեկավարի, աշխատանքներն իրագործողի և հսկողի իրավունք ունեցող անձինք հրահանգավորումից

հետո մինչև ինքնուրույն աշխատանքի անցնելը պետք է հանձնեն քննություն՝ սույն Կանոններով սահմանված պահանջների համաձայն, և ստանան համապատասխան աշխատանքներ կատարելու իրավունք, ինչը ձևակերպվում է գործատուի համապատասխան ստորաբաժանման ղեկավարի կողմից:

573. Գործուղված անձնակազմից բրիգադի անդամ հանդիսացող անձանց քննության ենթարկելու անհրաժեշտությունը որոշում է գործատուի ստորաբաժանման ղեկավարը:

574. Գործուղված անձնակազմի հերթական քննության պարբերականությունը կազմակերպությունում նույնն է, ինչ՝ կազմակերպության համապատասխան անձնակազմի համար:

575. Գործուղվող կազմակերպությունը պատասխանատվություն է կրում գործուղված աշխատողներին շնորհված էլեկտրաանվտանգության խմբերի, ինչպես նաև անձնակազմի կողմից անվտանգության կանոնների պահպանման համար:

576. Կազմակերպությունը, որի էլեկտրատեղակայանքներում գործուղված անձնակազմն իրականացնում է աշխատանքները, պատասխանատվություն է կրում նախատեսված անվտանգության միջոցառումների կատարման համար, որոնք ապահովում են աշխատողների պաշտպանությունն էլեկտրատեղակայանքի աշխատանքային և մակաձված լարման հոսանքի հոսանահարումից և աշխատանքների թույլտվության համար:

577. Էլեկտրատեղակայանքում աշխատատեղի նախապատրաստումը և գործուղված անձնակազմի աշխատանքների թույլտվությունը կատարվում են այն կազմակերպության աշխատողների կողմից, որի էլեկտրատեղակայանքներում կատարվում են աշխատանքները:

578. Կազմակերպություններին, որոնց էլեկտրատեղակայանքները մշտապես սպասարկվում են սպասարկող անձանց կողմից, թույլատրվում է վերջիններիս աշխատողներին տալ օպերատիվ-նորոգող անձնակազմի իրավունքներ՝ համապատասխան նախապատրաստումից և մշտական աշխատանքի վայրի հանձնաժողովում գիտելիքների ստուգումից հետո:

**ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ, ՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹՈՒՅԼԱՏՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԷԼԵԿՏՐԱՏԵՂԱԿԱՅԱՆՔՆԵՐՈՒՄ ԵՎ
ԷԼԵԿՏՐԱՎՈՐՈՒՄԱՆ ԳԾԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՈՏՈՒՄ**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

579. Աշխատանքներն սկսելուց առաջ այն կազմակերպության տարածքում, որի էլեկտրատեղակայանքներում իրականացվում են աշխատանքները, շինմոնտաժային կազմակերպությունը (ՇՄԿ) պետք է ներկայացնի տեղեկություններ աշխատանքների բովանդակության, ծավալների և կատարման ժամկետների վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնի աշխատանքների կատարման անվտանգության համար պատասխանատու աշխատողների ցուցակը՝ նշելով նրանց անունը, ազգանունը, պաշտոնը և խումբը:

580. Աշխատանքների կատարման թույլտվություն տալիս՝ կազմակերպությունը, որի էլեկտրատեղակայանքներում կատարվելու են աշխատանքներ (այսուհետ՝ շահագործող կազմակերպություն), ՇՄԿ ներկայացուցչի հետ համատեղ պետք է ձևակերպի այդ կազմակերպության տարածքում աշխատանքների կատարման ակտ-թույլտվությունը՝ ըստ ՄՆԻՊ-12-03-2001 «Աշխատանքի անվտանգությունը շինարարությունում» շինարարական նորմերի պահանջների (Ակտ-թույլտվության ձևը տես Հավելված Ե-ում):

581. Ակտ-թույլտվությամբ պետք է որոշվեն՝

1) ՇՄԿ-ի աշխատանքային գոտին առանձնացնելու համար էլեկտրական սխեմայում տեսանելի խզումների ստեղծման տեղերը, պաշտպանության հողակցումների տեղադրման տեղերը.

2) ՇՄԿ աշխատանքների տեղի սահմանները և ցանկապատման տեսակները: Ցանկապատումը պետք է բացառի ՇՄԿ աշխատողների սխալմամբ անցումը ցանկապատված գոտուց դուրս.

3) մարդկանց, տրանսպորտի մուտքերը (ելքերը) աշխատանքային գոտի.

4) աշխատանքային գոտում վտանգավոր և վնասակար գործոնների առկայությունը:

582. ՇՄԿ-ի անձնակազմին թույլտվություն տալու և Կարգագիր ստորագրելու իրավունք ունեցող անձինք պետք է նշվեն ակտ-թույլտվությունում կամ պետք է սահմանվեն շահագործող կազմակերպության ղեկավարի կարգադրությամբ՝ այդ փաստաթղթի մեկ օրինակը տալով ՇՄԿ ներկայացուցչին:

583. ՇՄԿ անձնակազմն աշխատանքների կատարման վայր ժամանելուն պես պետք է անցնի աշխատանքի անվտանգության վերաբերյալ հրահանգավորում, հաշվի առնելով տեղական առանձնահատկությունները, իրենց հատկացված տեղամասերում առկա վտանգավոր գործոնները, իսկ Կարգագիր տալու իրավունք ունեցող աշխատողները, պատասխանատու ղեկավարները և (անհրաժեշտության դեպքում) աշխատանքների պատասխանատու իրագործողները պետք է լրացուցիչ հրահանգավորում անցնեն էլեկտրատեղակայանքների սխեմաներից՝

1) հրահանգավորումը պետք է անցկացնի շահագործող կազմակերպության ստորաբաժանման ղեկավարը (ղեկավարի տեղակալը), որի էլեկտրատեղակայանքներում նախատեսվում են աշխատանքները՝

2) հրահանգավորման անցկացումը պետք է արձանագրվի այն կազմակերպության ստորաբաժանման հրահանգավորումների գրանցման մատյանում և ՇՄԿ-ում, որի էլեկտրատեղակայանքներում կիրադործվեն աշխատանքները:

584. Աշխատանքների առաջնային թույլտվությունը՝ շահագործող կազմակերպության տարածքում, որի էլեկտրատեղակայանքներում իրագործվելու են աշխատանքները, ինչպես նաև էլեկտրահաղորդման գծերի անվտանգության գոտում, պետք է կատարի այդ կազմակերպության անձնակազմից ներկայացուցիչը (թույլատրողը): Նա կատարում է ՇՄԿ աշխատանքների պատասխանատու ղեկավարի կամ աշխատանքներն իրագործողի թույլտվությունը՝ սույն Կանոնների պահանջներին համապատասխան:

585. Ակտ-թույլտվությամբ նախատեսված միջոցառումների պահպանման պատասխանատվությունը կրում են ՇՄԿ ղեկավարները և այն կազմակերպության ղեկավարները, որի էլեկտրատեղակայանքներում իրագործվում են աշխատանքները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԱՇԽԻՉ ՍԱՐՔԵՐՈՒՄ

586. ՇՄԿ-ի համար հատկացված աշխատանքների գոտին պետք է ունենա էլեկտրատեղակայանքի գործող մաս՝ ՇՄԿ անձնակազմի սխալմամբ մուտքը կանխարգելող, հոժ կամ ցանցավոր ցանկապատում:

587. ՇՄԿ անձնակազմի, մեքենաների և մեխանիզմների անցուղիները դեպի աշխատանքների կատարման համար հատկացված՝ ցանկապատված գոտի, որպես կանոն, չպետք է հատեն էլեկտրակայանքների գործող մասի տարածքը կամ սրահները:

588. ՇՄԿ աշխատողները ցանկապատված գոտում աշխատանքները պետք է կատարեն էլեկտրատեղակայանքները շահագործող կազմակերպության կողմից տրված՝ սահմանված ձևի Կարգագրով:

589. Այն դեպքերում, երբ աշխատանքների գոտին ցանկապատված չէ, կամ դեպի ցանկապատված գոտի տանող ճանապարհին անցնում է գործող ԲՍ-ի տարածքով կամ էլեկտրասրահների միջով, այդ գոտում թույլտվությունը, այդ թվում՝ ամենօրյա, պետք է իրականացնի այն կազմակերպության ներկայացուցիչը, որի էլեկտրատեղակայանքներում իրագործվում են աշխատանքները:

590. Եթե ՇՄԿ համար հատկացված գոտին ցանկապատված չէ, ապա աշխատանքներն այնտեղ պետք է կատարվեն շահագործող կազմակերպության ներկայացուցչի (հսկողի) մշտական հսկողության ներքո: Հսկողն իր պարտականություններն իրականացնում է շահագործող կազմակերպության կողմից տրված Կարգագրով:

591. Հսկողը, ՇՄԿ-ի աշխատանքներն իրագործողի հետ համահավասար պատասխանատվություն է կրում թույլտվության ժամանակ տեղադրված ցանկապատերի, զգուշացնող պլակատների պահպանվածության և լարման տակ գտնվող հոսանատար մասերից բրիգադի անդամների կողմից անվտանգ հեռավորությունը չխախտելու համար:

**ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԷԼԵԿՏՐԱՀԱՂՈՐԴՄԱՆ ԳԾԵՐԻ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՈՏՈՒՄ**

592. Լարման տակ գտնվող էլեկտրահաղորդման գծերի անվտանգության գոտում, ինչպես նաև գործող ՕԳ-ի հետ հատման թռիչքում ՇՄԿ անձնակազմի աշխատանքների թույլտվությունն իրականացնում է շահագործող կազմակերպության ներկայացուցիչը (թույլատրողը): Ընդ որում՝ թույլատրողն իրականացնում է ՇՄԿ յուրաքանչյուր բրիգադի պատասխանատու ղեկավարի և աշխատանքներն իրագործողի (հսկողի) թույլտվությունը: Անջատված էլեկտրահաղորդման գծի անվտանգության գոտում աշխատանքներ թույլատրողը կարող է թույլտվություն տալ միայն ՇՄԿ աշխատանքների պատասխանատու ղեկավարին, որն այնուհետև պետք է իրականացնի մնացած աշխատողների թույլտվությունը:

593. Անջատված ՕԳ-ի վրա, մեկից ավել բրիգադների աշխատելու դեպքում, աշխատանքների պատասխանատու իրագործողներին (հսկողին) թույլտվություն տալու դեպքում թույլատրողը պետք է տեղադրի մեկական հողակցում՝ յուրաքանչյուր բրիգադի աշխատանքների տեղամասում, իսկ աշխատանքների պատասխանատու ղեկավարին թույլտվություն տալու դեպքում տեղադրի մեկ հողակցում՝ հնարավորինս մոտ աշխատանքների տեղամասին:

594. Անջատված ՕԳ-ի վրա աշխատանքներ կատարելիս՝ ՇՄԿ աշխատանքների տեղամասում հողակցումները պետք է տեղադրի ՕԳ-ն շահագործող կազմակերպության անձնակազմից թույլատրողը՝ Կարգագրով: Հողակցումները հանելու համար պետք է տրվի առանձին Կարգագիր: Ընդ որում, որպես բրիգադի անդամ, թույլատրվում է ներգրավել ՇՄԿ անձնակազմից էլեկտրաանվտանգության III խումբ ունեցող աշխատողի:

595. ՄԳ-ի անվտանգության գոտում աշխատանքներ կատարելու թույլտվությունում և Ակտ-թույլտվությունում պետք է նշվեն ՄԳ-ների դասավորությունն ու տեղադրման խորությունը:

596. ՄԳ-ի անվտանգության գոտում հողային աշխատանքներն սկսվելուց առաջ ՄԳ-ն շահագործող անձնակազմի աշխատողի հսկողության տակ պետք է կատարվի հիմնահողի ստուգողական բացում (հետախուզահոր), որպեսզի ճշտվեն մալուխների դասավորվածությունը և խորությունը, ինչպես նաև տեղադրվի հողափոր մեքենաների աշխատանքների գոտին որոշող ժամանակավոր ցանկապատ:

597. Անհրաժեշտության դեպքում, մալուխի ծակումը պետք է կատարվի Կարգագրով՝ ՄԳ-ն շահագործող կազմակերպության անձնակազմի թույլատրողի կողմից: Որպես բրիգադի անդամ՝ կարող է ներգրավվել էլեկտրաանվտանգության IV խումբ ունեցող ՇՄԿ աշխատող:

598. Մինչև ներառյալ 35 կՎ օդային գծերի տակ, լարման առկայության դեպքում, տարբեր տեսակի վերամբարձ մեքենաների և մեխանիզմների տեղակայումը և աշխատանքներն արգելվում են:

599. ՕԳ-ի անվտանգության գոտում ՇՄԿ կողմից աշխատանքների կատարումը դուրս-քաշովի մասով տարբեր վերամբարձ մեքենաների և մեխանիզմների օգտագործմամբ թույլատրվում է միայն այն պայմանով, որ մեքենայի (մեխանիզմի) կամ դրա դուրս քաշվող կամ վերամբարձ մասի, ինչպես նաև բանվորական օրգանի կամ բարձրացվող բեռի ցանկացած դիրքում (այդ թվում՝ և առավելագույն ամբարձման կամ թռիչքի դեպքում) հեռավորությունն օդով լարման տակ գտնվող մոտակա հաղորդալարից լինի Աղյուսակ N 8-ում նշվածից ոչ պակաս:

Աղյուսակ N 8

ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԼԱՐՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՍԱՆԱՏԱՐ ՄԱՍԵՐԻՑ, Մ

ՕԳ լարումը, կՎ	(Թույլատրելի հեռավորությունը, մ)
Մինչև 1	1.5
1 բարձր մինչև 10 ներառյալ	2.0
35- 110	4.0
220	5.0
400	7.0
500	9.0

**ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀՐԱՀԱՆԳԱՎՈՐՈՒՄ, ՌԻՍՈՒՑՈՒՄ ԵՎ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹՈՒՅԼԱՏՐՈՒՄ**

600. Սույն Կանոններով սահմանված ռիսկայնության տարբեր մակարդակ ունեցող աշխատանքի պայմաններում աշխատողներին ինքնուրույն աշխատանքների թույլատրումը կատարվում է հետևյալ կերպ:

601. Ցածր ռիսկայնության աշխատանքի պայմաններ՝

1) ցածր ռիսկայնության պայմաններում աշխատանքներ իրագործողը, մինչև ինքնուրույն աշխատանքի անցնելու թույլատրումը, անցնում է՝

ա" նախնական հրահանգավորում կազմակերպության աշխատանքի անվտանգության պատասխանատու անձի կողմից, այնուհետև՝

բ" սկզբնական հրահանգավորում տվյալ աշխատատեղի համար՝ կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի (պատասխանատու անձի) կողմից"

2) նշումները նշված հրահանգավորումների մասին կատարվում են դրա համար հատուկ նախատեսված գրանցամատյանում, որտեղ նշվում է նաև ինքնուրույն աշխատանքների թույլատրումը.

3) սկզբնական հրահանգավորման ժամանակ, ըստ հաստատված ծրագրի, աշխատողը պետք է անհրաժեշտ տեղեկատվություն ստանա իր աշխատատեղում առկա վնասակար գործոնների, հրդեհային անվտանգության մասին, ինչպես նաև համառոտ ուսուցում անցնի իր աշխատատեղին վերաբերող աշխատանքի անվտանգության ստանդարտների ծավալով.

4) ցածր ռիսկայնության պայմաններում աշխատանքներ իրագործողներն աշխատանքների ընթացքում պարբերական հրահանգավորում և ուսուցում չեն անցնում: Աշխատատեղի կամ աշխատանքի պայմանների փոփոխման դեպքում աշխատողն անցնում է ուսուցում և հրահանգավորում՝ սույն կետի դրույթներին համապատասխան:

602. Միջին ռիսկայնության աշխատանքի պայմաններ՝

1) միջին ռիսկայնության պայմաններում աշխատանքներ իրագործողը պետք է անցնի անվտանգության նախնական հրահանգավորում, ինչպես նաև սկզբնական հրահանգավորում և իր աշխատատեղին յուրահատուկ ուսուցում (տեսական և գործնական).

2) ուսուցման ծրագրի ավարտից հետո՝ աշխատողը քննություն է հանձնում աշխատանքի անվտանգության կանոններից գործատուի հանձնաժողովին (տես սույն գլխի 610-րդ կետը), որի դրական արդյունքներից հետո ստանում է վկայական, որը հավաստում է որոշակի

աշխատատեղում ինքնուրույն աշխատանք կատարելու իր իրավունքը՝ ըստ իրեն շնորհված աշխատանքի էլեկտրաանվտանգության խմբի.

3) միջին ռիսկայնության պայմաններում աշխատանքներ իրագործողը եռամսյակը մեկ հրահանգավորում է անցնում աշխատանքի անվտանգությունից: Աշխատանքի անվտանգության արտահերթ հրահանգավորումներ կարող են անցկացվել կազմակերպության ներքին իրավական ակտով նախատեսված դեպքերում, աշխատողի կողմից կազմակերպության աշխատանքի անվտանգության ստանդարտների խախտման դեպքում, ինչպես նաև աշխատատեղի կամ աշխատատեղի պայմանների փոփոխության դեպքերում.

4) միջին ռիսկայնության պայմաններում աշխատանքներ իրագործողը տարեկան մեկ անգամ՝ հաստատված ծրագրով հանձնում է հերթական քննություն աշխատանքի անվտանգության ստանդարտներից.

5) միջին ռիսկայնության պայմաններում աշխատանքներ իրագործողը առնվազն 3 (երեք) տարին մեկ անգամ անցնում է ուսուցում աշխատանքի անվտանգության և շահագործման ստանդարտներից.

6) այլ աշխատանքի անցնելու դեպքում աշխատողը պետք է ստանա համապատասխան հրահանգավորում, ուսուցում և հանձնի քննություն՝ սույն Կանոններով սահմանված կարգով:

603. Բարձր ռիսկայնության աշխատանքի պայմաններ՝

1) բարձր ռիսկայնության պայմաններում աշխատանքներ իրագործողի նախնական հրահանգավորումը և ուսուցումը պետք է կատարվեն սույն Կանոններով սահմանված կարգով.

2) բարձր ռիսկայնության պայմաններում աշխատանքներ իրագործողն ամսական մեկ անգամ հրահանգավորում է անցնում աշխատանքի անվտանգությունից: Արտահերթ հրահանգավորումները կատարվում են սույն Կանոններով սահմանված դեպքերում.

3) բարձր ռիսկայնության պայմաններում աշխատանքներ իրագործողը տարեկան մեկ անգամ հանձնում է հերթական քննություն աշխատանքի անվտանգությունից: Անբավարար գիտելիքներ ցուցաբերելու դեպքում՝ արտահերթ քննությունը կարող է ընդունվել սույն Կանոնների 614-րդ կետի պայմանների համաձայն.

4) աշխատանքի անվտանգության արտահերթ հրահանգավորումները կատարվում են սույն Կանոններով սահմանված դեպքերում:

604. Նույն աշխատողի կողմից տարբեր ռիսկայնության պայմաններով աշխատանքների կատարման դեպքում աշխատողի ուսուցումը, հրահանգավորումը, որակավորումը և ինքնուրույն աշխատանքների թույլատրումը կատարվում են նրա կողմից կատարվող առավել բարձր ռիսկայնության պայմաններով աշխատանքի համար սահմանված կարգով:

605. Շահագործման աշխատանքների անվտանգության ապահովման և հսկման անձնակազմի (այդ թվում՝ ղեկավարի) ուսուցումը և աշխատանքների թույլատրումը կատարվում են սույն Կանոններով սահմանված կարգով:

606. Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավար անձնակազմի, անվտանգության պատասխանատու անձի, կենտրոնական ապարատի համապատասխան ծառայությունների (բաժինների) աշխատողների քննություններն անցկացվում են կազմակերպության աշխատանքի անվտանգության կենտրոնական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից:

607. Կազմակերպության ուսուցման ծրագրերը, ստորաբաժանումների քննական Հանձնաժողովների կազմը սահմանվում են ներքին աշխատանքի անվտանգության համապատասխան ստանդարտներով:

608. Աշխատողներին տրված աշխատանքի անվտանգության վկայականի ձևը սահմանվում է կազմակերպության անվտանգության համապատասխան ստանդարտով (վկայականի օրինակելի ձևը տես Հավելված գ-ում): Վկայականում թվարկվում են թույլատրված աշխատանքները, այդ թվում՝ աշխատանքները բարձր ռիսկայնության պայմաններում:

609. Էլեկտրատեխնիկական և էլեկտրատեխնոլոգիական անձնակազմ ունեցող կազմակերպությունները պետք է 3 (երեք) տարին մեկ անգամ կազմակերպեն անձնակազմի ուսուցում՝ գիտելիքների բարձրացման նպատակով, ապահովելով հետևյալ պայմանները.

1) դասընթացները կազմակերպելու համար կազմակերպությունները պետք է ունենան տեխնիկական գրադարան, ուսուցման ծրագիր, դասասենյակ և բարձր որակավորման գիտատեխնիկական անձնակազմ"

2) կազմակերպությունները, որոնք չունեն վերը նշված անձնակազմի գիտելիքների ուսուցման, որակավորման բարձրացման և ստուգման համապատասխան տեխնիկական բազա, աշխատանքները պայմանագրային հիմունքներով կարող են պատվիրել սույն կետում նշված պահանջները բավարարող մասնագիտացված կազմակերպություններին:

610. Էլեկտրատեխնիկական և էլեկտրատեխնոլոգիական անձնակազմի գիտելիքների ստուգումները կազմակերպելու համար կազմակերպության ղեկավարը հրամանով պետք է կազմի առնվազն 5 հոգուց բաղկացած հանձնաժողով: Այդ հանձնաժողովում աշխատողների գիտելիքների ստուգման արդյունքում կազմվում է արձանագրություն և շնորհվում էլեկտրաանվտանգության խումբ ու տրամադրվում վկայական:

611. Հանձնաժողովի բոլոր անդամները պետք է ունենան էլեկտրաանվտանգության խումբ: Ընդ որում՝ հանձնաժողովի նախագահը և առնվազն երկու անդամները պետք է ունենան էլեկտրաանվտանգության V խումբ: Հանձնաժողովի նախագահի և առնվազն երկու անդամների էլեկտրաանվտանգության V խումբ շնորհելու իրավասություն ունի գլխադասային հանձնաժողովը՝ որը ստեղծվում է ՀՀ վարչապետի որոշմամբ և որի կազմում ընդգրկված են տվյալ ոլորտի շահագրգիռ պետական մարմինների, կազմակերպությունների և ակադեմիական (գիտական) որևէ հաստատության ներկայացուցիչներ:

612. Հերթական ստուգումը պետք է անցկացվի հետևյալ ժամկետներում՝

1) ԷՇԱԿ-ից՝ տարին մեկ անգամ գործող էլեկտրասարքավորման սպասարկման աշխատանքներն անմիջական կազմակերպող և իրականացնող, կամ դրանց կարգաբերման, էլեկտրահավաքակցման, նորոգման աշխատանքներ, պրոֆիլակտիկ փորձարկումներ իրականացնող էլեկտրատեխնիկական անձնակազմի, ինչպես նաև օպերատիվ խոսակցություններ վարելու և փոխանջատումներ կատարելու իրավունք ունեցող օպերատիվ անձնակազմի համար.

2) 3 տարին մեկ անգամ՝ էլեկտրատեղակայանքներում կազմակերպության հրամաններ, կարգադրություններ և Կարգագրեր տվող վարչատեխնիկական անձնակազմից աշխատանքի անվտանգության տեսչական ստուգումների իրականացման իրավասություն ունեցող մասնագետների, ինչպես նաև նախորդ խմբին չպատկանող անձնակազմի համար:

613. Վերջին ստուգումների ժամկետի հիման վրա սահմանվում է հաջորդ ստուգման ժամկետը: Եթե աշխատողը գիտելիքների հերթական ստուգման ժամանակ ցուցաբերում է անբավարար գիտելիքներ, ապա կրկնակի (արտահերթ) գիտելիքների ստուգումը կատարվում է սույն Կանոնների 614-րդ կետի պահանջների համաձայն:

614. Աշխատանքի անվտանգության վերաբերյալ գիտելիքների կրկնակի (արտահերթ) ստուգումը պետք է նշանակվի կազմակերպության ներքին իրավական ակտով սույն Կանոնների և կազմակերպության աշխատանքի անվտանգության ստանդարտի պահանջներին համապատասխան:

615. Եթե հերթական կամ արտահերթ քննության արդյունքներով աշխատողը ցուցաբերում է անբավարար գիտելիքներ, ապա նա մինչև հաջորդ քննություն հանձնելը գրկվում է ինքնուրույն աշխատանքի իրավունքից:

616. Կրկնակի անգամ անբավարար գիտելիքներ ցուցաբերելու դեպքում աշխատողը պետք է տեղափոխվի այլ (անվտանգ) աշխատանքի, եթե կան համապատասխան թափուր տեղեր, հակառակ դեպքում՝ գործատուն լուծում է նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը, զբաղեցրած պաշտոնին աշխատողի չհամապատասխանելու հիմքերով:

617. Էլեկտրատեղակայանք սպասարկող և շահագործող կազմակերպություններում մշտական գործող գիտելիքները ստուգող և էլեկտրաանվտանգության խումբ շնորհող հանձնաժողովի կողմից տրված վկայականներ ունեցող աշխատողները իրավունք ունեն աշխատելու միայն իրեն վկայական շնորհող կազմակերպության էլեկտրատեղակայանքներում:

ԳԼՈՒԽ 26

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԷԼԵԿՏՐԱՏԵՂԱԿԱՅԱՆՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

618. Էլեկտրասպառող կազմակերպությունները, որոնք իրենց էլեկտրատեղակայանքների օպերատիվ սպասարկման, տեխնիկական սպասարկման կամ նորոգման, կամ փորձարկման աշխատանքների համար չունեն սույն Կանոնների պահանջները բավարարող մասնագիտացված էլեկտրատեխնիկական անձնակազմ և անվտանգության ծառայություններ, պարտավոր են այդ աշխատանքների կատարումը պայմանագրային հիմունքներով պատվիրել մասնագիտացված սպասարկող անձանց:

619. Քաղաքացիները (բնակիչները), ովքեր որպես սեփականություն ունեն մինչև 10 կՎ լարման էլեկտրատեղակայանքներ, 6(10) / 0,4 կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայաններ, մալուխային կամ օդային գծեր, կամ իրենց սեփականությունը հանդիսացող տարածքից դուրս գտնվող մինչև 1000 Վ լարման մալուխային գծեր, պետք է դրանց սպասարկումը պայմանագրային հիմունքներով հանձնեն էլեկտրամատակարար կազմակերպությանը կամ մասնագիտացված այլ անձանց:

620. Կազմակերպությունները, որոնք չունեն սույն Կանոններով սահմանված կարգով էլեկտրատեխնիկական անձնակազմի նախնական ուսուցման, հրահանգավորման, գիտելիքների ստուգման համար համապատասխան որակավորման էլեկտրատեխնիկական

ղեկավար անձնակազմ և (կամ) որակավորման ստուգման հանձնաժողով, պարտավոր են այդ աշխատանքների կատարումը պայմանագրային հիմունքներով հանձնարարել մասնագիտացված կազմակերպությանը:

621. Կազմակերպությունում համապատասխան էլեկտրաանվտանգության խումբ ունեցող անձնակազմը կարող է միանձնյա կատարել օպերատիվ սպասարկման և (կամ) ընթացիկ շահագործման այն աշխատանքները, որոնք թույլատրված են սույն Կանոններով:

622. Մինչև 1000 Վ սպառող կազմակերպությունների լարման էլեկտրատեղակայանքները միանձնյա սպասարկող աշխատողը պետք է ունենա էլեկտրաանվտանգության III խումբ և աշխատանքներն իրագործողի թույլտվություն: Գործող էլեկտրատեղակայանքներում միանձնյա կատարվող աշխատանքները պետք է իրականացվեն լարումը հանելով այն հոսանատար մասերից, որոնց վրա կատարվում են աշխատանքները և որոնց կարող է պատահաբար մոտենալ աշխատանքներ իրագործողը՝ աշխատանքային գործընթացների ժամանակ:

623. Սպառող կազմակերպություններում, որոնք էլեկտրատեղակայանքների շահագործումը կատարում են իրենց անձնակազմով, կազմակերպության ներքին իրավական ակտով նշանակվում է էլեկտրատնտեսության համար պատասխանատու անձ, որն իրականացնում է էլեկտրատեղակայանքների շահագործումը՝ ապահովելով էլեկտրատեղակայանքները շահագործող անձնակազմի ուսուցումը, հրահանգավորումը և անվտանգությունը, ինչպես նաև՝ էլեկտրատեղակայանքների անվտանգությունը քաղաքացիների կյանքի ու գույքի համար: Պատասխանատու անձը՝ կախված կազմակերպության էլեկտրատեղակայանքների լարումից, էլեկտրական սարքավորումների բարդությունից և վտանգավորությունից, պետք է լինի ուսուցանված և ունենա էլեկտրաանվտանգության V խումբ՝ 1000 Վ-ից բարձր լարման էլեկտրատեղակայանքների սպասարկման, և էլեկտրաանվտանգության IV խումբ՝ 1000 Վ-ից ցածր լարման էլեկտրատեղակայանքների սպասարկման դեպքում:

**ԷՆԵՐԳԵՏԻԿ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ ՀՈՍԱՆԱՀԱՐՈՒՄԻՑ ԵՎ ԱՅԼ ԴԺԲԱԽՏ
ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ ՏՈՒԺԱԾՆԵՐԻՆ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Առաջին օգնությունը՝ միջոցառումների այն համալիրն է, որն իրականացվում է մինչև բուժանձնակազմի ժամանումը և ուղղված է տուժածի կյանքի պահպանմանն ու առողջության վերականգնմանը: Օգնությունը պետք է ցույց տա այն անձը, ով գտնվում է տուժածի մոտ (փոխօգնություն) կամ անձամբ տուժածը (ինքնօգնություն):

Տուժածի կյանքն ու հետագա հաջող բուժումը, որպես կանոն, կախված է այն բանից, թե ինչքանով է արագ և հմուտ ցույց տրված առաջին օգնությունը: Այդ պատճառով, յուրաքանչյուրը պետք է իմանա՝ ինչպես ցույց տալ առաջին օգնությունը և կարողանա այն ցույց տալ տուժածին և ինքն իրեն:

Հոսանահարումից և այլ դժբախտ պատահարներից առաջին օգնություն ցույց տալու հաջողության հիմնական պայմաններն են. օգնություն (ինքնօգնություն) ցույց տվողի հանգիստ պահվածքը (խուճապի չմատնվելը), հնարամտությունը, գործողությունների արագությունը, գիտելիքներն ու հմտությունը:

Այդ հատկությունները ձեռք են բերվում հատուկ նախապատրաստման ընթացքում, որը պետք է անցկացվի մասնագիտական ուսուցման հետ մեկտեղ, քանի որ միայն առաջին օգնություն ցույց տալու կանոնների իմացությունը բավական չէ: Կազմակերպության յուրաքանչյուր աշխատող պետք է կարողանա առաջին օգնությունը ցույց տալ նույնպիսի հմտությամբ, ինչպես որ կատարում է իր մասնագիտական պարտականությունները: Այդ պատճառով էլ մասնագիտական ունակությանը և առաջին օգնություն ցույց տալու հմտությանը պետք է ներկայացվեն միատեսակ պահանջներ:

Էլեկտրատեղակայանքներ սպասարկող անձնակազմը պետք է պարբերաբար անցնի հրահանգավորում՝ առաջին օգնություն ցույց տալու եղանակների վերաբերյալ, ինչպես նաև էլեկտրական հոսանքի ազդեցությունից ազատելու, արհեստական շնչառություն տալու և սրտի արտաքին մերսում կատարելու ձևերի գործնական ուսուցում:

Պարապմունքները պետք է անցկացնեն բուժանձնակազմի կամ անվտանգության տեխնիկայի ինժեներական կազմից գիտակ (իրազեկ) անձինք, ովքեր անցել են հատուկ

նախապատրաստում և իրավունք ունեն ուսուցանելու անձնակազմին՝ առաջին օգնություն ցույց տալու ձևերին:

Ուսուցման կազմակերպման պատասխանատվությունը կրում է կազմակերպության ղեկավարը:

Որպեսզի առաջին օգնությունը լինի ժամանակին և արդյունավետ, անձնակազմի հերթապահության տեղերում պետք է լինեն՝

- ա. դեղարկղեր (առաջին օգնության պայուսակներ՝ բրիգադների մոտ, կազմակերպության տարածքից դուրս աշխատելու ժամանակ) դեղորայքի անհրաժեշտ լրակազմով (տես՝ ստորև աղյուսակում)՝ առաջին օգնություն ցույց տալու համար,
- բ. պլակատներ, ուր պատկերված են դժբախտ դեպքերի դեպքում տուժածին առաջին օգնություն ցույց տալու, արհեստական շնչառություն և սրտի արտաքին մերսում կատարելու եղանակները (ձևերը),
- գ. ցուցանակներ և նշաններ՝ դեղարկղերի ու բուժկետերի տեղերը գտնելու համար:

Կողմնակի կազմակերպությունների կողմից աշխատանքներ կատարելիս՝ այդ կազմակերպությունների անձնակազմը պետք է տեղեկացվի դեղարկղիկների և բուժկետերի տեղադրության մասին:

Դեղարկղերի վրա կամ ներսում պետք է լինի դեղարկղում գտնվող դեղերի քանակների վերաբերյալ տեղեկատվությունը:

ԴԵՂԱՐԿՂԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

	Բուժմիջոցների և դեղորայքի անվանումը	Կիրառությունը	Քանակը
1	Անհատական վիրակապման հականեխիչ փաթեթներ	Վիրակապ դնելու համար	5 հատ
2	Վիրակապ (բինտ)	Նույնը	5 հատ
3	Բամբակ	Նույնը	5 կապոց՝ 50-ական գ.
4	Բամբակե-թանզիֆե վիրակապ	Կոտրվածքները վիրակապելու համար	5 հատ
5	Ռետինե լարան	Արյունահոսությունը դադարեցնելու համար	1 հատ
6	Տախտավանդ (բեկակալ)	Կոտրվածքի և հողախախտումների դեպքում վերջույթները ամրացնելու համար	1 հատ
7	Ռետինե պարկ՝ սառույցի համար	Կոտրվածքների, հողախախտումների և ճմլվածքների դեպքում վնասված տեղերը սառեցնելու համար	1 հատ

8	Բաժակ	Դեղերը խմելու, աչքերը և ստամոքսը վանալու լուծույթ պատրաստելու համար	1 հատ
9	Թեյի գդալ	Լուծույթներ պատրաստելու համար	1 հատ
10	Յոդ (5%-անոց սպիրտային լուծույթ)	Վերքի շուրջը, մաշկի թարմ քերծվածքին ու ճմլվածքին քսելու համար	1 սրվակ (50 մլ)
11	Անուշադրի սպիրտ (10%-անոց ամոնիակի լուծույթ)	Օգտագործվում է ուշաթափության դեպքում (բամբակի վրա կաթեցնելով 2-3 կաթիլ և մոտեցնելով տուժածի քթին)	1 սրվակ (50 մլ)
12	Բորաթթու	2-4%-անոց լուծույթ պատրաստելու համար (աչքերը և մաշկը վանալու համար, վոլտյան աղեղով աչքերի այրվածքի դեպքում՝ աչքերին թրջոց դնելու համար,	1 փաթեթ (25գ.)
13	Կերակրի (խմելու) սոդա (նատրիումի հիդրոկարբոնատը կամ երկածխաթթվային նատրիումը)	2-4%-անոց լուծույթ պատրաստելու համար (թթվով այրվածքների դեպքում աչքերը և մաշկը վանալու և բերանը ողողելու համար)	1 փաթեթ (25գ.)
14	Զրաձնի պերօքսիդի լուծույթ (3%-անոց)	Քթից և փոքր վերքերից ու քերծվածքներից արյունահոսությունը դադարեցնելու համար	1 սրվակ (50 մլ)
15	Կատվախոտի (վալերիանա) թուրմ	Նյարդային համակարգը հանգստացնելու համար	1 սրվակ (30 մլ)
16	Անգլիական (դառը) աղ (լուծողական)	Սննդի և այլ թունավորումների դեպքում խմելու համար	50 գ.
17	Ակտիվացված ածուխ (փոշի կամ հաբ)	Նույնը	50 գ.
18	Նիտրազլիցերին	Ընդունել կրծքավանդակում սեղմող, խեղդող բնույթի ուժեղ ցավերի դեպքում [մեկ հաբ դնելով լեզվի տակ (մինչև ներծծվելը)]	1 պարկուճ (տյուբիկ)
19	Պարացետամոլ, հիբուպրոֆեն (հաբեր)	Որպես ջերմություն իջեցնող և ցավամոքիչ միջոց ընդունելու համար	2 ծրար (փաթեթվածք)

Ծանոթություն.

ա" Խմելու սոդայի և բորաթթվի լուծույթները նախատեսվում են միայն այնպիսի աշխատատեղերի համար, որտեղ աշխատանքներ են տարվում թթուների և ալկալիների հետ: Այն արտադրամասերում և լաբորատորիաներում, ուր բացառված չէ թունավոր գազերից ու վնասակար նյութերից թունավորվելու և վնասվելու հնարավորությունը, դեղարկղիկը կարող է համապատասխանաբար լրացվել:

բ" Առաջին օգնության պայուսակի համար նախատեսված բուժմիջոցների հավաքածուի մեջ մտնում են աստղիկով նշվածները, ընդ որում՝ ցուցակում նշվածի 50%-ի քանակությամբ:

գ. Ամռան ամիսներին այն աշխատատեղերում, որտեղ հնարավոր է միջատների խայթոցներ, դեղարկղներում պետք է լինեն դիմեդրոլ (մեկ ծրար) և կարդիոմին (մեկ սրվակ):

դ. Դեղարկղի դռների ներսի կողմից հարկ է հատուկ ձևով (պարզ) նշել, թե ինչ վնասվածքի ժամանակ ինչ դեղանյութեր պետք է օգտագործել (օրինակ՝ քթից արյունահոսության ժամանակ՝ 3%-անոց ջրաձնի պերօքսիդի լուծույթ):

Օգնություն ցույց տվողը պետք է գիտենա.

ա. մարդու օրգանիզմի կենսական կարևորագույն ֆունկցիաների խախտման հիմնական նշանները,

բ. առաջին օգնություն ցույց տալու հիմնական սկզբունքները և տուժածի ստացած վնասվածքների բնույթին համապատասխան դրանց կիրառման ձևերը,

գ. տուժածներին տեղափոխելու և դեպքի վայրից հեռացնելու (էվակուացիայի) ձևերը:

Օգնություն ցույց տվողը պետք է կարողանա.

ա. գնահատել տուժածի վիճակը և որոշել, թե առաջին հերթին ինչ օգնության կարիք է զգում,

բ. ապահովել վերին շնչառական ուղիների ազատ անցունակությունը,

գ. կատարել արհեստական շնչառություն՝ «բերանից բերան» («բերանից քիթ»), սրտի փակ մերսում և գնահատել դրանց արդյունավետությունը,

դ. ժամանակավորապես դադարեցնել արյունահոսությունը՝ ռետինե լարան կամ ճնշող վիրակապ դնելով, անոթը մատով սեղմելով,

ե. վնասվածքի (վիրավորվելու, վերքեր ստանալու, այրվածքի, ցրտահարության, ճմլվածքի, ծեծվածքի) դեպքում՝ վիրակապել,

զ. անշարժացնել մարմնի վնասված մասը՝ ոսկրի կոտրվածքների, ծանր ճմլվածքների, ջերմային վնասվածքների դեպքում,

է. օգնություն ցույց տալ՝ ջերմա- և արևահարման, խեղդվելու, սուր թունավորման, փսխելու և անգիտակից վիճակի դեպքում,

ը. օգտագործել ձեռքի տակ գտնվող միջոցները՝ տուժածին տեղափոխելու, մեքենա բարձրացնելու և փոխադրելու ժամանակ,

թ. որոշել տուժածին շտապ օգնություն կամ պատահական տրանսպորտով փոխադրելու նպատակահարմարությունը,

ժ. օգտվել առաջին օգնության դեղարկղիկից:

Տուժածին առաջին օգնություն ցույց տալու գործողությունների հաջորդականությունը հետևյալն է.

ա. տուժածի օրգանիզմի վրա ազդող վտանգավոր և վնասակար գործոնների ազդեցության վերացումը (էլեկտրական հոսանքի ազդեցությունից ազատելը, վարակված օդից հեռացնելը, այրվող հագուստի մարելը, ջրից հանելը և այլն),

բ. տուժածի վիճակի գնահատելը,

գ. տուժածի կյանքի համար ամենամեծ սպառնալիք ներկայացնող վնասվածքի բնույթի և նրան փրկելու գործողությունների հաջորդականության որոշումը,

դ. տուժածին փրկելու համար անհրաժեշտ միջոցառումների իրագործումն ըստ շուտափույթ (առաջին հերթին) կատարելու հաջորդականության (վերին շնչառական ուղիների անցունակության վերականգնում, արհեստական շնչառության և սրտի արտաքին մերսման կատարում, արյունահոսության դադարեցում, կոտրվածքի տեղի անշարժացում, վիրակապում և այլն),

ե. մինչև բուժանձնակազմի ժամանումը տուժածի հիմնական կենսական ֆունկցիաների պահպանումը,

զ. շտապ բուժօգնության (բժշկի) կանչի կամ տուժածին մոտակա բուժհաստատություն փոխադրելու միջոցառումների ձեռնարկումը:

2. ՏՈՒԺԱԾԻՆ ՎՆԱՍՎԱԾՔԱՀԱՐՈՒՅՑ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼԸ

Տուժածին օգնություն ցույց տալը սկսվում է վնասվածքահարույց գործոնի ազդեցությունից նրան ազատելու պահից.

ա. էլեկտրատեղակայանքի անջատում,

բ. հոսանատար մասերից լարման հանում կամ տուժածին դրանցից զատում, քայլային լարման գոտուց դուրս բերում և այլն,

գ. վտանգավոր գոտուց դուրս հանում (գազավորված, փոշոտված, օդի շատ ցածր կամ շատ բարձր ջերմաստիճան և այլն),

դ. արտադրական սարքավորանքի, շարժվող մեքենաների ու մեխանիզմների կանգնեցում,

ե. շոգու կամ ջրի անջատում,

զ. ջրից դուրս հանում,

է. այրվող հագուստի մարում և այլն:

Այդ դեպքում օգնություն ցույց տվողը պետք է պաշտպանվի վնասվածքահարույց գործոնի ազդեցությունից՝ օգտագործելով համապատասխան պաշտպանության միջոցներ:

Հարկ է տուժածին այլ տեղ փոխադրել միայն այն դեպքում, երբ նրան կամ օգնություն ցույց տվողին շարունակում է վտանգ սպառնալ, կամ, եթե տեղում օգնություն ցույց տալն անհնար է. օրինակ՝ կատարել սրտի արտաքին մերսում հենարանի, կայմասյան վրա, կամ ճոճի (կախալաստակի) մեջ և այլն:

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՀՈՍԱՆՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏՈՒՄԸ

Հոսանահարման դեպքում անհրաժեշտ է տուժածին որքան կարելի է արագ ազատել հոսանքի ազդեցությունից, քանի որ օրգանիզմի վրա հոսանքի ազդեցության տևողությունից է կախված էլեկտրավնասվածքի ծանրությունը:

Լարման տակ գտնվող հոսանատար մասերին հպումը մեծ մասամբ առաջացնում է մկանների ջղաձգումների ակամա կրճատում և ընդհանուր գրգռում, որը կարող է բերել շնչառական օրգանների գործունեության և արյան շրջանառության խանգարման և նույնիսկ լրիվ դադարեցման:

Եթե տուժածը հաղորդալարը բռնել է ձեռքով, նրա մատները սեղմվում են այնպես ուժեղ, որ նրա ձեռքից հաղորդալարն ազատելը դառնում է անհնար: Այդ իսկ պատճառով, օգնություն ցույց տվողի առաջին գործողությունը պետք է լինի էլեկտրատեղակայանքի այն մասի անջատումը, որին դիպել է տուժածը:

Էլեկտրատեղակայանքը կարելի է անջատել անջատիչի, հատիչի կամ անջատող այլ սարքի օգնությամբ (նկ.1), ինչպես նաև՝ ապահովիչները հանելով, խրոցակային հարակցիչը անջատելով, օդային գծի (ՕԳ) վրա «վրագցում»-ով արհեստական կարճ միացում ստեղծելով և այլն:

Եթե տուժածը գտնվում է բարձրության վրա, ապա էլեկտրատեղակայանքի անջատումը և այդպիսով էլեկտրական հոսանքի ազդեցությունից նրան ազատումը կարող է բարձրությունից ընկնելու պատճառ դառնալ: Այդ դեպքում անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել լրացուցիչ վնասվածքները կանխելու համար:

Էլեկտրատեղակայանքն անջատելիս կարող է միաժամանակ անջատվել նաև էլեկտրական լուսավորությունը, այդ պատճառով, ցերեկային լուսավորության բացակայության դեպքում, անհրաժեշտ է լուսավորությունն ապահովել այլ աղբյուրից (միացնել վթարային լուսավորությունը, կուտակչային լապտերները և այլն՝ հաշվի առնելով շինության պայթյունա- և հրդեհավտանգավորությունը), սակայն չուշացնելով կայանքի անջատումը և տուժածին առաջին օգնություն ցույց տալը:

Էլեկտրատեղակայանքն արագ անջատելու հնարավորության բացակայության դեպքում անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել՝ տուժածին ազատելու այն հոսանատար մասից, որին դիպել է նա: Այդ ժամանակ օգնություն ցույց տվողը ոչ մի դեպքում չպետք է դիպչի տուժածին՝ առանց անհրաժեշտ պաշտպանության միջոցների օգտագործման, որովհետև դա վտանգավոր է կյանքի համար: Նա պետք է հետևի նաև, որ ինքն էլ չդիպչի հոսանատար մասին կամ, գտնվելով հողակցման հոսանքի տարիսման գոտում, չընկնի քայլային լարման տակ:


Մինչև 1000 Վ լարման ժամանակ տուժածին հոսանատար մասերից կամ հաղորդալարից զատելու համար պետք է օգտվել ճոպանից, փայտից, տախտակից կամ էլեկտրական հոսանք չհաղորդող որևէ այլ չոր առարկայից (նկ.2):

Հոսանատար մասերից տուժածին զատելու համար կարելի է քաշել նաև նրա հագուստից (եթե այն չոր է և տուժածի մարմնին կպած չէ), օրինակ՝ բաճկոնի կամ վերարկուի փեշերից, օձիքից՝ խուսափելով շրջակա մետաղե իրերին և տուժածի մարմնի բաց մասերին դիպչելուց (նկ.3):

Կարելի է տուժածին մի կողմ քաշել ոտքերից, բայց այդ դեպքում օգնություն ցույց տվողը չպետք է դիպչի նրա կոշիկներին և հագուստին՝ առանց իր ձեռքերի մեկուսացման, որովհետև կոշիկները և հագուստը կարող է խոնավ լինեն և հոսանահաղորդիչ հանդիսանան:



Նկ.1. Տուժածին էլեկտրական հոսանքի ազդեցությունից ազատելը՝ էլեկտրատեղակայանքի անջատումով




Նկ.2. Մինչև 1000 Վ էլեկտրատեղակայանքներում էլեկտրական հոսանքի ազդեցությունից տուժածին ազատելը՝ հաղորդալարը փայտի օգնությամբ հեռացնելով

Օգնություն ցույց տվողը, մանավանդ եթե իրեն անհրաժեշտ է դիպչել տուժածի մարմնի բաց մասերին, ձեռքերը մեկուսացնելու համար պետք է դնի դիէլեկտրիկ ձեռնոցներ կամ ձեռքը փաթաթի վզնոցով, ձեռքին հագցնի մահուդե գդակ, ձեռքերի վրա իջեցնի բաճկոնի կամ վերարկուի թևքերը, տուժածի վրա գցի ռետինե գորգ, ռետինապատ գործվածք

(անձրևանոց) կամ ուղղակի չոր գործվածք: Կարելի է նաև մեկուսացնել իրեն՝ կանգնելով ռետինե գորգի, չոր տախտակի կամ էլեկտրականություն չհաղորդող որևէ այլ տակդիրի, չոր հագուստի փաթաթվածքի վրա և այլն:

Տուժածին հոսանատար մասերից զատելիս՝ հարկ է գործել մեկ ձեռքով (նկ.4):




Նկ.3. Մինչև 1000 Վ էլեկտրատեղակայանքներում էլեկտրական հոսանքի ազդեցությունից տուժածին ազատելը՝ չոր հագուստից քաշելով




Նկ.4. Մինչև 1000 Վ լարման տակ գտնվող հոսանատար մասից տուժածին զատելը

Կարելի է նաև հաղորդալարը հատել չոր փայտե բռնակ ունեցող կացնով (նկ.5), կամ կտրել (խզել) այն՝ օգտագործելով մեկուսացնող բռնակներով գործիքներ (կծաքցան, համաքցան և այլն): Կարելի է օգտվել մեկուսացնող բռնակ չունեցող գործիքից, միայն բռնակը փաթաթելով չոր կտորով: Հաղորդալարերն անհրաժեշտ է հատել ֆազ առ ֆազ՝ այսինքն յուրաքանչյուր ֆազի լարը հատել առանձին, ընդ որում՝ հարկ է մեկուսացվել հողից (կանգնել չոր տախտակների վրա, փայտե սանդուղքի վրա և այլն):

1000 Վ-ից բարձր լարման ժամանակ հոսանատար մասերից տուժածին զատելու համար պետք է օգտագործել պաշտպանության միջոցներ՝ հագնել կրկնակոշիկներ, դնել դիէլեկտրիկ ձեռնոցներ և գործել համապատասխան լարման համար նախատեսված մեկուսիչ ձողով կամ արքաններով (նկ.6):



Նկ.5. Մինչև 1000 Վ էլեկտրատեղակայանքներում էլեկտրական հոսանքի ազդեցությունից տուժածին ազատելը՝ հաղորդալարի հատումով



Նկ.6. 1000 Վ-ից բարձր էլեկտրատեղակայանքներում էլեկտրական հոսանքի ազդեցությունից տուժածին ազատելը՝ հաղորդալարը մեկուսիչ ձողի օգնությամբ հեռացնելով


Էլեկտրահաղորդման 6-35 կՎ օդային գծերում (ՕԳ), երբ հնարավոր չէ սնման կողմից դրանց արագ անջատումը, ՕԳ-ն անջատելու համար հարկ է ստեղծել արհեստական կարճ միացում: Դրա համար ՕԳ-ի լարերի վրա պետք է նետել ճկուն, չմեկուսացված հաղորդալար:

Նետվող հաղորդալարը պետք է ունենա բավականաչափ հատույթ, որպեսզի իր միջով կարճ միացման հոսանքի անցման ժամանակ չայրվի: Հաղորդալարը նետելուց առաջ նրա մի ծայրը պետք է հողակցել (միացնել մետաղե հենարանի մարմնին, հողակցող իջեցմանը (էջքին) կամ առանձին հողակցիչին և այլն), իսկ մյուս ծայրին նետման հարմարության համար ցանկալի է ամրացնել ծանրոց:

Հաղորդալարը պետք է նետել այնպես, որ այն չդիպչի մարդկանց, այդ թվում տուժածին և օգնություն ցույց տվողին: Հաղորդալարը նետելու ժամանակ անհրաժեշտ է օգտվել դիէլեկտրիկ ձեռնոցներից և կրկնակոշիկներից:

Օգնություն ցույց տվողը պետք է հիշի քայլային լարման վտանգավորության մասին, եթե հոսանատար մասը (հաղորդալարը և այլն) ընկած է հողի վրա: Այդ գոտում պետք է տեղաշարժվել հատուկ զգուշությամբ, օգտագործելով հողից մեկուսացնող պաշտպանության միջոցներ (դիէլեկտրիկ կրկնակոշիկ, երկարաճիտ կրկնակոշիկ (բոտիններ), գորգեր, մեկուսացնող տակդիրներ) կամ էլեկտրական հոսանքը վատ հաղորդող առարկաներ (չոր տախտակներ, գերաններ և այլն):

Հողակցման հոսանքի տարհոսման գոտում պետք է տեղաշարժվել ոտնաթաթերը սահեցնելով և միմյանցից չկտրելով (նկ.7):



Նկ.7. Հողակցման հոսանքի տարհոսման գոտում ճիշտ տեղաշարժվելը,
 ա) հոսանատար մասի հողակցման կետից հեռանալը
 բ) կոշիկի հետքերը

Հոսանատար մասերից տուժածին զատելուց հետո պետք է հանել գոտուց՝ հոսանատար մասից առնվազն 8 մ հեռավորության վրա:

Ջրից դուրս հանումը

խեղդվողին փրկելու հիմնական կանոնն է՝ գործել մտածված, կշռադատված, հանգիստ, առանց խուճապի և զգուշորեն:

Լսելով խեղդվողի օգնության կանչը, պետք է անպայման արձագանքել, որ նրան նկատել են և որ կօգնեն: Դա սրտապնդում և ուժ է տալիս խեղդվողին:

Եթե հնարավոր է, պետք է խեղդվողին կամ լողից հոգնած մարդուն մեկնել ձող կամ հագուստի ծայրը և դրանց օգնությամբ մոտեցնել նրան ափին կամ նավակին, կամ նետել նրան ձեռքի տակ գտնվող լողացող առարկա, հատուկ փրկարար միջոց: Փրկարար միջոցը պետք է նետել այնպես, որ չհարվածի փրկողին: Եթե այդ առարկաները (միջոցները) չկան կամ դրանց օգտագործումը չի ապահովում խեղդվողին փրկելը, անհրաժեշտ է մոտ լողալ՝ փրկելու:

Օգնություն ցույց տվողը պետք է ոչ միայն լավ լողա և երկար սուզվի, այլ նաև իմանա տուժածին տեղափոխելու ձևերը, կարողանա ազատվել նրա բռնումներից (կառչումներից):

Ձանգվածային դժբախտ դեպքերի ժամանակ պետք է աշխատել օգնություն ցույց տալ ամեն մի խեղդվողին առանձին: Լողալով միաժամանակ մի քանի մարդու փրկելն անհնար է:

Եթե օգնություն ցույց տալու համար պետք է շտապ ցատկել ջուրը, պետք է հանել հագուստն ու կոշիկները:


Չի կարելի գլխիվայր սուզվել ջրի մեջ այն տեղերում, որտեղ հայտնի չէ ջրավազանի հատակի վիճակն ու խորությունը:

Ջրի մեջ ցատկելու տեղը պետք է ընտրել այնպես, որ օգտագործելով հոսքի ուժը, հնարավորին չափ արագ լողալ դեպի խեղդվողը:

Ջրի ցածր ջերմաստիճանի դեպքում կամ գերհոգնածությունից լողացողի մոտ կարող է առաջանալ սրունքի, ոտքերի, ազդրի կամ մատների մկանների ջղաձգումներ: Սրունքի մկանների ջղաձգման ժամանակ խորհուրդ է տրվում լողալով մեջքի վրա, ձգել ջղաձգված ոտքը և դեպի իրեն քաշել մատները: Ազդրի մկանների ջղաձգման ժամանակ օգնում է ծնկի ուժեղ ծալելը, ընդ որում՝ հարկ է ոտնաթաթը ձեռքերով սեղմել դեպի ազդրի հետևի կողմը: Ձեռքի մատների մկանների ջղաձգման դեպքում հարկավոր է բռունցք անել և ջրից հանելով, ուժեղ թափահարել:

Լողից հոգնած մարդուն կարելի է օգնություն ցույց տալ հետևյալ կերպ: Օգնություն ցույց տվողը պետք է հոգնած մարդու ուղղված ձեռքերի դաստակները դնի իր ուսերին և «բրաս» ոճի լողով ափ հանի նրան (նկ.8, ա), բ): Լավ է, եթե հոգնած մարդը կարողանում է

օգնություն ցույց տվողի շարժումներին համափաշ շարժել ոտքերը: Պետք է ուշադիր լինել, որ հոգնած մարդու ձեռքերը չսահեն օգնություն ցույց տվողի ուսերից:



Նկ.8. Լողից հոգնած մարդուն օգնություն ցույց տալը.

- ա) փոխադրումը մեջքի վրա,
բ) փոխադրումն իր դիմացից:

Խեղդվողին օգնություն ցույց տալ անհրաժեշտ է հետևի կողմից՝ պաշտպանվելով նրա կառչումներից: Հուսահատությունն ու մահվան սարսափը հաճախ խեղդվողին արտակարգ ուժ են տալիս և կառչումը կարող է վտանգել օգնություն ցույց տվողի կյանքը:

Եթե խեղդվողն այնուամենայնիվ կառչել է օգնություն ցույց տվողից, հարկավոր է խորը շնչել և սուզվել: Այդ դեպքում, ձգտելով ջրի վրա մնալ, խեղդվողը բաց կթողնի փրկողին:

Խեղդվողի կառչումներից ազատվելու մի քանի ձևեր ևս կան.


ա. եթե խեղդվողը կառչել է օգնություն ցույց տվողի իրանից կամ պարանոցից՝ առջևի կողմից, պետք է մի ձեռքով պահելով գոտկատեղից, մյուս ձեռքի օգնությամբ սուզվողի կզակին և մատներով սեղմելով քիթը, ուժեղ հրել: Ծայրահեղ դեպքում՝ օգնություն ցույց տվողը պետք է ծնկով հենվելով խեղդվողի որովայնի ստորին մասին, ուժեղ հետ հրվի նրանից (նկ.9),

բ. եթե խեղդվողը կառչում է օգնություն ցույց տվողի պարանոցից՝ հետևի կողմից՝ պետք է մի ձեռքով բռնել խեղդվողի դաստակը, իսկ մյուս ձեռքով հրել այդ նույն ձեռքի արմունկը, հետո խեղդվողի ձեռքը գլխի վրայով կտրուկ ձևով անցկացնելով և չազատելով ձեռքերը, նրան դեպի իրեն շրջել մեջքով և հրել դեպի օդ (նկ.10),

գ. եթե խեղդվողը կառչում է օգնություն ցույց տվողի դաստակներից, պետք է բռնցք անել և դեպի դուրս ուժեղ ցնցումով, միաժամանակ, ոտքերը դեպի փորը ձգելով, հենվել խեղդվողի կրծքին և հետ հրվել նրանից (նկ.11),

դ. եթե խեղդվողը կառչում է օգնություն ցույց տվողի ոտքերից, ապա ազատվելու համար պետք է մի ձեռքով դեպի իրեն սեղմել նրա գլուխը, իսկ մյուսով բռնել նրա կզակն ու շրջել իրենից (նկ.12),


ե. խեղդվողը անհետացել է ջրի տակ, պետք է սուզվել նրա հետևից: Նրան անմիջապես չգտնելու դեպքում, պետք է կատարել մի քանի զուգահեռ սուզումներ:



Նկ.9. Խեղդվողից ազատվելը՝ առջևի կողմից կառչելու դեպքում



Նկ.10. Խեղդվողից ազատվելը՝ հետևի կողմից կառչելու դեպքում



Նկ.11. Խեղդվողից ազատվելը՝ դաստակներից կառչելու դեպքում



Նկ.12. Խեղդվողից ազատվելը՝ ոտքերից կառչելու դեպքում

զ" եթե խեղդվողին հետևի կողմից մոտենալ չի հաջողվում, ավել լավ է սուզվել նրանից մի քանի մետր հեռու, և լողալով կողքից մոտենալ, մի ձեռքով հրել նրա ծունկը, իսկ մյուսով բռնել մյուս ոտքը, ցնցումով նրան դեպի իրեն շուռ տալ մեջքով և հրել դեպի ափ (նկ.13),


է" եթե տուժածը պառկած է ջրավազանին դեմքով դեպի վեր, օգնություն ցույց տվողը պետք է սուզվի և նրան մոտենա ոտքերի կողմից, իսկ եթե պառկած է դեմքով ներքև՝ լողալով մոտենա ոտքերի կողմից: Երկու դեպքում էլ օգնություն ցույց տվողը պետք է բռնի թևատակերից, բարձրացնի, հետո ոտքերով ուժեղ հրվի հատակից, խեղդվողի հետ դուրս գա ջրի երես և հրի նրան դեպի ափ:

Խեղդվողին կարելի է հրել մի քանի եղանակով.

ա" բռնելով գլխից (նկ.14). դրա համար օգնություն ցույց տվողը պետք է խեղդվողին շրջի մեջքի վրա, պահելով նրան այդ դիրքում՝ դեմքը օղակի ափերով (բթամատերով՝ այտերից, իսկ ճկույթներով՝ ստորին ծնոտի տակից և ականջները փակելով ափերով) և, պահելով ջրից վեր, դուրս հանի ափ: Պետք է լողալ մեջքի վրա:

բ" բռնելով ձեռքերից (նկ.15). դրա համար օգնություն ցույց տվողը պետք է լողալով մոտենա խեղդվողին հետևի կողմից, խեղդվողի արմունկները ձգի հետ՝ դեպի մեջքը, և նրան սեղմելով իրեն, ազատ ոճի լողով մոտենա ափին:

գ" բռնելով թևատակերից (նկ.16). դրա համար օգնություն ցույց տվողը լողալով պետք է խեղդվողին մոտենա հետևի կողմից, իր աջ (ձախ) ձեռքը արագ մտցնի նրա աջ (ձախ) ձեռքի տակ, բռնի խեղդվողի մյուս ձեռքը արմունկից վերև, սեղմի նրան իրեն և կողքի վրա լողալով մոտենա ափին:




Նկ.13. խեղդվողին մեջքով դեպի իրեն շրջելը



Նկ.14. խեղդվողին քաշելով դուրս հանելը՝ բռնելով գլխից



Նկ.15. խեղդվողին քաշելով դուրս հանելը՝ բռնելով ձեռքերից



Նկ.16. խեղդվողին քաշելով դուրս հանելը՝ բռնելով թևատակերից
ա) կրծքի վրայով,
բ) մեջքի տակով

Ուշաթափված մարդուն ափ հանելու համար օգնություն ցույց տվողը պետք է լողա կողքի վրա և խեղդվողին քաշի մազերից կամ հագուստի օձիքից:

խեղդվողին հրելով (քաշելով) ջրից դուրս հանելիս՝ բոլոր դեպքերում անհրաժեշտ է, որ նրա քիթն ու բերանը գտնվեն ջրից վերև:

Խեղդվողին նավակով փրկելը

Նավակով, առանց հատուկ փրկարար միջոցների, խեղդվողին փրկելու գնալիս, պետք է վերցնել ձող, փայտ և այլն՝ խեղդվողին մեկնելու համար, եթե չի կորցրել գիտակցությունը: Եթե նավակում գտնվում է միայն մի մարդ, ավելի լավ է, որ նա չցատկի ջուրը, այլապես չկառավարվող նավակը կարող է հեշտությամբ հեռանալ:

Նավակը խեղդվողին պետք է մոտեցնել նավախելի կամ նավաքթի, բայց ոչ նավակողի կողմից: Խեղդվողին պետք է նավակի մեջ առնել միշտ նավախելից կամ նավաքթից, որովհետև նավակողից ներս քաշելիս՝ կարող է նավակը շրջվել:

Եթե օգնություն ցույց տվողներից երկրորդը կարող է խեղդվողին պահել ջրի մեջ նավախելից բռնած, ապա նրան կարելի է չբարձրացնել նավակ:

Այրվող հագուստի մարումը

Եթե մարդու վրա բռնկվել է հագուստը, ապա պետք է որքան կարելի է շուտ կրակը մարել, բայց բոցը չի կարելի հանգցնել անպաշտպան ձեռքերով:

Բոցավառվող հագուստով մարդը սովորաբար սկսում է վազվզել, այս ու այն կողմ նետվել: Անհրաժեշտ է վճռական միջոցներ ձեռնարկել՝ նրան կանգնեցնելու համար, քանի որ շարժումը նպաստում է բոցի բորբոքվելուն:

Բոցավառվող հագուստը պետք է արագ հանել վրայից, պոկել-զցել, կամ ջրով մարել, իսկ ձմռանը՝ ձյունով:

Կարելի է բոցավառվող հագուստը մարել հատակի կամ հողի վրա թավալվելով: Բոցավառվող հագուստով մարդու վրա կարելի է զցել խիտ գործվածքից կտոր, ծածկոց, բրեզենտ, որոնք բոցը մարելուց անմիջապես հետո պետք է հեռացնել՝ մարդու մաշկի վրա ջերմային ազդեցությունը թուլացնելու համար:

Այրվող հագուստով մարդուն չի կարելի փաթաթել գլխովին, քանի որ դա կարող է բերել շնչառական ուղիների խաթարման և այրումից առաջացող գազերից թունավորման:

Հագուստի հեռացումը՝ նրա վրա հեղուկ փուլի հեղուկացված գազ ընկնելու դեպքում:

Հագուստի վրա հեղուկացված գազ ընկնելու դեպքում պետք է հագուստն անմիջապես հանել՝ պահպանելով անվտանգության անհրաժեշտ պահանջները:

Հեղուկացված գազերը վայրկենապես ներծծվում են և, հասնելով մաշկին՝ սառեցնում:

Տուժածին գազավորված շինությունից հեռացնելը:

Եթե շինությունում, որտեղ կարող են առաջանալ թունավոր գազեր, որևէ մեկի մոտ հայտնվում են թունավորվելու նշաններ (գրգռված վիճակ, թուլություն, գլխապտույտ, սրտխառնուք և այլն), ապա նրան պետք է շինությունից անհապաղ դուրս հանել թարմ օդ՝ փողոց (ամռանը), կամ տեղափոխել տաք, մաքուր օդով շինություն (ձմռանը): Պառկեցնել մեջքի վրա, արձակել հագուստը (շնչելը հեշտացնելու համար), ծածկել վերարկուով կամ որևէ ծածկոցով:

Օգնություն ցույց տվողը պետք է հազնի թթվածնային (մեկուսացնող) կամ ճկափողային հակազագի դիմակ: Նման դեպքերում զտիչ հակազագեր օգտագործել չի թույլատրվում:

3. ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ: ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՑԱՆԿԱՑԱԾ ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Առաջին օգնություն ցույց տալու ձևերը կախված են տուժածի վիճակից: Տուժածի առողջական վիճակն արագ որոշելու նշաններն են.

ա" գիտակցությունը՝ հստակ է, բացակայում է, խանգարված է (արգելված է կամ գրգռված),

բ" մաշկի և տեսանելի լորձաթաղանթի (շրթունքների, աչքերի) գույնը՝ վարդագույն, կապտած, գունատ,

գ" շնչառությունը՝ բնականոն (նորմալ) է, բացակայում է, խանգարված է (անկանոն, մակերեսային, խռպոտ),

դ" քներակի զարկերը՝ պարզորոշ են (կանոնավոր կամ անկանոն), վատ են որոշվում, բացակայում են,

ե" բիբերը՝ լայնացած են, նեղացած են:

Որոշակի հմտության և ինքնատիրապետման դեպքում օգնություն ցույց տվողը մեկ ընկալում պետք է գնահատի տուժածի վիճակը և որոշի, թե ինչ չափի ու հերթականության օգնություն պետք է ցույց տալ:

Տուժածի մոտ գիտակցության բացակայությունը (կորուստը) որոշում են դիտելով: Վերջնականապես համոզվելու համար դիմում են տուժածին՝ հարցնելով ինքնազգացողության մասին:

Մաշկի գույնը և շնչառության առկայությունը (կրծքավանդակի բարձրանալ-իջնելով) նույնպես գնահատում են դիտելով: Չի կարելի թանկարժեք ժամանակը վատնել՝ բերանին կամ քթին հայելի կամ որևէ փայլուն մետաղյա առարկա մոտեցնելու վրա:

Քներակի զարկերը որոշում են, մատները տուժածի ադամախնձորի (շնչափողի) վրա դնելով և մի փոքր կողմ շարժելով շոշափում են պարանոցը՝ կողքից (նկ.17):

Բիբերի լայնությունը, երբ աչքերը փակ են, որոշում են հետևյալ կերպ. ցուցամատերի բարձիկները դնում են զույգ աչքերի վերին կոպերի վրա, և թեթևակի սեղմելով խնձորակներին՝ բարձրացնում են վեր: Այդ ժամանակ աչքի ճեղքը բացվում է, և սպիտակ ֆոնի վրա երևում է ակնածիածանը, իսկ նրա կենտրոնում՝ շրջանաձև սև բիբերը, որոնց վիճակը (լայնացած կամ նեղացած) գնահատում են ակնածիածանի գրաված մակերեսով:

Գիտակցության մթագնման աստիճանը, մաշկի գույնը և շնչառության վիճակը կարելի է գնահատել երակազարկերը շոշափելու հետ միաժամանակ, որը կտևի մեկ րոպեից ոչ ավել:

Բիբերը կարելի է գննել մի քանի վայրկյանում:

Տուժածի մարմնով էլեկտրական հոսանք անցնելուց կամ նրա վրա այլ վտանգավոր գործոնների ազդեցությունից հետո, տեսանելի վնասվածքների բացակայության դեպքում, տուժածին չի կարելի թույլատրել շարժվել, և առավել ևս՝ շարունակել աշխատանքը, քանի որ չի բացառվում հետագայում նրա առողջական վիճակի վատթարացման (հանկարծակի) հնարավորությունը: Տուժածի առողջական վիճակը կարող է որոշել միայն բժիշկը:

Շանթահարման դեպքում տուժածին չի կարելի ծածկել հողով. Դա միայն կվնասի նրան և փրկելու թանկարժեք րոպեների կորստի կբերի: Եթե տուժածը գիտակից վիճակում է (մինչ այդ ուշաթափ կամ գիտակցությունը կորցրած վիճակում էր, բայց պահպանված էին կայուն շնչառությունն ու երակազարկերը), նրան պետք է պառկեցնել փռվածքի վրա (օրինակ՝ հագուստի), արձակել շնչառությունը դժվարացնող հագուստը, ստեղծել թարմ օդի ներհոսք, եթե ցուրտ է՝ տաքացնել մարմինը, եթե շոգ է՝ ապահովել զովությունը, ստեղծել լրիվ հանգիստ պայմաններ, անընդհատ հետևելով երակազարկերին ու շնչառությանը, հեռացնել ավելորդ մարդկանց, տալ խմելու կատվախոտի (վալերիանա) թուրմի (20 կաթիլ) ջրային լուծույթ:

Եթե տուժածը գտնվում է անգիտակից վիճակում, անհրաժեշտ է հետևել նրա շնչառությանը, և, եթե լեզվի կուլ գնալու պատճառով շնչառությունը խախտվում է՝ առաջ քաշել ստորին ծնոտը: Դրա համար երկու ձեռքի չորս մատներով, հետևի կողմից, անկյուններից բռնում են ստորին ծնոտը, և բուրձ մատերով հենվելով բերանի անկյուններից


ցածր նրա ծայրերին, ձգում են և առաջ քաշում այնպես, որ ներքևի ատամները վերիններից առաջ լինեն (նկ.18):

Այդպիսի դեպքում հարկավոր է պահել այնքան, քանի դեռ լեզուն «կուլ գնացած» վիճակում է: Անգիտակից վիճակում գտնվող տուժածին պետք է տալ հոտոտելու անուշադրի սպիրտ կամ դեմքը ցողել սառը ջրով:


Տուժածի մոտ փսխում առաջանալու դեպքում անհրաժեշտ է նրա գլուխն ու ուսերը թեքել մի կողմի վրա (ավելի լավ է դեպի ձախ), փսխուկը հեռացնելու համար:

Եթե տուժածը շնչում է ընդհատումներով և ջղաձգորեն, բայց շոշափվում է երակազարկը, անհրաժեշտ է անմիջապես սկսել արհեստական շնչառություն տալը: Պարտադիր չէ, որ արհեստական շնչառություն տալու ժամանակ տուժածը հորիզոնական դիրքում լինի: Արհեստական շնչառություն տալը պետք է սկսել տուժածին վտանգավոր և վնասակար գործոնների ազդեցությունից ազատելուց անմիջապես հետո, ինչպես նաև՝ հենարանից իջեցնելու, վտանգավոր գոտուց դուրս բերելու ժամանակ և այլն:

Եթե տուժածը կորցրել է գիտակցությունը, չի շնչում, չկան երակազարկեր, մաշկը կապտած է, իսկ բիբերը լայնացած, պետք է անմիջապես սկսել օրգանիզմի կենսական ֆունկցիաների վերականգնումը՝ տալով արհեստական շնչառություն և կատարելով սրտի արտաքին մերսում: Այդ միջոցառումների ամբողջությունը կոչվում է վերակենդանացում, իսկ միջոցառումները՝ վերակենդանացման միջոցառումներ:



Նկ.17. Ձեռքերի ճիշտ դիրքը՝ սրտի արտաքին մերսում կատարելու և քներակի զարկերը (գծիկներով) որոշելու ժամանակ



Նկ.18. Ստորին ծնոտը երկու ձեռքով առաջ քաշելը

4. ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Արհեստական շնչառությունը տրվում է այն դեպքում, երբ տուժածը չի շնչում կամ շատ վատ է շնչում (ընդհատումներով, ջղաձգորեն, կարծես խոխոռցով), ինչպես նաև երբ նրա շնչառությունը գնալով վատանում է, անկախ այն բանից, թե դա ինչն է պայմանավորված՝ հոսանահարումով, թունավորումով, խեղդվելու հետ կապված և այլն:

Արհեստական շնչառության առավել արդյունավետ եղանակը «բերանից-բերան» կամ «բերանից-քիթ» ձևերն են, քանի որ այդ դեպքում ապահովվում է բավականաչափ օդի մատուցումը տուժածի թոքերի մեջ: Այդ եղանակը հիմնված է օգնություն ցույց տվողի արտաշնչած օդի կիրառման վրա, որը ուժով մատուցվում է տուժածի շնչառական ուղիների մեջ և ֆիզիոլոգիական առումով պիտանի է տուժածի շնչառության համար: Օդը կարելի է ներփչել մառյայի (թանգիֆի), թաշկինակի և այլն, միջով: Արհեստական շնչառության այդ եղանակը թույլ է տալիս հեշտությամբ վերահսկել օդի մատուցումը տուժածի թոքերի մեջ՝ ներփչումից հետո կրծքավանդակի լայնանալու և դրան հաջորդող պասսիվ արտաշնչման արդյունքում, իջնելու միջոցով:

Արհեստական շնչառություն տալու համար պետք է տուժածին պառկեցնել մեջքի վրա, արձակել շնչառությանը խանգարող հագուստը և ապահովել վերին շնչառական ուղիների անցունակությունը, որոնք, մեջքի վրա դիրքում, գիտակցությունը կորցրած վիճակում փակված են լինում կուլ գնացած լեզվով: Բացի այդ, բերանի խոռոչում կարող է լինել օտար պարունակություն (փսխութ, տեղաշարժված արհեստական ատամնաշար կամ, ջրահեղձության դեպքում, ավազ, տիղմ, խոտ և այլն), որն անհրաժեշտ է հեռացնել թաշկինակով կամ բինտով փաթաթված ցուցամատի օգնությամբ՝ կողքի թեքելով տուժածի գլուխը (նկ.19): Դրանից հետո օգնություն ցույց տվողը տեղավորվում է տուժածի գլխի կողմում, մի ձեռքը դնում է նրա պարանոցի տակ, իսկ մյուս ձեռքի ափով սեղմում է նրա ճակատը՝ առավելագույնս հետ գցելով գլուխը (նկ.20): Այդ դեպքում լեզվի հիմքը բարձրանում է, ազատվում է կոկորդը և բացվում է տուժածի բերանը: Օգնություն ցույց տվողը կռանում է տուժածի դեմքին, բաց բերանով կատարում է խորը ներշնչում, հետո շրթունքներով կիպ գրկելով տուժածի բաց բերանը, թափով արտաշնչում է նրա բերանի մեջ: Միաժամանակ տուժածի քիթը փակում է այտով կամ ճակատին դրված ձեռքի մատներով (նկ.21): Այդ դեպքում պետք է հետևել կրծքավանդակին:

Հենց որ կրծքավանդակը բարձրանում է, օգնություն ցույց տվողը դադարեցնում է ներփչումը, հեռացնում է գլուխը և տուժածին պասսիվ (ինքնուրույն) արտաշնչելու հնարավորություն տալիս: Որպեսզի արտաշնչումը լինի ավելի խորը, կարելի է կրծքավանդակի վրա ձեռքի թույլ սեղմումով նպաստել տուժածի թոքերից օդի դուրս գալուն:

Եթե տուժածի անոթազարկը պարզորոշ է և անհրաժեշտ է միայն տալ արհեստական շնչառություն, ապա արհեստական ներշնչումների միջև ընդմիջումը պետք է լինի 5 վրկ, որը համապատասխանում է շնչառության՝ րոպեում 12 անգամ հաճախությանը:

Բացի կրծքավանդակի լայնացումից, արհեստական շնչառության արդյունավետության լավ նշան է մաշկի և լորձաթաղանթի վարդագունումը, ինչպես նաև տուժածի ուշքի գալը և նրա մոտ ինքնուրույն շնչառության հայտնվելը:

Արհեստական շնչառություն տալու ժամանակ օգնություն ցույց տվողը պետք է հետևի, որ ներփչվող օդը ընկնի տուժածի ոչ թե ստամոքսի, այլ թոքերի մեջ: Ստամոքսի մեջ օդն ընկնելու ժամանակ, ինչի մասին վկայում է «սրտի գդալի» տակ որովայնի փքվածությունը, ավոզ գգուշորեն պետք է սեղմել որովայնը՝ կրծոսկրի և պորտի միջև: Այդ դեպքում կարող է առաջանալ փսխում, հետևաբար անհրաժեշտ է տուժածի գլուխն ու ուսերը թեքել կողքի (ավելի լավ է ձախ՝ բերանն ու կոկորդը մաքրելու համար):

Եթե օդը ներփչելուց հետո կրծքավանդակը չի բարձրանում, անհրաժեշտ է առաջ քաշել տուժածի ստորին ծնոտը (նկ.18):

Եթե տուժածի ծնոտները կիպ սեղմված են և չի հաջողվում բացել բերանը, արհեստական շնչառությունը պետք է տալ «բերանից-քիթ» եղանակով (նկ.22):

Ինքնուրույն շնչառության բացակայության և երակազարկի առկայության դեպքում, արհեստական շնչառությունը կարելի է տալ նաև նստած կամ ուղղաձիգ դիրքերում, եթե դժբախտ պատահարը տեղի է ունեցել վերնակի զամբյուղում, հենարանի կամ կայմասյան վրա (նկ.23 և 24): Այդ դեպքում առավելագույնս հետ են գցում տուժածի գլուխը կամ առաջ քաշում ստորին ծնոտը: Մնացած ձևերը նույնն են:

Փոքր երեխաներին օդը ներփչում են բերանի ու քթի մեջ միաժամանակ՝ բերանով ընդգրկելով նաև երեխայի քիթը (նկ.25): Ինչքան փոքր է երեխան, այնքան քիչ օդ է պետք նրան՝ ներշնչելու համար, և չափահաս մարդու հետ համեմատած, ավելի հաճախակի պետք է կատարել ներփչումը (րոպեում 15-18 անգամ):

Նորածնին բավական է օդի այն ծավալը, որը գտնվում է չափահասի բերանում: Այդ պատճառով ներփչումը պետք է լինի ոչ լրիվ և քիչ թափով, որպեսզի երեխայի շնչառական ուղիները չվնասվեն:

Տուժածի մոտ առաջին թույլ ներշնչումներ հայտնվելու դեպքում, արհեստական ներշնչում տալը պետք է հարմարեցնել ինքնուրույն ներշնչում սկսելու պահին:

Արհեստական շնչառությունը դադարեցնում են տուժածի մոտ բավական խորը և համաչափ ինքնուրույն շնչառությունը վերականգնվելուց հետո:



Նկ.19. Բերանի և կոկորդի մաքրելը



Նկ.20. Տուժածի գլխի դիրքը արհեստական շնչառություն տալու ժամանակ



Նկ.21. Արհեստական շնչառություն տալը «բերանից-բերան» եղանակով



Նկ.22. Արհեստական շնչառություն տալը «բերանից-քիթ» եղանակով

Սրտի արտաքին մերսում

Եթե բացակայում է ոչ միայն շնչառությունը, այլ նաև քներակի զարկերը, օգնություն ցույց տալու ժամանակ միայն արհեստական շնչառություն տալը բավական չէ, քանի որ թոքերից թթվածինն արյան միջոցով չի կարող անցնել մյուս օրգաններին ու հյուսվածքներին: Այդ դեպքում արյան շրջանառությունն անհրաժեշտ է վերականգնել արհեստական ճանապարհով՝ սրտի արտաքին մերսում կատարելով:


Մարդու սիրտը տեղավորված է կրծքավանդակում՝ լանջուկրի (կրծոսկր) և ողնաշարի արանքում: Լանջուկրը հարթ, շարժուն ոսկր է: Մեջքի վրա դիրքում (կոշտ մակերեսի վրա) ողնաշարը կոշտ, անշարժ հիմնատակ է: Լանջուկրի վրա ճնշում գործադրելիս՝ սիրտը սեղմվում է լանջուկրի և ողնաշարի միջև և արյունը սրտի խոռոչներից կարտամղվի համարյա այնպես, ինչպես կատարվում է բնական կծկումների ժամանակ: Դա կոչվում է սրտի արտաքին (անուղղակի, փակ) մերսում, որի ժամանակ արհեստականորեն վերականգնվում է արյան շրջանառությունը:

Այսպիսով, արհեստական շնչառության և սրտի արտաքին մերսման զուգակցումը նմանակում է շնչառության և արյան շրջանառության գործողությունները (ֆունկցիաները):

Վերակենդանացման միջոցառումներ կատարելու անհրաժեշտության վկայություն է սրտի աշխատանքի դադարը, որին բնորոշ է հետևյալ նշանների զուգակցումը. մաշկի գունատությունը կամ կապտավուն երանգը, գիտակցության կորուստը, քներակի զարկերի բացակայությունը, չնչելը կամ ջղաձիգ անկանոն շնչառությունը: Սրտի կանգի դեպքում, վայրկյան իսկ չկորցնելով, տուժածին պետք է պառկեցնել հարթ, կոշտ մակերեսի՝ հատակի, նստարանի վրա կամ, ծայրահեղ դեպքում, մեջքի տակ տախտակ դնել:



Նկ.23. Աշխատատեղում, նստած դիրքում տուժածին արհեստական շնչառություն տալը




Նկ.24. Աշխատատեղում, ուղղաձիգ դիրքում տուժածին արհեստական շնչառություն տալը



Նկ.25. Երեխային արհեստական շնչառություն տալը



Նկ.26. Ձեռքերը դնելու տեղը սրտի արտաքին մերսման ժամանակ



Նկ.27. Օգնություն ցույց տվողի դիրքը սրտի արտաքին մերսման ժամանակ

Եթե օգնությունը ցույց է տալիս մի մարդ, ապա նա տեղավորվում է նրա կողքին և կռանալով կատարում է երկու արագ, եռանդուն ներփչում («բերանից-բերան» կամ «բերանից-քիթ» եղանակով), հետո ուղղվում է և մնալով տուժածի նույն կողմում, մի ձեռքը դնում է լանջոսկրի ներքևի կեսի վրա՝ ներքևի եզրից երկու մատնաչափ բարձր (նկ.26 և նկ.27), իսկ մատները բարձրացնում է (տես՝ նկ.17): Մյուս ձեռքի ափը լայնքով կամ երկարությամբ դնում է առաջին ձեռքի վրա և ճնշում գործադրում՝ իրանի թեքումներով նպաստելով դրան: Ճնշում գործադրելիս (սեղմելիս)՝ ձեռքերը արմնկահողային մասում պետք է ուղղված լինեն:

Պետք է սեղմել արագ հրումներով, այնպես, որ լանջոսկրը տեղաշարժվի 5-6 սմ-ով, սեղմելու տևողությունը՝ 0.5 վրկ-ից ոչ ավել, առանձին սեղմումների միջև ընդմիջումները՝ 0.5 վայրկյանից ոչ ավել: Ընդմիջումների ժամանակ ձեռքերը լանջոսկրից չեն վերցնում (եթե օգնությունը ցույց են տալիս երկու հոգով), մատները մնում են բարձրացված, ձեռքերը արմնկահողային մասում՝ լրիվ ուղղված: Եթե վերակենդանացումը կատարում է մեկ մարդ (նկ.28), ապա յուրաքանչյուր երկու խորը ներփչումների ժամանակ նա կատարում է լանջոսկրի 30 սեղմում, հետո նորից երկու ներփչում է անում և նորից կրկնում 30 սեղմում և այդպես շարունակ: Մեկ րոպեում անհրաժեշտ է կատարել առնվազն 100-120 սեղմում և 12

ներփչում, այսինքն՝ 112-132 գործողություն: Այդ պատճառով վերակենդանացման միջոցառումների տեմպը պետք է բարձր լինի: Իչպես ցույց է տալիս փորձը, ժամանակը մեծ մասամբ ծախսվում է արհեստական շնչառության վրա: Չի կարելի ներփչումը երկարաձգել: Հենց որ տուժածի կրծքավանդակը լայնանում է, այն պետք է դադարեցնել:

Վերակենդանացմանը երկու հոգու մասնակցության դեպքում (նկ.29) «ներշնչում-մերսում» հարաբերակցությունը երկու ներշնչումից հետո կատարվում է կրծքավանդակի 15 սեղմում: Արհեստական ներշնչման ժամանակ սրտի մերսում անողը սեղմում չպետք է կատարի, քանի որ դա հանգեցնում է արհեստական շնչառության և, հետևաբար, վերակենդանացման միջոցառումների անարդյունավետությանը: Վերակենդանացումը երկու հոգով կատարելիս՝ նպատակահարմար է, որ օգնություն ցույց տվողներն ամեն 5-10 րոպեն մեկ փոխվեն տեղերով: Սրտի արտաքին մերսումը ճիշտ կատարելու դեպքում լանջոսկրի վրա յուրաքանչյուր սեղմման ժամանակ պետք է երակազարկեր հայտնվեն:


Օգնություն ցույց տվողները պետք է պարբերաբար վերահսկեն սրտի արտաքին մերսման ճշտությունն ու արդյունավետությունը՝ ըստ քներակներում կամ ազդրերի զարկերակներում երակազարկերի հայտնվելու: Վերակենդանացումը մեկ հոգով կատարելու դեպքում պետք է ամեն երկու րոպեն մեկ ընդհատել սրտի մերսումը երկուսից-երեք վայրկյանով՝ քներակի երակազարկերը որոշելու համար (նկ.17): Եթե վերակենդանացմանը մասնակցում են երկու հոգի, քներակի զարկերը վերահսկում է արհեստական շնչառություն տվողը: Երակազարկի հայտնվելը սրտի մերսման դադարի ժամանակ վկայում է սրտի գործունեության վերականգնման (արյան շրջանառության առկայության) մասին: Այդ ժամանակ պետք է անմիջապես ընդհատել սրտի մերսումը, բայց շարունակել արհեստական շնչառությունը, մինչև կայուն շնչառություն հաստատվելը: Երակազարկի բացակայության դեպքում պետք է շարունակել սրտի մերսումը:

Արհեստական շնչառությունը և սրտի արտաքին մերսումն անհրաժեշտ է շարունակել մինչև տուժածի մոտ կայուն ինքնուրույն շնչառության և սրտի գործունեության վերականգնումը կամ մինչև նրան բուժանձնակազմին հանձնելը:

Եթե վերակենդանացման միջոցառումներն արդյունավետ են (լանջոսկրին սեղմելու ժամանակ խոշոր զարկերակներում որոշվում է երակազարկը, նեղանում են բիբերը, պակասում է մաշկի և լորձաթաղանթների կապտությունը)՝ տուժածի մոտ վերականգնվում են սրտի գործունեությունը և ինքնուրույն շնչառությունը:

Երակազարկի երկարատև բացակայությունն օրգանիզմի կենդանացման այլ նշանների հայտնվելու դեպքում (ինքնուրույն շնչառությունը, բիբերի նեղացումը, տուժածի կողմից ձեռքերն ու ոտքերը շարժելու փորձը և այլն) սրտի ֆիբրիլյացիայի նշան է: Այդ դեպքում անհրաժեշտ է շարունակել արհեստական շնչառությունն ու սրտի մերսումը՝ մինչև նրան բուժանձնակազմին հանձնելը:

Մինչև 12 տարեկան երեխաների վերակենդանացման միջոցառումներն ունեն առանձնահատկություններ: 1-12 տարեկան երեխաների սրտի մերսումը կատարում են մեկ ձեռքով (նկ.30) և՛ տարիքից կախված, կատարում են թուփում 70-100 սեղմում, մինչև մեկ տարեկան երեխաներին՝ թուփում 100-120 սեղմում, երկու մատով (ցուցամատով և միջնամատով)՝ լանջուկի մեջտեղում (նկ.31), կամ զույգ ձեռքերի բթամատերով՝ մնացած մատներով գրկելով երեխայի իրանը:




Նկ.28. Արհեստական շնչառություն տալը և սրտի արտաքին մերսում կատարելը մի մարդու կողմից



Նկ.29. Արհեստական շնչառություն տալը և սրտի արտաքին մերսում կատարելը երկու հոգով



Նկ.30. Մինչև 12 տարեկան երեխաների սրտի արտաքին մերսում կատարելը



Նկ.31. Նորածինների և մինչև 1 տարեկան երեխաների սրտի արտաքին մերսում կատարելը

5. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՀՈՍԱՆՔԻՑ ՏՈՒԺԱԾՆԵՐԻՆ

Էլեկտրական հոսանքի ազդեցությունից ազատելուց հետո անհրաժեշտ է գնահատել տուժածի վիճակը: Վիճակի գնահատումը և այն նշանները, ըստ որոնց կարելի է արագ որոշել տուժածի վիճակը, նույն են, ինչ՝ Հավելված ա-ի 3-րդ կետում բերվածները:

Առաջնահերթ օգնությունը ցույց է տրվում 3-րդ կետերին համապատասխան, վերակենդանացումը՝ 4-րդ կետին և առաջին օգնությունը՝ վնասվածքներով ուղեկցվող դժբախտ պատահարների ժամանակ՝ Հավելված ա-ի 6-15 կետերին համապատասխան:

Էլեկտրական հոսանքի ազդեցությունից տուժածին փրկելը մեծ մասամբ կախված է հոսանքից նրան ազատելու արագությունից, ինչպես նաև օգնություն ցույց տալու արագությունից և ճշտությունից: Վերջինիս հապաղումը կարող է բերել տուժածի մահվան:

Հոսանահարման դեպքում մահը հաճախ լինում է կլինիկական: Այդ պատճառով էլ երբեք չպետք է հրաժարվել տուժածին օգնություն ցույց տալուց և շնչառության, երակազարկի, սրտի զարկերի բացակայության պատճառով նրան մեռած համարել: Տուժածի վերակենդանացման միջոցառումների անօգուտ լինելը կամ նպատակահարմարությունը որոշելու վերաբերյալ եզրահանգում կատարելու իրավունք ունի միայն բժիշկը:

Ոչ մի դեպքում տուժածին չի կարելի թույլ տալ շարժվել, առավել ևս՝ շարունակել աշխատանքը, քանի որ էլեկտրական հոսանքից կամ այլ պատճառներից տեսանելի վնասվածքների բացակայությունը դեռևս չի բացառում նրա վիճակի հետագա վատացման հնարավորությունը: Միայն բժիշկը կարող է որոշել տուժածի առողջական վիճակի հարցը:

Տուժածին կարելի է տեղափոխել միայն այն դեպքում, երբ նրան կամ օգնություն ցույց տվողին շարունակում է վտանգ սպառնալ, կամ եթե տեղում օգնություն ցույց տալն անհնար է (օրինակ՝ հենարանի վրա):

Ոչ մի դեպքում չի կարելի տուժածին ծածկել հողով (թաղել հողի մեջ), քանի որ դա միայն կվնասի նրան և կբերի փրկության համար թանկարժեք բոլորների կորստի:

Շանթահարման ժամանակ ցույց է տրվում նույն օգնությունը, ինչը՝ հոսանահարման դեպքում:

Պատահարի վայր բժիշկ կանչելու անհնարինության դեպքում անհրաժեշտ է ապահովել տուժածի փոխադրումը մոտակա բուժհաստատություն: Տուժածին կարելի է

փոխադրել միայն բավարար շնչառության և կայուն երակազարկի դեպքում: Եթե տուժածի վիճակը թույլ չի տալիս նրա փոխադրումը, անհրաժեշտ է օգնություն ցույց տալը շարունակել:

6. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՐԱՎՈՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

Ամեն մի վերք կարող է հեշտությամբ կեղտոտվել մանրէներով, որոնք կան վերք հասցնող առարկայի կամ տուժածի մաշկի վրա, ինչպես նաև փոշու, հողի մեջ, օգնություն ցույց տվողի ձեռքերի ու կեղտոտ վիրակապի վրա:

Վիրավորվելու դեպքում առաջին օգնություն ցույց տալու ժամանակ անհրաժեշտ է խստորեն պահպանել հետևյալ կանոնները.

ա. չի կարելի վերքը լվանալ ջրով կամ նույնիսկ որևէ դեղանյութով, վրան դեղափոշի ցանել կամ քսուկներ քսել, քանի որ դա խոչընդոտում է վերքի առողջացմանը, նպաստում է մաշկի մակերեսից նրա մեջ կեղտ ընկնելուն, որը հետագայում առաջացնում է թարախակալում,

բ" չի կարելի վերքից հեռացնել ավազը, հողը և այլն, քանի որ այդ ձևով վերքն ամբողջությամբ մաքրել հնարավոր չէ,

գ" չի կարելի վերքից հեռացնել լերդացած արյունը, հագուստի մնացորդները և այլն, քանի որ դա կարող է ուժեղ արյունահոսության պատճառ դառնալ,

դ" չի կարելի վերքը փաթաթել մեկուսիչ ժապավենով կամ նրա վրա ցանցկեն (սարդոստայնային) գործվածք քաշել՝ փայտացումից խուսափելու համար:

Առաջին օգնություն ցույց տալու համար հարկավոր է զգուշորեն մաքրել վերքի շուրջը, որպեսզի վերքը չկեղտոտվի, մաքրված մաշկի վրա յոդ քսել և վիրակապ դնել:

Վիրակապը դնելու համար անհրաժեշտ է բացել դեղարկղիկում (պայուսակում) եղած վիրակապման անհատական փաթեթը՝ ծրարի վրա նշված ցուցումներին համապատասխան: Վիրակապը դնելու ժամանակ չի կարելի ձեռք տալ այն մասին, որն անմիջապես հպվելու է վերքին:

Վիրակապման փաթեթի բացակայության դեպքում որպես վիրակապ կարելի է օգտագործել մաքուր թաշկինակը, մաքուր կտորը և այլն: Անմիջապես վերքի վրա բամբակ դնել չի կարելի:

Կտորի այն մասի վրա, որն անմիջապես հպվելու է վերքին, պետք է մի քանի կաթիլ յոդ կաթեցնել այնպես, որ յոդի հետքը վերքից մեծ ստացվի, և ապա դնել վերքի վրա:

Օգնություն ցույց տվողը պետք է մաքուր լվանա ձեռքերը կամ մատներին յոդ քսի: Նույնիսկ լվացված ձեռքերով անմիջապես վերքին դիպչել չի թույլատրվում:

Եթե վերքը կեղտոտված է հողով, պետք է անմիջապես դիմել բժշկի՝ փայտացման դեմ շիճուկ ներարկելու համար:

7. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՅՈՒՆԱՀՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Արյունահոսությունը լինում է **արտաքին** (երբ արյունը դուրս է հոսում) և **ներքին** (երբ արյունը ներհոսում է գանգի, կրծքի, որովայնի ներքին խոռոչների մեջ):

Կախված այն բանից, թե որ անոթներն են վնասված, արյունահոսությունը լինում է **զարկերակային, երակային, մազանոթային և խառը**:

Չարկերակային արյունահոսությունն առաջանում է խորը կտրված կամ ծակված վերքերի դեպքում: Վառ կարմիր (բոսոր) արյունը հոսում է բաբախող շիթով (սրտամկանի կծկումներին համաչափ), իսկ երբեմն շատրվանում է: Խոշոր զարկերակների (քներակի, ենթանրակային, թևի, ազդրի, ենթաձնկային) վնասվելու ժամանակ առաջանում է շատ ուժեղ արյունահոսություն՝ արյունը մեծ ճնշման տակ դուրս է հոսում անոթներից, և արյունահոսությունը ժամանակին չկանգնեցնելու դեպքում մի քանի րոպե՝ կարող է տուժածի համար ճակատագրական լինել:

Երակային արյունահոսությունն առաջանում է երակների վնասվելու ժամանակ: Արյունն արտահոսում է դանդաղ, հանդարտ շիթով, ունի մուգ կարմիր (բալի) գույն:

Մազանոթային արյունահոսությունն առաջանում է ամենամանր արյունատար անոթների (մազանոթների) վնասվելու դեպքում՝ տարածուն քերծվածքների և մակերեսային վերքերի դեպքում: Արյունը ծորում է վերքի ողջ մակերեսով, արտահոսում է դանդաղ, կաթիլ առ կաթիլ:

Մազանոթային արյունահոսությունը հեշտ է դադարեցնել մանրէազերծ վիրակապի օգնությամբ՝ նախօրոք վերքի շուրջը քսելով յոդ, կամ ջրածնի պերօքսիդի 3%-անոց լուծույթով թրջոցների (վիրակապերի) օգնությամբ:

Խառը արյունահոսություն լինում է այն դեպքերում, երբ վերքից վնասվել են և՛ երակները, և՛ զարկերակները: Ամենից հաճախ այդպիսի արյունահոսություն նկատվում է խորը վերքերի դեպքում:

Արտաքին արյունահոսությունը դադարեցնում են տարբեր եղանակներով:

Արյունահոսության դադարեցումը վիրակապով

Ոչ ուժեղ (երակային կամ զարկերակային) արյունահոսության ժամանակ վերքի վրա պետք է դնել պիրկ սեղմող վիրակապ և արնահոսող մասը բարձրացնել:

Սեղմող վիրակապը դնում են հետևյալ կերպ. վերքի շուրջ յոդ են քսում, արնահոսող վերքը ծածկում են վիրակապման կտորով (մի քանի շերտ մանրէազերծ թանզիֆից, բինտից), վրայից դնում բամբակ և բինտով ամուր կապում: Եթե արյունահոսությունը չի դադարում, ապա, չհանելով վիրակապը, նրա վրա դնում են էլի մի քանի շերտ թանզիֆ (բինտ), բամբակ և բինտով ամուր կապում: Եթե վերջույթ են վիրակապում, ապա բինտի փաթոյթները պետք է գնան ներքևից վերև՝ մատներից դեպի իրան: Վիրավորված վերջույթը բարձրացնում են վեր:

Արյունահոսության դադարեցումը մատներով

Ուժեղ արյունահոսությունն արագ կանգնեցնելու համար կարելի է արտահոսող անոթը՝ վերքից վերև (արյան հոսքի ուղղությամբ), մատներով սեղմել ոսկրին: Զարկերակները սեղմելու առավել արդյունավետ տեղերը նկ. 32-ում նշված են կետերով:

Արյունահոսությունը կանգնեցվում է՝

ա. ճակատը կամ քունքը վիրավորվելու դեպքում՝ ականջի, քունքի զարկերակը սեղմելով,

բ. ծոծրակը վիրավորվելիս՝ ծոծրակի զարկերակը սեղմելով,

գ. գլուխը կամ պարանոցը վիրավորվելիս՝ քներակը պարանոցի ողերին սեղմելով,

դ. ուսը (ուսահողի մոտերքում) և թևատակի փոսիկը վիրավորվելիս՝ ենթանրակային զարկերակն անրակատակի փոսի ոսկրին սեղմելով,

ե. նախաբազուկը վիրավորվելիս՝ թևատակի կամ ներսի կողմից թևի մեջտեղում գտնվող թևի զարկերակը սեղմելով,

զ. դաստակը և ձեռքերի մատները վիրավորվելիս՝ դաստակի մոտ նախաբազկի ներքևի 1/3 մասում գտնվող երկու զարկերակները սեղմելով,

է. ազդրը վիրավորվելիս՝ ազդրի զարկերակը աճուկում սեղմելով,

ը. սրունքը վիրավորվելիս՝ ազդրի մեջտեղում ազդրի զարկերակը կամ ծնկատակի զարկերակը սեղմելով,

թ. ոտնաթաթը և ոտքերի մատները վիրավորվելիս՝ ոտնաթաթի հետևի կողմի զարկերակը կամ հետևի մեծ սրունքային զարկերակը սեղմելով:


Վերջույթների արյունահոսության դադարեցումը՝ դրանք հողային մասերում ծալելով

Վերջույթների արյունահոսությունը կարելի է դադարեցնել վերքից վերև գտնվող հողային մասում այն ծալելով, եթե այդ վերջույթը կոտրվածք չունի (նկ. 33): Տուժածի հագուստի թևքերը կամ անդրավարտիքի փողքերը պետք է արագ հետ ծալել (քշտել) և հողերի ծալվելու փոսիկի մեջ դնել բամբակից, թանգիֆից կամ որևէ կտորից խծուկ և ուժեղ, մինչև վերջ այդ խծուկի վրա ծալել հողը: Այդ դեպքում սեղմվում է վերքին արյուն մատակարարող ծալով զարկերակը: Այդ դեպքում ոտքի կամ ձեռքի ծալը պետք է կապել կամ ամրացնել տուժածի իրանին գլխաշորի, վզնոցի կամ գոտու միջոցով:


Արյունահոսության դադարեցումը լարանի կամ ոլորքի միջոցով

Այս եղանակը կիրառվում է այն դեպքում, երբ հողը ծալելու եղանակը կիրառելի չէ (օրինակ՝ նույն վերջույթի ոսկրերի միաժամանակ կոտրվելու դեպքում): Վիրավորված վերջույթից ուժեղ արյունահոսության դեպքում անհրաժեշտ է լարան դնելով ձգել վերջույթը: Որպես լարան կարելի է օգտագործել որևէ առաձգական ձգվող գործվածք, ռետինե խողովակ, տաբատակալներ և այլն: Լարանը դնելուց առաջ վերջույթը (ձեռքը կամ ոտքը) պետք է բարձրացնել: Եթե օգնություն ցույց տվողն օգնական չունի, ապա մատներով զարկերակի նախնական սեղմումը կարելի է հանձնարարել հենց տուժածին:

Լարանը դնում են թևի կամ ազդրի՝ իրանին մոտ գտնվող մասի վրա (նկ. 34): Այն տեղը, որտեղ դրվելու է լարանը, մաշկը չվնասելու համար պետք է փաթաթվի որևէ փափուկ բանով, օրինակ՝ մի քնափ շերտ բինտով, մառլայի կամ այլ կտորով: Լարանը կարելի է դնել նաև վերնաշապիկի թևքի կամ անդրավարտիքի վրայից:



Նկ. 32. Զարկերակի սեղմման կետերը՝ անոթներից արյունահոսությունը կանգնեցնելու համար




Նկ. 33. Արյունահոսությունը կանգնեցնելու համար հողերում վերջույթների ծալումը
 ա) նախաբազկից, բ) ուսից, գ) սրունքից, դ) ազդրից




Նկ.34. Լարանի (ուսի վրա) և ոլորքի (ազդրի վրա) տեղադրումը

Լարանը դնելուց առաջ այն հարկավոր է ձգել, հետո ամուր փաթաթել վերջույթին այնպես, որ լարանի փաթույթների միջև մաշկի չճաճկված մաս չմնա (նկ.35):



Նկ.35. Ռետինե լարան դնելու փուլերը



Նկ.36. Արյունահոսության դադարեցումը ոլորքով
 ա) հանգույցի կապում
 բ) ոլորում փայտիկի օգնությամբ
 գ) փայտիկի ամրացում (սևեռում)

Լարանի միջոցով վերջույթը չպետք է չափից շատ ձգել, քանի որ կարող են ձգվել ու վնասվել նյարդերը. լարանը պետք է ձգել միայն մինչև արյունահոսության դադարելը: Եթե արյունահոսությունը լրիվ չի դադարել՝ պետք է դնել լարանի ևս մի քանի փաթույթ (ավելի ձիգ): Լարանը դնելու ճշտությունը ստուգում են երակազարկի միջոցով. եթե այն շոշափվում է, ուրեմն լարանը սխալ է դրված: Պետք է հանել և նորից փաթաթել: Լարանը 1,5-2 ժամից ավել ձգված թողնել չի թույլատրվում, քանի որ արյունագրկված վերջույթները կարող են մեռնել:

Ցավը, որ պատճառում է դրված լարանը, շատ ուժեղ է լինում, ինչի հետևանքով երբեմն ստիպված են լինում որոշ ժամանակով լարանը հանել: Այդ դեպքերում լարանը հանելուց առաջ անհրաժեշտ է մատներով սեղմել այն զարկերակը, որով արյունը հոսում է դեպի վերքը և տուժածին հնարավորություն տալ ցավից հանգստանալու, իսկ վերջույթին՝ որոշ չափով արյուն ստանալու: Դրանից հետո լարանը կրկին դնում են: Լարանը պետք է թուլացնել աստիճանաբար ու դանդաղ: Եթե նույնիսկ տուժածը դիմանում է ցավին, այնուամենայնիվ, մեկ ժամ հետո լարանը անպայման պետք է 10-15 րոպեով հանել:

Ձեռքի տակ որևէ ձգվող ժապավեն չլինելու դեպքում վերջույթը կարելի է ձգել, այսպես կոչված, ոլորքի միջոցով, որը պատրաստվում է ձգվող կտորից՝ փողկապից, գոտուց, ոլորված թաշկինակից կամ սրբիչից, պարանից, կաշեգոտուց և այլն (նկ.36):

Այն կտորը, որից պատրաստվում է ոլորքը, օղակում է բարձրացրած վերջույթը, որի տակ նախօրոք դրվում է համապատասխան փափուկ տակդիր (օրինակ՝ մի քանի շերտ բինտ), և վերջավորության դրսի կողմից կապվում հանգույցով: Այդ հանգույցի մեջ (կամ դրա տակ) անցկացվում է փայտիկի ձև ունեցող որևէ ամուր առարկա, որը պտտում են մինչև արյունահոսության դադարելը: Մինչև անհրաժեշտ չափի պտտելուց հետո փայտիկն ամրացնում են այնպես, որ ինքնաբերաբար հետ չպտտվի (նկ.36):

Լարանը կամ ոլորքը դնելուց հետո անհրաժեշտ է երկտող գրել, նշելով դրանց դնելու ժամանակը, և տեղավորել վիրակապի կամ լարանի տակ: Կարելի է գրել նաև վերջույթի մաշկի վրա: Տուժածին՝ ձգված լարանով պետք է որքան կարելի է արագ տեղափոխել բուժհաստատություն:

Ներքին արյունահոսության ժամանակ, որը շատ վտանգավոր է կյանքի համար, արյունը հոսում է ներքին խոռոչների մեջ, և, գործնականում, արյունը դադարեցնելն անհնար է: Այդ մասին կարելի է գլխի ընկնել տուժածի արտաքին տեսքից. գունատվում է, մաշկի վրա առաջանում է կպչուն քրտինք, շնչում է արագ և մակերեսային, երակազարկը՝ հաճախակի

ու թույլ լիցքով: Տուժածին պետք է պառկեցնել կամ կիսանստած դիրքի բերել՝ ապահովելով լրիվ հանգիստ, և ենթադրվող արյունահոսող տեղի վրա «սառը» դնել (սառույցով կամ սառը ջրով պարկ) և շտապ բժիշկ կանչել: Եթե որովայնային խոռոչի օրգանների վնասվածքի կասկած կա, ապա տուժածին ջուր խմել չի կարելի:

Քթից արյունահոսության դեպքում տուժածին պետք է նստեցնել՝ գլուխը թեթևակի առաջ թեքած, որ արյունը քթնմպանի մեջ չլցվի: Պետք է արձակել օձիքը, քթի և քթարմատի վրա դնել սառը թրջոց (տաքանալուց փոխել), քթանցքի մեջ մտցնել ջրածնի պերօքսիդի 3%-անոց լուծույթով թրջված թանգիֆի կամ բամբակի կտոր, չորսից-հինգ րոպե մատներով սեղմելով փակել քթանցքները:

Բերանից արնահոսության դեպքում (արյան փսխումով) տուժածին պետք է պառկեցնել՝ գլուխը թեքելով կողքի, և շտապ հասցնել բուժհաստատություն:

8. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՏՐՎԱԾՔՆԵՐԻ, ՀՈԴԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ, ՃՄԼՎԱԾՔՆԵՐԻ (ՍԱԼՋԱՐԴԵՐԻ) ԵՎ ԿԱՊԱՆՆԵՐԻ (ՋԻԼԵՐԻ) ԳԵՐՁԳՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Կոտրվածքը ոսկրի ամբողջականության խախտումն է: Կոտրվածքի շրջանում տուժածն զգում է սուր ցավ, որն ուժեղանում է դիրքը փոխել փորձելիս, նկատվում է ոսկրի կոտրված մասերի շեղումով պայմանավորված ձևախախտում (դեֆորմացիա), ուռածություն: Կոտրվածքները լինում են բաց և փակ. բաց կոտրվածքը ուղեկցվում է մաշկի վնասվածքով:

Կոտրվածքների ժամանակ անհրաժեշտ է ապահովել կոտրված ոսկրի անշարժացում (հանգիստ վիճակի ստեղծում): Դա նվազեցնում է ցավը և կանխում ոսկրի մասերի հետագա շեղումը և դրանցով արյունատար անոթներին և փափուկ հյուսվածքներին կրկնական վնասվածք հասցնելը:

Բաց կոտրվածքների ժամանակ նախ դադարեցնում են արյունահոսությունը և դնում մանրէազերծ վիրակապ: Անշարժացման համար օգտագործում են ստանդարտ ձևի կամ ձեռքի տակ եղած նյութերից (նրբատախտակից, տախտակից, փայտից և այլն) պատրաստված տախտավանդներ (բեկակալ):

Փակ կոտրվածքի ժամանակ տուժածի վրայից հագուստը չպետք է հանել. տախտավանդը պետք է դնել հագուստի վրայից: Ցավը նվազեցնելու համար կոտրվածքի տեղում պետք է սառը դնել (սառույցով կամ սառը ջրով ռետինե պարկ, սառը թրջոցներ և այլն):

Հողախախտումը ոսկրերի կայուն տեղաշարժն է, երբ հողային մակերեսները դադարում են մասամբ կամ ամբողջությամբ հպվել: Հողախախտման պահին առաջացած սուր ցավը չի նվազում և հետո: Հողախախտման համար ամենաբնորոշը հողում շարժումների անհնարինությունն է, նրա ոչ բնական դիրքը, ուռածությունը:

Հողախախտման կամ կոտրվածքի ժամանակ անհրաժեշտ է տախտավանդի օգնությամբ ապահովել վնասված վերջույթի լրիվ անշարժությունը և սառը դնել վնասված տեղին: Չի կարելի փորձել ինքնուրույն ուղղել հողախախտումը. դա կարող է անել միայն բժիշկը:

Տուժածին անհրաժեշտ է հասցնել բուժհաստատություն՝ հանգիստ դիրք ստեղծելով վնասված վերջույթի կամ մարմնի այլ մասերի համար՝ փոխադրելու կամ բուժանձնակազմին հանձնելու ժամանակ:

Վերջույթի ոսկրերի հողախախտման և կոտրվածքի դեպքում տախտավանդ դնելով պետք է ապահովել ծայրահեղ դեպքում երկու հողերի անշարժությունը. մեկը՝ կոտրվածքից վերև, մյուսը՝ կոտրվածքից ներքև: Իսկ խոր ոսկրերի կոտրվածքի դեպքում՝ նույնիսկ երեք հողերի. տախտավանդի կենտրոնը պետք է գտնվի կոտրվածի տեղում: Տախտավանդի կապերը չպետք է սեղմեն խոշոր անոթները, նյարդերը և ոսկրերի ելուստները: Ավելի լավ է՝ տախտավանդը փաթաթել փափուկ կտորով և բինտով կապել:

Տախտավանդի դիրքը հաստատում (սևեռում) են բինտով, գլխաշորով, գոտիով և այլն: Տախտավանդ չլինելու դեպքում պետք է վնասված վերին վերջույթը կապել իրանին, իսկ վնասված ստորին վերջույթը՝ առողջ վերջույթին:

Ուսուկրի կոտրվածքի կամ հողախախտման դեպքում տախտավանդը պետք է դնել արմնկահողում ծավված ձեռքի վրա: Ոսկրի վերին մասի վնասվածքի ժամանակ տախտավանդը պետք է ընդգրկի երկու հող՝ բազկի և արմունկի, իսկ ստորին մասի կոտրվածքի դեպքում՝ նաև ենթադաստակի (նկ.37): Տախտավանդը պետք է կապել ձեռքին բինտով, իսկ ձեռքը գլխաշորով կամ բինտով կախել պարանոցից:

Նախաբազկի կոտրվածքի կամ հողախախտման դեպքում տախտավանդը (ափի լայնությամբ) պետք է դնել արմնկահողից մինչև մատների ծայրը՝ տուժածի ափի մեջ դնելով բամբակից կամ բինտից պինդ խձուկ, որը տուժածը, կարծես թե, բռնում է բռունցքում (նկ.38): Տախտավանդ չլինելու դեպքում ձեռքը գլխաշորով (նկ.39) կարելի է կախել վզից կամ բաճկոնի փեշից (նկ.40):

Եթե հողախախտման ժամանակ ձեռքը հեռացած է իրանից, պետք է ձեռքի և իրանի արանքում որևէ փափուկ բան դնել (օրինակ՝ ոլորված հագուստ):

Ձեռքի մատների և դաստակի ոսկրերի կոտրվածքի կամ հողախախտման դեպքում դաստակը պետք է բինտով կապել լայն (ափի լայնությամբ) տախտավանդին, որը պետք է սկսվի նախաբազկի մեջտեղից և վերջանա մատների ծայրում: Վնասված ձեռքի ափի մեջ պետք է դրվի բամբակից կամ բինտից խճուկ, որպեսզի մատները փոքր-ինչ ծալված լինեն: Ձեռքը պետք է բինտով կամ գլխաշորով կախել պարանոցից:

Ազդրոսկրի կոտրվածքի կամ հողախախտման դեպքում ոտքը պետք է արտաքին կողմից տախտավանդին ամրացվի այնպես, որ տախտավանդի մի ծայրը հասնի թևատակին, իսկ մյուսը՝ կրունկին: Երկրորդ տախտավանդը դնում են վնասված ոտքի կողմից՝ շեքից մինչև կրունկ (նկ.41): Դրանով ապահովվում է ամբողջ ստորին վերջույթի լրիվ հանգիստը: Տախտավանդները պետք է դնել՝ ոտքը հնարավորինս չբարձրացնելով, այլ՝ հենց տեղում պահելով, մի քանի տեղից (իրանին, ազդրին, սրունքին), կապել բինտով, բայց ոչ կոտրված տեղում կամ նրան անմիջապես մոտ: Բինտը գոտկատեղի, ծնկի կամ կրունկի տակ պետք է անցկացնել (խցկել) փայտիկի միջոցով:

Սրունքի կոտրվածքի կամ հողախախտման դեպքում անշարժացվում են ծնկի և սրունքաթաթի հողերը (նկ.42):

Անրակի կոտրվածքի կամ հողախախտման դեպքում պետք է վնասված կողմից թևատակի (անութի) փոսիկի մեջ դնել ոչ մեծ բամբակե խճուկ, արմունկում ուղիղ անկյան տակ ծալած ձեռքը բինտով կապել իրանին (նկ.43) և գլխաշորով կամ բինտով կախել պարանոցից: Բինտը պետք է փաթաթել հիվանդ ձեռքից դեպի մեջքի ուղղությամբ:

Ողնաշարի վնասվածքի դեպքում զգացվում է սուր ցավ ողնաշարի մեջ, հնարավոր չէ մեջքը թեքել կամ շրջվել: Առաջին օգնությունը պետք է լինի զգուշորեն, տուժածին չբարձրացնելով, նրա մեջքի տակ պետք է մոցնել լայն տախտակ կամ ծխնիներից հանված դուռ, կամ տուժածին պետք է շրջել դեմքով դեպի ներքև և խստորեն հետևել, որպեսզի շրջելու ժամանակ իրանը չճկվի (ողնուղեղի վնասումից խուսափելու համար):

Կողոսկրի կոտրվածքի դեպքում՝ շնչելիս, հազալիս և շարժվելիս՝ ցավ է զգացվում: Օգնություն ցույց տալու ժամանակ անհրաժեշտ է բինտով ամուր կապել կուրծքը կամ՝ արտաշնչելիս՝ սրբիչով պինդ ձգել:

Կոնքոսկրի կոտրվածքի դեպքում՝ ցավ է զգացվում կոնքը շոշափելիս, աճուկում, սրբանոսկրի (գավակի) շրջանում, անհնար է բարձրացնել ուղղված ոտքը: Օգնությունը

կայանում է հետևյալում. տուժածի մեջքի տակ պետք է մտցնել լայն տախտակ, պառկեցնել «գորտի» դիրքում, այսինքն՝ ծնկները ծալված ու իրարից հեռացած, իսկ ոտնաթաթերն՝ իրար միացած, ծնկների տակ դնել ոլորված հագուստ: Տուժածին չի կարելի շրջել կողքի, նստեցնել կամ կանգնեցնել (ներքին օրգանները չվնասելու համար):

Գլխի վնասվածքի դեպքում հնարավոր է գանգոսկրի կոտրվածք (նշաններն են՝ արյունահոսություն բերանից ու ականջներից, անգիտակից վիճակ) կամ ուղեղի ցնցում (նշաններն են՝ գլխացավ, սրտխառնոց, փսխում, գիտակցության կորուստ):

Առաջին օգնությունը կայանում է հետևյալում. տուժածին պետք է պառկեցնել մեջքի վրա, գլուխը երկու կողմից անշարժացնել ոլորված հագուստի միջոցով, գլուխը ձիգ վիրակապել, վերքի առկայության դեպքում մանրէազերծ վիրակապ դնել (նկ.44), դնել «սառը» և ապահովել լրիվ հանգիստ՝ մինչև բժշկի գալը:


Անգիտակից վիճակում գտնվող տուժածը կարող է փսխել, դրա համար գլուխը պետք է կողքի վրա թեքել: Կարող է նաև լեզուն կուլ գնալու հետևանքով շնչահեղձություն առաջանալ: Այդ դեպքում անհրաժեշտ է առաջ քաշել ստորին ծնոտը և պահել այդ դիրքում, ինչպես արհեստական շնչառություն տալու ժամանակ (տես նկ.18):

Ճմլվածքի (սարջարդի) դեպքում առաջանում է ուռածություն, ցավ՝ ճմլված տեղին դիպչելիս: Օգնությունը կայանում է ցավը նվազեցնելու և արյան զեղումը կանխելու համար «սառը» դնելու և պիրկ վիրակապելու մեջ: Ճմլված տեղի համար ստեղծում են հանգիստ վիճակ: Ճմլված տեղին չպետք է յոդ քսել, շփել, տրորել և տաքացնող թրջոց դնել, քանի որ դրանք ուժեղացնում են ցավը:

Կապանների (ջլերի) ձգվելու (հողի վնասվածքի) դեպքում զգացվում է սուր ցավ, առաջանում է ուռածություն և սահմանափակվում է հողերի շարժունակությունը: Առաջին օգնություն ցույց տալու ժամանակ վնասված վերջույթն անհրաժեշտ է պիրկ վիրակապել և ապահովել հանգիստ վիճակ: Վնասված տեղին պետք է դնել «սառը»: Վնասված ոտքը պետք է լինի բարձրացված, իսկ ձեռքը՝ գլխաշորով պարանոցից կախված:

Ծանրության տակ ճզմվելու դեպքում պետք է տուժածին ազատել ծանրությունից, վնասված վերջույթը բինտով ձիգ փաթաթել և բարձրացնել՝ տակը ոլորած հագուստ դնելով: Վնասված հյուսվածքների քայքայման ժամանակ՝ առաջացող թունավոր նյութերի ներծծումը նվազեցնելու համար՝ բինտի վրայից դնել «սառը»:

Վերջույթի կոտրվածքի դեպքում պետք է բեկակալ դնել: Եթե տուժածի մոտ բացակայում են շնչառությունն ու երակազարկը, անհրաժեշտ է անմիջապես սկսել արհեստական շնչառություն տալն ու սրտի մերսում կատարելը:



Նկ.37. Տախտավանդ (բեկակալ) դնելն ուսի կոտրվածքի դեպքում




Նկ.38. Տախտավանդ դնելը նախաբազկի կոտրվածքի դեպքում




Նկ.39. Ձեռքը գլխաշորով պարանոցից կախելը



Նկ.40. Ձեռքը բաճկոնի փեշի օգնությամբ կախելը



Նկ.41. Տախտավանդ դնելը ազդրի կոտրվածքի դեպքում



Նկ.42. Տախտավանդ դնելը սրունքի կոտրվածքի դեպքում



Նկ.43. Վիրակապ դնելը անրակի հողախախտման կոտրվածքի դեպքում



Նկ.44. Վիրակապ դնելը գանգ-ուղեղային վնասվածքի դեպքում

9. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՐՎԱԾՔՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Այրվածքները լինում են. ջերմային, որն առաջանում է կրակից, շոգից, տաք առարկաներից ու նյութերից, քիմիական՝ թթուներից ու ալկալիներից, ինչպես նաև որոշ ծանր մետաղների աղերից, էլեկտրական՝ էլեկտրական հոսանքի կամ էլեկտրական աղեղի ազդեցությունից, ճառագայթային սարքավորումներից, արևից:

Ըստ վնասվածության խորության՝ այրվածքները բաժանվում են 4 աստիճանի. առաջին՝ մաշկի կարմրելն ու այտուցվելը, երկրորդ՝ բուշտերի առաջացում, երրորդ՝ մաշկի շերտերի մեռուկացում, չորրորդ՝ ամբողջական մաշկի ածխացում, մկանների, ոսկրերի և ջղերի վնասում:

Առաջին աստիճանի ջերմային - էլեկտրական այրվածքների դեպքում մարդու մարմնի վրա վնասակար գործոնի (կրակի, տաք մակերեսների, տաք հեղումների, շոգու և այլն) ներգործությունը վերացնելուց հետո մարմնի վնասված մասերը 10-15 րոպեով պետք է ջրել սառը շիթով: Դա նվազեցնում է ցավը, ինչպես նաև հյուսվածքների գերտաքացման ժամանակն ու խորությունը, և կանխում այտուցը:

Առաջին և երկրորդ աստիճանի ոչ մեծ մակերեսով այրվածքի դեպքում այրված մասի վրա պետք է դնել մանրէազերծ վիրակապ՝ օգտագործելով բինտ կամ թանզիֆ, ջրել սառը շիթով, ցավազրկել:

Տուժածին առաջին օգնություն ցույց տալու ժամանակ, վարակումից խուսափելու համար, չի կարելի ձեռքերով դիպչել մաշկի այրված մակերեսին, քսել որևէ քսուք, յուղ, վազելին, կամ ցանել խմելու սոդա, օսլա և այլն: Չի կարելի բացել բշտիկները, հեռացնել այրված տեղին կպած մաժիկը, խեժը, բևեկնախեժը կամ այլ խեժանյութեր, քանի որ այդ դեպքում կարելի է հեշտությամբ պոկել այրված մաշկը և դրանով իսկ բարենպաստ պայմաններ ստեղծել վերքի վարակման համար:

Հազուստն ու կոշիկները այրված տեղերից պոկել չի կարելի, այլ անհրաժեշտ է կտրատել մկրատով և զգուշությամբ հանել: Եթե հազուստի խանձված կտորները կպած են մաշկի այրված մասին, ապա դրանց վրայից պետք է դնել մանրէազերծ վիրակապ և տուժածին ուղարկել բուժհաստատություն: Ծանր և ընդարձակ (բազմաթիվ) այրվածքների դեպքում տուժածին անհրաժեշտ է փաթաթել մաքուր սավանով կամ կտորով՝ առանց հազուստը հանելու, տաք ծածկել, տալ մեկից երկու հաբ անալգին կամ ասպիրին, խմեցնել տաք թեյ և ստեղծել հանգիստ պայմաններ, մինչև բշկի ժամանելը:

Այրված դեմքը անհրաժեշտ է ծածկել մանրէագերծ թան՝ զիֆով:

Տնցման առաջին նշանների դեպքում, երբ տուժածը կտրուկ գունատվում է, շնչառությունը դառնում է մակերեսային և հաճախակի, երակազարկը հազիվ է շոշափվում, անհրաժեշտ է նրան շտապ խմեցնել 20 կաթիլ կատվախոտի (վալերիանա) թուրմ:

Աչքերի այրվածքների դեպքում ֆուրոցիլինի լուծույթով թրջված ստերիլ թան՝ զիֆե կտորով փակել և անմիջապես տուժածին ուղարկել բժշկի մոտ:

Էլեկտրական աղեղից կամ հոսանահարումից այրվածք ստանալու դեպքում տուժածին, անկախ այրվածքի չափից, պետք է հասցնել բուժհաստատություն, քանի որ նա պետք է գտնվի մշտական բժշկական հսկողության տակ՝ հաշվի առնելով մարդու օրգանիզմի վրա էլեկտրական հոսանքի ազդեցության առանձնահատկությունները: Էլեկտրական հոսանքի ազդեցությունը կարող է լինել՝

ա" կենսաքիմիական,

բ" էլեկտրաքիմիական,

գ" ջերմային,

դ" մեխանիկական:

Քիմիական այրվածքների դեպքում հյուսվածքների վնասվածքի խորությունը մեծ մասամբ կախված է քիմիական նյութի ազդեցության տևողությունից: Կարևոր է, թե որքանով արագ կարելի է նվազեցնել քիմիական նյութի խտությունը և նրա ազդեցության տևողությունը: Դրա համար վնասված տեղը անմիջապես լվանում են հոսող սառը ջրով (ծորակից, ռետինե ճկափողից կամ դույլից՝ 15-20 րոպե):

Եթե թթուն կամ ալկալին մաշկի վրա են ընկել հագուստի միջով, ապա նախ այն պետք է լվանալ հագուստի վրայից, հետո զգուշությամբ կտրատել և հանել թաց հագուստը, որից հետո լվանալ մաշկը: Մարդու մարմնի վրա ծծմբաթթվի կամ ալկալիի պինդ նյութ ընկնելու դեպքում անհրաժեշտ է այն հեռացնել չոր բամբակով կամ մաքուր կտորով, հետո նոր վնասված տեղը խնամքով լվանալ ջրով և դնել չոր մանրէագերծված վիրակապ:

Քիմիական այրվածքի դեպքում քիմիական նյութերն ամբողջությամբ ջրով լվանալ-հեռացնելն անհնար է: Այդ պատճառով էլ լվանալուց հետո վնասված տեղն անհրաժեշտ է մշակել համապատասխան չեզոքացնող լուծույթներով, որոնք օգտագործվում են թրջոցի, վիրակապի ձևով:

Հետագա օգնությունը քիմիական այրվածքների դեպքում ցույց է տրվում տեղում այնպես, ինչպես ջերմային այրվածքների ժամանակ: Թթվից մաշկի այրվածքի դեպքում դնում են խմելու սոդայի լուծույթի (1 բաժակ ջրին՝ մեկ թեյի գդալ սոդա) թրջոց (վիրակապ):

Թթուն՝ հեղուկի, գոլորշու կամ գազի ձևով աչքերի կամ բերանի խոռոչի մեջ ընկնելու դեպքում, անհրաժեշտ է վանալ մեծ քանակությամբ ջրով, իսկ հետո ողողել սոդայի լուծույթով (1 բաժակ ջրին՝ մեկ թեյի գդալ սոդա):

Մաշկը ալկալիով կամ հիմքով այրվելու դեպքում վնասված տեղերը վանալուց հետո դնում են բորաթթվի լուծույթի (1 բաժակ ջրին՝ մեկ թեյի գդալ թթու) կամ քացախաթթվի թույլ լուծույթի (կիսով չափ ջրով բացված սեղանի քացախով) թրջոցներ (վիրակապ):

Ալկալիի ցայտերը կամ գոլորշիներն աչքերի մեջ կամ բերանի խոռոչ ընկնելու դեպքում անհրաժեշտ է վնասված տեղերը վանալ մեծ քանակությամբ ջրով, իսկ հետո՝ բորաթթվի լուծույթով (1 բաժակ ջրին՝ մեկ թեյի գդալ բորաթթու): Եթե աչքերի մեջ ընկել են քիմիական նյութի պինդ կտորներ, ապա՝ նախ պետք է դրանք հեռացնել խոնավ վիրախձուծով (տամպոն), քանի որ աչքերը վանալիս դրանք կարող են վնասել լորձաթաղանթը և առաջացնել լրացուցիչ վնասվածք: Թթուն կամ ալկալին կերակրափողի մեջ ընկնելու դեպքում անհրաժեշտ է շտապ բժիշկ կանչել:

Մինչև նրա գալը հարկավոր է տուժածի բերանից հեռացնել թուքն ու լորձուները, պակեցնել և տաք ծածկել, իսկ փորի վրա դնել սառը՝ ցավը նվազեցնելու համար: Եթե տուժածի մոտ առաջանում են շնչահեղձության նշաններ, անհրաժեշտ է տալ արհեստական շնչառություն «բերանից-քիթ» եղանակով, քանի որ բերանի լորձաթաղանթը այրված է:

Կերակրափողի մեջ ընկած թթուն կամ ալկալին չի կարելի չեզոքացնել կամ ստամոքսը վանալ ջրով, առաջացնելով փսխում, քանի որ կերակրափողով հետադարձ շարժման ժամանակ այրող հեղուկը կրկին անգամ կվնասի լորձաթաղանթը և կարող է առաջացնել կոկորդի այտուց: Տուժածին կարելի է տալ խմելու ամենաշատը երեք բաժակ ջուր՝ դրանով ջրիկացնելով կերակրափողի մեջ ընկած թթուն կամ ալկալին և նվազեցնելով նրա այրող ներգործությունը: Արդյունավետ է ներգործում կաթը կամ, երբ խմելու ջրի մեջ լուծում են ձվի սպիտակուց (մեկ լիտր սառը ջրին՝ 12 հատ):

Մաշկի զգալի այրվածքների, ինչպես նաև աչքերի մեջ թթու կամ ալկալի ընկնելու դեպքում առաջին օգնություն ցույց տալուց հետո տուժածին պետք է անմիջապես ուղարկել բուժհաստատություն:

10. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՑՐՏԱՀԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Հյուսվածքների վնասվելը ցածր ջերմաստիճանի ազդեցությունից կոչվում է ցրտահարում:

Ցրտահարման պատճառները լինում են տարբեր և, համապատասխան պայմաններում (ցրտի երկարատև ազդեցություն, քամի, բարձր խոնավությունը, նեղ կամ թաց կոշիկներ, անշարժ դիրքը, տուժածի ընդհանուր վիճակը՝ հիվանդություն, ուժասպառություն, ակոհոլային հարբածություն, արյան կորուստ և այլն), ցրտահարում կարող է տեղի ունենալ նույնիսկ 3-7 աստիճան ցելսիուսի ջերմաստիճանի դեպքում: Ցրտահարմանն առավել ենթակա են մատները, դաստակները, ոտնաթաթերը, ականջներն ու քիթը:

Ցածր ջերմաստիճանում հյուսվածքները ոչ թե մեռնում են, այլ տեղի է ունենում նրանց կենսական պրոցեսների ճնշվածություն:

Ինչքան ցածր է հյուսվածքների ճնշվածությունը, այնքան շատ են ճնշվում նրանց կենսագործունեությունը պայմանավորող նյութափոխանակության պրոցեսները (19°C ջերմաստիճանում գրեթե լրիվ դադարում են նյութափոխանակության պրոցեսները, իսկ 10°C ջերմաստիճանում դադարում է արյան հոսքը): Նյութափոխանակության պրոցեսների ճնշումը նվազեցնում է հյուսվածքների կենսական պահանջները, բայց չի տանում նրանց վնասվելուն:

Գերսառած հյուսվածքները սկսում են մեռնել անհամաչափ տաքանալուց:

Օգնություն ցույց տալու ժամանակ գլխավորն այն է, որ թույլ չտրվի գերսառած մասերի արագ տաքացումը, քանի որ նրանց վրա կործանարար ձևով է ազդում տաք ջուրը, տաք օդը, տաք առարկաների և նույնիսկ ձեռքերի հպումը: Մինչև ջեռուցվող շինություն մտնելը տուժածի մարմնի գերսառած մասերը (ավելի հաճախ՝ ձեռքերը կամ ոտքերը) պետք է պաշտպանել ջերմության ազդեցությունից՝ նրանց վրա ջերմամեկուսացնող վիրակապեր (բամբակամառլայե, բրդյա և այլն) դնելով:

Վիրակապը պետք է ծածկի մաշկի միայն խիստ ճերմակած մասը՝ չընդգրկելով փոփոխման չենթարկված մաշկը: Հակառակ դեպքում, մարմնի արյան շրջանառությունը չխախտված մասերից ջերմությունը վիրակապի տակով կտարածվի գերսառած մասերի վրա և կառաջացնի նրանց մակերեսի տաքացում, ինչն էլ կհանգեցնի մակերեսային հյուսվածքների մեռնելուն: Ջերմամեկուսացնող վիրակապը դնելուց հետո անհրաժեշտ է ապահովել ձեռքերի ու ոտքերի գերսառած մասերի անշարժությունը, քանի որ նրանց

անոթները շատ բեկուն են, և արյան հոսքի վերականգնման հետևանքով հնարավոր են արյունազեղումներ: Դրա համար կարելի է օգտագործել տախտավանդներ, ինչպես նաև ձեռքի ցանկացած նյութ՝ պինդ սովարաթղթի, նրբատախտակի և տախտակի կտորներ: Ոտնաթաթի համար պետք է օգտագործել տախտակի երկու կտոր. մեկը՝ սրունքի երկարությամբ դեպի ազդրն անցումով, մյուսը՝ ոտնաթաթի երկարությամբ: Դրանք պետք է պինդ ամրացնել 90° անկյան տակ:

Մարմնի գերսառած մասերի վրա վիրակապը պետք է թողնել այնքան ժամանակ, մինչև ջերմության զգացողությունը վերականգնվի:

Մարմնի ցրտահարման մասում (վերջույթում) արյան շրջանառությունը վերականգնելու համար կարելի է այդ վերջույթը դնել գոլ ջրով (20°C) տաշտի մեջ: 20-30 րոպեի ընթացքում ջրի ջերմաստիճանը բարձրացնում են 20-ից մինչև 40°C, ընդ որում՝ վերջույթը օճառով խնամքով լվանում են: Լոգանքից (տաքացնելուց) հետո վնասված մասերը պետք է չորացնել (սրբել), մանրէազերծ վիրակապ դնել և տաք ծածկել: Չի կարելի ճարպ կամ քսուք քսել, քանի որ այն զգալիորեն դժվարացնում է հետագա մշակումը: Մարմնի ցրտահարված մասը չի կարելի շփել ձյունով, որովհետև այդ դեպքում ուժեղանում է սառածությունը, իսկ փոքրիկ սառցակտորները վնասում են մաշկը, ինչը նպաստում է ցրտահարված մասի վարակվելուն: Ցրտահարված տեղերը չի կարելի տրորել նաև ձեռնոցով, թաշկինակով կամ որևէ կտորով: Կարելի է մերսել մաքուր ձեռքերով, ծայրամասերից դեպի իրան ուղղությամբ:

Մարմնի սահմանափակ մասերի (քիթը, ականջները) ցրտահարման դեպքում դրանք կարելի է տաքացնել օգնություն ցույց տվողի ձեռքերի ջերմության միջոցով:

Օրգանիզմում ջերմությունը վերականգնելու և արյան շրջանառությունը կարգավորելու համար պետք է տալ նաև տաք, քաղցր թեյ, սուրճ, կաթ:

Գիտակցության կորստով ուղեկցվող օրգանիզմի ընդհանուր գերսառչելու դեպքում մինչբժշկական օգնությունը կայանում է տուժածի ձեռքերին ու ոտքերին ջերմամեկուսիչ վիրակապ դնելու մեջ՝ մինչև նրան տաք շինություն տեղափոխելը:

Եթե տուժածի հագին կան սառցակալած կոշիկներ, ապա դրանք չի կարելի հանել, այլ ոտքերը պետք է փաթաթել վերարկուով կամ ձեռքի տակ եղած որևէ կտորով: Տուժածին պետք է շտապ հասցնել մոտակա բուժհաստատություն՝ չհանելով ջերմամեկուսիչ վիրակապերը:

Մարմնին կամ հագուստին հեղուկ փուլում գտնվող հեղուկացված գազ ընկնելուց առաջացած ցրտահարությունը նման է այրվածքին: Հեղուկ գազը մաշկի վրա կամ աչքերի

մեջ ընկնելու դեպքում անհրաժեշտ է վնասված տեղը լվանալ ջրի առատ շիթով և քսել (քանի դեռ բուշտեր չեն առաջացել) հակաայրվածքային քսուք:

11. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԱՐԴՈՒ ՕՐԳԱՆՆԵՐԻ ՄԵՋ ՕՏԱՐ ՄԱՐՄԻՆ ԸՆԿՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

Օտար մարմինները կարող են ընկնել ըմպանի, կերակրափողի, շնչառական ուղիների, աչքերի մեջ, մաշկի տակ և այլն:


Ըմպանի, կերակրափողի և շնչառական ուղիների մեջ ուտելու ժամանակ հաճախ ընկնում են մսի, ձկան ոսկորներ, ինչպես նաև՝ աշխատանքի ժամանակ՝ քորոց, մանր մեխ և այլ առարկաներ՝ բերանի մեջ առնելու դեպքում: Այդ ժամանակ կարող են առաջանալ ցավեր, շնչառության վատացում, հազի նոպա և նույնիսկ շնչահեղձություն: Հացի կողը, շիլա, կարտոֆիլ ուտելով օտար մարմինը կերակրափողից ստամոքս անցնելու փորձերը մեծ մասամբ հաջողություն չեն բերում: Այդ իսկ պատճառով բոլոր դեպքերում պարտադիր պետք է դիմել բժշկի:

Օտար մարմինները մանր մասնիկների տեսքով (մետաղի, քարի, փայտի բեկորներ, ավազահատիկ, միջատներ և այլն) աչքի մեջ ընկնելով առաջացնում են ցավ, արցունք և կարող են աչքի վնասվածքի և տեսողության վատանալու պատճառ դառնալ: Եթե աչքի մեջ փոշեհատիկ է ընկել, ապա այն կարելի է հեռացնել աչքը ջրի շիթով լվանալով՝ շիթն ուղղելով արտաքին անկյունից (քունքից) դեպի ներս (քթի կողմը):

Կարելի է նաև կոպը շրջել և ավազահատիկը հեռացնել մաքուր, խոնավ բամբակով կամ մաքուր թաշկինակով (նկ.45): Աչքը տրորել չի կարելի: Փոշեհատիկը եղջերաթաղանթից ինքնուրույն հեռացնել չի կարելի: Դա պետք է անի միայն բուժաշխատողը և ընդ որում՝ որքան հնարավոր է՝ շուտ. փոշեհատիկն ինչքան երկար մնա աչքի մեջ, այնքան շատ կվնասի եղջերաթաղանթը և կմեծանա բարդացման վտանգավորությունը, ընդհուպ մինչև խոց առաջանալը: Աչքը ծածկելով չոր, մանրէազերծ վիրակապով (նկ.46)՝ պետք է տուժածին որքան հնարավոր է շուտ հասցնել բուժհաստատություն:

Փափուկ հյուսվածքների մեջ (մաշկի, եղունգի տակ և այլն) ընկած օտար մարմինները վտանգավոր են նրանով, որ նրանց հետ միասին թափանցում են մանրէներ, որոնք օտար մարմնի շուրջն առաջացնում են բորբոքային պրոցես: Փափուկ հյուսվածքներից օտար մարմինն ինքնուրույն կարելի է հեռացնել միայն այն դեպքում, երբ վստահ ես, որ կարող ես դա անել հեշտությամբ և ամբողջովին (անմնացորդ):

Փոքր իսկ դժվարության դեպքում պետք է դիմել բժշկի: Օտար մարմինը հեռացնելուց հետո այդ տեղին պետք է յոդ քսել և մանրէազերծ վիրակապ դնել:



Նկ.45. Աչքի զննումը
ա) ներքևի կոպի ձգելը,
բ) վերևի կոպի բարձրացնելը



Նկ.46. Վիրակապ դնելը աչքի վնասվածքի դեպքում

12. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ՈՒՇԱԹԱՓՈՒԹՅԱՆ, ՋԵՐՄԱՀԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԵՎԱՀԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Ուշաթափությունը գիտակցության հանկարծակի, կարճատև կորուստ է (մի քանի վայրկյանից մինչև մի քանի րոպե)՝ ուղեղից արյան հանկարծակի հետհոսքի պատճառով: Ուշաթափությանը սովորաբար նախորդում է գլխապտույտը, աչքերի առաջ մթնելը, ականջներում խշշոցը, իսկ երբեմն նաև՝ սրտխառնոցն ու փսխումը: Ուշաթափությունը կարող է լինել վախի, ուժեղ ցավի, արյունահոսության, մարմնի դիրքի՝ հորիզոնականից ուղղաձիգի կտրուկ փոփոխման հետևանքով: Ուշաթափության ժամանակ տուժածն առատ քրտնում է, վերջույթները սառչում են, երակազարկը դառնում է հաճախակի և թույլ, շնչառությունը՝ մակերեսային, մաշկը՝ գունատ: Օգնություն ցույց տալու ժամանակ տուժածին պետք է պառկեցնել մեջքի վրա այնպես, որ գլուխը ցածր լինի իրանից (ոտքերին բարձր դիրք տալ), արձակել շնչառությունը դժվարացնող հագուստը, ապահովել թարմ օդի ներհոսք, դեմքին ցանել սառը ջուր, տալ հոտոտելու անուշադրի սպիրտով թրջած բամբակ, թեթևակի խփել այտերին: Գիտակցությունը կորցրած վիճակում տուժածը կարող է փսխել, այդ պատճառով գլուխը պետք է կողքի թեքել: Հարկ չկա գլխին սառը թրջոց կամ սառույց դնել: Նախաուշաթափության վիճակում տուժածին պետք է տալ սառը ջուր կամ տաք թեյ:

Ջերմահարությունը կամ արևահարությունն առաջանում են օրգանիզմի գերտաքացումից և դրա հետևանքով՝ դեպի ուղեղը արյան ուժեղ հոսքից: Դա լինում է այն դեպքերում, երբ ջերմային բալանսը խախտվում է, և դրսից ստացված ու օրգանիզմում

կուտակվող ջերմության անջատումը (ջերմափոխանակությունը) ինչ-որ պատճառով դժվարանում է: Գերտաքացման են հանգեցնում շրջապատող օդի բարձր ջերմաստիճանը, զգալի խոնավությունը, խոնավությունը չանցկացնող (ռետինապատ կամ բրեզենտե) հագուստը: Գերտաքացմանը նպաստում են ծանր ֆիզիկական աշխատանքը, ալկոհոլային հարբածությունը, քնատությունը, ջուր խմելու և սնվելու ռեժիմի խախտումը:

Ջերմահարության ժամանակ վատանում է ինքնազգացողությունը, առաջանում է թուլություն, ուժեղ շոգի զգացում, մաշկի կարմրություն, առատ քրտնարտադրություն (քրտինքը հոսում է կաթիլներով), սրտի արագացած զարկեր, շնչարգելություն, զարկեր և ծանրություն քունքերում, գլխապտույտ, գլխացավ, սրտխառնոց, երբեմն՝ փսխում: Մարմնի ջերմաստիճանը բարձրանում է մինչև 38-40°C, երակազարկի հաճախությունը՝ հասնում թոպեում 100-120-ի:

Ջերմահարությունը բնութագրվում է օրգանիզմում ջերմության սահմանային կուտակումով (մարմնի ջերմաստիճանը՝ 41-42°C և ավելի), գիտակցության մթազնումով՝ ընդհուպ նրա լրիվ կորուստը, մկանների տարբեր խմբերի ջղաձգությամբ, շնչառության և արյան շրջանառության խախտումով: Հնարավոր են զգայախառնություն և զառանցանք: Մաշկը դառնում է չոր և տաք, լեզուն նույնպես չոր, երակազարկը՝ հազիվ շոշափվող և անհամաչափ: Եթե ջերմահարության դեպքում օգնությունը ժամանակին չտրվի, հնարավոր է մահացու ելք: Մարդը մահանում է շնչառության և արյան շրջանառության խախտման հետևանքով:

Արևահարությունն առաջանում է, երբ մարդը երկար ժամանակ գլուխը բաց գտնվում է արևի ուղիղ ճառագայթների տակ: Արևահարության նշանները նույնն են, ինչ ջերմահարության ժամանակ:

Ջերմահարության և արևահարության դեպքում օգնությունը կայանում է հետևյալում. տուժածին պետք է շտապ տեղափոխել զով տեղ, պառկեցնել մեջքի վրա, գլխի տակ դնելով ծավված հագուստը, հանել կամ արձակել հագուստը, գլուխն ու կուրծքը թրջել սառը ջրով, սառը թրջոց կամ սառույց դնել գլխին (ճակատի վրա, գագաթի շրջանում, ծոծրակին) և աճուկային, անրակատակի, ծնկատակի, թևատակի շրջաններում, որտեղ կուտակված են շատ անոթներ: Եթե մարդու գիտակցությունը տեղն է, ապա նրան կարելի է տալ թունդ սառը թեյ կամ սառը աղի ջուր: Երբ տուժածի մոտ խախտված է շնչառությունը և երակազարկ չկա, անհրաժեշտ է կատարել վերակենդանացման միջոցառումներ՝ արհեստական շնչառություն և սրտի արտաքին մերսում:

13. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Գազերից թունավորվելու ժամանակ, այդ թվում ացետիլենից, շմոլ գազից, բնական գազից, բենզինի գոլորշիներից և այլն, առաջանում է գլխացավ, զարկեր քունքերում, խշշոց ականջներում, ընդհանուր թուլություն, գլխապտույտ, սրտի արագ զարկեր, սրտխառնոց և փսխում:

Ուժեղ թունավորումների ժամանակ առաջանում է քնկոտություն և ապատիայի (հոգեկան անտարբերության) վիճակ, իսկ ծանր թունավորումների ժամանակ՝ անկանոն շարժումներով գրգռված վիճակ, շնչառության խանգարում, բիբերի լայնացում: Գազավորված գոտուց տուժածին դուրս բերելուց հետո անհրաժեշտ է պառկեցնել տուժածին՝ գլխատակը 30 աստիճան բարձր դիրքում, շփել մարմինը, տաք ծածկել, և տալ բարձիկով թթվածին: Անգիտակից վիճակում տուժածը կարող է փսխել, այդ պատճառով պետք պառկեցնել կողքի:

Շնչառությունը դադարելու դեպքում պետք է արհեստական շնչառություն տալ: Ազոտի օքսիդից թունավորվելու դեպքում ներշնչելիս առաջանում է շնչառության դժվարություն, հազ, կոկորդի այտուց, սուլող շնչառություն: Տուժածին պետք է տալ թթվածին, չփչել Սալբուտամոլ (3 հրոց):

Աչքերը, ականջները, քիթը և կոկորդը լցվելիս առաջացնում է քթի, աչքերի, ականջների, շուրթերի կամ լեզվի այրոց, ուժեղ ցավ կոկորդում, կուլ տալու անկարողություն, տեսողության խանգարում, ուստի անհրաժեշտ է առատ ջրով ողողել բերանը: Ստամոքս ներթափանցելու դեպքում փսխում առաջացնել չի կարելի: Աչքերի ախտահարման դեպքում չի կարելի աչքերը տրորել, անհրաժեշտ է շարունակաբար՝ 15-20 րոպե տևողությամբ, լվանալ, ցավի դեպքում կաթեցնել տեղային անզգայացնող աչքի կաթիլներ: Մաշկին թափվելու դեպքում լվանալ առատ գոլ ջրով:

Քլորից թունավորում կարող է առաջանալ մաշկի հետ շփման, կլման և շնչելու դեպքում, որը առաջացնում է մաշկի այրվածքներ և գրգռվածություն, այրոց բերանում և կոկորդում, կոկորդի այտուց, ստամոքսի ցավ, փսխում: Շնչառական ախտանշանները ներառում են հազ, շնչառության դժվարացում, շնչարգելություն, հեղուկի կուտակում թոքերում: Աչքերի վնասումն առաջացնում է այրոց, արցունքահոսություն, տեսողության խանգարում:

Անհրաժեշտ է ախտահարված մաշկը լվանալ օճառով և ջրով, քիթը և բերանը՝ ջրով, աչքերը՝ ջրով՝ 15 րոպե շարունակ, կլման ակտի առկայության դեպքում՝ խմեցնել գոլ կաթ կամ ջուր, փսխում չառաջացնել: Շնչարգելության դեպքում տալ թթվածնի բարձիկ, կատարել Սալբոտամոլի ներփչում:

Ամոնիակից թունավորվելու դեպքում պետք է տալ ներշնչման թթվածին բարձիկով, թույլ չտալ տուժածին տեղաշարժվել, քանի որ անշարժ մնալը կարող է հետաձգել թոքային այտուցի ախտանիշները (վիճակ, երբ ավելորդ հեղուկը կուտակվում է թոքերում): Մաշկի հետ շփման դեպքում տուժած մաշկը լվանալ գոլ ջրով 5 րոպե, հեռացնել հագուստը տուժած մաշկին կաշող հատվածներից, ծածկել ստերիլ վիրակապով:

Պատահաբար ամոնիակի լուծույթ խմելու դեպքում փսխում չառաջացնել: Աղտոտված աչքերը գազային ամոնիակի դեպքում լվանալ 5 րոպե գոլ ջրով, հեղուկ գազային ամոնիակի դեպքում աչքերը կարճատև լվանալ գոլ ջրով, այնուհետև երկու աչքերը փակել ստերիլ վիրակապով:

Ածխածնի օքսիդից (CO) թունավորումն առաջացնում է գլխացավ, թուլություն, գլխապտույտ, արգելակում, տեսողության խանգարումներ, սրտխառնոց, փսխումներ, ցավ կամ սեղմող զգացում կրծքավանդակում, հաճախասրտություն, հաճախաշնչություն, ծանր դեպքերում՝ ուշագնացություն, գիտակցության խանգարում, ցնցումներ, մակերեսային առիթմիկ շնչառություն կամ շնչառության ընկճում, առիթմիկ պուլս, ճնշման անկում:

Պետք է հետևել, որ տուժածը չքնի, քանի որ քնած ժամանակ նվազում է շնչառությունը և հետևաբար՝ թթվածնի մուտքը օրգանիզմ, և տուժածը կարող է մահանալ (տուժածին քայլեցնելն ու ուժեղ քաշքշելն արգելվում է, քանի որ ֆիզիկական ծանրաբեռնվածությունը կարող է հանգեցնել մահվան):

Անհրաժեշտ է թթվածնի բարձիկից մաքուր թթվածին տալ շնչելու:

Հիդրազինհիդրատից թունավորվելու դեպքում (բերանով) անհրաժեշտ է տուժածի ստամոքսը լվանալ՝ ջուր խմեցնելով առաջացնել փսխում. տալ լուծողական (մեկ բաժակ ջրին 1-2 ճաշի գդալ դառը անգլիական աղ) և շտապ հասցնել բուժհաստատություն:

Հիդրազինհիդրատ շնչելու դեպքում՝ տուժածին տեղափոխել մաքուր օդ և հանգիստ թողնել շնչելու համար հարմար դիրքում:

Մաշկին թափվելիս՝ անմիջապես հանել աղտոտված հագուստը, լվանալ մաշկը ջրով/ցնցուղով, եթե մաշկի գրգռում կամ ցան է առաջանում՝ դիմել բժշկական խորհրդատվության:

Աչքերին թափվելիս՝ զգուշորեն լվանալ ջրով մի քանի րոպե: Հեռացնել կոնտակտային ոսպնյակները, եթե առկա են:

Սինթետիկ «իվվիոլ» յուղից թունավորվելու դեպքում (բերանով)՝ տուժածի մոտ առաջանում է գլխացավ, փսխում, ցավեր որովայնի շրջանում, ընդհանուր թուլություն: Երբեմն սկսվում է փորլուծություն, բարձրանում է ջերմությունը: Անհրաժեշտ է տուժածին տալ բժշկական ածուխ՝ 50 գ՝ լուծված 100 մլ ջրում: Հետո տուժածին պետք է շտապ հասցնել բժշկական հաստատություն:

«Իվվիոլ» յուղը մաշկին կաթալու դեպքում՝ մաշկը սրբել կտորով (զգուշորեն, որ չներծծվի), իսկ հետո խնամքով լվանալ օճառով և տաք ջրով, իսկ աչքի մեջ ընկնելու դեպքում՝ աչքերը լվանալ մեծ քանակությամբ ջրով:

Շնչառության և արյան շրջանառության խախտման դեպքում անհրաժեշտ է առանց հապաղելու անցնել արհեստական շնչառություն տալուն և սրտի արտաքին մերսմանը:

14. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱՅԹՎԱԾՔԻ ԴԵՊՔՈՒՄ

Թունավոր օձերի և միջատների խայթելու դեպքում առաջանում են գլխապտույտ, սրտխառնոց, փսխում, բերանի չորություն և դառը համ, արագացած սրտխփոց, շոգի զգացում, շնչարգելություն և քնկոտություն: Բացառիկ ծանր դեպքերում կարող է նկատվել ջղաձգություն, գիտակցության կորուստ, շնչառության ընդհատում: Խայթված տեղում առաջանում է այրող ցավ, մաշկը կարմրում է և այտուցվում: Օձի խայթելու դեպքում օգնությունը կայանում է (որքան կարելի է՝ արագ) թույնն արտածելու (մշտապես այն թքելով) և թույնի տարածումը դանդաղեցնելու նպատակով տուժածի շարժունակությունը սահմանափակելու մեջ:

Օգնություն ցույց տվողի համար թույնի արտածումը վտանգավոր չէ, նույնիսկ եթե բերանում քերծվածքներ կան: Խայթված ոտքը պետք է բինտով կապել առողջ ոտքին և, տակը որևէ բան դնելով՝ բարձրացնել: Խայթված ձեռքն անհրաժեշտ է անշարժացնել ծալած դիրքում: Տուժածին հարկավոր է մեծ քանակությամբ հեղուկ տալ (լավ է՝ տաք թեյ): Ոչ մի դեպքում չի կարելի խայթված վերջույթի վրա լարան դնել, խայթված տեղը այրել, թույնի հեշտ հեռացման համար կտրվածքներ անել, տուժածին ալկոհոլային խմիչք տալ: Տուժածին անհրաժեշտ է ուղարկել բուժհաստատություն, տանել կամ փոխադրել միայն պառկած դիրքում:

Միջատների (մեղունների, պիծակների, իշամեղունների, ձիաբոռերի) կծելու կամ խայթելու դեպքում պետք է հեռացնել խայթը, եթե մնացել է մաշկի մեջ, այտուցի տեղը դնել «սառը» (սառույց, սառը ջրով պարկ, սառը թրջոց), տուժածին տալ մեծ քանակությամբ հեղուկ: Տուժածին արգելվում է ալկոհոլ ընդունել, քանի որ այն նպաստում է անոթների թափանցիկությանը և թույնը պահում է բջիջներում, որն էլ բերում է սաստիկ այտուցման:

Միջատների թույնի նկատմամբ զգայուն մարդկանց մոտ (ալերգիկ հակազդում) միջատների խայթելուց հետո կարող է առաջանալ կոկորդի և լեզվի այտուց և անաֆիլակտիկ (անպաշտպանվածության) ցնցում (գիտակցության կորուստ, սրտանոթային և նյարդային համակարգերի և այլ օրգանների գործունեության խանգարում): Այդ դեպքում տուժածին անհրաժեշտ է տալ 1-2 հաբ դիմեդրոլ և 20-25 կաթիլ կորդիամին, շուրջը դնել տաք ջրով ջեռակներ և շտապ հասցնել բուժհաստատություն:

Շնչառության խանգարման և սրտի կանգի ժամանակ պետք է արհեստական շնչառություն տալ և կատարել սրտի արտաքին մերսում:

Կենդանիների կծելու դեպքում, նույնիսկ եթե կծող կենդանին բոլորովին առողջ տեսք ունի, անհրաժեշտ է վերքի և ճանկովածքի շուրջ յոդ քսել և դնել մանրէազերծ վիրակապ: Տուժածին պետք է ուղարկել բուժհաստատություն՝ կատաղության դեմ պատվաստումներ կատարելու համար: Բժշկի մոտ պետք է ուղարկել նաև այն անձանց, որոնց մաշկի վրա, աչքերի, քթի կամ բերանի մեջ է ընկել կատաղած կենդանու թուփը:

15. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ԽԵՂՂՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

Խեղդվողին առաջին օգնություն ցույց տալը կախված է խեղդվելու ձևից: Տարբերում են խեղդվելու երկու ձև. կապույտ (կապույտ ասֆիկսիա)՝ շնչահեղձություն, որի ժամանակ ջուրը լցվում է թոքերը, և գունատ (սպիտակ ասֆիկսիա)՝ շնչահեղձություն, երբ ջուրը չի թափանցում թոքերը:

Կապույտ տեսակը պատահում է ավելի հաճախ և առաջանում է, երբ խեղդվողը անմիջապես չի ընկղմվում ջրի մեջ, այլ փորձում է մնալ ջրի մակերեսին՝ ծախսելով բավականին էներգիա: Շնչառությունը դառնում է անհամաչափ: Շնչելիս կուլ է տալիս մեծ քանակությամբ ջուր, որը գերլցնում է ստամոքսը: Դժվարանում է շնչառությունը և մեծանում է մարմնի զանգվածը: Առաջանում է թթվածնի սով՝ հիպօքսիա: Ջրի մեջ վերջնականապես ընկղմվելուց հետո մարդը բնազդորեն պահում է շնչառությունը: Սաստկացող հիպօքսիան բերում է գիտակցության կորստի, մաշկը կապտում է: Երբ առաջանում է թոքերի այտուց, բերանից և քթից արտաթորվում է փրփուր, սիրտը կանգ է առնում:

Խեղդվելու գունատ (սպիտակ) տեսակը լինում է այն մարդկանց մոտ, որոնք չեն փորձում պայքարել կյանքի համար և արագ իջնում են հատակ, կամ խեղդվում են անգիտակից վիճակում: Սառը ջրի հետ շփման ժամանակ առաջանում է շնչառության և սրտի հանկարծակի կանգ: Կոկորդում հայտնված ջուրը առաջացնում է ձայնախոռոչի բնագդային փակում, և շնչառական ուղիները դառնում են անանցանելի: Այդ ժամանակ ջուրը չի թափանցում թոքերը:

Խեղդվելու կապույտ տեսակի ժամանակ տուժածին ջրից հանելուց հետո նախ պետք է շնչառական ուղիներից հեռացնել ջուրը: Փրկարարը պետք է տուժածին որովայնով դեպի ներքև դնի իր ծալած ծնկի վրա այնպես, որ ծնկին հենվի նրա կրծքավանդակի ներքևի մասը, իսկ իրանի վերին մասն ու գլուխը կախվեն ներքև: Մի ձեռքով պետք է սեղմի կզակը կամ բարձրացնի տուժածի գլուխը, որպեսզի բերանը բաց լինի, և մյուս ձեռքով եռանդուն սեղմելով (մի քանի անգամ) մեջքը, օգնի ջրի հեռացմանը (նկ.47): Ջրի արտահոսքը

դադարելուց հետո տուժածին պետք է պառկեցնել մեջքի վրա, մաքրել բերանի խոռոչը և սկսել արհեստական շնչառություն տալը: Եթե տուժածի քներակը չի զարկում և բիբերը լայնացած են, պետք է անմիջապես սկսել սրտի արտաքին մերսումը:

Խեղդվելու գունատ տեսակի ժամանակ տուժածին ջրից հանելուց հետո պետք է անմիջապես սկսել վերակենդանացման միջոցառումներ (արհեստական շնչառություն և սրտի արտաքին մերսում) կատարելը: Եթե փրկարարը մենակ չէ, ապա մյուսներն այդ ընթացքում պետք է շփեն և տաքացնեն տուժածի մարմինը: Եթե տուժածը սկսի շնչել, պետք է նրան հոտոտելու տալ անուշադրի սպիրտ: Եթե տուժածն ուշքի է եկել, նրան պետք է խմեցնել 20 կաթիլ վալերիանայի (կատվախոտ) թուրմ, հազցնել չոր հազուստ, տաք ծածկել, թունդ թեյ տալ և ապահովել հանգիստ վիճակ մինչև բժշկի գալը:



Նկ.47. Ջրի հեռացումը տուժածի թոքերից ու ստամոքսից

16. ՏՈՒԺԱԾԻՆ ՏԵՂԱՓՈԽԵԼՆ ՈՒ ՓՈԽԱԴՐԵԼԸ

Դժբախտ պատահարների դեպքում անհրաժեշտ է ոչ միայն անհապաղ օգնություն ցույց տալ տուժածին, այլև արագ և ճիշտ հասցնել նրան մոտակա բուժհաստատություն: Տեղափոխելու և փոխադրելու կանոնների խախտումը կարող է անուղղելի վնաս հասցնել տուժածին:

Տուժածին բարձրացնելու, տեղափոխելու ժամանակ անհրաժեշտ է հետևել, որ նա գտնվի հարմար դիրքում, և՛ չթափահարել նրան: Ձեռքերի վրա, առանց պատգարակի տեղափոխելու ժամանակ, օգնություն ցույց տվողները պետք է շարժվեն ոչ համաքայլ, մանր քայլերով, փոքր-ինչ ծավլած ծնկներով: Տուժածին պետք է բարձրացնել և պատգարակին դնել ներդաշնակ շարժումներով, ավելի լավ է հրամանով:

Տուժածին պետք է վերցնել առողջ կողմից. այդ դեպքում օգնություն ցույց տվողները պետք է իջնեն նույն ծնկի վրա և ձեռքերն այնպես մտցնեն տուժածի մեջքի, գլխի, ոտքերի, հետույքի տակ, որ մատները երևան նրա մարմնի մյուս կողմից: Պետք է աշխատել տուժածին

չտեղափոխել պատգարակի մոտ, այլ ծնկած տեղից վեր չկենալով, նրան թեթևակի բարձրացնել գետնից, որ պատգարակը մտցնեն նրա տակ: Դա հատկապես կարևոր է կոտրվածքների ժամանակ, այդ դեպքում որևէ մեկը պետք է պահի կոտրված տեղը: Գլխի, գանգոսկրի ու գլխուղեղի, ողնաշարի և ողնուղեղի, որովայնի վնասվածքի, կոնքոսկրի և ստորին վերջույթների կոտրվածքների դեպքում տուժածին փոխադրում են մեջքի վրա պառկած դիրքում: Տուժածի գլուխը պետք է կողքի թեքել, որպեսզի փսխուկը և արյունը չընկնեն շնչառական ուղիների մեջ: Վնասված ողնաշարով տուժածին փոխադրելու դեպքում պատգարակի պաստառի վրա պետք է դնել լայն տախտակ, իսկ նրա վրա՝ հագուստը. տուժածը պետք է պառկի մեջքի վրա: Տախտակ չլինելու դեպքում տուժածին պատգարակի վրա պետք է պառկեցնել դեմքով ներքև (փորի վրա):

Ստորին ծնոտի կոտրվածքի դեպքում, եթե տուժածը շնչահեղձ է լինում, նրան պետք է պառկեցնել փորի վրա, դեմքով ներքև:

Որովայնի վնասվածքի կամ կոնքոսկրի կոտրվածքի դեպքում տուժածին պետք է պառկեցնել մեջքի վրա՝ «գորտի» դիրքով:

Կրծքավանդակի վնասվածքի դեպքում տուժածին պետք է տեղափոխել կիսանստած դիրքում՝ մեջքի տակ դնելով հագուստը: Հարթ տեղերով գնալիս տուժածին պետք է տեղափոխել ոտքերով դեպի առաջ: Սարով կամ սանդուղքով բարձրանալիս, ինչպես նաև, երբ տուժածը գտնվում է անգիտակից վիճակում, նրան պետք է տեղափոխել գլուխը դեպի առաջ: Որպեսզի պատգարակը չթեքվի, ներքևում գտնվող օգնություն ցույց տվողները պետք է բարձրացնեն պատգարակը: Ցնցումները կանխելու և պատգարակը չթափահարելու համար օգնություն ցույց տվողները պետք է քայլեն ոչ համաքայլ, մանր քայլերով:

Պատգարակով տեղափոխելու ժամանակ պետք է հետևել դրված վիրակապերի և տախտավանդների վիճակին: Երկար տարածություն տանելու ժամանակ պետք է փոխել տուժածի դիրքը, ուղղել գլխատեղը, տակը դրված հագուստը, հագեցնել ծարավը (բայց ոչ որովայնային վնասվածքի դեպքում), պաշտպանել ցրտից ու վատ եղանակից:

Տուժածին պատգարակից իջեցնելիս պետք է վարվել այնպես, ինչպես պատգարակին դնելիս: Տուժածին պատգարակով հեռու տարածություն տանելիս՝ օգնություն ցույց տվողները պետք է օգտվեն ուսափոկերից, որոնք կապում են պատգարակի բռնակներից և անցկացնում իրենց պարանոցին:

Ծանր վնասվածքներով տուժածին փոխադրելիս՝ լավ է նրան մեքենայի կամ սայլակի մեջ դնել հենց նույն պատգարակով՝ տակը փռելով խոտ, ծղոտ և այլն: Տուժածին պետք է փոխադրել զգուշորեն՝ խուսափելով ցնցումներից:

17. ՏՈՒԺԱԾԻՆ ՕԳԱՅԻՆ ԳԾԻ ՀԵՆԱՐԱՆԻՑ ԻԶԵՑՆԵԼԸ

Աշխատանքի ժամանակ դժբախտ պատահարի դեպքում, երբ տուժածն անգիտակից վիճակում գտնվում է ՕԳ-ի հենարանի վրա, պետք է իմանալ, թե ինչպես կարելի է իջեցնել նրան հենարանից:

Դրա համար ՕԳ-ի վրա աշխատանքներ իրագործող բրիգադը պետք է հանդերձված լինի հատուկ հարմարանքներով.

ա" հենարանին ամրակապելու հարմարանք ունեցող միահիլովակ բազմաճախարակով,

բ" առնվազն 10 մ տրամագծով և հենարանի կրկնակի բարձրության երկարությամբ (20 մ և ավել) կապրոնե կամ բամբակե պարանով,

գ" ՕԳ-ի լարմանը համապատասխանող էլեկտրապաշտպանիչ միջոցներով:

Հենարանից տուժածին իջեցնելու համար նախատեսված բազմաճախարակը պետք է ունենա պարան և լինի մշտապես պատրաստ օգտագործման համար:

Տուժածին հենարանից իջեցնելուց առաջ պետք է միջոցներ ձեռք առնել՝ օգնություն ցույց տվողին հոսանահարվելն ու բարձրությունից վայր ընկնելը բացառելու համար: Հոսանահարման հնարավորությունը կանխելու համար անհրաժեշտ է պահպանել լարման տակ գտնվող ՕԳ-ից թույլատրելի հեռավորությունն՝ ըստ «էլեկտրատեղակայանքների շահագործման անվտանգության տեխնիկայի կանոնների»: Եթե թույլատրելի հեռավորությունները հնարավոր չէ պահպանել, ապա ՕԳ-ն պետք է անջատվի փոխարկիչ սարքով կամ արհեստական կարճ միացում ստեղծելու միջոցով՝ մինչև 20 կՎ ՕԳ-ի վրա մետաղալար նետելով: Տուժածի մոտ կարելի է բարձրանալ հատուկ վերհան մեխանիզմների կամ հենարանի վրա բարձրանալու հարմարանքների (ճանկեր, մագլցիչներ) միջոցով: Անպայման պետք է օգտվել մոնտյորի գոտուց և պաշտպանիչ սաղավարտից:

Հենարանի վրա բարձրանալիս պետք է իր հետ ունենալ նաև տուժածին իջեցնելու համար նախատեսված բազմաճախարակը: Վերջինս պետք է հուսալիորեն ամրացվի հենարանի կառուցվածքային տարրերին (լայնակ, կեռ և այլն)՝ տուժածից վերև գտնվող

մասերում: Որից հետո պարանի ծայրը պետք է անցկացնել և կապել տուժածի թևատակերից, որ իջեցնելիս՝ տուժածը գտնվի ուղղաձիգ դիրքում և օղակի միջից չսահի: Պարանի մյուս ծայրը պետք է իջեցնել գետնին: Այդ ծայրը պետք է 1-2 անգամ փաթաթել հենարանի գլանաձև որևէ տարրի (կանգնակ, լայնակ, կեռ և այլն) շուրջ՝ իջեցնելու ժամանակ արգելակման մոմենտ ստեղծելու և տուժածին լրացուցիչ վնասվածքներ չպատճառելու համար:

Բարձրանալով հենարանի վրա՝ պետք է որոշել տուժածի վիճակը և, վերակենդանացման միջոցառումներ ձեռնարկելու անհրաժեշտության դեպքում, կատարել թոքերի երկու ներփչում և առանց հապաղելու իջեցնել գետնին: Գետնի վրա կանգնած մարդը պետք է պարանից ձգելով մի փոքր բարձրացնի տուժածին, որպեսզի հնարավորություն տա ազատելու նրան ճանկերից (մազլցիչից) ու էլմոնտյորի ամրագոտուց: Տուժածին հենարանից ազատելուց հետո պետք է զգուշորեն և արագ իջեցնել գետնին և շարունակել առաջին օգնության ցույց տալը:

**ԷԼԵԿՏՐԱՏԵՂԱԿԱՅԱՆՔՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՐԳԱԳԻՐ-
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎ ԵՎ ԱՅՆ ԼՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

Կարգագրի երեսի կողմը

Կազմակերպություն _____ Ստորաբաժանում _____

Աշխատանքի պատասխանատու ղեկավարին _____
(անուն, ազգանուն)
_____ Թույլատրողին _____
(անուն, ազգանուն)

Աշխատանքներ իրագործողի _____
(անուն, ազգանուն)

Հսկողին _____
(անուն, ազգանուն)

Բրիգադի անդամներով _____
(անուն, ազգանուն)

Հանձնարարվում է _____

Աշխատանքը սկսել _____ թ. ժամը _____
(ամսաթիվ)

Աշխատանքն ավարտել _____ թ. ժամը _____
(ամսաթիվ)

Աշխատատեղերի նախապատրաստման միջոցառումներ

Էլեկտրատեղակայանքների անվանումը, որտեղ պետք է կատարել անջատումներ և դնել հողակցումներ	Ինչը պետք է անջատվի և որտեղ պետք է հողակցվի
1	2

Առանձին ցուցումներ _____

Կարգագիրը տվեց _____ թ. ժամը _____
(ամսաթիվ)

Ստորագրություն _____ Անուն, ազգանուն _____

Կարգագիրը երկարացրեց մինչև _____ թ. ժամը _____
(ամսաթիվ)

Ստորագրություն _____ Անուն, ազգանուն _____
_____ (ամսաթիվ) ժամը

**Աշխատատեղերի նախապատրաստման և աշխատանքների կատարման թույլատրման
իրավունք**

Աշխատատեղերի նախապատրաստման և աշխատանքների կատարման թույլատրության իրավունքը տվեց (պաշտոնը, ազգանունը կամ ստորագրությունը)	Ամսաթիվը, ժամը	Աշխատատեղերի նախապատրաստման և աշխատանքի կատարման թույլատրման իրավունքը ստացած աշխատողի ազգանունը, ստորագրությունը
1	2	3

Կարգադրի երեսի հակառակ կողմը

Աշխատատեղերը նախապատրաստված են: Լարման տակ մնացել են _____

Թույլատվող _____, Աշխատանքի ղեկավար (իրագործողի կամ հսկող) _____

(ստորագրություն)

(ստորագրություն)

Աշխատանքի ամենօրյա թույլատրումը և ավարտի ժամանակը

Բրիգադը ստացել է նպատակային հրահանգավորում և թույլատրվել է պատրաստված աշխատատեղում				Աշխատանքն ավարտված է, բրիգադը հանված է	
Աշխատատեղի անվանումը	Ամսաթիվը ժամը	Ստորագրություններ		Ամսաթիվը, ժամը	Աշխատանքները իրագործողի (հսկողի) ստորագրությունը (անուն, ազգանուն)
		Թույլատրողի	Աշխատանքներ իրագործողի (հսկողի)		
1	2	3	4	5	6

Փոփոխություններ բրիգադի կազմում

Ներգրված է բրիգադի կազմում (ազգանուն, անուն, խումբ)	Հանված է բրիգադի կազմից (ազգանուն, անուն, խումբ)	Ամսաթիվը, ժամը	Թույլատրեց (ստորագրություն)
1	2	3	4

Աշխատանքն ամբողջովին ավարտված է, բրիգադը հանված է, բրիգադի կողմից դրված հողակցումները հանված են,

հայտնված է (ում) _____

(պաշտոնը) (անուն, ազգանուն)

_____ 202 թ. ժամը _____

Աշխատանքները իրագործողը (հսկող) _____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Աշխատանքների պատասխանատու ղեկավար _____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

**ԷԼԵԿՏՐԱՏԵՂԱԿԱՅԱՆՔՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ
ԿԱՐԳԱԳԻՐ-ԹՈՒՅԼԱՏՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ
ՑՈՒՑՈՒՄՆԵՐ**

1. Կարգագրում արված գրառումները պետք է լինեն ընթեռնելի: Կարգագիրը մատիտով լրացնել և տեքստի ուղղումներ չեն թույլատրվում:

2. Կարգագրերի համարակալման համակարգը սահմանվում է կազմակերպության ղեկավարության կողմից:

3. Ամսաթիվը նշելուց գրվում են ամսաթիվը, ամիսը և տարեթիվը նշանակող վերջին երկու թվերը, օրինակ՝ 02.11.02, 24.04.03:

4. Կարգագրում նշվող անձանց ազգանուններից բացի գրանցվում են նրանց անունները կամ անվան սկզբնատառերը և էլեկտրասնվտանգության խումբը:

5. Կարգագրում նշվում են էլեկտրատեղակայանքների, միացությունների և սարքավորման կարգավարական անվանումները (նշանակումները):

6. Կարգագրի հիմնական բլանկի աղյուսակներում տողերը չբավականացնելու դեպքում, գրառումները շարունակելու համար թույլատրվում է դրան կցել նույն համարով լրացուցիչ բլանկ՝ նշելով Կարգագիր տվողի ազգանունը, անունը, գրառումները շարունակելու համար: Ընդ որում, հիմնական բլանկի համապատասխան աղյուսակի վերջին տողերում պետք է գրառել «Տե՛ս լրացուցիչ բլանկը»:

Կարգագրի երեսի կողմը

7. «Ստորաբաժանում» տողում նշվում է կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումը (արտադրամաս, ծառայություն, շրջան, տեղամաս), որի էլեկտրատեղակայանքներում նախատեսվում են աշխատանքները:

8. Այն դեպքերում, երբ աշխատանքների պատասխանատու ղեկավար չի նշանակվում՝ «Աշխատանքների պատասխանատու ղեկավարին» տողում նշվում է «Չի նշանակվում»:

9. «Թույլատրողին» տողում նշվում է օպերատիվ անձնակազմից նշանակվող թույլատրողի ազգանունը կամ թույլատրողի պարտականությունները համատեղող նորոգման անձնակազմից աշխատանքներ իրագործողի (պատասխանատու ղեկավարի) ազգանունը:

Այն էլեկտրատեղակայանքներում աշխատանքներ կատարելիս, որտեղ թույլատրողը հանդիսանում է տեղական օպերատիվ անձնակազմի աշխատող, տողում գրառվում է

«Օպերատիվ անձնակազմին» առանց նշելու ազգանունը:

10. «Բրիգադի անդամներով» տողում թվարկվում են էլեկտրականքում աշխատանքների իրագործող բրիգադի անդամները: Ավտոմեքենաների, մեխանիզմների և ինքնագնաց ամբարձիչների կիրառմամբ աշխատանքների կատարման դեպքում նշվում է, թե բրիգադի անդամներից ով է հանդիսանում վարորդ, կռունկավար, առասանորդ, ինչպես նաև՝ մեխանիզմի կամ ինքնագնաց ամբարձիչի տեսակը, որով նա աշխատում է:

11. «Հանձնարարվում է», տողերում.

ա" ԲՍ և ՄԳ-ի էլեկտրատեղակայանքների համար նշվում են այն էլեկտրատեղակայանքի և դրա միացությունների անվանումները, որոնցում նախատեսվում է աշխատել, աշխատանքի բովանդակությունը,

բ" ՕԳ-ի համար նշվում է գծի անվանումը և այն տեղամասի սահմանը, որտեղ նախատեսվում է աշխատել (այն հենարանների համարները, որոնց վրա կամ որոնց միջև, ներառյալ հենարանները, կատարելու է աշխատանքը, առանձին թռիչքներ), ինչպես նաև աշխատանքի բովանդակությունը: Բազմաշղթա ՕԳ-ի համար նշվում է նաև շղթայի անվանումը, իսկ ըստ ֆազերի նորոգման դեպքում՝ նաև հենարանի վրա ֆազի դիրքը:

12. «Աշխատանքը սկսել» և «Աշխատանքն ավարտել» տողերում նշվում են ըստ տվյալ Կարգագրի կատարվող աշխատանքները սկսելու և ավարտելու ամսաթիվը և ժամը:

13. ԲՍ էլեկտրատեղակայանքների և ՄԳ-ի վրա աշխատանքի դեպքում «Աշխատատեղերի նախապատրաստման միջոցառումները» աղյուսակում ցուցվում են.

ա" առաջին սյունակում՝ այն էլեկտրատեղակայանքների անվանումները, որոնցում անհրաժեշտ է կատարել գործողություններ փոխարկման ապարատների հետ և տեղակայել հողակցումներ,

բ" երկրորդ սյունակում՝ այն փոխարկման ապարատների, միացությունների, սարքավորման անվանումները (նշանակումները), որոնց հետ կատարվում են գործողություններ, և այն տեղերը, որտեղ պետք է տեղակայվեն հողակցումները:

Այս աղյուսակում չի պահանջվում նշել անջատումները երկրորդային շղթաներում, ուղեային պաշտպանության, էլեկտրաավտոմատիկայի, հեռուստամեխանիկայի, կապի սարքվածքներում:

14. ՕԳ-ի վրա աշխատելիս՝ «Աշխատատեղերի նախապատրաստման միջոցառումներ» աղյուսակում ցուցվում են.

ա" առաջին սյունակում՝ գծերի, շղթաների, հաղորդալարերի անվանումները՝ գրառված Կարգագրի «հանձնարարվում է» տողում, ինչպես նաև այլ ՕԳ-ների կամ շղթաների անվանումները, որոնք ենթակա են անջատման և հողակցման՝ կապված նորոգվող ՕԳ-ի կամ շղթայի վրա աշխատանքների կատարման հետ (օրինակ՝ նորոգվող գծի հետ հատվող կամ դրան մոտ անցնող ՕԳ, բազմաշղթա ՕԳ, այլ շղթաներ և այլն),

բ" երկրորդ սյունակում՝ այն օդային գծերի համար, որոնք անջատվում և հողակցվում են օպերատիվ-նորոգող անձնակազմի թույլատրողի կողմից՝ բաշխիչ սարքվածքի և հենց ՕԳ-ի վրայի այն փոխարկման ապարատների անվանումները, որոնց հետ կատարվում են գործողություններ և այն հենարանների համարները, որոնց վրա պետք է տեղակայվեն հողակցումները:

Նույն սյունակում պետք է ցուցվի այն հենարանների համարները կամ այն թռիչքները, որտեղ աշխատանքները իրագործողը պետք է տեղագրի հողակցումներ աշխատատեղում հաղորդալարերի և մետաղյա ճոպանների վրա Կանոնների համապատասխան:

Եթե Կարգագիրը տալուց հնարավոր չէ որոշել հողակցումների տեղադրման տեղերը կամ աշխատանքը կատարվելու է հողակցումների վերատեղադրումով, ապա սյունակում նշվում է «Հողակցել աշխատատեղերում»:

Երկրորդ սյունակում պետք է նշվեն նաև այն տեղերը, որտեղ աշխատանքները իրագործողը պետք է տեղագրի հողակցումներ նորոգվող ՕԳ-ի հետ հատվող կամ դրա մոտով անցնող ՕԳ-ի վրա: Եթե այդ ՕԳ-ները շահագործվում են այլ կազմակերպության (ծառայության) կողմից, ապա Կարգագրի «Առանձին ցուցումներ» տողում պետք է նշվի այդ կազմակերպության (ծառայության) անձնակազմի կողմից տեղադրվող հողակցումների ստուգման անհրաժեշտության մասին:

15. «Աշխատատեղերի նախապատրաստման միջոցառումներ» աղյուսակում պետք է ներառվեն փոխարկման ապարատների հետ այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են անմիջապես աշխատատեղի նախապատրաստման համար: Աշխատատեղի նախապատրաստման ընթացքում կատարվող փոխանջատումները՝ կապված սխեմաների փոփոխման հետ (օրինակ՝ միացությունների փոխադրումը հաղորդաձողերի մի համակարգից մյուսը, ցանցի հատվածի սնուցման փոխադրումը սնուցման մի աղբյուրից մյուսի վրա և այլն) աղյուսակում չեն գրառվում:

16. Այն դեպքերում, երբ Կարգագիրը տալուց օպերատիվ անձնակազմից թույլատրողին հանձնարարվում է թույլատրություն իրականացնել արդեն

նախապատրաստված աշխատատեղերում, աղյուսակի երկրորդ սյունակում Կարգագիր տվողը լրացնում է աշխատատեղերի նախապատրաստման համար անհրաժեշտ անջատումների ու հողակցումների թվարկումը և նշում, թե այդ գործողություններից որոնք են արդեն կատարված:

Աշխատատեղի նախապատրաստում չպահանջող աշխատանքների դեպքում աղյուսակի սյունակներում գրվում է «Չի պահանջվում»:

17. «Առանձին ցուցումներ» տողում նշվում են.

ա" աշխատողների անվտանգությունն ապահովող լրացուցիչ միջոցառումները (ցանկապատում, սրահներում օդի ստուգում ջրածնի բացակայության առումով, հրդեհային անվտանգության միջոցառումներ և այլն),

բ" աշխատանքի փուլերը և առանձին գործողությունները, որոնք պետք է կատարվեն աշխատանքների պատասխանատու ղեկավարի անընդհատ ղեկավարման տակ,

Կարգագիրը հսկողի վրա ձևակերպելու դեպքում՝ բրիգադը գլխավորող պատասխանատու աշխատողի անուն, ազգանունը,

ա" թույլտվությունն աշխատանքների պատասխանատու ղեկավարին կամ աշխատանքներ իրագործողին (հսկողին)՝ իրականացնել աշխատողների տեղափոխում այլ աշխատատեղ,

բ" թույլտվությունն աշխատանքների պատասխանատու ղեկավարին՝ իրականացնել կրկնակի թույլատրության,

գ" թույլտվությունը՝ առանց օպերատիվ անձնակազմի թույլտվության կամ կարգադրության միացնել էլեկտրատեղակայանքը կամ դրա մի մասը (առանձին փոխարկման ապարատները)

դ" թույլտվությունը՝ հողակցումները ժամանակավորապես հանելու,

ե" թույլտվությունն աշխատանքներն իրագործողին՝ կատարելու օպերացիա փոխարկման ապարատներով,

զ" էլեկտրական և մագնիսական դաշտի ազդեցության գոտում աշխատանքների դեպքում անվտանգության միջոցառումներին ներկայացվող լրացուցիչ պահանջներ,

է" ցուցումներ այն մասին, որ նորոգվող գիծը գտնվում է այլ ՕԳ-ի մակաձված լարման գոտում,

ը" ցուցում՝ այլ կազմակերպությունների ՕԳ հողակցումների ստուգման անհրաժեշտության մասին:

Կարգագիր տվողին թույլատրվում է իր հայեցողությամբ այդ տողերում ներառել նաև կատարվող աշխատանքի հետ կապված այլ գրառումներ:

18. «Կարգագիրը տվեց» և «Կարգագիրը երկարաձգեց» տողերում Կարգագիր տվողը նշում է դրա ստորագրման ամսաթիվը և ժամը: Կարգագիր տվող և երկարաձգող աշխատողները, բացի ստորագրելուց, պետք է նշեն իրենց ազգանունը:

19. «Աշխատատեղերի նախապատրաստման և աշխատանքների կատարման թույլատրության իրավունք» աղյուսակը լրացվում է աշխատատեղի նախապատրաստման և առաջնային թույլատրության իրավունք ստանալուց:

Սյունակ 1-ում՝ աշխատատեղերը նախապատրաստող աշխատողները և թույլատրողը նշում են աշխատատեղերի նախապատրաստման և թույլատրության իրավունք տված անձանց անունները, ազգանունները, հայրանունները և պաշտոնները:

Թույլատրությունն անձամբ փոխանցելիս՝ սյունակ 1-ում անձամբ ստորագրում են իրավունքը տվող անձինք՝ նշելով իրենց պաշտոնը:

Սյունակ 2-ում ցույց են տրվում իրավունք տալու ամսաթիվը և ժամը:

Սյունակ 3-ում ստորագրում են աշխատատեղերի նախապատրաստման և աշխատանքների կատարման թույլատրության իրավունք ստացած աշխատողները: Եթե աշխատատեղերը նախապատրաստվել են մի քանի աշխատողների կամ տարբեր արտադրամասերի աշխատողների կողմից, սյունակ 3-ում ստորագրում են բոլորը, ովքեր նախապատրաստել են աշխատատեղերը:

Եթե աշխատատեղի նախապատրաստման և թույլտրության իրավունքը պահանջվում են ոչ միաժամանակ, ապա «Աշխատատեղերի նախապատրաստման և աշխատանքների կատարման» թույլատրության իրավունք» աղյուսակում լրացնում են երկու տող, մեկը՝ աշխատատեղի նախապատրաստման իրավունք տալու համար, մյուսը՝ թույլատրության իրավունք տալու համար:

Կարգագրի հակառակ երեսը

20. ԲՍ-ում և ՄԳ-ի վրա աշխատանքների դեպքում «Աշխատատեղերը նախապատրաստված են: Լարման տակ մնացել են» տողերում թույլատրողը նշում է լարման տակ մնացած նորոգվող և աշխատատեղին առավել մոտ գտնվող միացությունների (կամ հարևան միացությունների սարքավորման) հոսանատար մասերը:

ՕԳ-ի վրա աշխատանքների դեպքում այդ տողերում գրառվում են հոսանատար այն մասերի անվանումները, որոնք Կարգագիր տվողը նշել է «Առանձին ցուցումներ» տողերում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ և այլ հոսանատար մասերի անվանումները:

Թույլատրողը և աշխատանքների պատասխանատու ղեկավարը (աշխատանքներ իրագործողը (հսկողը)՝ եթե նշանակված չէ ղեկավարը) ստորագրում են «Աշխատատեղերը նախապատրաստված են: Լարման տակ մնացել են» տողերի տակ՝ միայն աշխատանքների կատարման առաջնային թույլատրություն տալուց:

21. «Աշխատանքի ամենօրյա թույլատրումը և ավարտի ժամանակը» աղյուսակում ձևակերպվում են աշխատանքի ամենօրյա թույլատրումը և աշխատանքի ավարտը, այդ թվում թույլատրումը այլ աշխատատեղ փոխադրելու դեպքում՝

1) եթե աշխատանքները իրագործողը համատեղում է թույլատրողի պարտականությունները, ինչպես նաև եթե աշխատանքներ իրագործողին թույլատրվել է իրականացնել բրիգադի կրկնակի թույլատրում, ապա նա ստորագրում է 3 և 4 սյունակներում.

2) երբ աշխատանքների պատասխանատու ղեկավարին թույլատրվել է իրականացնել բրիգադի աշխատանքի կրկնակի թույլատրություն, ապա նա ստորագրում է 3 սյունակում:

3) աշխատանքային օրվա ավարտի հետ կապված աշխատանքների ավարտն աշխատանքները իրագործողը (հսկողը) ձևակերպում է 5 և 6 սյունակներում:

22. «Աշխատատեղերի նախապատրաստման և աշխատանքների կատարման թույլատրության իրավունք» աղյուսակում ավտովարորդին կամ մեխանիզմի մեքենավարին ու կռունկավարին բրիգադի կազմի մեջ ներգրավելու կամ հանելու դեպքում նշվում է նաև նրան կցված ավտոմեքենայի, մեխանիզմի կամ ինքնագնաց կռունկի տեսակը: Սյունակ 4-ում ստորագրում է բրիգադի կազմի փոփոխության թույլատրություն տվող աշխատողը: Թույլատրությունը ռադիոյով, հեռախոսով հաղորդելիս՝ աշխատանքները իրագործողը սյունակ 4-ում նշում է այդ աշխատողի անուն, ազգանուն, հայրանունը:

23. Աշխատանքները լրիվ ավարտելուց հետո աշխատանքներ իրագործողը (հսկողը) և աշխատանքների պատասխանատու ղեկավարը ստորագրում են Կարգագրի համապատասխան տողերում, ընդ որում՝ նշելով աշխատանքների լրիվ ավարտի ամսաթիվը և ժամը: Եթե աշխատանքների պատասխանատու ղեկավար չէր նշանակվել, ապա «Աշխատանքների պատասխանատու ղեկավար» տողում ստորագրություն չի դրվում՝

1) եթե աշխատանքի լրիվ ավարտը Կարգագրում ձևակերպելու ժամանակ օպերատիվ անձնակազմը կամ օպերատիվ անձնակազմից թույլատրողը բացակայում է կամ աշխատանքներ իրագործողը համատեղում է թույլատրողի պարտականությունները, ապա աշխատանքները իրագործողը կամ հսկողը ձևակերպում է աշխատանքների լրիվ ավարտը Կարգագրի միայն իր օրինակում, նշելով այն աշխատողի պաշտոնը և ազգանունը, որին նա հայտնել է աշխատանքների լրիվ ավարտի մասին, ինչպես նաև հաղորդման ամսաթիվը և ժամը.

2) եթե աշխատանքի լրիվ ավարտը Կարգագրում ձևակերպելու ժամանակ ներկա է օպերատիվ անձնակազմը կամ օպերատիվ անձնակազմից թույլատրողը, ապա աշխատանքներ իրագործողը կամ հսկողը ձևակերպում են աշխատանքների լրիվ ավարտը Կարգագրի երկու օրինակներում.

3) եթե բրիգադը հողակցումներ չի տեղակայել, ապա «Բրիգադի կողմից դրված հողակցումները հանված են» բառերը հաղորդման տեքստից ջնջվում են:

**ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ
ԷԼԵԿՏՐԱԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԽՈՒՄԲ ՇՆՈՐՀԵԼՈՒ
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

Էլեկտրա- անվտան- գության որակա- վորման խումբը	Էլեկտրատեղակայանքներում աշխատանքի նվազագույն ստաժը նախորդ խմբում, ամիս					
	Կազմակերպության անձնակազմի				Պրակտիկանտների	
	Միջնակարգ կրթություն չունեցող	Միջնակարգ կրթություն ունեցող	Միջնակարգ էլեկտրատեխնիկա- կան և բարձրագույն տեխնիկական կրթություն ունեցող	Բարձրագույն էլեկտրատեխնիկա- կան կրթություն ունեցող	Մասնագիտական տեխնիկական ուսումնարանների	Ինստիտուտների և տեխնիկումների (քոլեջների)
II	72 ժ-ից ոչ պակաս ուսուցում անցնելուց հետո		չի նորմավորվում			
III	3	2	2	1	6	3
IV	6	3	3	2	-	-
V	24	12	6	3	-	-
I	Ոչ էլեկտրատեխնիկական անձնակազմ, չի նորմավորվում					

**ԷԼԵԿՏՐԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԽՄԲԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻՆ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

<p align="center">Էլեկտրա- անվտանգության որակավորման խումբը</p>	<p align="center">Անձնակազմի գիտելիքների ծավալը</p>
<p align="center">II</p>	<p>1. Էլեկտրատեղակայանքի և դրա սարքավորումների վերաբերյալ տարրական տեխնիկական գիտելիքների իմացություն</p> <p>2. Էլեկտրական հոսանքի վտանգավորության և հոսանատար մասերին մոտենալու վտանգի հստակ պատկերացում</p> <p>3. Էլեկտրատեղակայանքներում աշխատանքներ կատարելու հիմնական նախազգուշական միջոցառումների իմացություն</p> <p>4. Տուժածներին առաջին օգնություն ցույց տալու գործնական հնարքների իմացություն</p>
<p align="center">III</p>	<p>1. Ընդհանուր էլեկտրատեխնիկայի վերաբերյալ տարրական գիտելիքների իմացություն</p> <p>2. Էլեկտրատեղակայանքի և դրա տեխնիկական սպասարկման կարգի իմացություն</p> <p>3. Անվտանգության տեխնիկայի ընդհանուր կանոնների իմացություն, այդ թվում աշխատանքի թույլտվության կանոնների և կատարվելիք աշխատանքին վերաբերող հատուկ պահանջների իմացություն</p> <p>4. Աշխատանքների անվտանգ կատարման ապահովման հմտություն և էլեկտրակայանքներում աշխատողների նկատմամբ հսկողության իրականացում</p> <p>5. Էլեկտրական հոսանքի ազդեցությունից տուժածին ազատելու, առաջին բժշկական օգնություն ցույց տալու կանոնների իմացություն և գործնականում դրանց ցուցաբերման հմտություն</p>
<p align="center">IV</p>	<p>1. Էլեկտրատեխնիկայի վերաբերյալ գիտելիքների տիրապետում միջնակարգ մասնագիտական կրթության ծավալով</p> <p>2. Էլեկտրատեղակայանքներում աշխատելիս՝ մարդու կյանքի համար վտանգի մասին ունենալ ամբողջական պատկերացում</p> <p>3. Զբաղեցրած պաշտոնին համապատասխան ծավալով հետևյալ նորմատիվ փաստաթղթերի պահանջների իմացություն՝</p> <p>ա. ԷՇԱԿ «Էլեկտրատեղակայանքների շահագործման անվտանգության կանոններ»</p> <p>բ. «Էլեկտրակայանների, ցանցերի և սպառողների էլեկտրատեղակայանքների տեխնիկական շահագործման կանոններ»</p> <p>գ. ԷՍԿ-ի Մաս 4. «Էլեկտրական բաշխիչ սարքերի և ենթակայանների սարքվածքի շահագործմանը ներկայացվող պահանջներ»</p> <p>դ. ԷՍԿ-ի Մաս 2. «Էլեկտրական էներգիայի հաղորդաբաշխմանը ներկայացվող պահանջներ »</p> <p>ե. ԷՍԿ-ի Մաս 3. «Էլեկտրակայանքների պաշտպանության և ավտոմատիկայի սարքվածքին ներկայացվող պահանջներ»</p> <p>զ. ԷՍԿ-ի Մաս 2. «Հատուկ կայանքների էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջներ»</p> <p>է. «Էլեկտրական գծերի անվտանգության գոտիների կանոններ»</p> <p>ը. ԷՍԿ-ի Մաս 5. «Էլեկտրաուժային տեղակայանքներին ներկայացվող պահանջներ»</p> <p>4. Սպասարկվող տեղամասի էլեկտրատեղակայանքների և սարքավորումների սխեմաների, աշխատանքի անվտանգությունն ապահովող տեխնիկական միջոցառումների իմացություն</p>

	<p>5. Հրահանգավորման անցկացման, աշխատանքների անվտանգ կատարման կազմակերպման ունակություն, բրիգադի անդամների վրա հսկողության իրականացման կարողություն</p> <p>6. Էլեկտրական հոսանքի ազդեցությունից տուժածին ազատելու, առաջին բժշկական օգնություն ցույց տալու կանոնների իմացություն, գործնականում դրանց ցուցաբերման հմտություն</p> <p>7. Անձնակազմին անվտանգության տեխնիկայի կանոններն ուսուցանելու հմտություն, գործնականում առաջին բժշկական օգնություն ցույց տալու հնարքների իմացություն</p>
V	<p>1. Էլեկտրատեղակայանքների սխեմաների, արտադրության տեխնոլոգիական գործընթացների սարքավորումների դասավորվածության իմացություն</p> <p>2. Զբաղեցրած պաշտոնին համապատասխան ծավալով հետևյալ նորմատիվ փաստաթղթերի պահանջների իմացություն՝ ա. ԷՇԱԿ «Էլեկտրատեղակայանքների շահագործման անվտանգության կանոններ» բ.«Էլեկտրակայանների, ցանցերի և սպառողների էլեկտրատեղակայանքների տեխնիկական շահագործման կանոններ» գ. ԷՍԿ-ի Մաս 4. «Էլեկտրական բաշխիչ սարքերի և ենթակայանների սարքվածքի շահագործմանը ներկայացվող պահանջներ» դ. ԷՍԿ-ի Մաս 2. «Էլեկտրական էներգիայի հաղորդաբաշխմանը ներկայացվող պահանջներ» ե. ԷՍԿ-ի Մաս 3. «Էլեկտրակայանքների պաշտպանության և ավտոմատիկայի սարքվածքին ներկայացվող պահանջներ» զ. ԷՍԿ-ի Մաս 2. «Հատուկ կայանքների էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջներ» է .«Էլեկտրական գծերի անվտանգության գոտիների կանոններ» ը. ԷՍԿ-ի Մաս 5. «Էլեկտրաուժային տեղակայանքներին ներկայացվող պահանջներ»</p> <p>3. Աշխատանքների անվտանգ կատարման կազմակերպման հմտություն և աշխատանքների անմիջական ղեկավարում ցանկացած լարման էլեկտրատեղակայանքներում</p> <p>4. Աշխատողների հրահանգավորում անցկացնելիս՝ անվտանգության միջոցառումների պահանջները շարադրելու և հստակորեն նշելու կարողություն</p> <p>5. Անձնակազմին անվտանգության տեխնիկայի կանոնների ուսուցման հմտություն, գործնականում առաջին բժշկական օգնություն ցույց տալու հնարքների տիրապետում</p>

1. Աշխատողի վկայականը փաստաթուղթ է, որը հաստատում է այն ներկայացնողի անձը և նշված պաշտոնում (մասնագիտությամբ) ինքնուրույն աշխատանք կատարելու իրավունքը:

2. Վկայականն աշխատողին տրվում է կազմակերպության գիտելիքների ստուգման հանձնաժողովի կողմից:

3. Ծառայողական պարտականություններ կատարելիս՝ վկայականը պետք է միշտ գտնվի աշխատողի մոտ և ներկայացվի վերադաս պաշտոնատար կամ ստուգող անձանց պահանջով:

4. Վկայականը ենթակա է փոխարինման պաշտոնի փոփոխման դեպքում, կամ՝ վերադարձման աշխատանքից ազատվելիս:

Կազմակերպության անվանումը

Վկայական

Վկայականի էջերը պետք է պարունակեն

Առաջին էջ

Վկայականի N	նկար
Կազմակերպությունը	
Ստորաբաժանում	
«—» — 202 թ. ԿՏ	
Տրման ամսաթիվը _____	
_____ անձնական ստորագրություն	
Առանց գիտելիքների ստուգման արդյունքների գրանցման անվավեր է:	

Երկրորդ էջ

Սույն վկայականը տրվում է _____
Գիտելիքների ստուգումն անցել է _____
Քննական հանձնաժողով և աշխատում է _____
պաշտոնը և ստորաբաժանման անվանումը ԿՏ
Կազմակերպության ղեկավար _____ ստորագրությունը, անունը, ազգանունը

Երրորդ էջ

ՏՇԿ-ի, հրահանգների և այլ ղեկավար փաստաթղթերի վերաբերյալ գիտելիքների ստուգման արդյունքները				
Ստուգման ամսաթիվը	Ստուգման պատճառը	Գնահատական	Հաջորդ ստուգման ամսաթիվը	Հանձնաժողովի նախագահի ստորագրությունը

Չորրորդ էջ

ԷՇԱԿ-ի, աշխատանքի պաշտպանության վերաբերյալ հրահանգների իմացության ստուգումների արդյունքները						
Ստուգման ամսաթիվը	Ստուգման պատճառը	Էլեկտրոնային վտանգության խումբը	Ռիսկայ. աստիճանը	Գնահատական	Հաջորդ ստուգման ամսաթիվը	Հանձնաժողովի նախագահի

						ստորագրու- թյուն

Հինգերորդ էջ

ՀԱԿ-ի և հակահրդեհային հրահանգների իմացության ստուգումների արդյունքները				
Ստուգման ամսաթիվը	Ստուգման պատճառը	Գնահատական	Հաջորդ ստուգման ամսաթիվը	Հանձնաժողովի նախագահի ստորագրություն

Վեցերորդ էջ

Հատուկ աշխատանքների կատարման կանոնների ու հրահանգների իմացության ստուգումների արդյունքները			
Ստուգման ամսաթիվը	Կանոնների անվանումը	Հանձնաժողովի որոշումը	Հանձնաժողովի նախագահի ստորագրություն

Յոթերորդ էջ

Ստուգման ամսաթիվը	Բժշկական զննության արդյունքները	Բժշկի ստորագրությունը

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԱԿՆԵՐ ԵՎ ՆՇԱՆՆԵՐ

Պլակատի կամ նշանի թիվը	Նշանակումը և անվանումը	Կատարումը, չափսերը, մմ	Կիրառման տիրույթը
Արգելող ցուցանակներ (պլակատներ)			
1	Աշխատատեղը լարում տալու արգելման պլակատ ՉՄԻԱՑՆԵՒԼ, ՄԱՐԴԻԿ ԵՆ ԱՇԽԱՏՈՒՄ	Սպիտակ ֆոնի վրա կարմիր տառեր: 13 և 5 մմ լայնության կարմիր երիզ, 240x130, 80x50: Ցուցանակը շարժական է:	Մինչև 1000 Վ և բարձր լարման էլեկտրատեղակայանքներում: Կախում են բաժանիչների, զատիչների և բեռնվածքի անջատիչների վրա, հեռագործ կառավարման բանալիների և կոճակների վրա, մինչև 1000 Վ փոխարկման սարքերի (ավտոմատների, անջատողների, անջատիչների) վրա, որոնց սխալմամբ միացման դեպքում կարող է լարում տրվի աշխատանքային տեղի վրա: Փոխարկման սարքեր չունեցող մինչև 1000 Վ միացումներում պլակատը պետք է կախել հանված ապահովիչների մոտ:
2	Այն գծի վրա, որտեղ մարդիկ են աշխատում, լարում տալն արգելելու համար ՉՄԻԱՑՆԵՒԼ, ԱՇԽԱՏԱՆՔ ԳԾԻ ՎՐԱ	Կարմիր ֆոնի վրա սպիտակ տառեր: 13 և 5 մմ լայնությամբ սպիտակ երիզ, 240x130, 80x50: Ցուցանակը շարժական է.	Նույնը, բայց կախում են այն փոխարկման սարքերի շարժաբերների, կառավարման բանալիների և կոճակների վրա, որոնք սխալմամբ միացնելու դեպքում, կարող է լարում տրվի այն օդային կամ մալուխային գծին, որի վրա մարդիկ են աշխատում:
3	ԷԴ ներգործության վտանգի մասին նախազգուշացնելու և առանց պաշտպանության միջոցների տեղաշարժումներն արգելելու համար ՎՏԱՆԳԱՎՈՐ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԴԱՇՏ Է ԱՌԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՆՑՆԵԼՆ ԱՐԳԵԼՎԱԾ Է	Սպիտակ ֆոնի վրա կարմիր տառեր: 13 մմ լայնությամբ կարմիր երիզ, 240x130 Ցուցանակը շարժական է	330 կՎ ԲԲՍ-ում: Հատակագծից 1,8 մ բարձրության վրա ԷԴ լարվածությունը չափելուց հետո տեղակայվում է այն տեղամասերի ցանկապատերի վրա, որոնց ԷԴ 15 կՎ/մ-ից բարձր է. ԲԲՍ շրջանցման երթուղու վրա, ԲԲՍ շրջանցման երթուղիներից դուրս, բայց այն տեղերում, որտեղ հնարավոր է անձնակազմի մնալը այլ աշխատանքներ կատարելիս


			(օրինակ, հաղորդաձողերի համակարգերի կամ սարքավորանքի ցածր կախ ընկած հաղորդաձողավորման տակ): Պլակատը կարելի է ամրացնել հատուկ դրա համար նախատեսված 1,5-2 մ բարձրության սյան վրա:
4	Մեղմված օդ, գազ տալն արգելելու համար ՉԲԱՑԵՂ, ՄԱՐԴԻԿ ԵՆ ԱՇԽԱՏՈՒՄ	Սպիտակ ֆոնի վրա կարմիր տառեր: 13 մմ լայնությամբ կարմիր երիզ, 240 x 130 Ցուցանակը շարժական է	Էլեկտրակայանների և ենթակայանների էլեկտրատեղակայանքներում: Կախում են. անջատիչների և բաժանիչների օդաճնշիչ շարժաբերների և օդահավաքիչների փականների և սողնակների վրա, որոնք սխալմամբ բացելու դեպքում կարող է աշխատող մարդկանց վրա սեղմված օդ տրվի կամ գործողության մեջ դրվի անջատիչը կամ բաժանիչը, ջրածնային, ածխաթթվային և այլ խողովակների փականների և սողնակների վրա, որոնք սխալմամբ բացելու դեպքում կարող է վտանգ առաջանալ աշխատող մարդկանց համար:
5	Աշխատանք իրագործողի հետ առանց համաձայնեցման, գծերի անջատիչների ավտոմատ անջատումից հետո, ձեռքով կրկնական միացումն արգելելու համար ԱՇԽԱՏԱՆՔ ԼԱՐՄԱՆ ՏԱԿ, ԿՐԿԻՆ ՉՄԻԱՑՆԵՂ	Սպիտակ ֆոնի վրա կարմիր տառերով: 5 մմ լայնությամբ կարմիր երիզ, 80x50 Ցուցանակը շարժական է	Նորոգվող ՕԳ-ի անջատիչների կառավարման բանալիների վրա՝ լարման տակ աշխատանքներ կատարելիս:
Նախագույնացնող նշաններ և ցուցանակներ (պլակատներ)			
6	Էլեկտրահոսանահարման վտանգի մասին նախագույնացնելու համար ՉԳՈՒՅՇ, ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԼԱՐՈՒՄ ԿԱ	Ըստ 12.4.026-76 ԳՕՍՍ-ի (թ.2.5 նշան) Դեղին ֆոն, երիզը և սլաքները սև են: Եռանկյունու կողմը. 360 շինությունների դռների վրա 160 100 սարքավորանքի և	Էլեկտրակայանների և ենթակայանների մինչև 1000 Վ և բարձր էլեկտրատեղակայանքներում: Ամրացվում է ԲՍ մուտքի դռների արտաքին կողմի վրա, բացառությամբ այդ սարքավածքներում տեղավորված ԼԲՍ և ԼՏԿ դռների, տրանսֆորմատորների և անջատիչների խցիկների

		80 տարայի համար 50 40 25 Նշանը հաստատուն է	արտաքին դռների, արտադրական շինություններում տեղավորված հոսանատար մասերի ցանկապատերի, մինչև 1000 Վ լարման վահանների և հավաքվածքների դռների:
	Նույնը	Նույնը	Բնակեցված* վայրերում: Ամրացվում է 1000 Վ-ից բարձր լարման ՕԳ-ի հենարաններին՝ հողից 2,5-3 մ բարձրության վրա, 100 մ-ից պակաս հենամեջերի դեպքում ամրացվում է մեկընդմեջ, 100 մ-ից ավել հենամեջերում և ճանապարհների վրայով անցումներում՝ յուրաքանչյուր հենարանի վրա: Ճանապարհների վրայով անցումների հենամեջերի հենարանների վրայի նշանները պետք է դարձված լինեն դեպի ճանապարհը, իսկ մնացած դեպքերում՝ հենարանի կողքից հերթով աջ և ձախ կողմերից: Պլակատներն ամրացնում են մետաղե և փայտե հենարանների վրա:
7	Էլեկտրահոսանահարման վտանգի մասին նախազգուշացնելու համար ՋԳՈՒՅՇ, ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԼԱՐՈՒՄ ԿԱ	Չափսերը նույնն են, ինչ թիվ 6 նշանինը: Երիզը և սլաքը դաջում են բետոնե մակերևույթի վրա՝ չվացվող սև ներկով տրաֆարետի միջոցով: Որպես ֆոն ծառայում է բետոնե մակերևույթը: Նշանը հաստատուն է:	ՕԳ-ի երկաթբետոնե հենարանների վրա:
8	Էլեկտրահոսանահարման վտանգի մասին նախազգուշացնելու համար ԿԱՆԳՆԻՐ, ԼԱՐՈՒՄ ԿԱ	Սպիտակ ֆոնի վրա սև տառեր: 21 մմ լայնությամբ կարմիր երիզ: ԳՕՍՍ 12.4.026-2015 համաձայն կարմիր սլաք, 280 x 210 Ցուցանակը շարժական է:	Էլեկտրակայանների և ենթակայանների մինչև 1000 Վ և բարձր էլեկտրատեղակայանքներում: ՓԲՍ-ում կախում են աշխատանքային լարման տակ գտնվող հոսանատար մասերի պաշտպանական ժամանակավոր


			<p>ցանկապատերի վրա (երբ հաստատուն ցանկապատը հանված է), անցամասերում, ուր չի կարելի մտնել, տեղադրած ժամանակավոր</p> <p>ցանկապատերի վրա, աշխատանքային տեղերի հետ հարևան խցիկների մշտական ցանկապատերի վրա, ԲԲՍ-ում գետնի վրայից կատարվող աշխատանքների ժամանակ, կախում են աշխատանքային տեղը պատող ճոպանների և քուղիների վրա, աշխատանքային տեղի մոտերքում՝ դեպի լարման տակ գտնվող մոտակա հոսանատար մասերի ճանապարհին գտնվող կառուցվածքների վրա:</p>
9	<p>Բարձրացրած լարումով փորձարկումներ կատարելիս՝ էլեկտրահոսանահարման վտանգի մասին նախազգուշացնելու համար ՓՈՐՁԱՐԿՈՒՄ, ՎՏԱՆԳԱՎՈՐ Է ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ</p>	<p>Սպիտակ ֆոնի վրա սև տառեր: 21 մմ լայնությամբ կարմիր երիզ: ԳՕՍՏ 12.4.026-2015 համապատասխան կարմիր սլաք, 280x210 Յուրանակը շարժական է</p>	<p>Բարձրացրած լարումով փորձարկումներ կատարելու համար աշխատանքային տեղը պատրաստելիս՝ կախում են մակագրությունով դեպի դուրս, սարքավորանքների և հոսանատար մասերի ցանկապատերի վրա</p>
10	<p>Կառուցվածքներով բարձրանալու վտանգի մասին, որի ժամանակ հնարավոր է մոտենալ լարման տակ գտնվող հոսանատար մասերին, նախազգուշացնելու համար ՄԻ՝ ԲԱՐՁՐԱՆԱ, ԿՍՊԱՆԻ</p>	<p>Սպիտակ ֆոնի վրա սև տառեր: 21 մմ լայնությամբ կարմիր երիզ: Ըստ ԳՕՍՏ 12.4.026-2015 կարմիր սլաք 280x210 Յուրանակը շարժական է</p>	<p>Կախում են ԲՍ-ում՝ դեպի բարձրության վրա գտնվող աշխատանքային տեղը անձնակազմի բարձրանալու համար նախատեսվածի հարևանությամբ գտնվող կառուցվածքների վրա:</p>
Կարգադրող ցուցանակներ (պլակատներ)			
11	<p>Աշխատանքային տեղը ցույց տալու համար ԱՇԽԱՏԵԼ ԱՅՍՏԵՂ</p>	<p>Կանաչ ֆոնի վրա 168 և 68 մմ տրամագծով սպիտակ շրջան: Շրջանի մեջ սև տառեր: 5 և 2 մմ լայնությամբ սպիտակ երիզ 250x250 100x100 Յուրանակը շարժական է</p>	<p>Էլեկտրակայանների և ենթակայանների էլեկտրատեղակայանքներում: Կախում են աշխատանքային տեղում: ԲԲՍ-ում աշխատանքային տեղի ցանկապատերի առկայության դեպքում, կախում են ցանկապատի հետևն անցնելու տեղում:</p>

12	Բարձրության վրա գտնվող աշխատանքային տեղը բարձրանալու ուղին ցույց տալու համար ԲԱՐՁԱՆԱԼ ԱՅՍՏԵՂՈՎ	Նույնը	Կախում են կառուցվածքի կամ անշարժ սանդուղքի վրա, որոնցով թույլատրված է բարձրանալ դեպի բարձրության վրա գտնվող աշխատանքային տեղը:
Ցուցիչ ցուցանակներ (պլակատ)			
13	Էլեկտրատեղակայանքի հողակցված տեղամասին լարում տալն արգելելու համար ՀՈՂԱԿՑՎԱԾ է	Կապույտ ֆոնի վրա սև տառեր: 13 և 5 մմ լայնությամբ սպիտակ երիզ: 240x130 80x50	Էլեկտրակայանների և ենթակայանների էլեկտրատեղակայանքներում: Կախում են բաժանիչների, զատիչների և բեռնվածքի անջատիչների շարժաբերների վրա, որոնք սխալմամբ միացնելու դեպքում կարող է լարում տրվի էլեկտրատեղակայանքի հողակցված տեղամասին և հեռագործ կառավարման բանալիների կոճակների վրա:


ԱՐԳԵԼՈՂ ՑՈՒՑԱՆԱԿՆԵՐ




1




2



3



4



5



ԱԿՏ-ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ՇԻՆՏԵՂԱԿԱՅՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ

Քաղ. _____ 20 թ.

(կազմակերպության անվանումը)

Մենք՝ ներքոստորագրյալներս, պատվիրատուի ներկայացուցիչը _____

(անունը, ազգանունը, պաշտոնը)

գլխավոր կապալառուի (կապալառուի) ներկայացուցիչը, որը պատասխանատու է շինտեղակայման
(նորոգման և այլ) աշխատանքների համար _____

(անունը, ազգանունը, պաշտոնը)

և շինտեղակայման (նորոգման և այլ) աշխատանքների կատարման տեղի մոտակայքում գտնվող
օբյեկտները շահագործող կազմակերպության ներկայացուցիչը _____

(անունը, ազգանունը, պաշտոնը)

կազմեցինք սույն ակտը՝ ներքոհիշյալի մասին:

Պատվիրատուն (կազմակերպությունը) հատկացնում է տեղամասը (տարածքը), որը սահմանազատված է
կողողինատներով _____

(առանցքների և նշագծերի անվանումները, գծագրերի համարները)

այնտեղ կատարելու _____

(աշխատանքների անվանումները)

գլխավոր կապալառուի (կապալառուի) պատասխանատու ներկայացուցչի տեխնիկական
ղեկավարությամբ, հետևյալ ժամկետով՝

սկիզբը _____ ,
(ամսաթիվը)

ավարտը _____
(ամսաթիվը)

Մինչև աշխատանքն սկսելն անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները, որոնք
ապահովում են աշխատանքների անվտանգությունը:

Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետը	Իրագործողը

Պատվիրատուի ներկայացուցիչ _____
(ստորագրությունը)

Շինտեղակայման

(նորոգման և այլնի) աշխատատեղի մոտակայքում

գտնվող օբյեկտները շահագործող

կազմակերպության ներկայացուցիչ _____
(ստորագրությունը)

Գլխավոր կապալառուի (կապալառուի) ներկայացուցիչ _____
(ստորագրությունը)

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐ

**ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ
Մ Ա Տ Յ Ա Ն**

(Կազմակերպության, ստորաբաժանման անվանումը)

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՅԱՆ

(Կառուցվածքային ստորաբաժանման և կազմակերպության անվանումը)

ՍԿՍՎԱԾ Է _____

ԱՎԱՐՏՎԱԾ Է _____

**ՀԵՐԹԱՊԱՀ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԱԿԱՎԹԱՐԱՅԻՆ ԵՎ
ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՎԱՐԺԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ**

Մ Ա Տ Յ Ա Ն

(Կառուցվածքային ստորաբաժանման և կազմակերպության անվանումը)

ՍԿՍՎԱԾ Է _____

ԱՎԱՐՏՎԱԾ Է _____

Ց ՈՒ Ց Ա Կ

Անձանց, ում մասնակցությունը վարժանքներին պարտադիր է

N	Ազգանուն, անուն	Պաշտոն	Վարժանքներին մասնակցության ամսաթիվ	Ծանոթություն

**ՀՐԴԵՀԱՄԱՐՄԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՎԻՃԱԿԻ ՎԵՐՀՍԿՄԱՆ**

Մ Ա Տ Յ Ա Ն

(Կառուցվածքային ստորաբաժանման և կազմակերպության անվանումը)

ՍԿՍՎԱԾ Է _____

ԱՎԱՐՏՎԱԾ Է _____

ՀՐԱՀԱՆԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ Մ Ա Տ Յ Ա Ն

(Տեղամասի, բրիգադի, ծառայության, լաբորատորիայի անվանումը)

ՍԿՍՎԱԾ Է _____

ԱՎԱՐՏՎԱԾ Է _____

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ Մ Ա Տ Յ Ա Ն

(Կազմակերպության և կառուցվածքային ստորաբաժանման անվանումը)

ՍԿՍՎԱԾ Է _____

ԱՎԱՐՏՎԱԾ Է _____

**ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ԱՆՍԱՐՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ**

Մ Ա Տ Յ Ա Ն

(Կազմակերպության և կառուցվածքային ստորաբաժանման անվանումը)

ՍԿՍՎԱԾ Է _____

ԱՎԱՐՏՎԱԾ Է _____

ՕՊԵՐԱՏԻՎ Մ Ա Տ Յ Ա Ն

(Էներգետիկ կազմակերպության անվանումը)

ՍԿՍՎԱԾ Է _____

ԱՎԱՐՏՎԱԾ Է _____

